

# ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԵՏՐԵՐ

«ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿ» ՈԱԶՄԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍԻ ՀԱԿԵԿԱԾ 1 և 2 (13-14), 2010



77 ԳԱՇԵՂԱՆՈՒԹՅԱՆ ԱՆՊԱՐԱՆՈՒԹՅԱՆ ԴՐԱՏԱՄԱՏ ԿԱՆՁՆԵՐԻ ԱՆՎԱՆ  
ԱԶԳԱՅԻՆ ՈԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՇԵՏԱԳՈՒՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՆՏԵՏԻՏԱՏ

ԱՄՆ-Ի ՀԱՅԿԱԿԱՆ ԼՈՐԲԻՆԳԱՅԻՆ  
ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ  
ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԱՆԿՏԱՆԳՈՒԹՅԱՆ  
ՈԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՇԱՀԵՐԻ  
ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ



ՀՀ - ՍՓՅՈՒՈՔ ԵՐԿՆՈՍՈՒԹՅԱՆ  
ՈԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՒՂԵՆԻՇՆԵՐԸ



# ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԵՏՐԵՐ

Լույս է տեսնում 2007 թվականից տարին չորս անգամ 1 և 2 (13–14), 2010

## ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

- Քոբանջյան Հ. Ս.**  
 քաղաքական գիտությունների  
 դոկտոր (Ռ-Դ), Ռ-ազմական  
 գիտությունների ռուսաստանյան  
 ակադեմիայի իսկական անդամ,  
 հակահարկերի շտաբի գծով  
 փորձագետ (ԱՄՆ)  
 (նախագահ)
- Չիլինգարյան Գ. Ս.**  
 (գլխավոր խմբագիր)
- Այդինյան Ռ. Վ.**
- Ապրիանով Է. Ա.**
- Ավետիսյան Վ. Պ.**  
 (գլխ. խմբ. տեղակալ)
- Բաբայան Ն. Մ.**
- Գասպարյան Վ. Ս.**
- Գասպարյան Տ. Շ.**
- Գավթյան Ա. Մ.**
- Թունյան Վ. Վ.**
- Իսախանյան Մ. Ռ.**
- Խաչատուրով Յու. Գ.**
- Կարապետյան Մ. Ն.**
- Կարապետյան Մ. Ս.**
- Մաթևոսյան Ի. Ժ.**
- Մարգարյան Վ. Հ.**  
 (գլխ. խմբ. տեղակալ)
- Մարտիրոսյան Ս. Ս.**
- Մարտիրոսով Լ. Ա.**
- Միրզաբեկյան Ա. Ռ.**
- Նազարյան Ա. Ս.**
- Սեդրակյան Ս. Գ.**
- Տեր-Գրիգորյանց Ն. Գ.**
- Տոնոյան Գ. Է.**
- Փարսադանյան Ա. Մ.**

## Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

- ՀՀ – ՍՓՅՈՒՌՔ ԵՐԿԽՍՈՍՒԹՅԱՆ  
 ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՒՎԵՆԻՇՆԵՐԸ**
- Հ. Ս. Քոբանջյան,** Համաշխարհային  
 հայության համակարգի քայքայման սպառ-  
 նալիքի հաղթահարման ուղիները ..... 5
- Г. С. Котанджян.** Пути преодоле-  
 ния угрозы разрушения системы все-  
 мирного армянства ..... 35
- ՀՀ – ՍՓՅՈՒՌՔ ԵՐԿԽՍՈՍՒԹՅԱՆ  
 ԱՍՊԵԿՏԱՅԻՆ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՄՆԵՐ**
- Վ. Հ. Տեր-Մաթևոսյան,** Հայրենիք–  
 Սփյուռք. խնդիրների ռազմավարական  
 գնահատումներ ..... 62
- Ն. Հ. Հովհաննիսյան,** Հայաստան–  
 Սփյուռք ինտեգրման ռազմավարական  
 ուղենիշները. հայեցակարգային մոտե-  
 ցումներ ..... 68
- Պ. Ա. Չոբանյան,** Հայոց լեզվի ուղղա-  
 գրության համակարգերի համադրման  
 խնդիրը ՀՀ ազգային անվտանգության շա-  
 հերի ապահովման տեսանկյունից ..... 85
- Հ. Վ. Հովհաննիսյան,** Հայ եկեղեցու հո-  
 գևոր միասնությունը որպես Սփյուռքի ան-  
 վտանգության երաշխիք ..... 91
- Ա. Բ. Մանվելյան,** Հայաստան–Սփյուռք  
 քաղաքական բազմակարծության հնարա-  
 վորությունները Ռ-ամկավար ազատական  
 կուսակցության օրինակով. ռազմավարա-  
 կան գնահատումներ ..... 101

*Ա. Գ. Եզանյան*, Հայաստանի Հանրապետության և ամերիկահայ լոբբինգային կառույցների համագործակցության ռազմավարական գնահատումներ . . . . . 111

*Բ. Պ. Պողոսյան*, ԱՄՆ-ի հրեական լոբբիի գործիքարանը Իսրայելի ռազմավարական անվտանգային շահերի պաշտպանության համատեքստում . . . . . 123

*Ա. Գ. Ավագյան*, Հրեական լոբբինգի և «Մտքի կենտրոնների» ներուժի օգտագործման փորձի իմաստավորումը համաշխարհային հայության շահերի տեսանկյունից (թուրք-հրեական հարաբերությունների օրինակով) . . . 141

**ՈՐՈՇ ՏԵՍԱԿԱՆՆԵՐ ՍՓՅՈՒՌՔԻՑ**

*ժ. Չարիֆյան*, Ամերիկահայկական լոբբին. կառուցվածքը, մեթոդները և արդյունքները . . . . . 156

*J. Zarifian*. The US-Armenian lobby: organization, methods, and results . . . . . 179

*Ա. Քոչիկյան*, Հայկական լոբբինգային խմբերի ծագումն ու զարգացումը Ամերիկայի Միացյալ Նահանգներում. քննական ակնարկ . . . . . 198

*A. Kotchikian*. (De)evolution of Armenia(n) lobby groups in the US: a critical snapshot . . . . . 213

*Ա. Ասրուրյան*, Սփյուռքի հայ քաղաքական կուսակցությունների հետ Հայաստանի կառավարության գործունեությունը համակարգելու հեռանկարները . . . . . 226

**ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ** . . . . . 233

ՀՀ-ՍՓՅՈՒՌՔ ԵՐԿԽՈՍՈՒԹՅԱՆ  
ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՒՂԵՆԻՇՆԵՐԸ

ОРИЕНТИРЫ СТРАТЕГИИ ДИАЛОГА  
РА–ДИАСПОРА

GUIDELINES OF THE RA-DIASPORA  
DIALOGUE STRATEGY



**ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՀԱՅՈՒԹՅԱՆ  
ՀԱՄԱԿԱՐԳԻ ՔԱՅՔԱՅՄԱՆ ՍՊԱՌՆԱԼԻՔԻ  
ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆ ՈՒՂԻՆՆԵՐԸ.**

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՈԱԶՄԱԿԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏՔՍՏՈՒՄ ՀԱՅ-  
ԿԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՓՅՈՒՌՔԻ ՓՈԽՇԱՀԱՎԵՏ ԶԱՐԳԱՑՄԱՆ  
ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՋ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՀԱՅՈՒԹՅԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ  
ՀԱՄԱԽՄԲՄԱՆ ՈԱԶՄԱԿԱՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ<sup>1</sup>

*Հ. Ս. ՔՐԹԱՆԶՅԱՆ, գեներալ-մայոր, քաղաքական գիտությունների  
դոկտոր (ՌԴ), Ռազմական գիտությունների ռուսաստանյան  
ակադեմիայի իսկական անդամ, հակահարեկչության գծով  
գիտական փորձագետ (ԱՄՆ), ՀԱՊԿ-ի գիտափորձաքննական  
խորհրդի անդամ, ՀՀ ՊՆ ԱՌՀԻ-ի պետ*



«Պարտականութեան,  
հզորանքի եւ քաջութեան կրօն-  
ահա՛ թե ինչ է նշանակում  
Տարօնականութիւն»:

***Գարեգին Նժդեհ***

Լեռնահայաստանի սպարապետ,  
ռազմական քաղաքագետ,  
«Տարօնի Արժի»,  
Սոֆիա, 1938, թիվ 1–2

«Սասունցիները դարեր ի վեր իրենց վրա են վերցրել Տարօնի հայության,  
իսկ պատմության որոշակի շրջաններում՝ նաև ամբողջ հայ ժողովրդի  
անվտանգության համար պատասխանատվությունը: Իր մեջ «սասունցու»  
արյուն կրելը նախնիների կենսաբանական պարզև չէ, որով կարելի է գոռոզանալ՝  
ցուցադրելով իր կրծքին: Հերոսական Սասունի ավանդույթներով որդուն կամ  
դստերը դաստիարակելը նշանակում է նրանց դարձնել յուրաքանչյուր հայի,  
ամբողջ հայության համար մշտապես պատասխանատու»:

***Մուշեղ Գալշոյան***

(հեղինակի հետ գրողի անձնական զրույցներից,  
Երևան, Հայաստանի ԼԿԵՄ ԿԿ, 1975)

<sup>1</sup> Տես Հ. Ս. Քրթանջյան, Հայաստանի ազգային անվտանգության ռազմավարության  
մշակման ուղեցույցները տարածաշրջանային անվտանգության ճարտարապետության  
համատեքստում: Ե., 2008:

«Մենք բոլորս եղբայրներ ենք և ունենք միևնույն ճակատագիրը: Այս ավանդույթով են պայմանավորված Իսրայելի ժողովրդի տոկոսության հիմքերը և գոյատևման գաղտնիքը. անգամ անձնական խոստովանության, արդյունքների հանրագումարման և առանձին մարդու ճակատագրի տնօրինման ամենավճռորոշ պահին մենք առաջին հերթին մտահոգվում ենք մեր ժողովրդի բախտով. չէ՞ որ բոլոր հրեաները կապված են միմյանց համար փոխադարձ պատասխանատվությամբ»:

**Անաստասիա Միխայելի**

Իսրայելի Պետության Կնեսետի անդամի Ամանորյա ուղերձից,  
Երուսաղեմ, 2010 թ. օգոստոս

## **I. ԿՈՒԵԿՏԻՎ ՄԵՆԱԳՐԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԳԻՏԱԿԱՆ ԷՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

ՀՀ ՊՆ ԱՌՀԻ-ն սույն կոլեկտիվ մենագրությունը պատրաստելիս որոշել է հնարավորինս կոնկրետացնել Հայոց Սփյուռքի հետազոտվող կողմերի ընտրությունն այնպես, որ օբյեկտիվ վերլուծության օրինակով ցույց տրվեն համայնքների կենսագործունեության մեջ եղած դժվարությունները և Համաշխարհային հայության համախմբման ու զարգացման վրա հնարավոր արդյունավետ ազդեցության հատկանշական գործոնները:

Վերլուծական խումբը, ունենալով արտասահմանյան հայ համայնքների կյանքի ներգրավված դիտարկման փորձ, իր հետազոտական նյութը պատրաստել է՝ տարանջատվելով քաղաքական կոնյունկտուրայից ու փորձելով ի հայտ բերել Հայաստանի Հանրապետության հետ Սփյուռքի և վերջինիս ներսում առկա հարաբերությունների ինչպես ուժեղ, այնպես էլ թույլ կողմերը: Մենք առանձնակի նշանակություն ենք տալիս հայության կենսագործունեության փորձի, եղած դժվարություններից, փորձություններից ու սխալներից նրա դուրս բերած դասերի քննադատական գնահատմանը: Մեր կոլեկտիվ աշխատանքում հատուկ տեղ է հատկացված Համաշխարհային հայության և Համաշխարհային հրեության համակարգերի համեմատական վերլուծությանը՝ դրանց որոշակի նմանության և էական տարբերությունների հաշվառմամբ<sup>2</sup>:

---

<sup>2</sup> Տես *John J. Mearsheimer and Stephen M. Walt. The Israel Lobby and U.S. Foreign Policy. New York, 2007:*

Հարկ է նշել, որ տվյալ մուտքային քաղաքագիտական զեկուցման տեքստը պարունակում է նաև ուղեցուցային տարրեր և կազմված է տրամաբանորեն փոխկապված ու փոխլրացնող երկու բաժիններից: Հեղինակը Համաշխարհային հայության և Համաշխարհային հրեության փորձի համեմատական վերլուծության արդյունքներով մշակված իր դատողությունները շարադրում է հողվածի արտածումներում, եզրակացություններում, ինչպես նաև այն առաջարկություններում, որոնք կազմում են Հայաստանի Ազգային Պետության և Սփյուռքի առաջադիմական փոխօգտավետ զարգացման գերակայությունների շուրջ ազգային ռեսուրսների համախմբման ռազմավարության հիմքերը:

Համապատասխան արժանահավատ աղբյուրներից քաղված հատկանշական դրվագները, որոնք, դրված լինելով համեմատության մեջ, բնորոշում են Հայության և Հրեության քաղաքական զարգացումներն ու հաստատությունները, ինչպես նաև այլ էթնիկական հանրությունների սփյուռքային կազմակերպությունների փորձը, բերվում են տողատակում՝ գերազանցապես առանց հեղինակի մեկնաբանությունների: Նման մոտեցումը, ընթերցողին հրավիրելով խորհելու, նրան հնարավորություն է տալիս հղումներում բերված փաստերի համեմատական վերլուծության հիման վրա կազմելու իր անձնական կարծիքը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Սփյուռքը բացառիկ կարևոր դեր է խաղում հայության բնակության պետությունների կողմից Հայաստանի Հանրապետության շահերին արտաքին քաղաքական աջակցության կազմակերպման գործում, մենք որպես հետազոտության օբյեկտ ընտրել ենք ԱՄՆ-ի Հայոց Սփյուռքի քաղաքական լոբբինգը՝ այն դիտելով որպես Համաշխարհային հայության համակարգի առավել կազմակերպված և արդյունավետ գործող տարր: Այս ընտրությունը կատարելիս մենք ելել ենք հետևյալ իրավաքաղաքական իրականությունից ու իրավաբանական փաստից. ԱՄՆ-ում էթնիկական փոքրամասնությունների քաղաքական լոբբինգը հիմնվում է օրենսդրական բազայի վրա և ունի ԱՄՆ-ի իշխանական հաստատությունների հետ ինչպես ամերիկյան պետության էթնիկական համայնքների, այնպես էլ



դրանց համապատասխանող ազգային պետությունների շահերի խաչումն արտացոլելու առավել հարուստ ավանդույթներ<sup>3</sup>:

Հայոց Սփյուռքի տեսանկյունային վերլուծության մանրամասները թղթելով սույն մենագրական ժողովածուի մեր գործընկերներին՝ օգտակար ենք համարում համառոտակի կանգ առնել Համաշխարհային հայության համախմբման գործում առկա որոշ դժվարությունների պատճառների քաղաքագիտական հետազոտության վրա: Ուշադրության է արժանի Սփյուռքի ներսում, ինչպես նաև Սփյուռքի և Հայաստանի Հանրապետության միջև համագործակցության ու օտարացման հարաբերությունների համակարգի ձևավորման առանձնահատկությունների վերլուծությունը:

Պարտք եմ համարում շնորհակալություն հայտնելու ՀՀ ՊՆ ԱՌՀԻ-ի վերլուծական կենտրոնի կոլեկտիվին՝ ի դեմս ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ն. Հ. Հովհաննիսյանին, պատմական գիտությունների դոկտորներ Պ. Ա. Չոբանյանին և Ա. Գ. Ավագյանին, կենտրոնի պետ, պատմական գիտությունների թեկնածու Վ. Հ. Տեր-Մաթևոսյանին, պատմական գիտությունների թեկնածուներ Բ. Պ. Պողոսյանին և Ա. Բ. Մանվելյանին: Ուզում եմ առանձնակի շնորհակալություն հայտնել ՀՀ ԱԳՆ Ամերիկայի վարչության պետ Ա. Գ. Եզանյանին, ԵՊՀ աստվածաբանության ֆակուլտետի դեկան Եպիսկոպոս Անուշավան Ժամկոչյանին և դոցենտ, պատմական գիտությունների թեկնածու Հ. Վ. Հովհաննիսյանին:

Սույն ժողովածուում քննարկվող պրոբլեմների գնահատականների լիարժեքությունը, օբյեկտիվությունն ու համակողմանիությունն ապահովելու նպատակով անհրաժեշտ ենք համարել դրանում ներկայաց-

---

<sup>3</sup> Տես "2066 Federal Regulation of Lobbying Act—2 U.S.C. "261 et seq"" ([http://www.justice.gov/usao/eousa/foia\\_reading\\_room/usam/title9/crm02066.htm](http://www.justice.gov/usao/eousa/foia_reading_room/usam/title9/crm02066.htm));

"A Complete Guide to Federal Lobbying Law and Practice", Chicago, 2009; *William V. Luneburg*. The Lobbying Manual: A Compliance Guide for Lawyers and Lobbyists. 2d ed. Chicago, 1998; *Trevor Potter*. Political Activity, Lobbying Laws and Gift Rules Guide, 2d ed. Little Falls. NJ, 1999; *R. Eric Petersen*. Lobbying Reform: Background and Legislative Proposals, 109th Congress (<http://www.fas.org/sgp/crs/misc/RL33065.pdf>):

նելու Հայոց Սփյուռքից հարգելի գիտնականների տեսակետները, ինչի համար շնորհակալություն ենք հայտնում Բերկլիի համալսարանի պրոֆեսոր, գիտությունների դոկտոր *Ստեփան Աստուրյանին*, Բենտլիի համալսարանի պրոֆեսոր, գիտությունների դոկտոր *Ասպետ Քոչկյանին* և «Փարիզ-8» համալսարանի Ֆրանսիայի աշխարհաքաղաքականության ինստիտուտի ասպիրանտ *Ժուլիեն Ջարիֆյանին*: Միևնույն ժամանակ, հարկ ենք համարում նշել, որ նրանց կարծիքը միշտ չէ, որ համընկնում է ՀՀ ՊՆ ԱՌՀԻ-ի կարծիքի հետ:

## II. ՀԱՄԱԾԵՆԱՐՀԱՅԻՆ ՀԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԽՄԲՎԱԾ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԴԺՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Առաջին համաշխարհային պատերազմից հետո իր կազմը Ցեղասպանության զոհերի ընտանիքների անդամներով համալրած Հայոց Սփյուռքի օտարացումն սկսվել է 1920–1930-ական թվականներին: Դա պայմանավորված է եղել իշխանության եկած բոլշևիկների փորձերով՝ Սփյուռքի ներսում հրահրելու այսպես կոչված դասակարգային պայքար, ինչպես նաև իրենց հայրենիքից արտաքսված հայերին ուղղված կոչերով՝ նրանց համախմբելու թուրք աշխատավորության և այն հեղափոխական ուժերի հետ, որոնք ի դեմս քեմալականների ոչ վաղ անցյալում ցեղասպանական գործողություններ էին ձեռնարկել Արևմտյան Հայաստանում պահպանված հայերի մնացորդների և Արևելյան Հայաստանի ամբողջ բնակչության նկատմամբ: ՀԿ(Բ)Կ\*

---

\* Ռուսաստանի և ԽՍՀՄ կոմունիստական կուսակցության պաշտոնական անվանումներն են:

1898 – 1917 թթ.՝ Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատական բանվորական կուսակցություն՝ ՌՍԴԲԿ:

1917 – 1918 թթ.՝ Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատական բանվորական (բոլշևիկյան) կուսակցություն՝ ՌՍԴԲ(բ)Կ:

1918 – 1925 թթ.՝ Ռուսաստանի կոմունիստական (բոլշևիկյան) կուսակցություն՝ ՌԿ(Բ)Կ:

1925 – 1952 թթ.՝ Համամիութենական կոմունիստական (բոլշևիկյան) կուսակցություն՝ ՀԿ(Բ)Կ:

1952 – 1991 թթ.՝ Խորհրդային Միության կոմունիստական կուսակցություն՝ ԽՄԿԿ:

ղեկավարությունը թույլ էր տվել Հայկական Բարեգործական Ընդհանուր Միությանը (ՀԲԸՄ)<sup>4</sup> Խորհրդային Հայաստանին ցույց տալու մարդասիրական և նյութական օգնություն, ինչպես նաև կազմակերպելու արևմտահայ որբերի սահմանափակ հայրենադարձություն: Սակայն դրա ավարտը եղել են այդ կազմակերպության ղեկավարների և ակտիվիստների նկատմամբ 1937 թվականին գործադրված բռնաճնշումները, ապա՝ Սփյուռքի հետ հարաբերությունների դադարեցումը<sup>5</sup>:

Խորհրդային հայությունից Հայոց Սփյուռքի օտարացմանը որոշակի չափով նպաստել է հայոց լեզվի ուղղագրության վերափոխման քաղաքական խաղարկումը: Այդ վերափոխումը գործարկվել է Արևմտյան

---

<sup>4</sup> *Հայկական Բարեգործական Ընդհանուր Միություն (ՀԲԸՄ). The Armenian General Benevolent Union (AGBU)*, Official Site: (<http://www.agbu.org/aboutagbu/default.asp>):

Հիմնադրվել է Կահիրեում 1906 թ.: Առաջին ղեկավար ընտրվել է ականավոր ազգային գործիչ Պողոս Նուբար Նուբարյանը, Եգիպտոսի վարչապետ Նուբար-փաշայի որդին: Նպատակն է կրթական, մշակութային ու մարդասիրական ծրագրերի միջոցով պահպանել և առաջ մղել Հայ ինքնությունը և ժառանգությունը, ինչպես նաև հայության շահերը ներկայացնել միջազգային ասպարեզում:

**Միջազգային բյուջե.** 36 միլիոն ԱՄՆ-ի դոլար:

**Կրթություն.** 33-օրյա և կիրակնօրյա դպրոցներ: Միջազգային ուսումնական դրամաշնորհներ և կրթության փոխառվական ծառայություններ, Հայաստանի ամերիկյան համալսարան: Ազգային և միջազգային ծրագրեր. ՀԲԸՄ-ի նորությունների հանդես, «Արարատ» եռամսյա հանդես, մարմնամարզական խաղեր, երգչախումբ, պարի անսամբլներ, Ֆոկլուս, «*Hooshar*» հանդես, դասախոսություններ, գրադարան–հետազոտական կենտրոն, բժշկական կլինիկա, երաժշտական խմբեր, հրապարակումներ, սկաուտական կազմակերպություններ, հատուկ ձամբարներ, ամառային կարճատև գործնական պարապմունքների (ինտերնշիպների) և դասախոսությունների ծրագրեր, թատրոն, կինոներ և համերգներ, թատերական խմբեր, կայքէջեր:

**Հայաստանում.** Հայաստանի ամերիկյան համալսարան, Հայաստանի ֆիլիարմոնիկ նվագախումբ, մանկական կենտրոններ Նորքում, Արաբկիրում և Մալաթիայում, Վազգենյան աստվածաբանական ձեմարան, Ուխտաձայնային կենտրոն, բարեգործական ապուրային խոհանոցներ Երևանում, Սևանում, Հրազդանում և Էջմիածնում, Երևանի պետական համալսարան:

**Ղարաբաղում.** Ղարաբաղի կամերային նվագախումբ, Ղարաբաղի վերաբնակեցման նախագիծ:

<sup>5</sup> Տես *В. Дятлов, Э. Мелкоян. Армянская Диаспора: очерки социокультурной типологии. Е., 2009, сс. 157 – 160:*

Հայաստանից բռնի տեղահանված և աշխարհով մեկ սփռված հայերի՝ նոր լեզվամշակութային միջավայրին ինտեգրման սկզբնական փուլին բնորոշ մարտահրավերների ու փորձությունների բարդ շրջանում: Խորհրդային իշխանությունները 1924 թվականից դասական ուղղագրության վերափոխումն օգտագործել են որպես Համաշխարհային հայության համակարգում հաղորդակցման ազատությունը սահմանափակելու գործիքներից մեկը՝ այն գաղափարների ու տեղեկությունների փոխանակումը կանխելու համար, որոնք Խորհրդային գրաքննությունը համարում էր «գաղափարապես վտանգավոր» կամ անցանկալի: Ստալինյան ռեժիմը, առաջնորդվելով «ԽՍՀՄ-ը շրջափակված ամրոց է» քաղաքական դոկտրինով, ինչպես նաև «Սոցիալիստական հեղափոխության համաշխարհայնացման» և «դասակարգային պայքարի անընդհատ սրման» հայեցակարգներով, տվյալ ուղղագրական վերափոխումը Համաշխարհային հայության նկատմամբ կիրառել է որպես մի յուրահատուկ համակարգային գործիք՝ Խորհրդային հայության և Սփյուռքի հայության միջև անձնական ու հասարակական գրավոր շփումները, գիտական, հրապարակախոսական, գրական-գեղարվեստական և այլ ձևերի գրավոր-խոսակցական հաղորդակցումները, ինչպես նաև տպագրական արտադրանքի փոխանակումը պատնեշելու համար<sup>6</sup>:

---

<sup>6</sup> Խորհրդային իշխանությունների առաջադրանքով հայոց լեզվի դասական ուղղագրության վերափոխումը 1922–1924 թվականներին մասնագիտական բարեխղճությամբ մշակվեց ականավոր հայ գիտնական, ինչպես նաև հայկական գրականության, բանասիրության, ժողովրդական բանահյուսության և բառարանագրության բնագավառի խոշոր մասնագետ, ՀԽՍՀ ԳԱ ապագա ակադեմիկոս-հիմնադիր Մանուկ Աբեղյանի կողմից:

1920-ական թվականներին ԽՍՀՄ-ում հումանիտար և հասարակական գիտությունների ոլորտի նկատմամբ ՀԿ(բ)Կ քաղաքական գաղափարախոսության վերահսկողությանը դիմադրող գիտնականները ենթարկվում էին բռնաճնշումների՝ ընդհուպ մինչև ԽՍՀՄ-ից արտաքսում կամ վերացում (տես “1922 г.: высылка интеллигенции”, документ № 20, Записка заместителя председателя ВЧК–ГПУ И. С. Уншлихта В. И. Ленину, 18.08.1922, РГАСПИ. Ф. 5. Оп. 1. Д. 2603. Л. 1–1 об. Автограф: - “Согласно Вашего распоряжения посылаю списки интеллигенции по Москве, Питеру и Украине, утвержденные Политбюро. Операция произведена в Москве и Питере с 16-го на 17-ое, на Украине с 17-го на 18-ое. Московской публике сегодня объявлено постановление о высылке за границу, и [арестованные] предупреждены, что самовольный въезд в РСФСР карается расстрелом. Завтра выяснится вопрос с визами. Ежедневно будет Вам посылать сводку о ходе высылки. С ком[мунистическим] приветом – Уншлихт. [P.S.] Все с нетерпением ждем полного восстановления Ваших сил и здоровья”):

ԽՍՀՄ ստալինյան իշխանությունների կողմից 1940-ական թվականներին հայության մի մասի հայրենադարձության կազմակերպումը Սփյուռքի և Երկրորդ Հանրապետության՝ Հայկական ԽՍՀ փոխհարաբերությունների վրա դրական ներգործության հետ մեկտեղ ունեցել է բացասական անդրադարձ, որը շարունակում է որոշակի դեր խաղալ Սփյուռքի հայության և Հայաստանի Երրորդ Հանրապետության փոխհարաբերություններում:

Հայաստանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ստեղծմամբ ԱՄՆ-ի հայկական կազմակերպությունների քաղաքական լոբբինգը, կողմնորոշված լինելով ԱՄՆ-ի Կոնգրեսի և Նախագահի կողմից Օսմանյան կայսրությունում իրագործված Հայոց ցեղասպանության փաստի ճանաչման համար մղվող պայքարին, սկսել է իր ազդեցությունն օգտագործել ամերիկյան իշխանությունների ուշադրությունը երկու նորաստեղծ հայկական պետությունների՝ ՀՀ և ԼՂՀ կարիքների վրա սևեռելու նպատակով<sup>7</sup>:

Քանի որ սոցիալ-դասակարգային պայքարի դիրքերից կատարված այդ ստալինյան փորձի քայքայիչ ազդեցությունը Սփյուռքի վրա պահպանում է իր իներցիոնությունը, և հետագայում արտասահմանյան հայկական կազմակերպությունները հայտնվեցին Սառը պատերազմի բարիկադների տարբեր կողմերում, ուստի մենք կարևոր ենք համարում նշել մի շարք դժվարություններ, որոնք շարունակում են բացասաբար ազդել Համաշխարհային հայության համախմբման վրա.

1. Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտից անմիջապես հետո ձեռնարկված հայերի հայրենադարձությունը հրահրվել է գերա-

---

<sup>7</sup> *Ամերիկայի Հայկական Ազգային Կոմիտե (Հայ Ղաթի Կոմիտե). Armenian National Committee of America*, Official Site: (<http://www.anca.org>): ԱՄՆ-ում հայկական համայնքի՝ տարբեր ուղղություններով գործունեությունը համակարգող հայ-ամերիկյան կազմակերպություն:

Հայ-ամերիկյան համագործակցության առավել ազդեցիկ կազմակերպություններից մեկը ներառում է ԱՄՆ-ի և աշխարհի տարբեր քաղաքներում գտնվող գրասենյակներ, բաժանմունքներ և համախոհներ: Կապված է Հայ հեղափոխական դաշնակցություն (ՀՀԴ) կուսակցության հետ: Ակտիվ կերպով հանդես է գալիս հօգուտ Հայոց ցեղասպանության ճանաչման և դատապարտման:

զանցապես ծագումով Արևմտյան Հայաստանից հայերի էթնիկական ռեսուրսի ստեղծման նպատակով՝ 1921 թ. մարտի 16-ի ռուս-թուրքական պայմանագրով<sup>8</sup> Թուրքիայի Հանրապետությանը Խորհրդային Ռուսաստանի հանձնած և երկրորդ համաշխարհային պատերազմի արդյունքներով ԽՍՀՄ-ի կազմի մեջ ենթադրաբար վերադարձվող հողերը նրանցով բնակեցնելու համար:

2. ԱՄՆ-ի ու Մեծ Բրիտանիայի հակազդեցության և Թուրքիայի կողմից հայկական հողերի մի մասի վերադարձման ստալինյան պլանի ձախույժման հետևանքով հայրենադարձության նպատակադրումը այլասերվել է: Սփյուռքի հայերը, որոնց գիտակցության մեջ հայրենիքը զուգորդվում էր Արևմտյան Հայաստանի հետ, գալով Հայկական ԽՍՀ, դարձան երկրորդ համաշխարհային պատերազմի արդյունքներով Ստալինի առաջին քաղաքական պարտություններից մեկի վկաները, մի պարտության, որը նա կրեց նախկին դաշնակիցների՝ ԱՄՆ-ի, Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի հետ հարաբերություններում: Խոսքը վերաբերում է Թուրքիայի հետ վերջիններիս մերձեցմանը և ԽՍՀՄ-ին արևմտահայկական հողերի վերադարձման հարցի փակմանը: Այսպիսով՝ Արևմտյան Հայաստան հայրենադարձվելու նպատակով ՀԽՍՀ հրավիրված հայերը դարձան ստալինյան բռնաճնշումային ռեժիմի խաբված պատանդներ՝ առանց իրենց համար սովորական խոսքի ազատության, այդ թվում՝ իրենց ինքնանույնականացման համար այդքան կարևոր Ցեղասպանության հարցում, և առանց հետ վերադառնալու իրավունքի:

3. Ստալինյան ԽՍՀՄ-ից սփյուռքահայության օտարացումը խորացել է Սառը պատերազմի սանձազերծման և Խորհրդային Միությունում «համաշխարհային իմպերիալիզմի մեքենայությունների» դեմ գաղափարախոսական պայքարի ուժգնացման հետևանքով: Հայոց Սփյուռքում Խորհրդային Հայաստանի նկատմամբ բացասական կարծրա-

---

<sup>8</sup> Ств "К вопросу о советско-турецком договоре о дружбе и нейтралитете". 11.03.1945. Архив внешней политики Российской Федерации, ф. 015, оп. 5, п. 8, д. 8, л. 4.; "О денонсации советско-турецкого договора 19 марта 1945 года, Информбюро НКВД СССР". "Известия", 21 марта 1945 г., "Historic.Ru: Всемирная история" (<http://www.historic.ru/books/item/f00/s00/z0000022/st038.shtml>):

տիպերն սկսել են ձևավորվել ԽՍՀՄ-ից ստացվող տեղեկությունների հետևանքով, որոնք վերաբերում էին ազգայնամոլության ու հակասովետականության մեջ մեղադրանքներով և «ժողովրդի թշնամու» ու «դաշնակի» պիտակով խորհրդամետ կողմնորոշում ունեցած հազարավոր հայ հայրենադարձների աքսորմանը Սիբիրի ու Ղազախստանի ճամբարներ:

4. Հայության բնակության երկրներում, ինչպես նաև Խորհրդային Հայաստանի շուրջ Սփյուռքի համախմբմանը խոչընդոտել է նաև Խորհրդային Միության ու Սփյուռքի հայության ներգրավումը Սառը պատերազմի մեջ՝ միջբլոկային քաղաքական-գաղափարախոսական դիմակայության տարբեր կողմերում: Բնակության երկրներում Հայոց Սփյուռքի ներքին անհամախմբվածության էական, եթե ոչ գլխավոր գործոնն է դարձել Սփյուռքի կազմակերպությունների քաղաքականացումը, որի պատճառն էր նրանց ներգրավումը ԽՍՀՄ, ուստի և Խորհրդային Հայաստանի շահերին «կողմ» կամ «դեմ» լինելու հանգամանքով պայմանավորված, հետևաբար նաև իրար դեմ մղվող կոշտ քաղաքական-գաղափարախոսական պայքարում:

5. Հայաստանի Հանրապետությունը և Հայոց Սփյուռքը շարունակում են տուժել վերջինիս քաղաքականացվածությունից՝ պայմանավորված ժամանակին Համաշխարհային հայությունը անհաշտ բլոկների բաժանած Սառը պատերազմի հետևանքների իներցիայով.

- մի կողմից՝ Խորհրդային Հայաստանի կոմունիստական իշխանությունների հետ չափավոր համագործակցող Սոցիալ-դեմոկրատական հնչակյան<sup>9</sup> և Ռամկավար ազատա-

---

<sup>9</sup> *Սոցիալ-դեմոկրատ Հնչակեան կուսակցութիւն. Social Democrat Hunchakian Party*, Official Site: (<http://www.hunchak.org.au/aboutus/intro.html>): Հիմնվել է 1887 թվականին, Պարսկաստանում և Թուրքիայում առաջին սոցիալիստական կուսակցությունն է: «Այսօր Սոցիալ-դեմոկրատական հնչակյան կուսակցությունը գործում է ամբողջ Սփյուռքում և պատասխանատվություն է կրում անկախ Հայաստանի Հանրապետության համար: Նրա նպատակն է Հայկական հարցի կարևորումը՝ Հայոց ցեղասպանության և դրա համար փոխհատուցման անհրաժեշտության համաշխարհային ճանաչման նպատակով, տարածքի նկատմամբ՝ իր պատմական հայրենիք հայ ժողովրդի վերադարձի ու ինքնորոշման իրավունքի հարցի լուծման անհրաժեշտությունը»:

կան<sup>10</sup> կուսակցությունները, ինչպես նաև Հայկական ընդհանուր բարեգործական միությունը\*,

- մյուս կողմից՝ Հայ հեղափոխական դաշնակցությունը (ՀՀԴ)<sup>11</sup>:

6. Խորհրդային Միությանը առավել սուր ձևով դիմակայում էր Դաշնակցությունը, որը, առաջնային դեր կատարելով Սփյուռքի գոյատևման համար բացառիկ կարևորություն ունեցող հայության ազգային ինքնության պահպանման ու «Հայ դատի» հետևողական պաշտպանության գործում, իր ռեսուրսները դրել էր ի սպաս բնակության այն պետություններին, որոնք գտնվում էին Խորհրդային Միության հետ ան-

---

<sup>10</sup> *Ռամկավար-ազատական կուսակցութիւն. Armenian Democratic Liberal Party Ramgavar*, Official Site: (<http://www.hrak.am/page.php?p=4>): Հիմնադրվել է 1885 թվականին:

«Արմենական կուսակցությունը հիմնադրվել է 1885 թվականին Վանում՝ որպես ընդհատակյա կազմակերպություն, որը պայքարում էր ընդդեմ Օսմանյան Թուրքիայի իշխանությունների: 1921 թվականին մի խումբ արմենականներ՝ սոցիալ-դեմոկրատական կուսակցության անջատված մասը, սահմանադրական դեմոկրատների (կադետներ) խմբի հետ կազմեցին ժողովրդավարական ազատական կուսակցություն (ՌԱԿ): Ռամկավար կուսակցությունը, ի տարբերություն հայկական ծախ՝ Դաշնակցություն ու Հնչակյան, կուսակցություններից, քարոզում էր ազատականություն և կապիտալիզմ»:

\* Մենք այստեղ չենք հիշատակում այդ շրջանում ԱՄՆ-ում գործած համայնավարներին (կոմունիստներ), որոնք ևս համագործակցում էին Խորհրդային Հայաստանի կուսակցական և պետական ղեկավարության հետ՝ ստանալով ֆինանսական և այլ կարգի աջակցություն, քանի որ ԽՍՀՄ փյուզումից և ԽՄԿԿ կազմալուծումից հետո նրանք Սփյուռքում դադարեցին հանդես գալուց որպես քաղաքական գործոն:

<sup>11</sup> *Հայ Յեղափոխական Դաշնակցութիւն. Armenian Revolutionary Federation – Dashnaksutyun, Armenian Socialist Party*, Official Site: (<http://www.arfd.info/background>): Հիմնադրվել է 1890 թվականին: Սոցիալիստական ինտերնացիոնալի անդամ է: «Հայ Հեղափոխական Դաշնակցության ծրագիրը հիմնված է սոցիալական արդարության, ժողովրդավարության և հայ ժողովրդի ազգային ինքնորոշման սկզբունքների վրա: ՀՀԴ-ն ղեկավարել է ջանքերը՝ ուղղված 1918 թվականին Առաջին հայկական հանրապետության ստեղծմանը և նրա գոյության ընթացքում եղել է ղեկավար կուսակցություն: 1920 թվականին Հայաստանի խորհրդայնացումից հետո կոմունիստները արգելեցին դաշնակցությունը, իսկ նրա ղեկավարությանը արտաքսեցին երկրից: Սփյուռքում ՀՀԴ-ն Հայաստանի համար պայքարում էր Խորհրդային իշխանության դեմ և զլխավորում էր պայքարը հանուն հայ ժողովրդի իրավունքների և անկախության: Դաշնակցությունը առաջատար դեր էր կատարում հայկական ինքնության պահպանմանը նպատակաուղղված սոցիալ-մշակութային միջավայրի կազմակերպման գործում»:



հաշտ քաղաքական առճակատման վիճակում: Խորհրդային Միության կոմունիստական կուսակցությունը, խորհրդային հատուկ ծառայությունները անողոք պայքար էին մղում Ղազնակցության՝ որպես հակա-խորհրդային թշնամական կազմակերպության դեմ:

7. Խորհրդային Միությանը Ղազնակցության կոշտ դիմակայությունը դրսևորվում էր Հայոց Սփյուռքի երկու հակամարտող թևերի փոխհարաբերություններում՝ կապված այն հանգամանքի հետ, որ Ղազնակցությունը չէր ընդունում Խորհրդային Հայաստանը որպես սահմանափակ ձևի հայկական ազգային պետականություն: Այդ հարաբերությունները բարդացան, որովհետև Սփյուռքի խորհրդամետ կազմակերպությունների ղեկավար շրջաններին հայտնի դարձավ, որ Խորհրդային Հայաստանի հետ համագործակցելու համար Սոցիալ-դեմոկրատական հնչակյան, Ռամկավար-ազատական կուսակցություններին, ինչպես նաև Հայկական Բարեգործական Ընդհանուր Միությանը հրապարակային անհանդուրժողական քննադատության ենթարկած Ղազնակցության որոշ անդամներ նույնպես գաղտնի կերպով համագործակցել են ԽՍՀՄ հատուկ ծառայությունների հետ:

8. Քաղաքական ազդեցության իր ռեսուրսն ընդլայնելու նպատակով Ղազնակցությունն սկսել է հակախորհրդային պայքարում օգտագործել Անթիլիասի Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսությունը՝ նպաստելով Հայ Առաքելական եկեղեցու բաժանմանը, որը տեղի ունեցավ 1956 թվականին<sup>12</sup>, դրանով իսկ Սփյուռքի ներսում եղած քաղաքական դիմակայությունը տարածելով մինչև հավատացյալ հոտի մասշտաբների:

9. 1972 թվականին ՀՀԴ մի խումբ ականավոր գործիչներ ստեղծեցին Ամերիկայի հայկական համագումարը (ԱՀՀ)՝ ժամանակակից տիպի արտակուսակցական լրբբինգային կազմակերպություն: Սակայն հետագայում ԱՀՀ-ի և ՀՀԴ-ի միջև ծագել է հակամարտություն, որը դրսևոր-

---

<sup>12</sup> Տես "The Mother See of Holy Etchmiadzin". "The Armenian Church" (<http://www.armenianchurch.org/index.jsp>); "Армянская Апостольская церковь. Киликийский Католикосат. Русская Православная церковь". Официальный сайт Московского Патриархата (<http://www.patriarchia.ru/db/text/1114932.html>); *Նաև*՝ "Armenian Apostolic Church". "Encyclopedia Britannica" (<http://www.britannica.com/EBchecked/topic/35284/Armenian-Apostolic-Church>):

վել է քաղաքական լոբբինգի ասպարեզում կոշտ առձակատման ձևով<sup>13</sup>:

10. Մի շարք նոր կազմակերպություններով իր կազմը համալրած Հայոց Սփյուռքը որևէ էական մասնակցություն չի ունեցել ԽՍՀՄ փլուզման ընթացքում Հայաստանի կողմից անկախության ձեռքբերման գործում: Դաշնակցության փորձերը՝ ակտիվ կերպով մասնակցելու ՀՀ-ում և ԼՂՀ-ում ծավալված ազգային-ազատագրական պայքարին և իշխանությունների ձևավորմանը բախվել են այդ շրջանում ՀՀ առաջատար քաղաքական ուժի՝ Հայոց համազգային շարժման հակազդեցությանը՝ ՀՀ-ում Դաշնակցության գործունեության հետագա արգելմամբ և նրա ղեկավարության ձերբակալմամբ<sup>14</sup>:

---

<sup>13</sup> *Ամերիկայի հայկական համագումար. Armenian Assembly of America*, Official Site: (<http://www.aaainc.org/index.php?id=10>):

«Համագումարը, օգտագործելով հետազոտությունները, կրթությունն ու լոբբինգը, գործում է հօգուտ ԱՄՆ-ի և ՀՀ-ի, ԱՄՆ-ի և ԼՂՀ-ի միջև հարաբերությունների ամրապնդման, Հայաստանի և Դարաբաղի ժողովրդավարական զարգացման ու տնտեսական բարեկեցության առաջնման, ինչպես նաև Հայոց եղեռնի համաշխարհային ճանաչման: Օգտագործելով կամավոր ակտիվիստների, աշխարհիկ լիդերների համազգային ցանցը և Վաշինգտոնում, Լոս Անջելեսում, Նյու Յորքում, Բոստոնում, Երևանում, Ստեփանակերտում ու Գյումրիում գործող աշխատակազմը՝ Համագումարը ամերիկահայության շահերի հետ առնչվող հարցերը առաջ մղելու նպատակով աշխատում է Վաշինգտոնում (Կոլումբիայի օկրուգ) գտնվող վարչակազմի, Կոնգրեսի ու քաղաքական գործիչների և նահանգների օրենսդիրների հետ: Ամերիկահայերի գործողությունների կոմիտեն (*ARAMAC*) քննարկման մեջ գտնվող բախտորոշ հարցերով լոբբինգ է իրականացնում՝ բոլոր հիսուն նահանգներում ամերիկահայությանը Համագումարի հասարակական նախաձեռնության միջոցով մոբիլիզացնելով Կոնգրեսում և Սպիտակ Տանը այդ նահանգների ներկայացուցիչների հետ շփումների»:

Համաձայն ամերիկյան «Open Secrets.org» բաց աղբյուրի տվյալների՝ Ամերիկայի հայկական համագումարը իր լոբբինգային գործունեության համար օգտագործել է հետևյալ, բավականին ոչ մեծ գումարները. 2000 թ.՝ 270.000 ԱՄՆ-ի դոլար, 2001 թ.՝ 240.000, 2002 թ.՝ 140.000, 2003 թ.՝ 180.000, 2004 թ.՝ 220.000, 2005 թ.՝ 220.000, 2006 թ.՝ 180000, 2007 թ.՝ 320.000 դոլար (տես «Armenian Assembly of America», Lobbying Spending Database. "OpenSecrets.org" (<http://www.opensecrets.org/lobbyists/clientsum.asp?name=Armenian+Assembly+of+America&year=2008>)):

<sup>14</sup> *Հայ յեղափոխական դաշնակցութիւն. Armenian Revolutionary Federation – Dashnaksutyun, Armenian Socialist Party*, Official Site: (<http://www.arfd.info/background/>):

11. Անկախ Հայաստանի նոր ընտրված իշխանությունները փորձ են արել միավորելու Հայ Առաքելական եկեղեցին՝ Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոս Գարեգին Բ-ին Ամենայն Հայոց Կաթողիկոսի Աթոռ բարձրացնելով որպես Գարեգին Ա<sup>15</sup>: Համաշխարհային հայության համախմբման վրա իր հնարավոր ազդեցությամբ այս կարևոր ձեռնարկունը ի չիք է արվել ՀՀ-ում Դաշնակցության՝ Անթիլիասի Կաթողիկոսության քաղաքական հովանավորի զուգահեռ արգելմամբ:

Ի տարբերություն Հրեական սփյուռքի կազմակերպվածքից (ըստ էության՝ անկուսակցական), Հայոց Սփյուռքի ներսում հարաբերությունների կառուցումն ու գործառնումը տեղի են ունենում գերազանցապես կուսակցականության հիմքի վրա, որն արտացոլում է Հայոց Սփյուռքի կազմակերպությունների միջև, ներառյալ՝ Եկեղեցին, Սառը պատերազմի կանոններով ընթացող անհաշտ քաղաքական պայքարի ինտերցիան: Դրանք Համաշխարհային հայության դեռ չհաղթահարված բացասական յուրահատկությունն են: Արտասահմանյան հայ կազմակերպությունները իրենց ռեսուրսների և ջանքերի մի մասը շարունակում են վատնել Հայոց Սփյուռքի մրցակից կազմակերպությունների ուժեղացմանը խոչընդոտելու նպատակով:

12. ԱՄՆ-ի Հրեական սփյուռքը հրեության ծուլման սպառնալիքի դեմ պայքարը իրականացնում է առաջին հերթին երիտասարդ սերնդի կրթության նպատակով տրամադրվող համալսարանական թոշակների համար միջոցների նպատակաուղղված ներդրմամբ: Ընդամին ապահովվում է ԱՄՆ-ի քաղաքականության վրա ազդեցության բոլոր ոլորտներում հրեության ներկայացուցչությունը վերարտադրելու համար ան-

---

«Հայաստանի իշխանությունները 1994 թվականի դեկտեմբերի 28-ին Հայ հեղափոխական դաշնակցության գործունեությունը «ժամանակավորապես դադարեցրեցին»: 1998 թ. փետրվարի 9-ին՝ Նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանի հրաժարականից պակաս, քան մեկ շաբաթ անց, Արդարադատության նախարարությունը հանեց ՀՀ-ում Դաշնակցության գործունեության վրա դրված արգելքը»:

<sup>15</sup> Stu “Catholicos Karekin I, Armenian Patriarch” (Neshan Sarkissian). “Encyclopedia Britannica” (<http://www.britannica.com/EBchecked/topic/312233/Catholicos-Karekin-I>); նաև՝ “Armenian Apostolic Church”. “Encyclopedia Britannica” (<http://www.britannica.com/EBchecked/topic/35284/Armenian-Apostolic-Church>):

հրաժեշտ մասնագիտությունների ամբողջ սպեկտրը<sup>16</sup>: ԱՄՆ-ի Հայոց Սփյուռքը, ի տարբերություն Հրեականից, չունի քաղաքական լրբքինգի սերնդային հիմքերի շարակարգված վերարտադրության նման թագմավարություն:

Հայության շրջանում բարձրագույն կրթության ընտրությունն ըստ մասնագիտությունների լայն սպեկտրի, հազվագյուտ բացառություններով\*, ֆինանսապես չի սատարվում և ուղղված չէ ամերիկյան հասարակության վրա հնարավոր ազդեցության ուղորտներում հայության երիտասարդ սերնդի ներկայացվածության շարակարգված վերարտադրությանը և ընդլայնմանը: Համալսարանական մասնագիտությունների ընտրությունը սովորաբար սահմանափակվում է բժշկի և իրավաբանի մասնագիտություններով: Ի տարբերություն հրեաներից, որոնց երեխաների

---

<sup>16</sup> 1981 թվականին Նյու Յորքում ընտանիքների գլուխ հրեաների կեսից ավելին ուներ բարձրագույն կրթություն (տես “Электронная Еврейская энциклопедия”, КЕЭ, т. 5, кол. 792 – 806 (<http://www.eleven.co.il/article/13019>):

Տես *Павел Завлин*. Статистика знает все: евреи в США и в мире. “Kontinent Media Group” ([http://www.kontinent.org/article\\_rus\\_4966ab0c9b0a8.html](http://www.kontinent.org/article_rus_4966ab0c9b0a8.html)):

Համաձայն Պ. Չավլինի հետազոտության՝ «ամենահարուստ Կալիֆոռնիա նահանգում 36 մլն բնակիչներին բաժին է հասնում 90 միլիարդատեր, իսկ հրեաները, կազմելով բնակչության 2 %-ը, ունեն 31 միլիարդատեր: Նյու Յորք նահանգում (19 մլն բնակիչ, 49-ը միլիարդատեր) հրեաները կազմում են բնակչության 5 %-ը և ունեն 34 միլիարդատեր, կամ 70 %-ը: Այժմ փողից անցնենք «խելքի»: ԱՄՆ-ում ապրում է գիտությունների բնագավառում Նոբելյան մրցանակի 156 դափնեկիր (միջինը համարյա 2 միլիոն բնակչին՝ մեկ դափնեկիր), դրանցից հրեա են 61-ը, կամ մեկ դափնեկիր 87 հազար բնակչից: Այժմ իշխանության մասին: Ներկայումս ԱՄՆ-ի Սենատում հարյուր անդամից տասներկուսը հրեա են: Մինչև 1950-ական թվականները, երբ հրեաները կազմում էին մոտ 4 %, Սենատում նրանք գործնականում ներկայացված չէին: Այնուհետև՝ 1950-ական թվականներին կային 2, 1960-ականներին՝ 3, 1970-ականներին՝ 6, 1980-ականներին՝ 8 հրեա սենատոր: Թեև հրեական բնակչության բաժինը նվազեց ավելի քան երկու անգամ (4-ից հասնելով մինչև 1,75 %-ի), Սենատում նրանք բաժինը ավելացավ 6 անգամ: Դա նշանակում է, որ նրանք ավելի ու ավելի լիակատար կերպով են ինտեգրվում հասարակության բարձրագույն քաղաքական ընտրախսավին: Նահանգապետներից երկուսը ևս հրեա են»:

\* Խոսքը վերաբերում է Հայկական բարեգործական ընդհանուր միության թշակներին, Ամերիկայի հայկական ասամբլեայի և Ամերիկայի հայկական ազգային կոմիտեի կարճատև գործնական պատրաստմանը (ինտերնշիպ):

ընդգրկումը Սփյուռքի ջանքերով նպատակաուղղված կերպով աճում է՝ իվրիտերենով դասավանդմանը լրիվ անցման պայմանով<sup>17</sup>, ԱՄՆ-ում, ինչպես նաև ընդհանրապես Հայոց Սփյուռքում հայ երեխաների ուսուցումը մայրենի լեզվով ունի մարելու միտում<sup>18</sup>:

13. ՀՀ-ի և Սփյուռքի միջև հարաբերությունները շարունակում են դժվարություններ կրել՝ կապված Համաշխարհային հայության գլխավոր համակարգաստեղծ տարրերի՝ Ազգային պետության՝ ի դեմս Հայաստանի Հանրապետության և Սփյուռքի միջև արդյունավետ փոխշահագրգիռ երկխոսության մոդելի ձևավորման անհրաժեշտությունը չհասկանալու հետ:

14. Հիմնական խոչընդոտներից մեկն այն է, որ չկա համախմբող ազգային գաղափարախոսություն, որն արտացոլեր Համաշխարհային հայության արժեքային կողմնորոշումների և գերակայությունների համադրումը /միաբերումը/: Հայաստանի Հանրապետության անկախությունից հետո այդ ուղղությամբ կատարվող աշխատանքը, ցավոք, ուներ ոչ համակարգված հրապարակախոսական բնույթ: Նման համախմբող ազգային գաղափարախոսության հիմք կարող է լինել արդի համաշխարհային զարգացումների դինամիկայի հաշվառմամբ վերաիմաստավորված Տարոնականության փիլիսոփայությունն ու վարդապետությունը, որը կերտվել էր հայ առաջադեմ ազգայնական մտավորա-

---

<sup>17</sup> Տես «Электронная еврейская энциклопедия», КЕЭ. т. 5, кол. 792–806 (<http://www.eleven.co.il/article/13019>):

«Նյու Յորքի բոլոր տիպի հրեական դպրոցներում սովորող երեխաների թիվը կազմում էր՝ 1935–1936 թթ.՝ 75 հազ., 1952–1953 թթ.՝ 154 հազ., 1958 թ.՝ 202 հազ., 1968–1969 թթ.՝ 136 հազ.: Դպրոցական տարիքի հրեա երեխաների 74 %-ը 1980-ական թվականներին ուսանում էր տարբեր տիպի հրեական դպրոցներում»:

<sup>18</sup> «Արևմտահայերենի ուսուցման վիճակը Սփյուռքում» գիտագործնական խորհրդածրուցում ՀՀ Սփյուռքի նախարար Հ. Հակոբյանն իր զեկուցման մեջ նշել է սփյուռքահայ երեխաներին արևմտահայերենի ուսուցման տագնապալի վիճակը (տես «Արևմտահայերենի ուսուցման վիճակը Սփյուռքում» գիտագործնական խորհրդածրուցում: Ծաղկածոր, 3–5.07.2010: ՀՀ Սփյուռքի նախարարության պաշտոնական կայքէջ (<http://www.min.diaspora.am/am/Conferences/783>):

կանության շրջաններում և ժամանակին ստացել էր լայն ճանաչում<sup>19</sup>:

Ե՛վ քաղաքական, և՛ քաղաքագիտական առումով հույժ կարևոր է 2009–2010 թվականներին Հայաստանի և Թուրքիայի միջև հարաբերություններում «ֆուտբոլային դիվանագիտության» ընթացքում Սփյուռքի մի զգալի մասի շրջանում ձևավորված բացասական տրամադրությունների մասնագիտական գնահատումը: Իշխանության այս գործողություններն իրենց մեջ կրում են հայության համախմբման գործոնների շարքում առավել ազդեցիկ՝ Եղեռնի ճանաչման համար պայքարի գործոնի արդյունավետության նվազեցման սկզբունքային սպառնալիք: Ռեստի դրանց օբյեկտիվ ինքնաքննադատական վերլուծությունը ենթադրում է «ՀՀ–Սփյուռք» երկխոսության կառուցման մեթոդաբանության մեջ և ձևերում թույլ տրված սխալներից կշռադատված դասեր քաղելու անհրաժեշտություն<sup>20</sup>:

### III. ՈՐՈՇ ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄՆԵՐ

Համաշխարհային հրեության կենսագործունեության հաջողությունը պայմանավորված է դրա զլխավոր սուբյեկտների՝ Իսրայելի Պետության և Սփյուռքի միջև համակարգային փոխշահավետ համագործակ-

---

<sup>19</sup> Տես *Գ. Նժդեհ*, Հատընտիր: Ե., 2001, էջ 328–352, նաև՝ Հ. Ասատրյան, Հատընտիր: Ե., 2004, էջ 84–98:

*Theodor Herzl. The Jewish State (Theodor Herzl's Program for Zionism)* ([http://www.zionism-israel.com/js/Jewish\\_State\\_tc.html](http://www.zionism-israel.com/js/Jewish_State_tc.html)):

<sup>20</sup> Տես Հ. Քոթանջյան, Հայաստանի և Թուրքիայի բազմալիսության համակարգային համեմատությունը Թուրքիայի հանդեպ Հայաստանի անվտանգային ռազմավարության հիմքերի և միջպետական համագործակցության հեռանկարների մշակման տեսանկյունից: «Աշխատանքային տետրեր», 2008, հմ. 3–4, էջ 5–20:

Տես նաև “Protocols between the Republic of Armenia and the Republic of Turkey”, signed on October 10 in Zurich, 11 October 2009; Protocol on the Establishment of Diplomatic Relations between the Republic of Armenia and the Republic of Turkey”; “Protocol on Development of Relations between the Republic of Armenia and the Republic of Turkey”. (տես “Ministry of Foreign Affairs of the Republic of Armenia” (<http://www.armeniaforeignministry.com/index.html>)); «ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանի հեռուստաուղերժը Հայաստան–Թուրքիա հարաբերությունների կարգավորման գործընթացի վերաբերյալ», Press release, 2010-09-06 (Press Office of the President of the Republic of Armenia):

ցությամբ, որը տեղի է ունենում «Համաշխարհային հրեության համախմբում հանուն հզոր, անվտանգ և կայուն զարգացող Իսրայելի Պետության» սկզբունքի տիրապետության պայմաններում: Ընդսմին Սփյուռքը գործում է կազմակերպվածքի անկուսակցական մոդելով:

Ուժացման և իր տարրերի միջև քայքայիչ առճակատման մարտահրավերների առջև Համաշխարհային հայության թույլ համախմբվածությունը, ինչն զգալի չափով պայմանավորված է այն հանգամանքով, որ Սփյուռքը 20-րդ դարում ձևավորվել է գերազանցապես «կուսակցական-կորպորատիվ» կազմակերպական մոդելով, ունի երկու չափում՝ հարաբերություններ Սփյուռքի ներսում և Սփյուռքի հարաբերություններ Հայաստանի Հանրապետության հետ:

Հայության համախմբմանն ուղղված ջանքերն զգալի չափով ապարդյուն են այն պատճառով, որ չկան Սփյուռքի, ՀՀ և ԼՂՀ գոյատևման ու առաջադիմական փոխշահավետ զարգացման ռազմավարական պրոբլեմների լուծման հարցում համաձայնության ձեռքբերման նպատակով արդյունավետ երկխոսության ավանդույթներ ու մեխանիզմներ: Այս առումով ռազմավարական տրամաչափ ունեցող պրոբլեմային գերակայությունների շրջանն ընդգրկում է իմաստավորում և երկխոսային համաձայնեցում պահանջող մի շարք համահայկական համակարգաստեղծ գործիքների վերակարգավորում. չկան ՀՀ – Սփյուռք համագործակցության համաձայնեցված ռազմավարություն, Համաշխարհային հայությանը միաբանող և Սիոնիզմին համագոր ազգային գաղափարախոսություն, Համաշխարհային հայության համախմբման դիրքերից դեռ լուծված չէ Հայ Առաքելական Եկեղեցու վերամիավորման խնդիրը, չկա Հայոց լեզուն և ուղղագրությունը որպես Համաշխարհային հայությանը միավորող գործոնի իմաստավորման համաձայնեցված ռազմավարություն:

Համաշխարհային հայության մասնատվածության հաղթահարման վերաբերյալ առաջարկությունները դառնում են անհեռանկարային, որովհետև չկա Սփյուռքի բոլոր գլխավոր կազմակերպությունների և ազգային պետության՝ Հայաստանի Հանրապետության միջև երկխոսությունում ընդհանուր շահերի ներկայացման օգտավետ մոդելի ձևավորման

կոլեկտիվ կամք: ՀՀ մի շարք հիմնարկներ լավ չեն ըմբռնում այն հանգամանքը, որ հնարավոր չէ քիչ թե շատ կարևոր առաջարկություններն իրացնել՝ դրանք միակողմանիորեն մշակելու և Սփյուռքին պարտադրելու ճանապարհով: Նման մշակումների անհաջողությունների, իսկ մի շարք դեպքերում՝ ցավալի ծախսողումների պատճառն այն է, որ մշակողները անհրաժեշտ չեն համարում իրենց նախագծերը նախապես քննարկել և համաձայնեցնել Սփյուռքը ներկայացնող գործընկերների կամ ընդդիմախոսների հետ: ՀՀ մշակողները, ինչպես նաև Սփյուռքի ներկայացուցիչները բավարար չափով չեն ընկալում արդյունավետ գործընկերության այնպիսի անհրաժեշտ պայմանների բացառիկ կարևորությունը, ինչպիսիք են կողմերի ներկայացուցչությունը և դրա վրա հիմնված լուծումների իրավագործությունը:

Այս կարգի բարդությունների տիպիկ լուսաբանում կարող են լինել վերջին տարիներին «Սփյուռք–ՀՀ» ձևաչափով կազմակերպվող հավաքները, որոնց ներկայացուցչության և իրավագործության մասին ՀՀ ԱԳՆ-ին ներկայացվում են լուրջ և տեղին դժգոհություններ: Պատշաճ ձևով չի ընկալվում նաև Սփյուռքի նախարարության հովանու ներքո Հայաստանում անցկացվող տարբեր ժողովների՝ մասնագիտական, գենդերային և այլ սոցիալ-մշակութային հատկանիշներով ներկայացվածության և իրավագործության հարցում ՀՀ-ի և Սփյուռքի միջև համաձայնության ձեռքբերման կարևորությունը\*:

Ամերիկայում էթնիկական լռբեինգի փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս ներկայացուցչության և իրավագործության պրոբլեմի լուծման այն մեթոդաբանության արդյունավետությունը, որը կիրառում է ԱՄՆ-ի

---

\* ԱՄՆ-ի հայկական համայնքների դժգոհությունն է հարուցում «Սփյուռքի նախարարություն» անվանումը: Հայաստանի Հանրապետության պետական հիմնարկի անվանման մասն ձևակերպումը ենթադրում է բնականության պետությունների իրավաքաղաքական դաշտում գործող հայկական համայնքների գործունեության քաղաքական ձեռնածություններ Երևանից: Հիմք ընդունելով քաղաքական նախապատվությունը՝ հարկ է հաշվի առնել Սփյուռքի մի շարք գործիչների խորհուրդը՝ Սփյուռքի նախարարությունը վերանվանելու «Սփյուռքի գործերով նախարարություն»: Այս առումով նպատակահարմար է նաև Նախագահի հաստատության ու ԱԳՆ-ի քաղաքական առաքելությունը տարանջատել Սփյուռքի նախարարության սոցիալ-մշակութային առաքելությունից:



Հրեական սփյուռքը: Համաշխարհային հրեության համար ռազմավարական կարևորություն ունեցող պրոբլեմների լուծման ժամանակ ներկայացուցչության ապահովման և իր ներքին բարդ կառուցվածքում ու Իսրայելի Պետության հետ Հրեական սփյուռքի իրավագործական կազմակերպությունների ղեկավարներից կազմված մշտական ներկայացուցչական համաժողովների (կոնգրեսներ, խորհրդաժողովներ) ստեղծման սկզբունքը: Նման սփյուռքային գերկազմակերպությունների աշխատակազմերն զբաղվում են ռազմավարական տրամաչափի այն պրոբլեմների երևան հանմամբ, որոնք արտացոլում են բոլոր գլխավոր կազմակերպությունների և Իսրայելի Պետության շահերը, դրանց ներառմամբ նիստերի օրակարգում և համաձայնական ընդունմանը ներկայացվող լուծումների նախագծերի նախնական համաձայնեցմամբ:

Կարևոր է նշել, որ Համաշխարհային հրեության ռեսուրսների ու ջանքերի համախմբման նկատմամբ նման մոտեցումը արտացոլված է բնակչության երկրներում համայնքների<sup>21</sup>, ինչպես նաև տարածաշրջանային

---

<sup>21</sup> Տես *Собрание Президентов главных американских еврейских организаций. Conference of Presidents of Major American Jewish Organizations*, Official site: (<http://www.conferenceofpresidents.org/>):

Ամերիկայի գլխավոր հրեական կազմակերպությունների նախագահների ժողովը (ԱԳՀԿՆԺ) ԱՄՆ-ի հրեության լիդերների ներկայացուցչական մարմինն է: Հիմնվել է 1955 թ. Վաշինգտոնում: Այդ կազմակերպության ստեղծումը պայմանավորված էր Մերձավոր Արևելքում քաղաքական լարվածության վերաբերյալ ամերիկյան հրեության աճող մտահոգությամբ: Ավելի ուշ դրան ավելացել է ևս մեկ նպատակ՝ հրեաների իրավունքների պաշտպանությունը ամբողջ աշխարհում: Ժողովի առաջին նախագահը եղել է Ն. Գոլդմանը: 1966 թ. որոշում է ընդունվել ԱԳՀԿՆԺ-ն հրեական կազմակերպությունների նախագահների ներկայացուցչական մարմնից կերպափոխելու այդ իսկ կազմակերպությունների ներկայացուցչական մարմնի, ինչպես նաև մշտական շփումներ հաստատելու համաշխարհային հրեական կազմակերպությունների հետ՝ կարծիքների և տեղեկույթի փոխանակումը հեշտացնելու նպատակով: 1970 թվականին ժողովի կազմի մեջ մտնող կազմակերպությունների (ինչպես կրոնական, այնպես էլ աշխարհիկ) թիվը հասել է 24-ի, իսկ 90-ական թվականների սկզբներին՝ գերազանցել 40-ը, և դրանք ներկայացնում են ԱՄՆ-ի հրեական բնակչության ճնշող մեծամասնությունը:

ԱԳՀԿՆԺ-ն շփումներ է հաստատել և հանդիպումներ է կազմակերպում ԱՄՆ-ի բարձրագույն վարչակազմի ներկայացուցիչների, սենատորների և կոնգրեսականների հետ, հրապարակում է փաստաթղթեր, որոնք վերաբերում են երկրի հրեական համայնքի շահերին

ամնչվող հարցերին, կազմակերպում է հասարակական միջոցառումներ (համագումարներ, ցույցեր և այլն) հաջակություն Իսրայելի, որի քաղաքական ու հասարակական առաջնորդները հաճախակի հյուրեր են ժողովի տարբեր համաժողովներում:

<sup>22</sup> Տես *Европейский еврейский конгресс. European Jewish Fund*. “Вячеслав Моше Кантор, Президент ЕЕК”, Official site: (<http://www.moshekantor.com/ru/>):

«Եվրոպական հրեական կոնգրեսը (ԵՀԿ) առավել ազդեցիկ միջազգային հասարակական կազմակերպություններից մեկն է և խոշորագույն աշխարհիկ կազմակերպությունը, որը ներկայացնում է Եվրոպայի ավելի քան 2,5 միլիոն հրեաների շահերը: Կոնգրեսի կազմի մեջ մտնում են մայրցամաքի 42 երկրների ազգային համայնքները: ԵՀԿ-ի՝ որպես Եվրոպական ինտեգրումային գործընթացներում անմիջականորեն ներգրավված կառույցի կարևոր առաքելությունն է նպաստել բարիդրացիության, փոխըմբռնման և հանդուրժողության վրա հիմնվող ժողովրդավարական հասարակության սկզբունքների հաստատմանը Եվրոպայում: ԵՀԿ-ն ակտիվ կերպով համագործակցում է Եվրոպական պետությունների կառավարությունների, առաջատար միջազգային կառույցների ու Եվրոպական ինտեգրացիոն միավորումների հետ, որոնց թվում են՝ ՄԱԿ-ը, Եվրամիությունը, ԵԱՀԿ-ն: ԵՀԿ-ն ունի Եվրոպայի Խորհրդի մասնակցի կարգավիճակ: ԵՀԿ-ի գործունեությունը նպատակաուղղված է ժամանակակից հասարակության առջև ծառայած առավել կարևոր խնդիրների լուծմանը, որոնք են՝ Մարդու իրավունքների պաշտպանությունը, օտարատեցություն և հակասեմականության դեմ պայքարը, աջակցությանը միջկրոնական երկխոսությանը, մշակութային և կրթական ծրագրերի զարգացումը, ամբողջ աշխարհով մեկ միլիոնավոր մարդկանց կյանք խլած Ողջակիզման և այլ ողբերգությունների մասին հիշողության պահպանումը»:

<sup>23</sup> Տես *Совет еврейских федераций и благотворительных фондов. Council of Jewish Federations and Welfare funds*. “Электронная еврейская энциклопедия”, КЕЭ, т. 8, кол. 92 – 94 (<http://www.eleven.co.il/article/13875>):

Հրեական ֆեդերացիաների և բարեգործական հիմնադրամների խորհուրդը (ՀՖԲԽ) ԱՄՆ-ում տեղի հրեական համայնքային հիմնարկությունների ասոցիացիա է: Խորհուրդն իր գործունեությունը սահմանափակում է նրանով, որ համաձայնեցնում է համայնքներում միջոցների հավաքման արշավների կազմակերպման ժամկետները, մասնակցում է հավանական հանգանակողների շրջանում կազմակերպվող ագիտացիային, ինչպես նաև որոշում է, թե ինչ նպատակով ծախսել հավաքված միջոցների այն մասը, որը տեղական համայնքային հիմնարկները կամավոր սկզբունքով հատկացնում են իրենց կարիքները հոգալու հետ կապ չունեցող միջոցառումների ֆինանսավորման համար: ՀՖԲԽ-ն դրամական միջոցների մեծ մասը (50-60 %-ը) փոխանցում է Միացյալ հրեական աղերսին՝

կերպությունների ծրագրերի իրացմանը նպաստակաուղղող հիմնադրամների<sup>24</sup> շարակարգի տեսքով զուգահեռ ներկայացուցչական կառույցների ստեղծման փորձը:

Ֆինանսավորելով նրա գործունեության գլխավոր ուղղությունները, հատկապես՝ արտասահմանյան մասնաճյուղերում: Տեղական ֆեդերացիաները միջոցների ավելի քան 30 %-ը թողնում են իրենց համայնքներում՝ սոցիալական ծրագրերի համար, և միայն 2 %-ն է տրամադրվում մշակութային ու կրոնական բնույթի հրեական ազգային կազմակերպություններին, իսկ մնացածը ծախսվում է վարչական նպատակներով: Վերջին տարիներին տեղական կարիքների վրա ծախսվող միջոցների բաժնեմասը անընդհատ աճում է:

ՀՖԸԽ-ն հրապարակում է ամենամյա հաշվետվություններ, որոնք վերաբերում են բյուջեի եկամտային և ծախսային հոդվածներին, իր հաշվին կազմակերպվող արշավների և ձեռնարկումների արդյունքներին, ինչպես նաև տեղական հրեական համայնքների վիճակին՝ բարեկեցության ու գործարար ակտիվության մակարդակի տեսակետից: Ավելի ու ավելի մեծ ուշադրություն է դարձվում հրեական կրթական համակարգի զարգացմանը:

Հրեական պետության համար միջոցների հավաքումը հատկապես մեծ թափ է ստանում ձգնաժամային շրջաններում: Այսպես. «Վեցօրյա պատերազմին» նախորդած շաբաթվա ընթացքում հրեական ֆեդերացիաների և բարեգործական ֆոնդերի խորհուրդը Միացյալ հրեական աղերսի հետ համատեղ ստեղծեցին Իսրայելին օգնության արտակարգ ֆոնդ, որի համար հետագայում հավաքվեցին հարյուրավոր միլիոն դոլարներ: Նույնը տեղի ունեցավ՝ կապված «Ղատաստանի օրվա» պատերազմի հետ. եթե դրան նախորդած տարիներին հավաքված դրամական գումարները կազմում էին միջինը 400–450 մլն դոլար, ապա հաջորդ տարում այդ թիվը հասավ 660 մլն-ի, իսկ հետագայում գումարը կազմում էր տարեկան ոչ պակաս, քան 450–475 մլն դոլար:

Տես նաև *Պավել Ջավլին*, Նշ. աշխ:

Համաձայն Պավել Ջավլինի հետազոտության՝ «Հրեաների մոտ 40 %-ը ներդրումներ է կատարում ի բարօրություն հրեական համայնքի: Սույն հետազոտության նպատակներից մեկն է լուծել այն հարցը, թե ինչպես առավել մեծ օգուտով տնօրինել այն 850 մլն դոլարը, որոնք ամեն տարի հատկացվում են ԱՄՆ-ի հրեաների շրջանում հրեական մշակութային ու կրոնական ավանդույթների պահպանմանն ու ամրապնդմանն ուղղված նախաձեռնությունների համար»:

<sup>24</sup> Տես *Европейскую Еврейскую Фонд. European Jewish Fund*, Official Site: (<http://www.europeanjewishfund.org/index.php?ru.tride>):

Եվրոպական Հրեական Հիմնադրամը (ԵՀՀ) հիմնվել է 2006 թ. փետրվարին Վլաչեսլավ Մոշե Կանտորի նախաձեռնությամբ, որը, լինելով ԵՀԿ նախագահ, զբաղեցնում է նաև Հիմնադրամի նախագահի աթոռը:

Եվրոպական հրեական հիմնադրամը (ԵՀՀ) բաղկացած է երկու պալատից, որոնք են՝ Համայնքների լիդերների պալատը (կամ Գործադիր խորհուրդը) և Ֆինանսական դոնորների պալատը (կամ Կառավարիչների խորհուրդը): Հիմնադրամի գլխավոր սկզբունքն է հաղորդակցությունը կլոր սեղանի շուրջ, որտեղ բոլոր անդամները իրավունք ունեն անթաքույց արտահայտելու իրենց կարծիքը և հավասարապես մասնակցելու քննարկմանը:

Մեր կարծիքով՝ Սփյուռքի և Հայոց պետության ռազմավարական շահերի փոխօգտավետ ինտենսիվ առաջնդման նպատակով անհրաժեշտ է ստեղծել ազգային ռեսուրսների համախմբմանն ու օգտագործմանն ուղղված ներկայացուցչական իրավազոր երկխոսության ու համագործակցության համակարգ: Նպատակահարմար է, որ դրա ստեղծման հիմքում ղնելու համար ՀՀ ղեկավարությունն ընդունի որոշումներ հետևյալի մասին.

Изучение опыта этнического лоббинга в Америке показывает эффек-тивность методологии разрешения проблемы репрезентации и пол-номочности еврейской Диаспорой США. В качестве основы репре-зентации и полномочного сотрудничества еврейской Диаспоры внутри своей сложной структуры и с Государством Израиль для ре-шения стратегически важных проблем Всемирного еврейства поло-жен принцип создания постоянно действующих представительских форумов (конгрессов, конференций), состоящих из руководителей главных еврейских организаций. Аппараты подобных диаспорских суперорганизаций занимаются выявлением проблем стратегического калибра, отражающих интересы всех главных организаций и Госу-дарства Израиль, их включением в повестку заседаний и предвари-тельным согласованием проектов решений, выносимых на консен-сусное принятие.

Важно отметить, что подобный подход к консолидации ресурсов и усилий Всемирного еврейства отражен в сетевом строительстве

---

\* В армянских общинах США вызывает нарекания название "Министерство Диаспоры". За подобной формулировкой названия государственного учреждения Республики Армения подразумевается политическое манипулирование из Еревана делами армянских общин, действующих в политико-правовом поле государств проживания. Исходя из политической предпочтительности, следует прислушаться к советам ряда деятелей Спюрка по переименованию Министерства Диаспоры в "Министерство по делам Диаспоры". В этом плане целесообразно в делах Диаспоры также разграничить политическую миссию Президентского института и МИД от социокультурной миссии Министерства по делам Диаспоры.

национальных представительских организаций на уровнях общин в странах проживания<sup>21</sup>, а также региональных сообществ<sup>22</sup>.

---

<sup>21</sup> См. *Собрание Президентов главных американских еврейских организаций. Conference of Presidents of Major American Jewish Organizations*, Official site: (<http://www.conferenceofpresidents.org/>).

СПГАЕО – представительный орган лидеров еврейства США. Основан в 1955 г. в Вашингтоне. Возникновение Собрания президентов главных американских еврейских организаций было результатом растущей озабоченности американского еврейства политической напряженностью на Ближнем Востоке; позднее к этой цели добавилась еще одна – защита прав евреев во всем мире. Первым председателем Собрания был Н. Гольдман. В 1966 г. было принято решение преобразовать Собрание президентов главных американских еврейских организаций из представительного органа президентов еврейских организаций в представительный орган самих этих организаций, а также установить постоянные контакты с мировыми еврейскими организациями, чтобы облегчить взаимный обмен мнениями и информацией. К 1970 г. число организаций (как религиозных, так и светских), входящих в Собрание президентов главных американских еврейских организаций, достигло 24, в начале 1990-х гг. их стало свыше 40; они представляют подавляющее большинство еврейского населения США.

Собрание президентов главных американских еврейских организаций осуществляет контакты и проводит встречи с представителями высшей администрации США, сенаторами и конгрессменами, публикует документы по вопросам, связанным с интересами еврейской общины страны, организует общественные мероприятия (съезды, демонстрации и т. п.) в поддержку Израиля, политические и общественные лидеры которого – частые гости на различных форумах Собрания.

<sup>22</sup> См. *Европейский еврейский конгресс. European Jewish Fund*. “Вячеслав Моше Кантор, Президент ЕЕК”, Official site (<http://www.moshekantor.com/ru/>).

“Европейский еврейский конгресс (ЕЕК) – одна из наиболее влиятельных международных общественных организаций и крупнейшая светская организация, представляющая интересы более 2,5 миллионов евреев Европы. В Конгресс входят национальные общины 42-х стран континента. Важной миссией ЕЕК как структуры, непосредственно вовлеченной в европейские интеграционные процессы, является содействие укреплению в Европе принципов демократического общества, основанного на добрососедстве, взаимопонимании и толерантности.

ЕЕК активно сотрудничает с правительствами европейских государств, ведущими международными структурами и европейскими интеграционными объединениями, в числе которых – ООН, Европейский Союз, ОБСЕ. ЕЕК обладает статусом участника Совета Европы. Деятельность ЕЕК направлена на решение наиболее актуальных задач, стоящих перед современным обществом: защиту прав человека, борьбу с ксенофобией и антисемитизмом, поддержку межрелигиозного диалога, развитие культурных и образовательных программ, сохранение памяти о Холокосте и других трагедиях, унесших жизни миллионов людей по всему миру”.

Следует обратить внимание на опыт создания параллельных представительских структур в виде эшелона фондов<sup>23</sup>, аккумулирующих финансовые и организационные ресурсы и направляющих их на

---

<sup>23</sup> См. *Совет еврейских федераций и благотворительных фондов. Council of Jewish Federations and Welfare Funds*. “Электронная еврейская энциклопедия”, КЕЭ, том 8, кол. 92 – 94 (<http://www.eleven.co.il/article/13875>).

*СЕФБФ* – Ассоциация местных еврейских общинных учреждений в США. Совет ограничивает свою деятельность тем, что согласовывает сроки проведения кампаний по сбору средств в общинах, участвует в агитации среди потенциальных жертвователей, а также решает, на что израсходовать ту часть собранных средств, которую местные общинные учреждения добровольно выделяют для финансирования мероприятий, не связанных с удовлетворением собственных нужд.

Большую часть денежных средств (от 50 % до 60 %) Совет еврейских федераций и благотворительных фондов передает Объединенному еврейскому призыву, финансируя главные направления его деятельности, особенно в заграничных филиалах; свыше 30 % местные федерации оставляют на социальные программы в своих общинах, лишь 2 % выделяются национальным еврейским организациям культурного и религиозного характера, остальное идет на административные расходы. В последние годы доля средств, которые расходуются на местные нужды, непрерывно растет.

Совет еврейских федераций и благотворительных фондов публикует ежегодные отчеты, касающиеся доходных и расходных статей бюджета, результатов проводившихся за его счет кампаний и акций, а также положения местных еврейских общин с точки зрения уровня благосостояния, деловой активности; все большее внимание уделяется развитию системы еврейского образования.

Особенно широкий размах сбор средств для еврейского государства приобретает в кризисные периоды. Так, за неделю до Шестидневной войны Совет еврейских федераций и благотворительных фондов совместно с Объединенным еврейским призывом создали чрезвычайный фонд помощи Израилю, для которого затем были собраны сотни миллионов долларов. То же произошло в связи с Войной Судного дня: если в предшествовавшие ей годы сбор денежных средств составлял в среднем 400 – 450 млн долларов, то в следующем за ней году достиг 660 млн, а затем эта сумма составляла не менее 450 – 475 млн долларов в год.

*См. также Павел Завлин. Ук. соч.*

*Согласно исследованию Павла Завлина, “Примерно 40 % евреев делают вклады на благо еврейской общины. Одна из целей этого исследования решить вопрос о том, как с большей пользой распорядиться 850 млн долл., ежегодно выделяемых на инициативы по сохранению и укреплению еврейских культурных и религиозных традиций среди евреев США”.*

реализацию программ представительских организаций Всемирного еврейства на разных уровнях их структуры<sup>24</sup>.

На наш взгляд, в качестве основы для создания системы репрезентативного, полномочного диалога и сотрудничества, нацеленной на консолидацию и использование национальных ресурсов для взаимовыгодного интенсивного продвижения стратегических интересов Диаспоры и Армянского государства, руководству РА следует принять решение о:

---

<sup>24</sup> См. **Европейский еврейский фонд. European Jewish Fund**, Official site: ([http://www.europeanjewishfund.org/index.php?/ru\\_triad](http://www.europeanjewishfund.org/index.php?/ru_triad)).

Европейский еврейский фонд (ЕЕФ) был основан в феврале 2006 года по инициативе Вячеслава Моше Кантора, который, будучи Президентом ЕЕК, занимает пост Председателя Фонда.

Фонд состоит из двух палат – Палаты лидеров общин (или Исполнительного совета) и Палаты финансовых доноров (или Совета управляющих). Основным принципом Фонда является общение за круглым столом, где все члены вправе открыто высказывать свое мнение и на равных участвовать в обсуждении. ЕЕФ оказывает поддержку общинным, региональным и паневропейским программам, а также выступает инициатором собственных проектов для борьбы с указанными проблемами или решения вопросов, относящихся к конкретным общинам или европейскому еврейству в целом.

Основной целью создания Фонда является всестороннее развитие еврейской жизни в Европе. Для достижения этой цели ЕЕФ уделяет особое внимание работе с молодежью и ее приверженности иудаизму и общинной жизни, оказывая поддержку программам, укрепляющим чувство национальной принадлежности и гордости, особенно через восстановление связи между молодым поколением и богатым и столь важным прошлым еврейства. Фонд оказывает поддержку программам, рассказывающим молодежи о достижениях выдающихся еврейских личностей во всех сферах жизни, включая культуру, науку и медицину. Эти достижения должны не только приумножить уважение всех наций к еврейскому народу, но и укрепить чувство его собственного достоинства. Для этого Фонд разработал программу позиционирования евреев в общественном сознании (*Jewish Positioning System*), целью которой является выявление и изучение еврейских достижений и вклада еврейства в жизнь разных стран во всех вышеперечисленных областях.

Кроме того, деятельность Фонда сосредоточена на содействии в решении важнейших проблем, стоящих перед европейским еврейством: ассимиляции, антисемитизма и расизма, распространения неонацизма, представляющих серьезную угрозу для европейского еврейства.

- составлении проекта списка главных организаций армянской Диаспоры и начале консультаций с руководителями главных организаций армянской Диаспоры по согласованию данного состава и принципа репрезентации интересов Всемирного армянства на государственном (стран проживания), региональном и глобальном уровнях диалога внутри Диаспоры и между Диаспорой и Республикой Армения;
- созыве руководителей главных организаций Диаспоры в соответствии с согласованным проектом списка рабочего форума для консультаций с Президентом РА по вопросу о системе консенсусной консолидации ресурсов и усилий Диаспоры и РА с целью взаимовыгодного продвижения стратегических интересов Всемирного армянства;
- созыве под эгидой Президента РА учредительного форума по созданию Всемирного конгресса президентов главных организаций Всемирного армянства (ВКПГОВА) в лице Диаспоры, Республики Армения и Нагорно-Карабахской Республики;
- включении в повестку учредительного форума ВКПГОВА вопросов о:
  - консенсусном утверждении его предварительно согласованных учредительных уставных документов, включающих объединение ресурсов и усилий в координированной деятельности за признание Геноцида, безопасность и прогрессивное социальное, экономическое и политическое развитие Диаспоры, РА и НКР, содействие совершенствованию сотрудничества между РА и странами проживания армянских общин;
  - приведении Всеармянского Фонда в соответствие с целями и программой жизнедеятельности ВКПГОВА;
  - приведении в соответствие с целями и программой жизнедеятельности ВКПГОВА Закона РА о Всеармянском банке<sup>25</sup>.

---

<sup>25</sup> “Закон РА о Всеармянском банке”. Глава 2. Деятельность Всеармянского банка. Статья 6. Цель и функционирование Всеармянского банка: 1. Целью Всеармянского банка является: способствовать формированию потенциала сильного, конкуренто-



#### **IV. ПРЕДЛОЖЕНИЯ ПО СОЗДАНИЮ ЭФФЕКТИВНОЙ СИСТЕМЫ ВСЕМИРНОГО АРМЯНСТВА:**

**ОЧЕРК ПРОЕКТА СТРУКТУРЫ ПЕРВООЧЕРЕДНЫХ ДЕЙСТВИЙ ПО  
МОДЕРНИЗАЦИИ СИСТЕМЫ ВЗАИМОДЕЙСТВИЯ АРМЯНСКИХ ОРГАНИ-  
ЗАЦИЙ ВНУТРИ ДИАСПОРЫ, А ТАКЖЕ В ФОРМАТЕ ДИАСПОРА – РА**

##### **1. Диалог и репрезентация правомочности субъектов диалога.**

Создание системы объединяющих организаций – конгрессы президентов главных организаций, консолидирующих ресурсы вокруг основных приоритетов Всемирного армянства по принципу консенсуса:

- *стран* (США, России, Франции, Ливана, Сирии, Ирана и др.);
- *регионов* (США и Канады, Латинской Америки, Европы, Евразии, Ближнего Востока, Дальнего Востока).

Создание всемирного конгресса президентов главных организаций Всемирного армянства под председательством Президента Республики Армения.

##### **2. Разработка концепции национальной идеологии на основе Таронизма, переосмысленного в интересах консолидации и развития Всемирного армянства.**

##### **3. Нарращивание мобилизационных ресурсов Диаспоры путем:**

- создания новых непартийных армянских организаций, в том числе – с их инкубацией внутри имеющихся организаций;
- интеграции армянских организаций в общеармянские и местные и сетевые системы обмена информацией на армянском, английском, русском, испанском, арабском, персидском и других языках стран проживания.

---

способного и базирующегося на знаниях армянства и направить его на увеличение конкурентоспособности всего армянства на всемирном рынке (см. «Համահայկական բանկի մասին» ՀՀ 2008 թ. դեկտեմբերի 26-ի օրենքը: «ՀՀ Պաշտոնական տեղեկագիր», 2009, հմ. 5 (671)).

4. **Воссоединение Армянской Апостольской Церкви.**
5. **Создание Всеармянского христианского совета первосвященников Апостольской, Католической и Евангелической церквей.**
6. **Повышение уровня отраженности безопасностных интересов РА, НКР и США в лоббинге армянских организаций Америки – с сохранением в качестве фактора консолидации армянства приоритетности признания Геноцида.**
7. **Координация финансовых ресурсов Диаспоры. Обеспечение преимущества спонсорства армянских лоббистских и благотворительных организаций. Система непрерывного сбора средств на:**
  - гарантирование безопасности РА и НКР под эгидой неповторения Геноцида, а также прогрессивного развития Армении и армянства Диаспоры.

*С этой целью:*

- использование Всеармянского банка как финансового инструмента консолидации ресурсов всемирного армянства;
- реорганизация Всеармянского фонда как главного представительного форума по сбору финансовых средств Всемирного армянства для осуществления гуманитарных программ.

## **8. Языковая реформа<sup>26</sup>:**

---

<sup>26</sup> Всемирное еврейство в лице Государства Израиль и главных организаций Диаспоры в XX веке в процессе создания в Палестине национального очага и далее Национального государства сумело заменить "ивритом" еврейское многоязычие, в том числе и "идиш", известный богатой научной и художественной литературой.

Всемирное армянство в лице Республики Армения и Диаспоры пока не развернуло продуктивного профессионального диалога по переходу не к единому языку, а всего лишь к единому правописанию.

Ниже приводятся фрагменты из публикаций по еврейскому и армянскому опыту:

- разработка научных основ для консенсусного принятия реформы правописания;
- профессиональная поддержка со стороны РА деятельности школ с обучением на западноармянском и восточноармянском.

## 9. Создание образовательных фондов Диаспоры по реализации стратегии воспроизводства представительства Всемирного армянства в главных сферах влияния на политику стран проживания путем:

1. См. *И. Клейнера*. Иврит, Идиш и другие. "Ben Zion" (<http://www.benzion.ru/main.php?topic=lang&page=klein>).

«Русскоязычные выходцы из бывшего СССР знают чаще всего лишь о двух еврейских языках – иврите и идише, кое-кто слышал о еврейско-испанском языке – "ладино" (иначе называемом "джудесмо"), но мало кто знает, что в мире существует свыше 20 еврейских языков. Это еврейско-таджикский (язык бухарских евреев), еврейско-татарский, еврейско-арабский, еврейско-берберский, еврейско-греческий, еврейско-персидский, еврейско-французский, еврейско-итальянский, еврейско-каталонский, еврейско-португальский, караимско-арабский, караимско-греческий, арамейский диалект евреев Курдистана и другие.

Таким образом, встала задача перехода на единый для всех евреев национальный язык, а таким языком представлялся, конечно, иврит. Задача возрождения и внедрения в национальную жизнь мертвого (или, скажем, почти мертвого) в течение почти двух тысяч лет языка была поистине беспрецедентной и грандиозной.

Решение этой задачи создало прочную основу национального существования в Израиле – настолько ощутимую, что многим израильтянам кажется, что говорящий на иврите израильтянин и не говорящий на этом языке еврей диаспоры принадлежат к разным народам. В Израиле иврит окончательно победил. И это в определенной мере влияет и на еврейскую диаспору. Только на основе иврита было возможно создать ощущение национального, культурного, исторического и государственного единства».

2. См. *Միկրոայնս Արևոց*, Երկեր, հ. Գ, Հայրենագիտական ուսումնասիրություններ: Ե., 2008, էջ 416:

“Я не вижу какой-либо серьезной чисто лингвистической, педагогической и даже практической основы для отклонения от принципов традиционного правописания”. Из письма Н. Адонца Комиссии по реформе правописания и букв (18 апреля 1927 г., Париж).

Опубликованный анализ многочисленных предложений и вариантов о деятельности Комиссии по реформе армянского языка в 1921–1922 гг. (см. С. В. Гюльбудагян. История армянского правописания. Е., 1973, сс. 324 – 399).

- модернизации армянских школ в Диаспоре, РА и НКР в целях гарантированности приобретения знаний, необходимых для поступления в ведущие университеты мира (представляет интерес изучение агрессивно-модернизаторского опыта создания турецких школ американского Имама Фетулаха Гюлена, чьи вооруженные современными знаниями, турецким языком и консервативными культурно-духовными исламскими традициями выпускники поступают в наиболее престижные университеты мира<sup>27</sup>);

<sup>27</sup> 1. См. *Pelin Turgut/Almaty*. The Turkish Imam and His Global Educational Mission. "TIME", Monday, April 26, 2010 (<http://www.time.com/time/magazine/article/0,9171,1969290,00.html>).

«Миссия школ американского Имама Гюлена турецкого происхождения (Пенсильвания, США) заключается в создании из детей как тюркского, так и нетюркского этнического происхождения новой консолидированной турецко-мусульманской элиты, хорошо разбирающейся в науке и технологии, успешных в условиях глобальной экономики свободного рынка, вместе с тем очень набожной. Обучение в школах ведется по англоязычным западным учебным планам, ориентированным на естественные науки и математику – в классах и ценности мусульманского консерватизма – в семейной жизни.

Ныне действуют около 1000 школ Гюлена в 100 странах мира – от Малави до США, – предлагающих смесь религиозной веры и развернутых западных учебных программ. Все они действуют под духовной эгидой Гюлена, загадочного отставного проповедника из сельской Пенсильвании – надзирающего за школами – многомиллиардной бизнес-империей.

В Казахстане в этом году 30,000 учащихся поступили в 1400 старшие школы. И каждый в Алма-Ате – от модельера до строительного магната – все хотят, чтобы их ребенок поступил туда. Среди учащихся школ Гюлена в Казахстане – племянник казахстанского Президента Нурсултана Назарбаева.

«Через сеть школ Гюлена распространяется своего рода «образовательный исламизм», а не охватывающий Турцию «политический исламизм», отмечает профессор оборонных исследований Королевского колледжа Лондона Билл Парк, занимающийся Турцией».

См. также: «Islam, Secularism and the Battle for Turkey's Future». /Getty Images. Turkish President Abdullah Gul. By John Thys/AFP. Education: Sowing Seeds in the Schools". "STRATFOR", August 23, 2010:

2. См. «Լույս» հիմնադրամ (<http://www.luys.am>). Фонд «Луйс». Учрежден в 2008 г. под патронажем Президента РА и Премьер-министра РА.

«Долгосрочным видением Фонда «Луйс» является: создать такую общественную структуру, которая стимулировала бы осуществление положительных перемен в культурной, образовательной, деловой и общественной областях Армении, повышая уровень

- создания системы стипендий для детей и молодежи Диаспоры для непрерывного расширенного воспроизводства профессионального представительства армянских диаспор в главных сферах влияния на политику стран проживания. С целью подготовки патриотов-прагматиков на лидирующие позиции в ключевых областях, где находятся источники контроля над людьми, над их материальным положением, сознанием, ценностными и эстетическими ориентациями (в области экономики, финансов и банковского дела, страхования, в политике, науке, в том числе – в политологических мозговых центрах, в средствах массовой информации и компьютерно-коммуникационных технологиях, киноиндустрии);
- системного реформирования Республики Армения и модели ее сотрудничества с Диаспорой с целью создания в Армении продвинутого демократического общества с устойчиво развивающейся экономикой и развитой сферой защиты экономических, политических, гражданских и социальных прав, предлагающего молодым выпускникам широкий выбор рабочих мест в соответствии с полученными профессиями и квалификацией.

#### **10. Переименование Министерства Диаспоры РА в “Министерство РА по делам Диаспоры”.**

#### **11. Разграничение миссий по делам Диаспоры с отведением:**

- *политической* – Президентскому институту и МИД РА,
- *социокультурной* – Министерству по делам Диаспоры.

---

образования и степень осознания цели армянской молодежи. Фонд готов к обсуждению возможностей сотрудничества с другими арменофильскими учреждениями и программами.

ՀՀ-ՍՓՅՈՒՌԷ ԵՐԿԽՈՍՈՒԹՅԱՆ  
ԱՍՊԵԿՏԱՅԻՆ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ  
ՄՇԱԿՈՒՄՆԵՐ

## ՀԱՅՐԵՆԻՔ – ՍՓՅՈՒՌՔ.

### ԽՆԴԻՐՆԵՐԻ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄՆԵՐ

*Վ. Հ. ՏԵՐ-ՄԱԹԵՎՈՍՅԱՆ, ՀՀ ՊՆ ԱՌՀԻ-ի պետի տեղակալ –  
գիտավերլուծական կենտրոնի պետ, պատմական գիտությունների  
թեկնածու*



Հայաստան – Սփյուռք ներկա հարաբերությունները ռազմավարական տրամաչափի փոխակերպելու ուղղությամբ շոշափելի քայլեր կատարելն օրըստօրե դառնում է ավելի արդիական հիմնահարց: Հայաստանն իր սահմանափակ ռեսուրսներով հետևողականորեն է արտահայտվում հօգուտ Սփյուռքի պահպանության ու ամրապնդման, Հայաստանի հետ նրա կապերի հաստատութենացման հարցերում՝ ակնկալելով Սփյուռքի կողմից մնանատիպ փոխընկալման ոչ միայն հաստատում, այլև ավելի ինտենսիվ ու արմատական քայլերի ձեռնարկում: Հայաստան – Սփյուռք հարաբերություններում առաջընթաց ապահովելու համար նպատակահարմար է ուղղորդվել ձևի ու բովանդակության դինամիկ զարգացող փոխլրացնող մոդելներով: Վերջին տասնամյակում Հայաստանում ձևավորվել է անհրաժեշտ գիտակցություն, որ Սփյուռքի հետ հարաբերությունները պետք է բարձրացվեն որակապես նոր մակարդակ, դարձվեն հայաստանակենտրոն ու զարգացման միտված: Այս առումով պետք է կիրառվեն մի շարք մեխանիզմներ ու քայլեր, որոնք հնարավորություն կտան նորովի գնահատելու Հայաստանի դրական ու ազգակենտրոն տրամադրվածությունը Սփյուռքի հետ գործողությունների փոխլրացմանը ռազմավարական տրամաչափ հաղորդելու գործին:

Նպատակահարմար է, որ Հայաստանը հանդես գա որպես շահագրգիռ կողմ Սփյուռքի հետ հարաբերությունների առավել հաստատութենացման առումներով՝ լրջորեն վերանայելով Սփյուռքում գործող կառույցների գործունեության ընդհանուր տրամաբանության ընկալումը և դրանց հետ Հայաստանի կողմից տարվող աշխատանքի սկզբունքները: Անհրաժեշտ է միշտ փնտրել հայության ձեռնարկումների համատեղման ու համակարգման գործուն գաղափարախոսություններ, դրանց իրագործման մեխանիզմներ և գործիքարան:

Հայաստանյան հասարակությունը և իշխանությունները վերջին տա-

րիներին գիտակցել են այն, ինչ որ տասնամյակներ շարունակ գերակայող է եղել Սփյուռքում. Սփյուռքը իր ներքին տրամաբանությամբ ու զարգացման կամ հետընթացի առանձնահատկություններով ժամանակավոր կամ իրավիճակային երևույթ չէ: Հետևաբար, երևակայական կամ իրական զանգվածային հայրենադարձության երկկողմ սպասումները դառնում են ավելի ու ավելի անիրատեսական, եթե պայմանականորեն հնարավոր է խոսել դրա՝ որպես հեռագնա ռազմավարության մասին: Փոխարենը ավելի իրական է դառնում հայրենադարձության ձևաչափին փոխարինող, փոխլրացման տարբեր մոդելների կիրառումը, ինչպիսին, օրինակ, «Հայոց աշխարհի» հայեցակարգն է: Հայաստանը պետք է դարձնել ազգային ինքնության պահպանման կարևոր միջոց:

Սփյուռքի համայնքներն ու հատվածներն ունեն զարգացման, ինքնակազմակերպման ու դրսևորման տարբեր աստիճաններ: Հետևաբար, հարկավոր է տարբեր համայնքների նկատմամբ ցուցաբերել տարբերակված մոտեցում, ուստի և վերաիմաստավորել դրանց հետ կապված ակնկալիքները: Այսինքն՝ Եթովպիայում կամ Սինգապուրում ապրող հայության նկատմամբ քաղաքականությունը չի կարող ունենալ նույն ձևն ու բովանդակությունը, ինչ որ ԱՄՆ-ում, Կանադայում, Շվեդիայում, Ֆրանսիայում, Լիբանանում, Ռուսաստանում կամ Իրանում:

Սփյուռքի տարբեր համայնքների ու կառույցների մասին ընդհանրական դատողություններ անելուց առաջ հարկավոր է գիտակցել, որ գործ ունենք տարբեր աստիճանների ինտեգրվածության վիճակում գտնվող անձանց հետ, հետևաբար՝ հավասար չի կարող լինել մաս համայնքային գործունեությանը նրանց մասնակցության աստիճանը: Համայնքի ձևակերպումը և անդամակցության աստիճանը ևս խիստ պայմանական են, քանի որ զգալի է այն հայերի տեսակարար կշիռը, որոնք գերադասում են որևէ կերպ չներգրավվել համայնքների գործերում ու շուտափույթ ինտեգրվել հյուրընկալող երկրի հասարակությունում, ինչպես, դա օրինակ, ինտենսիվորեն տեղի է ունենում Ռուսաստանում: Բացի այդ, հայության ինտեգրվածության աստիճանը լավագույնս շրջանակելու համար նպատակահարմար է պայմանականորեն կատարել հետևյալ տարաբաժանումը. ուժացվածներ կամ գրեթե ուժացվածներ, էքնիկական պատկանելությունը փոխածներ, նոր գաղթածներ և փախստականներ: Սփյուռքում հայերը հիմնականում ձգտում են համադրել մասնագիտական և համայնքային գործունեությունը:

Սփյուռքի առջև ծառայած խնդիրները բազմազան են՝ հայապահպանությանն ուղղված մարտահրավերներ, այդ թվում՝ ուժացում խառնամուսնությունների պատճառով, պառակտումներ հաճախ մեղ, ոչ էական քաղա-



քական ու գաղափարախոսական հարցերով, փոխադարձ անվստահություն, ներսփյուռքյան պայքար<sup>1</sup>:

Հարկավոր է Սփյուռքին օգնել գտնելու կենսական նշանակության մի շարք հարցերի պատասխանները, օրինակ, աճող սերունդները ինչով են շարժառիթավորում իրենց ինքնության պահպանումը՝ Յեղասպանությամբ, խորհրդային բռնաճնշումներով, երկրաշարժով, Ղարաբաղով, թե անկախ Հայաստանով:

Փոխակերպվել ու շարունակում է փոփոխվել նաև Սփյուռքի առջև ծառայած խնդիրների տրամաբանությունը: Յուրաքանչյուր տասնամյակ ունի զարգացման ու հետընթացի իր տրամաբանությունը: Հայաստանի անկախության հռչակումից հետո Սփյուռքի համայնքների մեծ մասը, անակնկալի եկած նոր հնարավորությունների հեռանկարով, անկարող եղավ ռազմավարական տրամաչափ հաղորդելու իր գործողություններին: Նմանատիպ քայլ կամ քաղաքականության ուրվագծեր չէին արվում նաև Հայաստանի իշխանությունների կողմից: Ավելին. ստեղծվեց մի իրավիճակ, երբ Սփյուռքի աճող բազմազանությանը Հայաստանը պատասխանեց չհամակարգված, միօրինակ ու անհեռանկարային քաղաքականությամբ: 1990-ական թվականներն այն էական ժամանակահատվածն էին, երբ Սփյուռքի համայնքային կառույցներին անհրաժեշտ էր ուղղորդում և համատեղ քաղաքականության մշակման ու ծրագրման հրավեր: Տվյալ ժամանակահատվածում հստակեցվեց նաև այն ընկալումը, որ Հայաստանի ղեկավարությունը և Սփյուռքի տարբեր համայնքներ ու կառույցներ չունեն միևնույն նպատակներն ու սկզբունքները:

Հայոց պետականության հաստատութենական ամրապնդման հետ մեկտեղ Սփյուռքում տեղի ունեցան հակընդդեմ գաղափարախոսությունների աստիճանական համադրման գործընթացներ: Քաղաքական-գաղափարական հակասություններով բզկտված համայնքներն ու կառույցները 1990-ական թվականներին սկսեցին գիտակցել, որ մեծ են նման գործընթացներում ռեսուրսների ոչ ռացիոնալ օգտագործման հետևանքները:

ՀՀԳ-ն շարունակում է ներկայանալ որպես Սփյուռքում գործունեություն ծավալած ազդեցիկ քաղաքական, հասարակական ու մշակութային գործոն: Նրա ստեղծած ազդեցության մեխանիզմները գործում են ամենատարբեր ոլորտներում՝ եկեղեցական թեմերից մինչև դպրոցներ, ՁԼՄ-ներ: Ըստ տարբեր հաշվարկների՝ ՀՀԳ-ի և նրա համակարգի մաս կազմող

---

<sup>1</sup> Տես *Վարդան Օսկանյան*, Անավարտ տասնամյակ. ելույթների ընտրանի: Ե., 2009, էջ 151:

կառույցների (Հայ օգնության միություն, Հայ մարմնակրթական ընդհանուր միություն, «Համազգային» և այլն) ներկայացուցիչները մեծամասնություն են կազմում շուրջ 100 եկեղեցիների, բազմաքանակ 26-օրյա, շաբաօրյա ու կիրակնօրյա դպրոցների կառավարման խորհուրդներում<sup>2</sup>: Հենվելով մնան ներկայացուցչության ու հաստատությունների հսկայական ռեսուրսների վրա՝ ՀՀԴ-ն շատ դեպքերում «դիրքավորվել է» որպես Սփյուռքում վճռական ազդեցություն ունեցող քաղաքական ուժ: Այս մոտեցումը կարող է առաջ բերել որոշակի խնդիրներ, որոնցից հարկ է առանձնացնել սփյուռքահայության հավանական ապաքաղաքականացման կամ Սփյուռքի կենսական նշանակություն ունեցող գործերից օտարվելու հեռանկարը:

Ղեկավարության հարցը ևս ունի կարևոր չափումներ: Անցած տասնամյակների ընթացքում հայկական ազդեցիկ կազմակերպությունների ղեկավար մարմինները ձևավորվել են լրագրողներից, ակնարկագիրներից, որոնց մասնագիտական գործունեությանը գումարվում էին նաև բարեգործությունը, կազմակերպչական դրսևորումները, եկեղեցական խորհուրդներում ունեցած կարգավիճակը և հանրային ժողովներում ու հանդիպումներում լավ հռետոր լինելու գործոնը: Այս սկզբունքը գերիշխել է ՀՀԴ-ին հարող կազմակերպություններում: Համեմատության համար նշենք, որ Ամերիկայի հայկական համագումարի շարքերում քիչ են ստավորականները, փոխարենը մեծ թիվ են կազմում ազդեցիկ գործարարները, իրավաբանները և բարեգործները:

Քաղաքական ակտիվության ու ներգրավվածության Սփյուռքի հաջողված օրինակներից է ԱՄՆ-ում հայկական լոբբինգային կառույցների գործունեությունը: Թվերը բավականին խոսուն են. հայերը, որոնք տարբեր հաշվարկներով կազմում են ԱՄՆ-ի բնակչության մոտ 0,5 %-ը, կարողացել են Հայկական հանձնախմբում ներգրավել ԱՄՆ-ի կոնգրեսի 435 անդամներից մոտ 150-ին (մոտավորապես՝ 34 %-ը): Սա կարևոր ռեսուրս է: Հայկական հանձնախումբը ամեն տարի մեծ ջանքեր է գործադրում Ցեղասպանությունը դատապարտող օրենսդրական նախաձեռնությունները հաջող ավարտի հասցնելու ուղղությամբ: Իհարկե, լինում են դեպքեր, երբ կարևոր հայանպաստ հարցերով քվեարկությունների ժամանակ որոշ անդամներ չեն մասնակցում կամ մնում են ձեռնպահ:

Մեկ այլ կարևոր խնդիր է Սփյուռքի համայնքների անդամների կողմից Հայաստանի հետ իրավապայմանագրային դաշտի կանոնակարգումը: Ցայսօր «Երկքաղաքացիության մասին» օրենքի ընդունումից հետո, ինչի

---

<sup>2</sup> Տես *Khachig Tololyan*. Elites and institutions in the Armenian Transnation. «Diaspora», 2000, № 9, P. 134:

համար ՀՀԳ-ն մեծ ջանքեր էր գործադրում և վստահեցնում, որ հայորդիները լայնածավալ չափերով կվերադառնան Հայաստան, ՀՀ քաղաքացի կամ երկքաղաքացի են դարձել ոչ ավելի, քան 10.000 օտարերկրյա հպատակներ: Դրանց մեծ մասը ջավախահայեր են, որոնց համար ՀՀ քաղաքացիություն ընդունելն ունեցել է սոցիալական ու տեխնիկական դրդապատճառներ: Որո՞նք են այն հիմնական դրդապատճառները, որ երկքաղաքացիության բուն տեղի չի ունենում:

Մեկ այլ կարևոր խնդիր է՝ պարզել հայկական լոբբինգային կառույցներում կամ համայնքային նշանակություն ունեցող մարմիններում վերջին տասնամյակների ընթացքում ՀԽՍՀ-ից և ՀՀ-ից արտագաղթած հայերի ներկայացվածության մակարդակը և անհրաժեշտության դեպքում ուղիներ մշակել այն բարձրացնելու համար:

Սփյուռքի նկատմամբ Հայաստանի իշխանությունների վարած քաղաքականությունը 2008 թվականից հետո ենթարկվել է որոշակի փոփոխությունների: Սփյուռքի նախարարության ստեղծումը նոր որակ հաղորդեց Հայաստան – Սփյուռք հարաբերություններին և Սփյուռքի համայնքների ու կառույցների հետ աշխատանքներին: Մինչև ժամանակ, անհրաժեշտ է նշել, որ ՀՀ Սփյուռքի նախարարության նկատմամբ Սփյուռքում ձևավորվել են տարբեր պատկերացումներ՝ սկսած այդ նախարարության ոչ միանշանակ ընկալելի անվանումից\* մինչև կարճ ժամանակահատվածում կարևոր աշխատանք կատարելու փաստի ընդունումը:

Պետք է շեշտել, որ Հայաստանի ռազմավարական անվտանգային շահերի ապահովման, ինչպես նաև Սփյուռքի երկարաժամկետ զարգացման տեսակետից անհրաժեշտ է Սփյուռքի հետ տարվող աշխատանքներում կատարել գործառույթների հստակ սահմանազատում: Նպատակահարմար է, որ Սփյուռքի նախարարությունն զբաղվի մշակութային, սոցիալական հիմնախնդիրներով, իսկ ռազմավարական անվտանգային խնդիրները համադասեն ՀՀ Նախագահի աշխատակազմը և Արտաքին գործերի նախարարությունը:

2005 թ. Հայկազյան համալսարանի հիմնադրման 50-ամյակի կապակցությամբ նախկին արտգործնախարար Վ. Օսկանյանի ձևակերպումներից մեկը բավական դիպուկ էր. «Մենք պետք է համագործակցենք, այլ ոչ թե մրցակցենք: Խնդիրը միասին հաջողության հասնելն է, այլ ոչ թե առանձին-առանձին ձայնողվելը, անտարբերությամբ ու ինքնագոհությամբ առաջ-

---

\* Որոշ սփյուռքահայեր չեն ընդունում «Սփյուռքի նախարարություն» անվանումը և առաջարկում են այն վերանվանել «Սփյուռքի գործերով նախարարություն»:

նորովելը»<sup>3</sup>: Կարծում ենք, այս սկզբունքի գործնական կիրառումը կոյուրացնի մեծ թվով խնդիրների լուծումը:

Հարց է ծագում, թե ինչպես մշակել Սփյուռքի և Հայաստանի անվտանգային ռեսուրսների համախմբման սկզբունքները: Պետք է նշել, որ Հայաստանում և Սփյուռքում նման նախաձեռնության հաջողության հասնելու համար հարկավոր է առավելագույն պատասխանատվությամբ վերաբերվել տեղեկատվական դաշտում Սփյուռքի հետ կապված ծրագրերի ճիշտ ու հասցեական լուսաբանմանը:

Մեկ այլ կարևոր խնդիր է Հայկական Սփյուռքի մշակույթի, ավանդույթների, հասարակական-քաղաքական կյանքի ու գործունեության ներկայացումը Հայաստանի աճող սերնդին ու լայն հասարակայնությանը: 2007 թ. Երևանի մի քանի դպրոցներում անցկացվեց «Սփյուռքի օրեր» միջոցառումը՝ սփյուռքահայերի բնակության երկրների դեսպանների մասնակցությամբ: Երևանի հմ. 163 դպրոցում ներկայացվեց Ռուսաստանի հայ համայնքը, Չարենցի անվան դպրոցում՝ ԱՄՆ-ի, իսկ հմ. 119 դպրոցի աշակերտները ներկայացրին Ֆրանսիայի հայ համայնքը<sup>4</sup>: Կարծում ենք, դա հաջողված փորձ էր, և հնարավոր է վերանայել մասնակցության ձևաչափը, այն դարձնել մշտական՝ տեղափոխելով նաև մարզեր ու հայաստանյան բուհեր: Այլապես Սփյուռքից Հայաստան ժամանող այն երիտասարդները, որոնք գալիս են հիմնականում ամռան ամիսներին, չեն հասցնում շփվել իրենց հասակակիցների հետ: Միջին տարիքի հայաստանաբնակներն անմասն են մնում այդ այցերից:

Այսպիսով՝ Հայաստանում և Սփյուռքի կառույցներում ու համայնքներում հետզհետե ձևավորվում է այն գիտակցությունը, որ հարաբերությունների ներկա մակարդակը անբավարար է, ուստի հարկավոր է քայլեր ձեռնարկել դրանց 21-րդ դարի 2-րդ տասնամյակին հարիր ռազմավարական խորություն ու տրամաշափ հաղորդելու ուղղությամբ:


---

<sup>3</sup> *Հարդան Օսկանյան*, Նշ. աշխ., էջ 216:

<sup>4</sup> Տես *Աղավնի Հարությունյան*, Համաշխարհային հայկական կոնգրեսն ամփոփում է անցնող տարին (<http://azg.am/AM/2007122609>):

ՀԱՅԱՍՏԱՆ – ՍՓՅՈՒՌՔ  
ԻՆՏԵԳՐԱԿԱՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՈՒՂԵՆԻՇՆԵՐԸ.  
ՀԱՅԵՑԱԿԱՐԳԱՅԻՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐ

*Ն. Հ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ, ՀՀ ՊՆ ԱՌՀԻ-ի գլխավոր փոխտնօրինակ,  
ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, պարմական գիտությունների դոկտոր,  
Հայաստանի գիտությունների վաստակավոր գործիչ*



**I. Ընդհանուր բնույթի դիտարկումներ**

Հայաստանի Երրորդ Հանրապետությունն այսօր ստիպված է դիմագրավել բազում մարտահրավերների, որոնք հետևանք են աշխարհում տիրող քաղաքական ընդհանուր անկայունության, միջպետական հարաբերությունների լարվածության, համընդհանրացման գործընթացների, որոնք չի կարող հաշվի չառնել Հայաստանի դեկավարությունը:

Մեծացել և ավելի սպառնալի են դարձել աշխարհասփյուռ հայության էթնիկական ինքնության պահպանման համար վտանգները:

Առավել վտանգավոր են Հայաստանի անմիջական հարևանների, առաջին հերթին թուրքական երկու պետությունների՝ Թուրքիայի և Ադրբեջանի մարտահրավերները: Օրեցօր ավելի վտանգավոր են դառնում Ադրբեջանի սպառնալիքները՝ կապված Ղարաբաղյան հիմնախնդիրը ռազմական ճանապարհով լուծելու նրա մտադրությունների հետ: Ադրբեջանի ռազմական բյուջետային հատկացումներն այսօր կազմում են մոտ 2,5 մլրդ ԱՄՆ-ի դոլար: Դա նշանակալիորեն գերազանցում է Հայաստանի ռազմական բյուջեն: Մյուս կողմից՝ պետք է նկատի ունենալ, որ Ադրբեջանի պետական բյուջեով կատարվող ռազմական հատկացումները տարեցտարի մեծանալու միտում ունեն, և վերոնշյալ թիվը բնավ էլ վերջին սահմանագիծը չէ: Հայտնի է նաև, որ Ադրբեջանը հետևողականորեն կիրառում է ադրբեջանական բանակը արդիական գեներով վերազինելու քաղաքականություն:

Ադրբեջանն ունի մի այնպիսի հուսալի և հավատարիմ դաշնակից, ինչպիսին Թուրքիան է: Թուրքիան առաջնակարգ դեր է խաղում ադրբեջանական երբեմնի թույլ, անկազմակերպ և թափթփված բանակը ժամանակակից բանակի վերածելու խնդրում: Դրա համար նրանց առաջին հերթին անհրաժեշտ է ստեղծել համապատասխան սպայական կազմ:

Թուրքիայի ռազմական դպրոցներն իրենց դռները լայնորեն բացել են աղրբեջանցիների առջև՝ նրանցից ժամանակակից գրագետ սպա պատրաստելու համար: Վերադառնալով Աղրբեջան՝ նրանք համապատասխան զինվորական պաշտոններ են գրավում բանակում: ՌԻստի սխալ կլիներ հաշվի չառնել կամ թերագնահատել այդ հանգամանքները, որովհետև նոր պատերազմի դեպքում հայկական բանակն ամենայն հավանականությամբ իր դեմ կունենա նոր և ավելի, քան առաջներում էր, պատրաստված աղրբեջանական բանակ:

Թուրքիան, Աղրբեջանի համար համապատասխան սպայական կազմ պատրաստելու հետ մեկտեղ, մեծ դեր է խաղում նաև աղրբեջանական բանակը նոր զենքով համալրելու գործում և, որ ամենագլխավորն է, մեծապես օգնում է, որ աղրբեջանցի զինվորը կարողանա տիրապետել այդ զենքին: Իսկ դա կարող է բոլորովին նոր որակ հաղորդել ԱդրՀ ՋՌԻ-ին:

Կարծում ենք, որ Աղրբեջանի կողմից պատերազմ սանձազերծելու դեպքում պետք չէ բացառել պատերազմին Թուրքիայի անմիջական մասնակցության հնարավորությունը՝ Հայաստան ուղղակի ներխուժման ձևով: Դա Հայաստանին կկանգնեցնի երկու ճակատով պատերազմելու մռայլ հեռանկարի առջև: Ժամանակակից միջազգային հարաբերություններում առկա բարոյական, ավելի ճիշտ՝ անբարոյական, նորմերի ու երկակի սկզբունքների տիրապետության պայմաններում մման արագընթաց ռազմական գործողություն միանգամայն հնարավոր է:

Երբ այս տեսանկյունից ենք մոտենում խնդրին, ապա տեսնում ենք, որ որոշ իմաստով և որոշ հարցերում Հայաստանը գտնվում է համեմատաբար անբարենպաստ վիճակում:

Մասնավորապես՝ նկատի պետք է առնել հետևյալ հանգամանքները:

*Առաջին*, Հայաստանի ռազմական բյուջեն զիջում է աղրբեջանականին: Իսկ դա նշանակում է, որ սպառազինությունների մրցավազքում հայկական բանակը անընդհատ արդիական զենքի տեսակներով զինելու և վերազինելու հարցում Հայաստանը կարող է ունենալ լուրջ պրոբլեմներ:

*Երկրորդ*, Հայաստանի համար անբարենպաստ իրավիճակ է ստեղծվում հայկական բանակը համալրելու հարցում հիմնականում երկու գործոնի պատճառով: Առաջինը՝ շարունակվող, թեև ավելի դանդաղ տեմպերով, արտագաղթն է, երկրորդը՝ ծնելիության անկումն ու մահացության համեմատաբար բարձր տոկոսը:

*Երրորդ*, Հայաստանը, ի տարբերություն Աղրբեջանից, չունի մի այնպիսի հուսալի հենարան և դաշնակից, ինչպիսին Թուրքիան է Աղրբեջանի համար: Այս տեսանկյունից արդարացված չէր լինի գերագնահատել Ռու-

սաստանի և ՀԱՊԿ-ի դերը, առավել ևս՝ նրանց պատրաստակամությունն ու վճռականությունը պաշտպան կանգնելու Հայաստանին՝ Թուրքիայի լիակատար աջակցությունը վայելող Ադրբեջանի կողմից Հայաստանի դեմ պատերազմ սկսելու պարագայում: Նրանց՝ որպես ռազմավարական դաշնակցի հուսալիությունը, խիստ կասկածելի է, համենայն դեպս՝ համարժեք չէ Ադրբեջանի համար Թուրքիայի խաղացած դերին:

Անշուշտ, այդ ամենը քաջ հայտնի է նաև Բաքվին, որտեղ վերլուծաբանները համոզված են, որ ժամանակն աշխատում է Ադրբեջանի օգտին և, ելնելով դրանից, Ադրբեջանը շեշտված կերպով վարում է լայնածավալ սպառազինման քաղաքականություն՝ այն հույսով, որ դա ուժասպառ կանի Հայաստանին:

*Չորրորդ*, Հայաստանը պետք է ելնի այն իրողությունից, որ ապագա պատերազմի ժամանակ մենք գործ ենք ունենալու այլ տիպի ադրբեջանական բանակի հետ, և ամեն ինչ չէ, որ կընթանա մախկին սցենարով, ինչպես 1990–1994 թթ. պատերազմի ժամանակ:

## **II. Հայաստանը լրացուցիչ ռեսուրսներով ապահովելու հիմնախնդիրը, Հայոց Սփյուռքի գործոնը և Հրեական սփյուռքի դասերը**

Ստեղծված պայմաններում Հայաստանի համար առանձնակի սուր բնույթ է ստանում և կենսական անհրաժեշտություն դառնում լրացուցիչ ռեսուրսների հարցը: Խոսքը քաղաքական, տնտեսական, ռազմական, ֆինանսական և մարդկային ռեսուրսների մասին է: Եվ պետք է ելնել այն իրողությունից, որ հավելյալ ռեսուրսներ գտնելու Հայաստանի հնարավորություններն այնքան էլ մեծ չեն, և իրականում նրա ընտրությունը խիստ սահմանափակ է:

Այդ ոչ դյուրին խնդրի լուծման մեջ իր որոշակի դերակատարումը կարող է ունենալ Հայոց Սփյուռքը, քանի որ նա կլինի Հայաստանի միակ հուսալի գործընկերը, եթե մշակվի համապատասխան իրատեսական քաղաքականություն, ձեռնարկվեն երկուստեք համաձայնեցված վճռական քայլեր՝ հայության գոյության համար կենսականորեն անհրաժեշտ և իրատեսական ծրագրեր մշակելու ուղղությամբ:

Սակայն հարց է ծագում. ի վիճակի՞ է արդյոք Սփյուռքը լուծելու նման բարդ խնդիրներ, քանի որ սփյուռքահայը այլ երկրի քաղաքացի է: Դա կարող է որոշակի քաղաքական և իրավական բնույթի եթե ոչ խոչընդոտներ, ապա անպայման դժվարություններ առաջացնել: Այդ հարցին դրական պատասխան է տալիս Հրեական սփյուռքը, որի պատմական փորձը կարելի

է համարել դասական: Կարծում ենք, որ հրեական փորձի համեմատական (կոմպարատիվ) ուսումնասիրությունը, որոշ վերապահումներով, կարող է օգտակար լինել ման Հայոց Սփյուռքի՝ որպէս գործոնի ներուժն օգտագործելու համար՝ հայութեան ազգային անվտանգութեան ապահովման տեսանկյունից:

19-րդ դարի երկրորդ կեսին հրեական առանձին, ցաքուցրիվ համայնքների միջև կապերն այն աստիճան էին սերտացել, որ կարելի էր խոսել Հրեական սփյուռքի ձևավորման մասին, որի կենտրոնը գտնվում էր Եվրոպայում: Հրեաների առջև արդեն ծառայել էր մեկ համահրեական կենտրոն, կառույց ստեղծելու հարցը: Մեկ միասնական համահրեական կազմակերպություն ստեղծելու գաղափարը և դրա իրագործումը կարելի է համարել հրեաների շարժման առաջին պատմական մեծ նվաճումը:

Հրեաները, չնայած տարածայնություններին և առկա տարբեր հոսանքներին, փայլուն կերպով լուծեցին համահրեական կազմակերպության ստեղծման խնդիրը, հասկանալով, որ իրենց ուժը միասնական և համախմբված լինելու մեջ է: Հրեական առանձին կենտրոնների ներկայացուցիչների կոնգրեսը, որը տեղի ունեցավ 1897 թ. Բազելում, վեր կանգնելով հրեական առանձին համայնքների միջև առկա տարածայնություններից ու հակասություններից, հռչակեց Սիոնիզմի համաշխարհային կազմակերպության (ՍՀԿ) ստեղծումը, որի ակունքների մոտ կանգնած էր հրեա լրագրող Թեոֆոր Հերցլը: Նրա հեղինակած «Հրեական պետությունը» դարձավ սիոնիստական շարժման Սբ. Գիրքը, որը հաջորդ տասնամյակների ընթացքում ուղենիշ եղավ աշխարհի բոլոր հրեաների համար:

ՍՀԿ-ն կուռ կառույց էր, ուներ իր գերագույն մարմինը, քաղաքական, տնտեսական, ֆինանսական, քարոզչական, ապա ման ռազմական, այդ թվում և ահաբեկչական, բաժիններ, տեղական բաժանմունքներ և այլն:

Հրեական սփյուռքի կազմավորումը և ՍՀԿ-ն նախորդել են հրեական պետության ստեղծմանը: Դա Հրեական սփյուռքի կարևոր առանձնահատկություններից է: Հրեական սփյուռքի և ՍՀԿ գլխավոր խնդիրը դարձավ հրեական պետության ստեղծումը և այնտեղ հրեաներին հավաքելը, ինչը նույնպես հաջողությամբ իրագործվեց: Նրանց հավաքավայր ընտրվեց Պաղեստինը: Հրեական սփյուռքը և նրա ղեկավարող մարմինը՝ ՍՀԿ-ն, շուրջ 50 տարվա ընթացքում կարողացան հասնել իրենց նպատակին, և 1948 թ. մայիսի 15-ին հռչակվեց Իսրայելի Պետությունը: Դրանով ավարտվեց Հրեական սփյուռքի պատմական առաքելության առաջին փուլը:



Իսրայելի Պետության հռչակումից հետո սկսվեց Հրեական սփյուռքի պատմական առաքելության երկրորդ փուլը, որի հիմնական նպատակն էր քաղաքական, ֆինանսական, նյութական և ռազմական ամենալայն աջակցությամբ օգնել Իսրայելին պահպանելու իր գոյությունը, հաղթահարելու բազմապիսի դժվարություններ, ոտքի կանգնելու ու դառնալու ամուր և զարգացած պետություն: Հրեական սփյուռքի այդ առաքելությունը մինչև օրս շարունակվում է:

Ինչպես առաջին փուլում՝ մինչև հրեական պետության ստեղծումը, այնպես էլ երկրորդ փուլում ՍՀԿ կարևոր խնդիրն է համարվում հրեաներին հավաքելը և կենտրոնացնելը Իսրայելում: Հրեական սփյուռքը և նրա գանազան կազմակերպությունները երբեք չեն խրախուսում հրեաների արտագաղթը Իսրայելից: Ավելին. ՍՀԿ-ն և նրա շուրջը համախմբված հրեական ուժերը շարունակում են իրենց գլխավոր նպատակը համարել արտագաղթը կանխելը և Իսրայելում հրեահավաք գործունեությանը ավելի լայն թափ հաղորդելը:

Իսրայելի Պետության ստեղծումից հետո փոխվեցին հարաբերությունները Իսրայելի Պետության և ՍՀԿ-ի միջև: ՍՀԿ-ն այլևս հրեաների առաջատար և գերագույն կառավարող մարմին չէ: Պետության կազմավորումից հետո նա այլևս նման դեր չէր կարող կատարել և առաջնության դասինն զիջեց պետությանը: Համահրեական կառավարման կենտրոնը տեղափոխվեց Իսրայել: Այդ պահից սկսած՝ վճռական խոսքը պատկանում է իր հողն ունեցող և այդ հողի վրա բնակվող ժողովրդին ու նրա շահերն արտահայտող պետությանը:

Դա, իհարկե, չի նշանակում, թե Հրեական սփյուռքը կամ ՍՀԿ-ն կորցրել են իրենց դերն ու նշանակությունը և այլևս պետք չեն Իսրայելին: Խոսքն այն մասին է, որ Հրեական սփյուռքն այժմ կատարում է օժանդակ դեր և իր գործունեությունը համաձայնեցնում է Իսրայելի ղեկավարության հետ՝ ելնելով պետականություն ունեցող հրեաների ազգային, քաղաքական, տնտեսական և միջազգային շահերից:

Հրեական փորձը ցույց է տալիս, որ սկզբունքորեն հնարավոր է աշխարհի տարբեր երկրներում ցրված, տարբեր պետական կառուցվածք ունեցող երկրներում, տարբեր ռեժիմների պայմաններում և տարբեր կրոնական միջավայրերում բնակվող էթնիկական խմբերին, որոնք կազմում են տվյալ սփյուռքը, իրագործել մի այնպիսի բարդ, անգամ՝ անհավանական թվացող խնդիր, ինչպիսին է իր պետությունն ստեղծելը կամ արդեն գոյություն ունեցող իր պետությունը պահպանելը և հզորացնելը:

### **III. Հայոց Սփյուռքի՝ կուռ կառույցի վերածնանը խոչընդոտող գործոնները**

Յուրաքանչյուր սփյուռք ունի իր յուրահատկությունները, խնդիրները, գործելու եղանակները, մեթոդները, ավանդույթները և այլն, որոնք անխուսափելիորեն իրենց կնիքն են դնում տվյալ սփյուռքի գործելակերպի, կազմակերպական կառուցվածքների և դերակատարման վրա:

Դա վերաբերում է նաև Հայոց Սփյուռքին:

Հայոց և Հրեական սփյուռքների առաքելության համեմատական վերլուծությունը ցույց է տալիս նրանց միջև թե՛ նմանությունների, թե՛ տարբերությունների առկայությունը: Այդ համեմատությունից պարզ է դառնում հետևյալը:

*Առաջին.* Հայոց Սփյուռքը, ի տարբերություն հրեականից, երբեք իր առջև հայկական պետություն ստեղծելու խնդիր չի դրել ու չէր էլ կարող դնել, որի պարագայում նա Հայաստան–Սփյուռք շղթայում ձեռք կբերեր գերակա դերակատարում: Նա երբեք չի ունեցել և չէր էլ կարող ունենալ հրեաների համար կիրառելի այնպիսի մի նախագիծ, ինչպիսին է՝ «Հող չունեցող ժողովրդին (այսինքն՝ հայերին,– Ն. Հ.) տալ հող՝ առանց ժողովրդի», մի նախագիծ, որը բոլորովին էլ պիտանի չէր հայերի համար: Հայերը դարեր շարունակ գտնվել են, այսինքն՝ տիրապետել, ապրել, աշխատել, ստեղծագործել և բազմացել, իրենց իսկ հողի վրա, իրենց իսկ երկրում՝ Հայաստանում, որը նրանց բնօրրանն է: Անգամ բաժանված լինելով Արևելյան և Արևմտյան հատվածների ու գտնվելով համապատասխանաբար Ռուսական և Օսմանյան կայսրությունների կազմում, միևնույն է, Հայաստանը գտնվել է իր հողում:

Այս իրավիճակը հայերի արևմտյան հատվածի համար իր հիմնական գծերով պահպանվել է ընդհուպ մինչև 1915 թ. Ցեղասպանությունը և դրան հաջորդած մի քանի տարիները:

*Երկրորդ.* Ժամանակակից Հայոց Սփյուռքը ձևավորվել է 1915–1920 թթ., երբ Արևմտյան Հայաստանը դատարկվեց երիտթուրքական ջարդարարների ցեղասպան քաղաքականության հետևանքով: Նրա բեկորները հաստատվեցին հիմնականում Արաբական Արևելքում, որտեղից այնուհետև տարածվեցին ի սփյուռս աշխարհի:

Ժամանակագրական առումով դա համարյա համընկավ Արևելյան Հայաստանում հայոց պետականության վերականգնման հետ՝ ի դեմս Հայաստանի Առաջին Հանրապետության, որը գոյատևեց 1918 թ. մայիսից մինչև 1920 թ. դեկտեմբերը: Հետևաբար, իր առաջին դողդոջուն քայլերը

կատարող Հայոց Սփյուռքը, որը նույնիսկ չի կարելի համարել ձևավորված սփյուռք, չէր կարող առաջադրել հայկական պետություն ստեղծելու հարցը, քանի որ այդ պետությունն արդեն կար: Այն կերտել էր իր տարածքում բնակվող հայությունը, և Հայոց Սփյուռքը, ի տարբերություն հրեականից, դրանում մասնակցություն չի ունեցել:

Դա Հայոց Սփյուռքի տարբերակիչ գծերից մեկն է:

Այդ հանգամանքի շնորհիվ Հայոց Սփյուռք – Հայոց Պետություն շղթայում վերջինս սկզբից և եթ իր վրա վերցրեց առաջատարի դերակատարումը՝ ի տարբերություն Հրեական սփյուռքից, որին պատկանում է առաջատար դերակատարում հրեական պետության ստեղծման գործում:

Այդ պատճառով էլ Հայոց Պետությունն Սփյուռքի հետ իր հարաբերություններում ավելի անկախ է և կարող է գործել ավելի անկաշկանդ ու ազատ: Դրան նպաստում է նաև այն ընդունված տեսակետը, որ իրավունքը իր հողում ապրողինն է:

Հայոց Սփյուռքի ձևավորումն ընթացել է տանջալից ուղիով: Սկզբնական շրջանում նա առաջին հերթին մտահոգ էր իր գոյությունը և ինքնությունը պահպանելու խնդրով: Նրա համար այդ շրջանում մնացած բոլոր հարցերը, այդ թվում և Մայր հայրենիքին օգնելու խնդիրը, մոլված էին երկրորդական պլան: Եվ դա ոչ թե այն պատճառով, որ Սփյուռքը դա չէր ցանկանում կամ պակաս հայրենասեր ու հայասեր էր, այլ պարզապես դրա հնարավորությունը չուներ: Բայց աստիճանաբար, հաղթահարելով բազում քաղաքական, տնտեսական, լեզվամշակութային խնդիրներ, Հայոց Սփյուռքը կարողացավ ոտքի կանգնել, շտկել մեջքը և, առօրյա հոգսերից բացի, հետաքրքրվել նաև համահայկական հարցերով: Այդ փուլը սփյուռքահայությունն անցավ 1920–1945 թթ., որին հաջորդեց նրա զարգացման, բնակության երկրներում իր դիրքերի ամրապնդման փուլը: Նոր հեռանկարներ էին բացվում նաև Հայաստան–Սփյուռք հարաբերություններում: Հայոց Սփյուռքն ավելի ու ավելի էր իր հայացքն ուղղում դեպի Մայր հայրենիք, ինչի ամենացայտուն արտահայտությունը եղավ հայերի 1946–1948 թթ. զանգվածային ներգաղթը Հայաստան:

Սակայն այդ ներգաղթը պետք չէ դիտել բացառապես որպես Սփյուռքի գործողության արդյունք: Դա ավելի շատ ԽՍՀՄ շահերի շրջանակներում Խորհրդային Հայաստանի՝ Հայկական Երկրորդ Հանրապետության պետական գործունեության շնորհիվ էր և նշանակում էր, որ Հայաստան–Սփյուռք հարաբերությունները թևակոխում են նոր փուլ: Այդ պահից սկսվում է Մայր հայրենիքի կողմից սփյուռքահայության նկատմամբ մտահոգություն, անգամ՝ հոգատարություն ցուցաբերելու քաղաքականութ-

յունը, որն ավելի է շեշտում Հայաստան – Սփյուռք շղթայում Հայաստանի առաջնայնության հանգամանքը: Մակայն դա հետագայում չունեցավ իր ամբողջական զարգացումը, ինչն ունի իր պատճառները:

Հայոց Սփյուռքին, ի տարբերություն Հրեական սփյուռքից, այդպես էլ չհաջողվեց վերածվել համախմբված կուռ կառույցի՝ իր համասփյուռքյան հաստատություններով: Նրան չհաջողվեց, ինչպես հրեաներին, ստեղծել իր Համահայկական համաշխարհային կազմակերպությունը (ՀՀԿ)՝ որպես Սփյուռքը ղեկավարող, նրա աշխատանքները համադրող կառույց՝ իր քաղաքական, տնտեսական, մշակութային և այլ ենթակառույցներով: Միոնիստական համաշխարհային կազմակերպության և դրա թիկունքում կանգնած հրեության ուժը նախ և առաջ իրենց կազմակերպվածության և իրենց պայքարին համապատասխան համազգային բնույթ հաղորդելու մեջ է: Այդ շարժումից համարյա ոչ մի հրեա դուրս չմնաց: Մինչդեռ հայերի պարագայում իրադրությունն այլ կերպ ձևավորվեց:

Հայոց Սփյուռքի ներսում, հարկավ, հասկանում են միասնության անհրաժեշտությունը: Այդ մասին քիչ չի գրվել սփյուռքահայ մամուլում և քիչ բան չի ասվել սփյուռքահայ զանազան գործիչների կողմից: Այդուհանդերձ, Հայոց Սփյուռքն ընթացավ այլ ուղիով: Սփյուռքում իրենց գործունեությունը ծավալեցին Սառը պատերազմի մեջ ներգրավված ավանդական քաղաքական կուսակցությունները՝ Հայ հեղափոխական դաշնակցությունը, Ռամկավար ազատական կուսակցությունը, Սոցիալ-դեմոկրատական հնչակյան կուսակցությունը, ապա ասպարեզում հայտնվեցին նաև հայ համայնավարները: Դրանցից յուրաքանչյուրը հետապնդում էր իր նեղ կուսակցական շահերն ու նպատակները և դրանով իսկ սփյուռքահայ իրականության մեջ ներդրում ու պահպանում բաժանվածության սկզբունքը, խոչընդոտում Սփյուռքը մեկ ամբողջական կուռ կառույցի վերածվելուն, թեև հայերն իրենց առջև ունեին հրեաների օրինակը: Այդ իրավիճակն ըստ էության պահպանվում է մինչև օրս:

Սփյուռքի պառակտվածությունն էլ ավելի խորացավ, երբ այդ կուսակցությունները և դրանց հարող քաղաքական ուժերն ստեղծեցին իրենց համապատասխան կրթական, դպրոցական, մշակութային, հասարակական, հայրենակցական, անգամ՝ մարզական միություններն ու մարմինները, որոնց նպատակը ներգրավված հայությանը տվյալ կուսակցությանը նվիրվածության ոգով սնելն ու կրթելն էր: Դա էլ իր հերթին հանգեցնում էր «հակառակ» կուսակցության արժեքների ժխտմանը, այսինքն՝ նպաստում էր Հայոց Սփյուռքի բաժանվածությանը:

Սփյուռքի միասնականությանը և համախմբման գաղափարին ու գոր-

ծին ծանր հարված հասցրեց Հայ Առաքելական եկեղեցու պառակտումը, որն իրագործվեց 1956 թ. ՀՀԴ այն ժամանակվա ղեկավարության անմիջական նախաձեռնությամբ ու մասնակցությամբ: Դա իր հերթին ավելի խորացրեց Սփյուռքի պառակտումը:

Վերոնշյալ հանգամանքների բերումով Հայոց Սփյուռքը՝

ա) իր մեջ ուժ չգտավ վեր կանգնելու կուսակցական, անձնական և հատվածային նեղ շահերից,

բ) ի վիճակի չեղավ ձևավորելու սփյուռքի մասշտաբներին համապատասխան համահայկական համագրային մտածողություն և գիտակցություն,

գ) չկարողացավ ստեղծել համասփյուռքյան ամբողջական, համապարփակ և հեղինակավոր կազմակերպություն,

դ) զրկվեց իր քաղաքական, տնտեսական ու ֆինանսական ներուժն ամբողջությամբ դրսևորելու, իսկ անհրաժեշտության դեպքում՝ այն պաշտպանական-դիմադրողական ուժի վերածելու հնարավորությունից:

Այդ ամենի հետևանքով Հայաստանը զրկվեց ի դեմս Սփյուռքի կազմակերպված, համախմբված և զորեղ գործընկեր ունենալու հնարավորությունից, ինչը կարող էր զգալիորեն բարելավել ինչպես Հայաստանի, այնպես էլ Սփյուռքի միջազգային կարգավիճակը և մեծացնել հայկական քաղաքական ու ռազմական գործոնի «արժեթղթերի գինը» միջազգային, հատկապես՝ տարածաշրջանային, հարաբերությունների քաղաքական բորսայում:

Այդ նույն պատճառներով չձևավորվեց Հայոց Սփյուռքը ներկայացնող մեկ համահայկական մարմին, որը հանդես գար նրա անունից և դառնար Հայաստանի գործընկերը, որի հետ նա կարողանար քննարկել Հայաստանին և Սփյուռքին, համայն հայությանը հետաքրքրող հարցերը, ընդունել համապատասխան որոշումներ, ապահովել դրանց կենսագործումը և սփյուռքահայությանը և նրա խնդիրները ի հարկին ներկայացնել միջազգային ատյաններում: Այդ ֆունկցիան չեն կարող կատարել ո՛չ «Հայաստան» հիմնադրամը, ո՛չ էլ Հայկական բարեգործական ընդհանուր միությունը, քանի որ դրանց խնդիրներն այլ են, և դրանք բոլորովին այլ նպատակներ են հետապնդում:

Հայաստանի և Սփյուռքի միջև կապերի ամրապնդման ու նրանց համագործակցության ճանապարհին լուրջ խոչընդոտ դարձան նաև Սառը պատերազմը և այդ պայմաններում առանձնահատուկ նշանակություն ձեռք բերած գաղափարական հակամարտությունը: Սառը պատերազմի հետևանքով ԽՍՀՄ մաս կազմող Խորհրդային Հայաստանը և սփյուռքահայ մի շարք կուսակցություններ, քաղաքական, հասարակական ու մշակու-

թային կազմակերպություններ հայտնվեցին բարիկաղների տարբեր կողմերում: Ուստի խոսել Հայաստան–Սփյուռք համակարգված հարաբերությունների, առավել ևս՝ համագործակցության մասին, կարծում ենք, ավելորդ է: Մինչդեռ Հրեական սփյուռքի և Իսրայելի Պետության պարագայում Սառը պատերազմի դարաշրջանում նման երկփեղկվածություն չառաջացավ, քանի որ նրանք պատկանում են միևնույն՝ արևմտյան ճամբարին:

Այս հարցում Հայաստան–Հայոց Սփյուռք շղթան ակնհայտորեն զիջում է Իսրայել–Հրեական սփյուռք շղթային:

Երկար ժամանակ Հայաստանի և Սփյուռքի միջև կապերն իրագործվել են գլխավորապես կրթական և մշակութային համագործակցության ձևով, ինչը թեև արժանի է բարձր գնահատականի, սակայն չի կարող բավարար համարվել, հատկապես՝ այժմ, մեր օրերում:

Հայաստանի և Սփյուռքի միջև կապերի զարգացման և ամրապնդման առումով մեծ հեռանկարներ ու հնարավորություններ բացվեցին 1991 թ. Հայաստանի անկախության նվաճումից հետո: Ստեղծվեցին նոր պայմաններ և առաջացան նոր խնդիրներ, որոնք պահանջում են նոր մոտեցումներ: Ահա այստեղ է, որ կարող է օգտակար լինել հրեաների պատմական փորձը, ի մասնավորին՝ Հրեական սփյուռքի դերակատարումը Իսրայելի Պետության ստեղծումից հետո, երբ Հրեական սփյուռքը գերագույն ճիգերով օգնեց և սատարեց Իսրայելի Պետությանը՝ պահպանելու և պաշտպանելու իր անկախությունն ու անվտանգությունը, քիկունք կանգնեց հինգ անգամ արաբների հետ պատերազմի մեջ հայտնված Իսրայելին՝ զարգացնելու երկրի տնտեսությունը, գիտությունը, մշակույթը և, ընդհանրապես՝ ամրապնդելու Իսրայելի՝ որպես համայն հրեության պետության դիրքերը:

Հանուն արդարության պետք է արձանագրել, որ Սառը պատերազմի դարաշրջանի ավարտից և Հայաստանի անկախության հռչակումից հետո զգալի տեղաշարժեր կատարվեցին Հայաստան–Սփյուռք հարաբերություններում: Ակտիվացավ Սփյուռքի առանձին համայնքների լոբբինգային գործունեությունը, առաջին հերթին՝ ԱՄՆ-ում և Ֆրանսիայում՝ հօգուտ նորանկախ հայկական պետության: Դա ընդհանրապես նորություն էր Սփյուռքի որոշ համայնքների համար, քանի որ մինչ այդ անկախ Հայաստան պետություն չկար, որի շահերի համար նրանք պայքարեին: Այդ բնագավառում բոլորի համար դասական օրինակ կարող է ծառայել Հրեական սփյուռքը, որը որոշ երկրներում, առաջին հերթին՝ ԱՄՆ-ում, դարձել է պետություն պետության ներսում: Աշխուժություն է նկատվում Հայաստանում սփյուռքահայ կապիտալի ներդրման գործում, թեև դա դեռևս շատ հեռու է բավարար համարվելուց:

Սփյուռքը լիակատար քաղաքական և բարոյական համերաշխություն դրսևորեց Ղարաբաղյան հակամարտության տարիներին, և, թեկուզ չափավոր սահմաններում, այդուհանդերձ, չմեկուսացավ այդ հակամարտությունից, և այլն:

Սակայն այդ ամենը շատ հեռու է բավարար համարվելուց, եթե հաշվի առնենք Սփյուռքի ներուժը: Բացի այդ, ինչ որ կատարվում է, դա համակարգված աշխատանքի արդյունք չէ, այլ շատ հաճախ՝ անհատական ձեռներեցության, նախաձեռնության, ցանկության, կամեցողության և պատրաստակամության դրսևորում:

#### **IV. Նոր մոտեցումներ Հայաստան–Սփյուռք ռազմավարության հարցում: Կազմակերպական նոր ձևեր, անցում առօրյա կապերից ինտեգրման:**

##### **Երկխոսությունը՝ համագործակցության մայրուղի: Հայաստանի հռչակումն Ամենայն Հայոց Պետություն**

Նոր սպառնալիքները և մարտահրավերները, Հայաստանի Հանրապետության առջև ներկա փուլում ծառայած քաղաքական, տնտեսական, ֆինանսական ու ռազմական խնդիրները պահանջում են նոր մոտեցումներ և նոր ռազմավարություն Հայաստան–Սփյուռք հարաբերությունների հարցում՝ նրա ներուժը լիակատար կերպով օգտագործելու համար, որից զգալիորեն կախված են հայության, այդ թվում և սփյուռքահայության, անվտանգությունն ու ապագան:

Սակայն դրա համար առաջին հերթին անհրաժեշտ է գտնել կազմակերպական նոր ձևեր:

1. Մենք հեռու ենք այն մտքից, թե մոտ ապագայում, անգամ՝ հեռանկարում, հնարավոր է Սփյուռքում ստեղծել մեկ միասնական համահայկական կառույց, ինչպիսին ժամանակին հրեաների ստեղծած ՄՀԿ-ն էր, մի կազմակերպություն կամ մարմին, որն իրավագոր լիներ հանդես գալու համայն սփյուռքահայության անունից, նրա անունից ընդունելու որոշումներ, որոնք պարտադիր լինեն ամբողջ սփյուռքահայության համար և իրագործվեն նրա կողմից, և որի հետ կարողանար համագործակցել Հայաստանի ղեկավարությունը:

2. Մենք թերահավատությամբ ենք վերաբերվում մաս վերջերս Հայաստանում (բայց ոչ՝ Սփյուռքում) ներգաղթի վերաբերյալ ավելի ու ավելի հաճախ և բարձրաձայն հնչող կոչերին: Կարծում ենք, որ դրանք ավելի շատ պոպուլիստական մոտեցումներ են, քանի որ ներգաղթի իրական հնարա-

վորություն չկա: Դրան պատրաստ չեն ո՛չ Սփյուռքը, ո՛չ էլ Հայաստանը: Պետք է հաշվի առնել նաև 1946–1948 թթ. ներգաղթի դառը փորձը, որը հիմնովին վարկաբեկեց ներգաղթի սկզբունքորեն ընդունելի գաղափարը: Դրա հետ մեկտեղ պետք է նշել, որ նոր ներգաղթը չի կարող լուծել մեր առջև ծառայած խնդիրները:

Այս պայմաններում առաջին պլան են մղվում կազմակերպական հարցերը, որոնց ճիշտ լուծումը շատ կարևոր է Հայաստան – Սփյուռք հարաբերությունները նոր մակարդակի բարձրացնելու, դրանք գործնական դարձնելու և նրանց ինտեգրման առջև դուռ բացելու առումով:

Այդ հարցերի լուծումը պետք է փնտրել Հայաստան – Սփյուռք երկխոսության շրջանակներում և փոխադարձ համաձայնության հիմքի վրա:

Ամեն մի երկխոսության համար առնվազն պահանջվում է երկու կողմ՝ օժտված համապատասխան լիազորություններով:

Առաջին կողմը, բնականաբար, Հայոց պետությունն է՝ Հայաստանի Հանրապետությունը՝ իր Նախագահով: Այն կայացած է, ունի իր խորհրդարանը, կառավարությունը, բանակը, իրավական, քաղաքական, ֆինանսական, մշակութային և այլ համապատասխան մարմիններ: Այդ կողմը Սփյուռքի հետ բանակցություններում կարող է ներկայացված լինել հանրապետության նախագահի կամ նրա լիազոր ներկայացուցչի միջոցով:

Խնդիրն ավելի բարդ է Սփյուռքի պարագայում: Ո՞վ, կամ ի՞նչ կազմակերպություն կարող է ներկայացնել Հայոց Սփյուռքը: Տարաբախտաբար չկա մի այնպիսի անվիճելի հեղինակավոր անձնավորություն կամ կազմակերպություն, որը բարոյական իրավունք ունենար հանդես գալու համայն Սփյուռքի անունից և ընդունվեր նրա կողմից, ներկայացներ նրա պահանջները, խնդիրները, կարիքները, լիազորված լիներ Հայաստանի ներկայացուցիչների հետ ստորագրելու համապատասխան փաստաթղթեր, համաձայնագրեր, պայմանագրեր, պարտավորագրեր: Ուրեմն այս պարագայում հայաստանյան կողմը, կամա թե ակամա, պետք է գործ ունենա բազմաթիվ անձանց և տարբերույթ կազմակերպությունների հետ, որոնց հետ երկխոսությունը կարող է խլել շատ ժամանակ և երբեմն անգամ ընդհատվել կամ փակուղի մտնել:

Մեր կարծիքով՝ փոխադարձ համաձայնությամբ պետք է սահմանվեն այն համասփյուռքյան շրջանակները և դրանց մեջ մտնող անձինք ու կազմակերպությունները, որոնք ազդեցություն և հեղինակություն ունեն Սփյուռքում:

Դրանք, մեր կարծիքով, կարող են լինել՝



1. Սփյուռքում գործող Հայկական բոլոր քաղաքական կուսակցությունները (Հայ հեղափոխական դաշնակցություն, Ռամկավար ազատական կուսակցություն, Սոցիալ-դեմոկրատական հնչակյան կուսակցություն, հայ համայնավարներ և այլն),

2. Հայ Առաքելական եկեղեցու Էջմիածնի և Անթիլիասի բոլոր թեմերի լիազոր-ներկայացուցիչները,

3. հյուրընկալող երկրների խորհրդարանների հայ անդամները (ԱՄՆ, Լիբանան, Սիրիա, Իրան, Ռուսաստանի Դաշնություն, Ֆրանսիա, Վրաստան, Կիպրոս և այլ երկրներ),

4. Հայկական բարեգործական ընդհանուր միությունը,

5. հայ գիտնականները և նրանց ընկերությունները,

6. հեղինակություն և հարգանք վայելող հասարակական կազմակերպությունները,

7. կրթական հաստատությունները (Բեյրութի Հայկազյան համալսարան, ԱՄՆ-ի, արաբական երկրների, ՌԴ, Ֆրանսիայի, Իտալիայի, Իրանի, Գերմանիայի, Մեծ Բրիտանիայի և այլ երկրների համալսարանների հայազիտական ամբիոններ, հայ պրոֆեսոր-դասախոսներ, Սփյուռքի հայկական դպրոցների ուսուցիչներ, մանկավարժներ և այլն),

8. մշակութային միությունները (այդ թվում՝ նաև գրական, թատերական և նման այլ միություններ, ականավոր երաժիշտներ, երաժշտագետներ, նկարիչներ, քանդակագործներ, թատերական գործիչներ, կինոգործիչներ և այլն),

9. զանգվածային լրատվության միջոցները (հայերեն, անգլերեն, ֆրանսերեն, ռուսերեն, արաբերեն և այլ լեզուներով հրատարակվող օրաթերթերի, շաբաթաթերթերի և ամսագրերի խմբագրությունների ներկայացուցիչներ),

10. հայրենակցական միությունները,

11. մարզական միությունները և այլ կազմակերպություններ, ընկերություններ ու միություններ,

12. տարաբնույթ երիտասարդական կառույցներ:

Պետք է ընդգրկել լայնորեն և երկխոսության մեջ ներգրավել ականավոր, հեղինակավոր, վաստակաշատ անհատների՝ գրողների, արտիստների, լրագրողների, գիտնականների, հասարակական, քաղաքական գործիչների, տնտեսագետների, ֆինանսիստների, տարբեր բնագավառների խոշոր ու ճանաչված մասնագետների և ուրիշների: Նրանք պետք է ընտրեն (կամ նշանակեն) իրենց ներկայացուցիչներին, որոնք իրավունք ունենան մասնակցելու հայաստանյան կողմի հետ բանակցություններին, իրավասու

լինեն համաձայնագրեր ստորագրելու, պայմանավորվածություններ ձեռք բերելու Հայաստանին և Հայոց Սփյուռքին վերաբերող անկյունաքարային հիմնախնդիրների վերաբերյալ:

Իսկ որո՞նք են այն հարցերը, որոնց վրա պետք է կենտրոնանա Հայաստան – Սփյուռք երկխոսությունը:

Երկու կողմերի միջև տեղի ունենալիք երկխոսության ժամանակ առաջին հերթին պետք է քննարկել սփյուռքահայ կառույցների ստեղծման հարցը՝ փուլ առ փուլ: Սկզբնական շրջանում թերևս ընդունելի և հեշտ լինի ստեղծել կառույցներ ըստ երկրների, ապա՝ ըստ աշխարհամասերի և, ի վերջո, ստեղծել համահայկական-համասփյուռքյան կառույցներ:

Դրա համար պետք է գումարել Սփյուռքի վերոնշյալ կազմակերպությունների ղեկավարների համաժողով և այդ հարցերը դարձնել համաժողովի քննարկմանն ու լուծմանը ենթակա հիմնական խնդիրներ: Համաժողովը կարող է իրավասու լինել և համապատասխան որոշում ընդունել հարցերը համաձայնության և ներկայացուցչության սկզբունքի հիման վրա լուծելու վերաբերյալ:

Երկխոսության ամենակարևոր հարցերից պետք է լինեն՝

*առաջին.* Հայաստանը հայտարարել Ամենայն Հայոց Պետություն: Դա կարող է տեղի ունենալ միայն Սփյուռքի համաձայնությամբ,

*երկրորդ.* ստեղծել Հայաստան – Սփյուռք համատեղ մարմին, որը, պայմանականորեն կարելի է կոչել «Հայաստանի և Սփյուռքի հարաբերությունները համադրող համատեղ մարմին» (ՀՄՀՄ) կամ «Հայաստան – Սփյուռք խորհրդատու մարմին» (ՀՄԽՄ), որի նախագահը լինի Հայաստանի Հանրապետության նախագահը: Դա կարելի է դիտել որպես անցումային շրջանին համապատասխանող մարմին, մինչև համապատասխան նախադրյալներ ստեղծվեն Հայաստան – Սփյուռք համահայկական համապարփակ մշտական մարմնի (կազմակերպության) կազմավորման համար:

ՀՄՀՄ-ն իր կազմում որպես ենթակառույցներ կարող է ունենալ քաղաքական, ռազմական, տնտեսական, ֆինանսական, գիտական, մշակութային և այլ հանձնաժողովներ կամ ենթաբաժիններ:

ՀՄՀՄ-ն համալրվում է Հայաստանին վերաբերող մասով՝ Հայաստանի, իսկ Սփյուռքին վերաբերող մասով՝ Սփյուռքի ականավոր պետական, քաղաքական, հասարակական, կրոնական, մշակութային գործիչներից, գործարարներից՝ հավասար ներկայացուցչության (պարիտետի) սկզբունքի հիման վրա:

Որոշումներն ընդունվում են համաձայնության սկզբունքով:

ՀՄՀՄ-ն քննարկում և համապատասխան որոշումներ է ընդունում բոլոր առանցքային հարցերի վերաբերյալ, որոնք պետք է նպատակաուղղված լինեն հայության ազգային անվտանգության ապահովմանը, Հայաստանի անկախության ամրապնդմանը, տնտեսական բարգավաճմանը, կրթության և մշակույթի զարգացմանը, սփյուռքահայության ինքնության պահպանմանը:

ՀՄՀՄ-ն քննարկում և հաստատում է հայության համար կենսական անհրաժեշտություն ներկայացնող հարցերի լուծման առաջնահերթությունները, նշում դրանց իրագործման ուղիները և լուծում դրանց ֆինանսավորման հարցերը:

Հայաստանի Կառավարությունը յուրաքանչյուր տարվա վերջին հաշվետվություն է ներկայացնում ՀՄՀՄ-ին՝ իր աշխատանքների, ի մասնավորին՝ ՀՄՀՄ-ի հանձնարարականների, կատարման մասին:

Կարծում ենք, կարելի է մտածել նաև հեռանկարում Ազգային ժողովի երկրորդ պալատ ստեղծելու մասին՝ կազմված բացառապես Սփյուռքի ներկայացուցիչներից: Ինչքան էլ որ դա դժվար խնդիր լինի, այդուհանդերձ, չի կարելի հրաժարվել, թեկուզ՝ ոչ մտտակա ապագայում, նման կառույց ստեղծելու գաղափարից: Երկրորդ պալատի ստեղծումը, եթե դրա ստեղծման հանգամանքները մշակվեն հիմնովին, լայնախոհ կերպով և հաշվի առնվեն բոլոր հանգամանքները, կարող է շրջադարձային լինել հայոց պետականության, հայ ժողովրդի երեք հատվածների՝ Հայաստանի, Ղարաբաղի և սփյուռքահայության կյանքում, նոր հորիզոններ բացել հայության ազգային-քաղաքական կյանքում, քանի որ ամբողջ հայությանը հնարավոր չի լինի հավաքել ներկայիս Հայաստանի տարածքում:

Հաշվի առնելով Հայաստանի դեմ ուղղված ուժեղացող արտաքին, մասնավորապես՝ թուրք-ադրբեջանական, սպառնալիքները ներկա փուլում առաջնահերթ և անմիջական խնդիր համարել Հայոց Սփյուռքի ավելի ակտիվ մասնակցությունը Հայաստանի պաշտպանունակության ամրապնդմանը:

Դրա իրականացման ուղիներ համարել.

1. Սփյուռքի մասնակցությունը Հայաստանի և Ղարաբաղի բանակները արդիական զինատեսակներով սպառազինելու գործին:

2. Սփյուռքի օգնության մեծացումը Հայաստանի ռազմական արդյունաբերությունը վերականգնելու և զարգացնելու գործում:

3. «Հայաստան» հիմնադրամի՝ Քաղաքացիական կառույցներին հատկացվող ծախսերի կրճատում և ավելացած ֆինանսական միջոցների ուղղում Հայաստանի ու Ղարաբաղի պաշտպանության ամրապնդմանը:

4. Հայաստանում, Լեռնային Ղարաբաղում և Սփյուռքում մտցնել ազգային տուրք՝ սահմանելով դրա տարեկան չափաբաժինները (չշփոթել «Հայաստան» հիմնադրամի ամենամյա մարաթոնի հետ), իսկ ստացվող գումարները ծախսել բացառապես հայկական բանակի և հայ ժողովրդի՝ որպես էթնիկական մեկ ամբողջության ռազմական հզորության ամրապնդման նպատակներով: Պատմության մեջ եղել են դեպքեր, երբ այս կամ այն էթնիկական ամբողջությունը դիմել է նման քայլի և սահմանել ու գանձել ազգային տուրք, ինչպես, օրինակ, պաղեստինցիները և Պաղեստինի ազատագրության կազմակերպությունը (ՊԱԿ):

5. Մշակել սփյուռքահայ երիտասարդությանը ռազմական գործին հաղորդակից դարձնելու համապատասխան ուղիներ և ձևեր՝ ելնելով այն իրողությունից, որ Հայաստանին և Ղարաբաղին ռազմական սպառնալիքների կամ ագրեսիայի պարագայում հնարավոր լինի նրանց արագորեն տեղափոխել Հայաստան, օգտագործել նրանց ներուժը և անմիջականորեն մասնակից դարձնել ռազմական գործողություններին:

Թերևս նպատակահարմար կլինեն՝

ա) օգտագործել սփյուռքահայ երիտասարդների ամառային արձակուրդները և հանգիստը Հայաստանում անցկացնելու հնարավորությունը,

բ) կազմակերպել ամառային ճամբարներ՝ հատուկ, ռազմականացված ծրագրերով,

գ) կտրուկ կերպով ավելացնել սփյուռքահայ ուսանողներին Հայաստանի ուսումնական հաստատություններում հատկացվող տեղերը, ինչը հնարավորություն կտա նրանց հաղորդակից դարձնելու ռազմական ուսուցմանը, և այլն:

Կարծում ենք՝ ժամանակն է ՀՄՀՀՄ, այսինքն՝ Հայաստանի և Սփյուռքի համատեղ հատուկ հայտարարությամբ միջազգային հանրությանը տեղյակ պահել, որ Հայաստանի վրա արտաքին հարձակման դեպքում հնարավոր ագրեսորն իր դեմ կունենա ոչ թե միայն Հայաստանը և Ղարաբաղը՝ իրենց 3,5 մլն բնակչությամբ և ռեսուրսներով, այլև աշխարհի համայն հայությունը (10 մլն)՝ իր ամեն տեսակի ռազմական, տնտեսական և քաղաքական ներուժով ու կարողություններով:

Տեղին կլիներ, եթե Սփյուռքի մեծահարուստները (առանց անունները նշելու) հանդես գան հատուկ հայտարարությամբ առ այն, որ նրանք պատրաստ են յուրաքանչյուր տարի ավելացնելու Հայաստանի պետական բյուջեով հատկացվող ռազմական ծախսերը՝ ոչ միայն հասցնելով 1 մլրդ դոլարի, այլև անցնելով այդ սահմանը:

Հայրենիք – Սփյուռք համագործակցության նոր մոտեցումների համակարգում, հասկանալի է, հարկ է ներառել և ավելի մեծ տեղ հատկացնել նաև գիտական, կրթական ու մշակութային ոլորտներին՝ առանձին դեպքերում հրաժարվելով հին և իրենց դարձն ապրած համագործակցության ձևերից, շեշտը դնելով բարձր տեխնոլոգիաների, նորարարական ուղղությունների ու մեթոդների վրա:

Սրանք են ընդհանուր գծերով մեր կողմից առաջարկվող նոր մոտեցումները՝ Հայաստանին և ամբողջ հայությանն սպառնացող նոր վտանգների ու մարտահրավերների, հայության ազգային անվտանգության ապահովման հրատապ խնդիրների հաշվառմամբ:

Մենք, իհարկե, պատկերացնում ենք այն բոլոր դժվարությունները, որ կան համասփյուռքյան կառույցներ, Հայաստան – Սփյուռք համադրող մարմին ստեղծելու և Հայաստան – Սփյուռք ինտեգրման ճանապարհին: Բայց այդ դժվարությունները չեն կարող մնան գաղափարից հրաժարվելու պատճառ դառնալ: Հայությունն իր բազմադարյան պատմության ընթացքում կարողացել է լուծել ավելի բարդ խնդիրներ, նրա արքայից արքա Տիգրան Մեծը դեռ մ.թ.ա. 1-ին դարում ստեղծել է կայսրություն: Դրա համար անհրաժեշտ է ցանկություն, քաղաքական կամքի դրսևորում, նեղ հատվածական շահերից վեր կանգնելու և դրանք համահայկական, համազգային շահերին ենթարկելու ունակություն:

Հայաստան – Սփյուռք հարաբերությունները ինտեգրման ռելսերի վրա տեղափոխելը համապատասխանում է Ամենայն Հայոց Պետության հզորացման և համայն Հայոց Սփյուռքի ինքնության պահպանման շահերին:

Նոր սկզբունքների վրա խարսխված Հայաստան – Սփյուռք հարաբերությունները պետք է նպատակատուղված լինեն Հայաստան – Ղարաբաղ – Հայոց Սփյուռք յուրատեսակ և աստիճանական քաղաքական, տնտեսական, ռազմական և հոգևոր-մշակութային ինտեգրմանը: Դրա շնորհիվ մենք կունենանք, ինչպես այժմ է, Հայաստան՝ 30 հազ. կմ<sup>2</sup> տարածքով, սակայն բոլորովին այլ ներուժով և հնարավորություններով օժտված հայություն, որը կարող է աշխարհին ներկայանալ որպես 10 մլն բնակչություն ունեցող և բոլորովին նոր որակի քաղաքական, ռազմական, տնտեսական ազգային միակուռ կառույց: Դա կստիպի մեր անմիջական հարևաններին և միջազգային հանրությանն ավելի լրջորեն հաշվի նստել հայկական գործունի հետ և այլ լեզվով խոսել նրա հետ:

Դա ժամանակի հրամայականն է:

ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ՈՒՂՂԱԳՐՈՒԹՅԱՆ  
ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՀԱՄԱԴՐՄԱՆ ԽՆԴԻՐԸ  
ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՇԱՀԵՐԻ  
ԱՊԱՀՈՎՄԱՆ ՏԵՍԱՆԿՅՈՒՆՆԵՐ

*Պ. Ա. ՉՈԲԱՆՅԱՆ, ՀՀ ՊՆ ԱՌՀԻ-ի գիտնական-վերլուծաբան,  
պատմական գիտությունների դոկտոր*



Հայրենիք – Սփյուռք հարաբերություններում կարևոր հարցերից է հայոց լեզվի ուղղագրության խնդիրը: Այդ հարցի նկատմամբ միասնական համազգային դիրքորոշում ձևավորելու համար անհրաժեշտ է գտնել ընդհանուր ընդունելի բանաձև:

Ազգային ինքնագիտակցության, ներազգային հարողակցման և ազգային համախմբման հիմնական միջոցն ու ըստ այդմ՝ ազգային գոյատևման գրավականը մայրենի լեզվի համապարփակ գործառույթյան ապահովումն է: Երկար ժամանակ պետականություն չունենալու և օտար տիրապետության (Բյուզանդիա, Իրան, Օսմանյան պետություն, Ռուսական կայսրություն) տակ գտնվելու պայմաններում տեղի ունեցած լեզվափոխության հետևանքով հայ ժողովրդի ստվար հատվածներ օտարվել են և ներառվել այլ էթնոմշակութային միջավայրում: Հայրենիքում և գաղթօջախներում առաջացած հայերենի ուղղախոսության և ուղղագրության բազմազանության անհարմարության հանգամանքը արդիական է դարձել արդեն 19-րդ դարի վերջերին՝ ազգային զարթոնքի և դրա հետ կապված՝ ազատագրական շարժումների սկզբնավորման, տպագրության և պարբերական հրատարակությունների բազմացման պայմաններում, երբ ձևավորվեց հայոց գրական երկու լեզու՝ արևմտահայ և արևելահայ<sup>1</sup>: Ուղղագրության միասնական համակարգի ձևավորման անհրաժեշտության հարցը բարձրացվել է բազմաթիվ հրապարակումների միջոցով, առաջարկվել են նաև այլևայլ տարբերակներ: Հրատապության խնդիրը առաջ է քաշել նաև Ն. Ադոնցը 1904 թ.<sup>2</sup> շեշտադրելով ժամանակի գործոնը. «Պետք չէ մոռանալ, որ որքան մեծ ծավալ ստանա գրագիտությունը, այնքան դժվար կլինի ուղղագրական

<sup>1</sup> Տես Մ. Արևիյան, Հայոց լեզվի ուղղագրությունը: Թիֆլիս, 1892: Նոյնի՝ Մեր երկու գրական լեզուի միութեան խնդիրը: «Արարատ», 1897, էջ 424–431, 494–503:

փոփոխություններ ներմուծել: Քանի վաղ է, պետք է անել, ինչ որ կարող ենք անել, որպեսզի մոտիկ ապագայում չզղջանք, թե ինչու՞ անցյալի պարտքը անցյալին չտվինք»<sup>2</sup>: Պետականության վերականգնումը 1918 թ. բացառիկ հնարավորություն էր բարեփոխումներ իրականացնելու նաև լեզվի կանոնակարգման ոլորտում, որը, սակայն չիրագործվեց սոցիալ-տնտեսական ու քաղաքական ծանր պայմանների պատճառով:

Խորհրդային Հայաստանի իշխանությունները լեզվական ուղղագրության կանոնակարգման հասունացած խնդրի լուծման ուղղությամբ առաջին քայլը ձեռնարկեցին խորհրդայնացման առաջին իսկ ամիսներին՝ 1921 թ. հունվարին, երբ լուսժողկոմ Ա. Հովհաննիսյանը հրավիրեց Մ. Աբեղյանին՝ հանդես գալու ուղղագրության բարեփոխության մասին զեկուցումով: Այնուհետև զեկուցումը ներկայացվեց բարեփոխության իրականացման համար կազմված հանձնաժողովին և տպագիր ձևով ուղարկվեց նաև հայ մտավորականության ներկայացուցիչներին՝ քննարկման և կարծիքի համար: Այնտեղ նշվում էր, որ «խնդիրը քննության չի դրվում սկզբունքի տեսակետից: Ռեֆորմի խնդիրը կարիք ունի միայն տեխնիկական մշակման: Անհրաժեշտ է նշել լուծման ճանապարհները, ցույց տալ ռեֆորմի գործնական եղանակները»<sup>3</sup>:

1922 թ. սկզբներին Խորհրդային Հայաստանի նոր լուսժողկոմ Պ. Մակինցյանը կազմում է Մ. Աբեղյանի գլխավորությամբ հանձնաժողով, որը քննարկում է ուղղագրության նախագիծը: Այնուհետև Պ. Մակինցյանը ժողկոմխորհին է ներկայացնում Մ. Աբեղյանի առաջարկությունները, որոնք հաստատվում են կառավարության 1922 թ. մարտի 4-ի նիստում<sup>4</sup>:

Բարեփոխությունը հիմնվում է գրական (դպրոցական) արտասանության վրա: Ամեն մի հնչյուն միայն մեկ առանձին նշանագիր պետք է ունենա: Պետք չէ գրել այն տառերը, որոնք չեն արտասանվում<sup>5</sup>: 1922 թ. հոկտեմբերի 2-ից լուսժողկոմի հրահանգով սկսվում է նոր ուղղագրության ամբողջական կիրառությունը: Այբուբենից հանվում են է, լ, օ տառերը<sup>6</sup>:

Ուղղագրության բարեփոխման հաջորդ փուլը պայմանավորված էր 1920-ական թվականներին Մ. Աբեղյանի կողմից մշակված և առաջարկված

<sup>2</sup> Ն. Աղունց, Երկեր, հ. Գ: Ե., 2008, էջ 307, 331:

<sup>3</sup> Մ. Վ. Գյուլբուրդյան, Հայերենի ուղղագրության պատմություն: Ե., 1973, էջ 324–325:

<sup>4</sup> Տես նույն տեղում, էջ 325, 329:

<sup>5</sup> Տես նույն տեղում, էջ 325:

<sup>6</sup> Տես նույն տեղում, էջ 328:

ուղղագրության անհարմարությունները նոր բարեփոխումների միջոցով շտկելու մտահոգությամբ: Բազմապիսի առաջարկություններ պարունակող հրապարակումների<sup>7</sup> հանրագումարում 1940 թ. օգոստոսի 15-ին Խորհրդային Հայաստանի Կառավարությունը հաստատեց Տերմինաբանական կոմիտեի կազմած նախագծով լուսժողկոմի առաջարկությունը՝ հայերենի ուղղագրության մեջ մասնակի փոփոխություն մտցնելու մասին<sup>8</sup>:

1950–1970-ական թթ. շարունակվում են մասնակի բարեփոխումները հայերենի ուղղագրության մեջ, ինչը պայմանավորված էր հիմնականում օտար լեզուներից փոխառված բառերի արտասանության և գրության սկզբունքների մշակմամբ, միասնական ուղղագրություն ձևավորելու մտահոգությամբ<sup>9</sup>:

Խորհրդային ժամանակաշրջանում, հատկապես՝ Սառը պատերազմի տարիներին, Հայրենիք–Սփյուռք հարաբերություններում դեռևս լիովին չհաղթահարված անջրպետը հնարավորություն չընձեռեց լուծում տալու համազգային ընդգրկում ունեցող այնպիսի խնդրի, ինչպիսին հայոց լեզվի ուղղագրության միասնականացման խնդիրն էր:

Հետխորհրդային ժամանակաշրջանում այս առումով էական դրական տեղաշարժեր չարձանագրվեցին, ավելին՝ նկատվեց դիրքորոշումների նոր բևեռացում:

Այրուհանդերձ, նշված խնդրի լուծման կարևորությունը Հայաստանում արձանագրվել է ինչպես «Լեզվի մասին» ՀՀ օրենքում, «ՀՀ լեզվական քաղաքականության պետական ծրագրում»<sup>10</sup>, այնպես էլ «ՀՀ ազգային անվտանգության ռազմավարության» մեջ՝ որպես հայապահպանության, հոգևոր-մշակութային ժառանգության, մասնավորապես՝ հայոց լեզվի պահպանման և զարգացման պահանջ, և մնում է որպես ազգային անվտանգության առաջնահերթություն<sup>11</sup>:

Ներազգային լեզվական հաղորդակցման խոչընդոտումը հանգեցնում է սփյուռքահայության ուժացման վտանգի մեծացման, ազգային պառակտ-

---

<sup>7</sup> Տես նույն տեղում, էջ 332–374:

<sup>8</sup> Տես նույն տեղում, էջ 374:

<sup>9</sup> Տես նույն տեղում, էջ 380–399:

<sup>10</sup> Տես ՀՀ Կառավարության 2002 թ. փետրվարի 18-ի «ՀՀ լեզվական քաղաքականության պետական ծրագիրը հաստատելու մասին» հմ. 138 որոշումը (տես «ՀՀ Պաշտոնական տեղեկագիր», 2002, հմ. 9 (184)):

<sup>11</sup> Տես «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարություն»: «Հայկական բանակ» ռազմագիտական հանդեսի հատուկ թողարկում, 2007, էջ 16:



ման և ժողովրդի առանձին հատվածների օտարացման: Ներագային տեղեկատվական միասնական դաշտի ձևավորումն ու ՀՀ – Սփյուռք հարաբերություններում լեզվական հաղորդակցման դյուրացման խնդիրը առաջնահերթ հիմնահարց է և ազգային միասնության վերականգնման հիմնական միջոցներից մեկը:

Լեզվական հաղորդակցման միասնական դաշտի ձևավորման ճանապարհին կարևոր խնդիրներից է ուղղագրության միասնականացման ուղղությամբ աշխատանքի նախաձեռնումը, որն էլ իր հերթին ունի բարդություններ ու դժվարություններ: Միասնական ուղղագրությունը պետք է ընդունելի ու պարտադիր լինի ոչ միայն հայ ժողովրդի բոլոր հատվածների համար, այլև ապահովի անցյալի ժառանգության ներդաշնակ փոխանցումը մեր ժողովրդի հաջորդ սերունդներին, ապահովի ոչ միայն մշակութային ժառանգության յուրացումը, այլև ավելի սերտացնի տարբեր հատվածների հաղորդակցումը: Դա նշանակում է, որ թույլատրելի չեն ինչպես ժամանակակից արևելահայերենի հենքի վրա ծնունդ առած ուղղագրության պարտադրումը հայ ժողովրդի բոլոր հատվածներին, այնպես էլ ավանդական միջնադարյան ուղղագրությանը վերադառնալու անվերապահ կոչերը:

Ռեղրագրության խնդիրները սերտորեն առնչվում են լեզվական խնդիրների հետ: Սփյուռքում հայապահպանության ու հաղորդակցման գործառույթը իրականացվել է հիմնականում արևմտահայերենի միջոցով: Ցեղասպանության հետևանքով հայրենագուրկ դարձած և Պատմական Հայաստանի տարբեր գավառներից արտաքսված տարբեր բարբառների կրող բնակչությունը օտարության մեջ միշտ չէ, որ հետևում է գրական արևմտահայերենի նորմերին, ուստի և Սփյուռքի տարբեր գաղթօջախներում գրավոր լեզվի մեջ ներառվել են բարբառի այլևայլ տարբեր: Կենդանի հաղորդակցման լեզուն, լինելով զարգացում ապրող երևույթ, ենթակա է անընդմեջ կատարելագործման: Միևնույն ժամանակ, վերջին տասնամյակներին Հայաստանի Հանրապետությունից, Իրանից և այլ վայրերից Արևմուտք տեղի ունեցած արտագաղթի հետևանքով Սփյուռքում աճել է արևելահայերենի կրող բնակչության թվաքանակը, ինչը նոր իրավիճակ է ստեղծում Սփյուռքի կրթաֆակուլտային կյանքում: Սփյուռքի լեզվական միջավայրի վրա իր ազդեցության կնիքն է թողնելու ՀՀ-ից հեռարձակվող և անընդմեջ մեծանալու միտում ունեցող էլեկտրոնային լրատվական և թվային հաղորդակցության միջոցների գործոնը:

Հայահոծ գաղթօջախներից, օրինակ, նման առանձնահատուկ իրավիճակ է ստեղծվել ԱՄՆ-ում: Այն առավել դինամիկ զարգացող, համալրվող և միաժամանակ հայ ժողովրդի տարբեր հատվածներից սնվող ու նաև հա-

մահայկական խնդիրներում առավել ազդեցիկ դերակատարում ունեցող գաղթօջախն է, որը ենթակա է հզոր օտարալեզու ազդեցության: Լեզվական և ուղղագրական միասնականացման գործընթացների վրա առավել գործունե ազդեցություն կարող են ունենալ ինչպես ՀՀ-ում արևմտահայ գրական լեզվի և ավանդական ուղղագրության տարրերի ուսուցումը, այնպես էլ ԱՄՆ-ի հայկական գաղթօջախներում արևելահայ գրական լեզվով կրթամշակութային կյանքի ու հեռահաղորդակցության ժամանակակից միջոցներով տարաբնույթ տեղեկատվական դաշտի զարգացումը:

Արևմտահայ գրական լեզվի ուսուցման արտոնումը ՀՀ կրթական հաստատություններում և ՀՀ-ում արևմտահայերենի նոր դասագրքերի ստեղծումը հենարան կդառնան սփյուռքահայ դպրոցները դասագրքերով ապահովելու հարցում, բարենպաստ պայմաններ կստեղծեն արևմտահայերեն գրական լեզվի (ի դեպ, արձանագրվում է այդ լեզվի կրողների քանակի աստիճանական նվազում) պահպանման համար և կոյուրացնեն միասնական ուղղագրության մշակման գործընթացը:

«Լեզվի մասին» ՀՀ օրենքում<sup>12</sup> արձանագրված (հոդվ. 1) «Հայաստանի Հանրապետությունը նպաստում է հայերենի ուղղագրության միասնականացմանը» դրույթը թելադրում է առավել ակտիվ միջոցներ ձեռնարկել հայոց լեզվի միասնական շտեմարանի ստեղծման ուղղությամբ:

ՀՀ լեզվական քաղաքականության պետական ծրագրի մեջ իրավացիորեն արձանագրված է, որ «ուղղագրության միասնականացմանը նպաստելու պետության պարտավորությունը նշանակում է գրական հայերենի երկու ճյուղի տեղեկատվական անկաշկանդ փոխանակության համար կրթության համակարգում ծրագրամեթոդական հիմքերի ստեղծում և գրական հայերենի կանոնարկման միասնական սկզբունքների մշակում, որոնց հետևանքով բնականոն ճանապարհով երբևէ հնարավոր կարող է դառնալ ուղղագրության միասնականացումը»<sup>13</sup>:

Ուղղագրության միասնականացումն, ըստ այդմ, պետք է ընթանա առաջընթացի և կատարելագործման նշանաբանով ու ներառի լեզվի հետագա զարգացման միտումները ինչպես բուն հայրենիքում, այնպես էլ գաղթօջախներում:

---

<sup>12</sup> Տես «Լեզվի մասին» ՀՀ 1993 թ. ապրիլի 17-ի հմ. ՀՕ-52 օրենքը (<http://www.parliament.am/legislation.php?sel=show&ID=1793&lang=arm>):

<sup>13</sup> ՀՀ Կառավարության 2002 թ. փետրվարի 18-ի «ՀՀ լեզվական քաղաքականության պետական ծրագիրը հաստատելու մասին» հմ. 138 որոշումը (տես «ՀՀ Պաշտոնական տեղեկագիր», 2002, հմ. 9 (184)):

## **Եզրակացություններ**

1. Ուղղագրության միասնականացման և այդ ուղղությամբ համապատասխան լեզվական քաղաքականություն իրականացնելու ՀՀ քայլերը կնպաստեն ՀՀ–Սփյուռք կապերի ամրապնդմանը և հայ ժողովրդի տարբեր հատվածների համախմբմանը:

2. Ուղղագրության կատարելագործման ուղղությամբ ուսումնասիրությունները և հարցի քննարկումը գիտական հետազոտական մակարդակ փոխադրելու շնորհիվ կնվազեն ուղղագրությունների տարբերության շահարկումները, և դրանք կդադարեն ազգային պառակտումների գործոն լինելուց:

3. Միևնույն ժամանակ, նման նախաձեռնությունը կնպաստի այն բանին, որ Սփյուռքում ՀՀ-ն ընկալվի որպես մի պետություն, որն իրավասու է ստանձնելու համահայկական դերակատարում: Գրական հայերենի լեզվական ու համահայկական ուղղագրական նուրբ խնդիրների քննարկումներն ու բարեփոխումները այն լծակներից են, որոնք հնարավոր է օգտագործել ՀՀ-ի համահայկական դերակատարումը շեշտելու, նրա՝ միավորիչ լինելու հանգամանքը կարևորելու համար:

## ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ՀՈԳԵՎՈՐ ՄԻԱՍՆՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՍՓՅՈՒՌԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԵՐԱՇԽԻՔ\*

*Հ. Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ, պատմական գիտությունների թեկնածու,  
ԵՊՀ Աստվածաբանության ֆակուլտետի Հայ եկեղեցու պատմության  
և եկեղեցաբանության ամբիոնի դոցենտ*



Էջմիածնի և Կիլիկիայի հարաբերությունները միշտ չէ, որ հարթ են եղել, իսկ երբեմն էլ հակասությունները վերաճել են խոր թշնամանքի ու ատելության: Հարաբերությունների սրմանը նպաստել է եկեղեցական իշխանության կամ ազդեցության ոլորտների համար մղվող պայքարը, իսկ երբեմն էլ այդ հակասությունների խորացմանը նպաստում էին քաղաքական կուսակցությունները կամ խմբերը<sup>\*\*</sup>: Այդ հակասություններում էական դեր խաղացած քաղաքական գործոնը մինչ օրս էլ շարունակում է մնալ երկու կենտրոնների հարաբերությունների օրակարգում: Թեև խորհրդային շրջանում հակասությունները գտնվում էին ՀՀԳ–Խորհրդային Հայաստան շրջանակներում, այնուամենայնիվ Հայաստանի անկախացումից հետո էլ այդ միտումները շարունակվեցին՝ պայմանավորված այլ քաղաքական նկատառումներով<sup>1</sup>: ՀՀԳ-ն շարունակում է

---

\* Վերլուծության համար հիմնականում հիմք են ծառայել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի «Էջմիածին» պաշտոնաթերթում հրատարակված գրությունները, այլ թերթերում և ամսագրերում հրատարակված հոդվածներին ուղղված պատասխանները, կաթողիկոսների հարցազրույցներն ու երկու Աթոռների միջև տարաբնույթ գրագրությունը:

\*\* Երկու Աթոռների հարաբերություններում իրավիճակը փոխվեց 1952–1956 թթ., ինչի արտահայտությունը դարձավ 1957 թ. Անթիլիասի կաթողիկոսության կողմից Հյուսիսային Ամերիկայի արևելյան նահանգների և Կանադայի թեմի, իսկ հետագայում՝ 1972 թ., Հյուսիսային Ամերիկայի արևմտյան թեմի հիմնադրումը, ինչը Էջմիածինն ընկալեց որպես իր իրավասությունների ուղղակի ոտնահարում: Էջմիածինը Կիլիկյան Աթոռին մեղադրում էր նաև 1958 թ. Թեհրանի, Ատրպատականի, Սպահանի, ինչպես նաև Հունաստանի թեմերի մի մասը «սեփականելու» մեջ:

<sup>1</sup> Կարելի է գուցահեռներ տանել Ռուսական Ռեղապատ եկեղեցու վերամիավորման փաստի հետ, ինչը հիմնականում տեղի չէր ունենում արտասահմանի Ռուսական եկեղեցու և Խորհրդային Միության միջև հակասությունների պատճառով: Խորհրդային Միության փլուզումից հետո ռուսական իշխանությունների ջանքերի շնորհիվ ստեղծվեց միանգամայն այլ իրավիճակ, ինչն էլ հնարավորություն տվեց 2007 թ. մայիսի 17-ին Մոսկվայում ստորագրելու

Սփյուռքը դիտել որպես իր իշխանության տակ գտնվողի և այդ իշխանության պահպանման ու նրա ռեսուրսները իր նպատակներին ծառայեցնելու համար կարևորում է Կիլիկյան Աթոռը, նրա ցանցային, գիտական, ֆինանսական և այլ հնարավորությունները: Այդ պատճառով էլ ՀՀԴ-ի համար Էջմիածին–Կիլիկիա մերձեցումը կամ հարաբերությունների ակտիվացումը հաճախ դիտվել է որպես Սփյուռքում ՀՀԴ իշխանական լծակները թուլացնելու փորձ:

Մի շարք եկեղեցագետներ ու տեսաբաններ Էջմիածին–Կիլիկիա հարաբերությունները համարում են բացառապես եկեղեցական հիմնախնդիր և անտեսում դրա քաղաքական, տնտեսական և այլ կողմեր: Սակայն արդեն ժամանակն է հիմնախնդիրը վերլուծելու ազգային անվտանգության լույսի ներքո: Դա հնարավորություն կտա մշակելու պետական համակարգված քաղաքականություն՝ ուղղված Սփյուռքի հիմնախնդիրների լուծմանը, ինչպես նաև սփյուռքահայերին գերծ պահելու քաղաքական և այլ պառակտումներից, ուժեղացնելու կապը Հայաստանի հետ և դրանով իսկ նվազեցնելու ուժացման վտանգը:

Քաղաքական պատճառների հետ մեկտեղ որոշակի դերակատարություն են ունեցել նաև հոգևոր կամ անձնային պատճառները: Ե՛վ Էջմիածնական, և՛ կիլիկյան տեսաբանները հաճախ իրենց հետազոտություններում քննարկման առարկա են դարձնում «կաթողիկոսություն» տերմինը, երկու Աթոռների կողմից «կաթողիկոսություն» կամ «կաթողիկոս» տերմինի գործածությունը կարծես հավասարության մշան էր դնում նրանց միջև: Դրան կոշտ հակադրվում է Էջմիածնի Մայր Աթոռը: Մինչդեռ Կիլիկիայի Աթոռին մոտ կանգնած վերլուծաբանները գրում են, որ «Ամենայն Հայոց կաթողիկոսությունը» լոկ տիտղոս է, և Կիլիկիան երբևէ չի եղել Էջմիածնի թեմական կառույցներից մեկը<sup>2</sup>: Նրանց հիմնական փաստարկներից մեկը Ցեղասպանությունից տուժած ու վտարանդի հայերին սատարելու և նրանց հոգևոր կենտրոնը լինելու առաջնությունն է: Նրանց պնդմամբ՝ երկու կաթողիկոսները ծառայում էին հակառակ բևեռներում. մեկը՝ անաստվածների երկրում, մյուսը՝ հայրենիք կորցրած հավատացյալների շրջապատում: Այս

---

վերամիավորման ակտը: Դա կարևոր նշանակություն ունեցավ Ռուսական եկեղեցու հեղինակության բարձրացման և միասնականության համար (տես «Московский Патриархат и Русская Зарубежная Церковь: путь к единству. Интервью председателя Отдела внешних церковных связей Московского Патриархата». «The Washington Post», 2 мая 2007 г., «Интерфакс» (<http://www.interfax-religion.ru/?act=print&div=6016>)):

<sup>2</sup> Տես *Ս. Ալաշաշյան*, Բաց մամակ Հայոց կաթողիկոսներին: «Գրական թերթ», 2005 թ. նոյեմբերի 25:

դրույթի ենթատեքստից պարզ է, թե ինչպիսին էին Էջմիածին–Կիլիկիա հարաբերությունները\*:

Կարևոր է նաև մեկ այլ գործոն, որն ունի գերազանցապես հոգեբանական ենթատեքստ: Սփյուռքի ինքնության պահպանման ու անվտանգության ապահովման գործում առանձնահատուկ դեր ունի Հայրենիք հասկացության ընկալումը կամ դրա տարրնկալումը սփյուռքահայերի կողմից: Յեղասպանությունից հետո ձևավորված Հայկական Սփյուռքը պատմական հիշողությամբ շարունակում է որպես հայրենիք ընկալել միայն Արևմտյան Հայաստանը, բայց ոչ ներկայիս Հայաստանի Հանրապետությունը, ինչը ազգային անվտանգության տեսանկյունից բավականին լուրջ բացթողում է: Դրան մեծապես նպաստել է ՀՀԴ քարոզչամեթոդան, որը փորձում էր սփյուռքահայերին առավելապես կապել Մայր հայրենիքից վտարված Կիլիկյան Աթոռի հետ: Այդուհանդերձ, Վազգեն Ա-ի շրջագայությունների ժամանակ պարզ դարձավ, որ Սփյուռքի հայրողիների մեծ մասը շարունակում էր Մայր Աթոռը համարել ամբողջ հայության հոգևոր կենտրոն<sup>3</sup>:

Այս հողվածում ներկայացնում ենք Էջմիածնի և Կիլիկիայի միջև վերջին շրջանի հարաբերությունների պատմության նախկինում մեր կողմից կատարված բաժանումը, համաձայն որի՝ դրանք զարգացել են չորս հիմնական փուլերով.

- 1) 1950-ական թվականներից մինչև 1988 թ. Մեծ երկրաշարժը,
- 2) 1988 – 1994 թթ.՝ մինչև Վազգեն Ա Վեհափառի մահը,
- 3) 1994 – 1998 թթ. Գարեգին Ա կաթողիկոսի գործունեության շրջանը,
- 4) 1998 թ. մինչև մեր օրերը (Գարեգին Բ-ի գործունեության շրջան)<sup>4</sup>:

Առաջին փուլում գերազանցապես եղել են ցածր ինտենսիվության հարաբերություններ, քանի որ կաթողիկոսական կենտրոնները գործունեություն

---

\* Եկեղեցագետները փաստում են Էջմիածնի Մայր Աթոռի և Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության համերաշխության մի քանի դեպքեր. ա) 1656 թ. հանդիպումը Երուսաղեմում և բարեկամական հարաբերությունների հաստատումը, բ) 1929 թ. Գևորգ Ե-ի միջնորդությամբ Երուսաղեմի որոշ թեմերի փոխանցումը Կիլիկիային, գ) Խորեն Մուրադբեկյան կաթողիկոսի մահվան կապակցությամբ Կիլիկիո կաթողիկոս Սահակ Խաչաթյանի սրտացավ վերաբերմունքը:

<sup>3</sup> Այս մասին ավելի համգամանորեն տես «Մասնույի արձագանքներ»։ «Էջմիածին», 1988 թ. հունվար – մարտ, հմ. Ա – Բ, էջ 253–263:

<sup>4</sup> Տես Հ. Հովհաննիսյան, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի և Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսությունների վերջին շրջանի հարաբերությունների վերլուծության փորձ ([http://www.religions.am/index.php?option=com\\_content&view=article&id=629%3A2009-09-11-18-32-08&catid=1%3A2009-02-27-03-45-54&Itemid=10&f3a7ca6f5359070db0f94a4563bf0b2d=3993aed3845ef090a3b0f7bfff17c14a4](http://www.religions.am/index.php?option=com_content&view=article&id=629%3A2009-09-11-18-32-08&catid=1%3A2009-02-27-03-45-54&Itemid=10&f3a7ca6f5359070db0f94a4563bf0b2d=3993aed3845ef090a3b0f7bfff17c14a4)):

էին վարում քաղաքական տարբեր համակարգերում: Այդ իմաստով բնութագրական էին Բոստոնում ՀՀԴ-ի կողմից լույս ընծայվող «Հայրենիք» օրաթերթի հրապարակումները, քանի որ Սփյուռքի հետ կապված հարցերում դրանք քննադատության էին ենթարկում Մայր Աթոռի գործունեությունը: ՀՀԴ-ին, որը որոշիչ դեր էր կատարում Անթիլիասի կաթողիկոսության գործունեության ու նրա քաղաքականության մշակման գործում, իհարկե, ձեռնտու չէր իր ազդեցության ոլորտը համարվող տարածությունում այլ ազդեցությունների ուժեղացման հեռանկարը: Անգամ Սառը պատերազմի ավարտը հետ չպահեց ՀՀԴ-ին, որպեսզի Ցեղասպանությունից փրկված սերունդների շրջանում նա շարունակի վարել «անհող հայրենիքի» քաղաքականությունը, հատկապես՝ դրա բաղկացուցիչ համարելով Կիլիկյան Աթոռի անկախությունն ու տարանջատվածությունը: Այս հանգամանքը ևս մեկ անգամ ցույց է տալիս, որ Էջմիածին-Կիլիկիա հարաբերություններում գերիշխող է քաղաքական գործունը, և այդ գործունը հաշվի առնելով ու քննարկելով է, որ հնարավոր կդառնա երկու Աթոռների առավել սերտ համագործակցությունն ու միասնականությունը:

Երկու Աթոռների հարաբերություններին նոր որակ հաղորդեց 1988 թ. երկրաշարժը, որի հետևանքների վերացմանն էին միտված նաև երկու կաթողիկոսների անձնական շփումներն ու նախաձեռնությունները: 1988 թ. Մեծ երկրաշարժի ծանր օրերին Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոս Գարեգին Բ-ն Հայաստան շտապեց՝ իր վշտակցությունը հայտնելու հայ ժողովրդին<sup>5</sup>: Մայր Աթոռում ասված նրա խոսքն ուղղված էր հայ ժողովրդի միասնության ամրապնդմանը, երկու Աթոռների միջև հաստատուն հարաբերությունների հաստատմանը: Կիլիկիո կաթողիկոսը հատկապես արժեքավորեց հայրենիքի դերը աշխարհասփյուռ հայության պահպանման գործում. «սփյուռքը մահվան նախադուռն է առանց հայրենիքի» խոսքերը խիստ կարևոր են Հայրենիք-Սփյուռք կապերն ավելի ամրապնդելու համար: Վազգեն Ա-ն կարևորեց այս հանգամանքը՝ նշելով, որ Էջմիածնից հետո երկրորդ տեղն զբաղեցնող Կիլիկիո Աթոռը մեծ դեր ունի սփյուռքահայերի կյանքում, և երկրաշարժի ծանր օրերին այդ դերը էլ ավելի է մեծանում: Այդուհանդերձ, «Մովետական Հայաստան» թերթին տված հարցազրույցում Վազգեն Վեհափառը նշեց, որ, թեև որոշ թեմերում առկա են տարածայնություններ,

<sup>5</sup> Այդ կապակցությամբ Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Ա-ն և Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոս Գարեգին Բ-ն ստորագրեցին միասնական կոչ հայ ժողովրդին՝ դժվարին կացությանը դիմանալու և ստեղծված ծանրագույն դրությունից միասնական ուժերով դուրս գալու վերաբերյալ (տես «Գարեգին Բ Կաթողիկոսի քարոզը Էջմիածնի Մայր տաճարում»: «Էջմիածին», 1988 թ. նոյեմբեր-դեկտեմբեր, հմ. ԺԱ-ԺԲ, էջ 33):

միննույն է, երկու կաթողիկոսները լի են հակասությունները վերջնականապես լուծելու վճռականությամբ<sup>6</sup>: Թեմերում առկա տարաձայնությունները ժամանակին չկարգավորելու պարագայում դրանք կարող էին տեղափոխվել ծխեր ու հավատացյալների շրջաններ, ինչից հետո հակասությունների լուծումն ավելի կբարդանար:

1989 թ. Մեծի Տանն Կիլիկիո Գարեգին Բ Կաթողիկոսն Էջմիածին – Կիլիկիա հարաբերությունների պատմության մեջ առաջին անգամ պաշտոնական այցով ժամանեց Էջմիածին, մասնակցեց Յեղասպանության զոհերի հիշատակին նվիրված արարողություններին: Կիլիկիո կաթողիկոսի պաշտոնական այցի ավարտին ստորագրվեց համատեղ հայտարարություն «Մեկ Եկեղեցի, մեկ ազգություն, մեկ Մայր հայրենիք» նշանաբանով, որտեղ երկու Աթոռների մերձեցման ենթատեքստը և դրդիչ ուժը 1915 թ. Մեծ Եղեռնն ու 1988 թ. Մեծ երկրաշարժն էին: Այս հայտարարությունների կարևորագույն ձեռքբերումը «Մայր հայրենիք» հասկացության նորովի մեկնաբանումն ու ամրագրումն էր: Դրանով կայուն հիմքեր ստեղծվեցին ապագա Հայաստանի Հանրապետությունը որպես համայն հայության ֆիզիկական և հոգևոր հայրենիք ընկալելու համար: Այս երևույթը հատկապես կարևոր էր այն առումով, որ Մեծ Եղեռնից հետո Մայր հայրենիքի մասին աշխարհասփյուռ հայության պատկերացումները նույնացվում էին «Էրզիր» գաղափարի հետ, իսկ որպես հոգևոր կենտրոն արևմտահայն ընկալում էր նույն ճակատագրին արժանացած Կիլիկյան Աթոռը («Կիլիկիա» բառը նույնպես մոզական ազդեցություն ուներ): Արևելյան Հայաստանն իբրև մերօրյա «Էրզիր» ընկալելու գործում մեծ նշանակություն ունեցան անկախության շարժումը, Ղարաբաղյան պատերազմը և երկու կաթողիկոսական կենտրոնների միջև հաստատված համագործակցության ոգին:

Այդ համագործակցությունը շարունակվեց Կաթողիկոս Վազգեն Ա-ի օրոք և Գարեգին Ա-ի կաթողիկոսության ամբողջ շրջանում: Մասնավորապես՝ 1992 թ. դեկտեմբերին հրապարակվեց Ամենայն Հայոց Հայրապետի կոնդակը եկեղեցիների միության հարցի վերաբերյալ: Թեև կոնդակն ուղղված էր Ընդհանրական եկեղեցուն և առավելապես արտացոլում էր ընդհանրական սկզբունքներ, սակայն կոնդակի հրապարակումն ինքնին արդեն կարևոր փաստ էր ու կարող էր Սփյուռքի հայկական եկեղեցական կենտրոնների համար դառնալ լուրջ համագործակցության հիմք: Իրերի բնական ընթացքին խանգարում էին միայն կողմնակի կուսակցական ազ-

---

<sup>6</sup> Տես նույն տեղում:



դեցությունները, որոնց թուլացման կամ չլինելու պայմաններում հնարավոր կդառնար համագործակցությունը սոցիալական տարբեր մակարդակներում:

Անկախ պետականության վերականգնումը, Սփյուռքի հետ հարաբերությունների զարգացումը, 1988 թ. երկրաշարժը, Արցախյան շարժումը ոգեշնչեցին հայ հոգևոր կենտրոններին՝ իրենց մեջ ուժ գտնելու և երկկողմ հարաբերությունները որակական նոր հարթություն տեղափոխելու համար: Վազգեն Ա-ի կաթողիկոսության վերջին շրջանը նշանավորվեց հատկապես նրանով, որ բավականին հաճախակի դարձան փոխայցելությունները, և Էջմիածնի Մայր Տաճարում հավատացյալները ավելի հաճախ էին ունկընդրում Կիլիկիո կաթողիկոս Գարեգին Ա-ի քարոզները: Ականատեսների վկայությամբ՝ 1988–1994 թթ. բավականին բարեկամական էին դարձել հարաբերությունները նաև երկու հայ կաթողիկոսների միջև:

Հայրենիք – Սփյուռք հարաբերություններում որոշ տեղաշարժեր նկատվեցին Գարեգին Ա-ի ընտրությունից հետո: Ինչպես նշվեց, աշխարհասփյուռ հայության մեջ Յեղասպանությունից հետո «Հայրենիք» գաղափարի տարրնկալումը ավելի էր խորացել, և «Հայրենիքը» գերազանցապես նույնացվում էր Արևմտյան Հայաստանի հետ: Մինչդեռ ելույթներում և քարոզներում նորընտիր կաթողիկոսը շեշտում էր Արևելյան Հայաստանը՝ որպես Մայր հայրենիք, ինչը պայմանավորված էր նորանկախ Հայաստանով և Սփյուռքի՝ Հայաստան «վերադարձով»<sup>7</sup>: ՌՆՀագրավ է, որ Գարեգին Ա-ն՝ որպես Կիլիկյան Աթոռի նախկին գահակալ, իր ելույթներում թերևս ենթադիտակցորեն Էջմիածին – Կիլիկիա հարաբերություններն անընդհատ նույնացնում էր Հայրենիք – Սփյուռք հարաբերությունների հետ՝ կարծես առանձնացնելով Աթոռների ազդեցության ոլորտները, ինչը նույնպես այսօր երկու Աթոռների միջև հիմնական հակասությունների պատճառներից է:

Էջմիածնում իր գահակալությունից հետո Գարեգին Ա կաթողիկոսը շարունակում էր ոչ միայն լավ հարաբերություններ պահպանել Կիլիկյան Աթոռի հետ, այլև ավելի խորացնել երկու Աթոռների միջև համագործակցությունը: 1995 թ. հունիսի 27-ից հուլիսի 4-ը Լիբանանում մասնակցելով Կիլիկյան նոր գահակալի ընտրությանը՝ Գարեգին Ա-ն իր ելույթում անդրադարձավ նաև Էջմիածին – Կիլիկիա հարաբերություններին ու դրանց նոր որակ հաղորդելու խնդրին: Մասնավորապես՝ Գարեգին Ա-ն իր խոսքում հստակ դերախին բաժանում կատարեց Էջմիածնի և Կիլիկիայի միջև՝

---

<sup>7</sup> Տես «Քարոզ Կաթողիկոսական գահակալութեան առթիւ»: «Էջմիածին», 1995 թ. ապրիլ, հմ. Դ, էջ 75:

շեշտելով, որ «Սուրբ Էջմիածնից հետո Կիլիկիո կաթողիկոսությունը մեր Եկեղեցու ամենից նվիրական և կարևոր կենտրոնն է, և այդ հանգամանքը խնդրո առարկա չի կարող դառնալ»<sup>8</sup>: Կիլիկիո կաթողիկոսի ընտրության ժամանակ բոլոր հռետորներն իրենց ելույթներում շեշտեցին, որ Հայոց պատմության մեջ առաջին անգամն է, որ Կիլիկիո կաթողիկոսը բարձրանում էր Ս. Էջմիածնի գահին, և Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսի օծումը կատարվում էր Ամենայն Հայոց Կաթողիկոսի ձեռքով\*։ Այս իրողությունը հիմք դարձավ, որ շատերը կրկին մտածեն Հայ եկեղեցու՝ միասնական ճակատով հանդես գալու մասին, քանի որ եկեղեցին իր հերթին պետք է սատարի մեկ հայրենիք և մեկ ժողովուրդ գաղափարին ու այդ գաղափարի իրագործմանը։ Միասնական հայրենիք և մեկ եկեղեցի ունենալուն միաված գաղափարների իրագործմանն ուղղված հայտարարությունները բավականին նշանակալից են երկու կարևոր կենտրոնների միավորման առումով, ինչն էլ իր հերթին անհրաժեշտ էր Սփյուռքի և Հայրենիքի միասնականության պահպանման համար։

Հետզհետե առանձնացվեցին ոլորտներ, որոնց շուրջ հնարավոր էր փնտրել համագործակցության եզրեր։ Համագործակցությունն ավելի սերտացնելու և երկխոսության դաշտը կաթողիկոսական մակարդակից ներքին օղակներ տեղափոխելու նպատակով Գարեգին Ա-ն առաջարկեց Անթիլիասի Դպրեվանքի և Էջմիածնի ճեմարանի միջև ավելի խորը երկխոսություն հաստատել։ Կարծում ենք, որ կրթական գույժ հաստատությունների, ինչպես նաև Երուսաղեմի Ժառանգավորաց վարժարանի միջև տարաբնույթ գիտական, մանկավարժական, ուսուցողական համատեղ ծրագրերի մշակումը և իրականացումը հող կնախապատրաստեն հոգևոր ծառայության կոչված հայորդիների փոխըմբռնման մակարդակը բարձրացնելու, փոխադարձ վստահության և ընկերային մթնոլորտ ձևավորելու համար։ Դա էլ հիմքեր կստեղծի հետագայում նման հակամարտությունները լուծելու և դրանցից խուսափելու համար։

Արարատյան թեմի Հայրապետական փոխանորդ Գարեգին Ներսիսյանի՝ Գարեգին Բ անվամբ Ամենայն Հայոց Կաթողիկոս ընտրվելուց հետո երկու Աթոռների հարաբերությունները թևակոխեցին որակական նոր փուլ։ Եթե սկզբնական շրջանում պահպանվում էր հարաբերությունների նախկին

<sup>8</sup> «Ժամանում»։ «Էջմիածին», 1995 թ. օգոստոս – սեպտեմբեր, հմ. Ը–Թ, էջ 20։

\* Հետաքրքրական է, որ ոչ հեռավոր անցյալում՝ 1945 թ., Կիլիկիո նորընտիր կաթողիկոս Գարեգին Հովսեփյանը զնաց Ս. Էջմիածին և անձամբ նախագահեց Չորեքյան Գևորգ Զ Ամենայն Հայոց Կաթողիկոսի ընտրությունն ու կատարեց օծումը։

ընթացքը, ապա Կանադայում Կիլիկիայի կողմից թեմի բացումը այդ հարաբերությունները փոխադրեց միանգամայն այլ հարթություն: Այդ շրջանից սկսած Էջմիածնի և Կիլիկիայի հարաբերություններում նկատվեց սառեցում և հարաբերությունների վատթարացում:

Չնայած այդ ամենին՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսը 1999 թ. տարեվերջյան հաշվետվության մեջ հույս հայտնեց, որ Էջմիածնի և Կիլիկիայի միջև ծագած բոլոր տեսակի վեճերը պետք է լուծվեն փոխադարձ ըմբռնողության և հանդուրժողության դաշտում: Կաթողիկոսի հաշվետվության մեջ շեշտը դրվեց կանոնական խնդիրների լուծման անհրաժեշտության վրա: Ենթատեքստում հիմնականում եկեղեցու միասնական սահմանադրության մշակման և ընդունման հարցն է, որից էլ բխում է Էջմիածնի կողմից մշտապես արծարծվող «կանոնական վիճակի վերականգնումը»: Սակայն Էջմիածինը «կանոնական վիճակի վերականգնում» ասելով հասկանում էր Կիլիկյան Աթոռի ենթակարգության հարաբերությունների վերականգնում՝ առաջնորդությամբ Մայր Աթոռի: Միևնույն ժամանակ, Անթիլիասը ևս խոսում էր «կանոնական վիճակի վերականգնման» մասին, սակայն այս պարագայում Կիլիկիան մշտապես շեշտում էր երկու Աթոռների միջև ընկերակցան, իրավահավասար հարաբերությունների ճանաչման հանգամանքը:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի և Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության միջև հարաբերությունները լարվեցին հատկապես 2002–2003 թթ.: Այդ խզումն ակներև էր 2002 թ. մայիսին «Հայաստան–Սփյուռք» երկրորդ համաժողովի աշխատանքների ժամանակ, երբ երկու Աթոռների ներկայացուցիչների միջև գործնական հարաբերություններ չկային: Իր հերթին «Էջմիածին» պաշտոնաթերթը և Էջմիածնամետ տեղեկատվական մարմինները հաճախ չեն ներկայացնում Կիլիկյան Աթոռի հետ կապված իրադարձությունները կամ էլ բավարարվում են սուղ տեղեկատվությամբ: Մեր կարծիքով՝ երկկողմ հարաբերություններում բացասական դերակատարում ունեցավ ոչ միայն Կանադայում թեմ բացելու Անթիլիասի ծրագիրը, այլև Հայ եկեղեցու կանոնադրության հանձնախմբի աշխատանքների վերսկսումն Էջմիածնում: Հանձնախմբի նոր կազմում ներկայացված էին միայն Էջմիածնի Մայր Աթոռը, Կ. Պոլսի ու Երուսաղեմի պատրիարքությունները:

Երկու կաթողիկոսությունների միջև հարաբերություններում լարվածության աճում տեղի ունեցավ 2003 թ. երկրորդ կեսին: Պատճառներից մեկը հոկտեմբերին կայացած թեմական ներկայացուցչական հավաքի ժամանակ Գարեգին Բ կաթողիկոսի ելույթն էր: Կաթողիկոսը անուղղակի քննադատության ենթարկեց Կիլիկյան Աթոռի՝ Կանադայում թեմ հռչակելու որո-

շունը: Կիլիկյան Աթոռի այդ քայլը Գարեգին Բ-ն որակեց որպես պետական անվտանգության խնդիր՝ համարելով, որ դրանով վտանգվում է հայ ժողովրդի միասնականությունը Սփյուռքում ու Հայրենիքում: Նորից առաջ քաշվեց «կանոնականության վերականգնման խնդիրը»:

Ցավոք, «սառը պատերազմական» հարաբերությունները շարունակվում են մինչ օրս: Այսպես, 2006 թ. սեպտեմբերին Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոս Արամ Ա-ն «Հայաստան–Սփյուռք» երրորդ համաժողովին մասնակցելու նպատակով ժամանեց Հայաստան, այցելեց Էջմիածին, սակայն «ազգային», «հավատքային» հարցերին վերաբերող հայտարարություններից այն կողմ չանցավ:

Էջմիածին–Կիլիկիա հարաբերությունների ժամանակակից փուլը կարելի է համարել միջնորդավորված, քանի որ ուղղակի շփումներ որպես այդպիսիք տեղի չեն ունենում, այլ դրանք սահմանափակվում են Հայաստանի վարած քաղաքականության նկատմամբ երկու Աթոռների որդեգրած տարբեր դիրքորոշումներով: Խոսքը, մասնավորապես, Հայաստանի Հանրապետության և Թուրքիայի Հանրապետության միջև ստորագրված արձանագրությունների մասին է, ինչը ոչ միանշանակ կերպով ընդունեցին հայ ժողովրդի տարբեր հատվածներ: Ցեղասպանության հիշողությունը պահպանող և այդ հիշողությունն ազգային ինքնության անբաժանելի տարր համարող սփյուռքահայերը արձանագրությունների ստորագրությունը համարեցին ազգային դավաճանություն, ինչը արտահայտվեց ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանի արտասահմանյան ուղևորությունների ընթացքում տեղի ունեցած ժողովրդական ցույցերի տեսքով: Բնականաբար, արձանագրություններին հակադրվեցին և՛ ՀՀԳ-ն, և՛ Մեծի Տանն Կիլիկիո Աթոռը՝ ի դեմս կաթողիկոս Արամ Ա-ի: Ի պատասխան Կիլիկյան Աթոռի կոշտ հակադրության՝ Էջմիածնի Մայր Աթոռը հրավիրեց Հոգևոր Խորհրդի նիստ և ընդունեց մի բանաձև, որով ընդհանուր ձևակերպումներով իր աջակցությունն էր հայտնում պետության կողմից վարվող քաղաքականությանը:

Հայ-թուրքական արձանագրությունների հետ կապված երկու կաթողիկոսական Աթոռների դիրքորոշումների տարբերությունն օգտագործվեց ՀՀԳ-ի և սփյուռքահայ տարբեր շրջանների կողմից: Արձանագրությունների շուրջ տեղի ունեցած աղմուկն զգալիորեն վնասեց Սփյուռք–Հայաստան կապերի խորացմանը և սփյուռքահայերի հիշողության մեջ ևս մեկ անգամ քարմացրեց «անհող հայրենիքի» գաղափարախոսությունը: Այս պարագայում Կիլիկյան Աթոռը ամրապնդեց իր դիրքերը Սփյուռքի ազգայնական շրջաններում: Այս իրավիճակը բավականին վտանգավոր է, քանի որ հայ ժողովրդի երկու հատվածների միջև հարաբերությունների վատթա-

րացումը, ինչպես նաև սփյուռքահայերի օտարվածությունը Հայաստանի Հանրապետությունից լուրջ սպառնալիք են հայ ազգի միասնականության ու անվտանգության համար:

### **Եզրահանգումներ:**

Ինչպես ցույց է տալիս վերջին տասնամյակների պատմությունը, երկու կաթողիկոսական Աթոռների միջև ստեղծվել են բավականին բարդ, երբեմն նաև՝ պայթյունավտանգ հարաբերություններ. անզգույշ մոտեցումները հաճախ հանգեցրել են Սփյուռքի հայկական կենտրոնների ու դրանց ներկայացուցիչների բախմանն ու օտարմանը: Երկու Աթոռների մերձեցումը դժվարացնում է նաև քաղաքական գործոնը, որը ժամանակին բավականին խոր անջրպետ է ստեղծել Խորհրդային Հայաստանի ու Սփյուռքի միջև, ինչն էլ իներցիայի ուժով շարունակվում է անկախ Հայաստանի պարագայում: Այդ գործոնի ճիշտ գնահատումն ու արժեքավորումը հնարավորություն կտան ոչ միայն հաղթահարելու ստեղծված իրավիճակը, այլև լուրջ քայլեր կատարելու կապերի հետագա սերտացման ուղղությամբ:

Մյուս կողմից՝ երկու Աթոռների հարաբերությունների վատթարացումը պայմանավորված է ազդեցության ոլորտների և ֆինանսական միջոցների վերաբաշխմամբ իշխանության համար մղվող պայքարով: Սփյուռքի պատկանելությանը նպաստում է նաև տարբեր եկեղեցական կենտրոններին պատկանելությունը, ինչն առավել ցայտունորեն է արտահայտված ամերիկահայ համայնքում:

Երկու Աթոռների միջև եղած հակասությունները տեղափոխվել են հասարակական հարթություն: Դա խիստ վտանգավոր է հայության տարբեր հատվածների տարանջատվածությունը խորացնելու իմաստով, քանի որ հայության մի հատվածը կարող է վերջնականապես կորցնել կապը Մայր հայրենիքի հետ և, կտրվելով որևէ «սնուցող աղբյուրից», վերջնականապես ձուլվել օտարալեզու միջավայրում:

ՀԱՅԱՍՏԱՆ–ՍՓՅՈՒՌՔ ՔԱՂԱՔԱԿԱՆ  
ԲԱԶՄԱԿԱՐԾՈՒԹՅԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ  
ՌԱՍԿԱՎԱՐ ԱԶԱՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ  
ՕՐԻՆԱԿՈՎ. ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄՆԵՐ

*Ա. Բ. ՄԱՆՎԵԼՅԱՆ, ՀՀ ՊՆ ԱՌՀԻ-ի գիտնական-վերլուծաբան,  
պարունական գիտությունների թեկնածու*



Հայկական Սփյուռքին բնորոշ են որոշակի պատմական ու կառուցվածքային առանձնահատկություններ: Հիմնական առանձնահատկություններից մեկը, թերևս, Սփյուռքի ներսում քաղաքական կուսակցությունների ակտիվ գործունեությունն է: Նման «կուսակցականության» երևույթը զուտ հայկական ֆենոմեն է, որը բնորոշ չէ սփյուռք ունեցող այլ ազգերի: Հայկական Սփյուռքում կուսակցությունները, միմյանց միջև ակտիվ մրցակցություն կազմակերպելով, աշխուժացրել են գաղթօջախների կյանքը,

նպաստել այդ համայնքների կայացմանը, հայապահպանության այլ խնդիրների լուծմանը: Այս կառույցները կարևոր դերակատարություն են ունեցել Հայ Դատի պաշտպանության, լոբբինգային աշխատանքների և հայ համայնքի ներքին կյանքի կազմակերպման հարցերում: Կուսակցությունները որպես կանոն գործել և ակտիվություն են ցուցաբերել նաև մշակութային, բարեգործական, մարզական և այլ ոլորտներում:

Հայ ավանդական կուսակցությունները, որոնք տասնամյակներ շարունակ գործել են Մայր հայրենիքից դուրս, Հայաստանի անկախացումից հետո շտապեցին հաստատվել Հայրենիքում, ինչը նրանց համար գործունեության նոր ասպարեզ և հնարավորություններ էր ստեղծում: Առաջին կուսակցությունը, որը բացահայտ գործունեություն սկսեց դեռ Խորհրդային Հայաստանում, Ռամկավար ազատական կուսակցությունն (ՌԱԿ) էր: 1990 թվականին ՌԱԿ-ը պաշտոնապես հայտարարեց Հայաստանում իր առաջին կառույցների՝ «Արմենակ Եկարյան» և «Արմենական» ակումբների\* գործունեության մասին: 1991 թվականի մայիսին ստեղծվեց Հայաստանի Ռամկավար ազատական կուսակցության (ՀՌԱԿ) հիմնադիր խորհուրդը՝

\* ՌԱԿ-ի սկզբնական կառույցները կոչվում են ակումբներ:

Ռուբեն Միրզախանյանի գլխավորությամբ<sup>1</sup>, իսկ նույն թվականի հուլիսի 4-ին Արդարադատության նախարարությունը պաշտոնապես գրանցեց կուսակցությունը: 1991 թվականի փետրվարի 16-ից լույս է տեսնում նաև «Ազգ» օրաթերթը<sup>2</sup>:

**Սփյուռքի կուսակցությունները և Հայաստանի Հանրապետությունում դրանց ազդեցության խնդիրը փոփոխված քաղաքական միջավայրում:** Սփյուռքում քաղաքական կուսակցության հզորության գրավականը Մայր հայրենիքում նրա ունեցած դիրքն է, խորհրդարանում այդ կուսակցությունը ներկայացնող պատգամավորների թիվը և այլն: Եթե նախկինում՝ մինչև Հայաստանի անկախացումը, կուսակցությունների գործունեությունը և դրանց հետագա զարգացումը կախված էին միայն ներսփյուռքյան գործընթացներից, ապա ներկայումս ավելացել է նաև հայաստանյան գործունը: Սա նոր երևույթ է: Այս իրողությունը ազդել է բոլոր ավանդական կուսակցությունների վրա և հատկապես լավ նկատելի է Հայաստանում ՌԱԿ-ի ու դրա ստեղծած ՀՌԱԿ-ի գործունեության պատմությունը ուսումնասիրելիս: 1990 թվականից ՌԱԿ-ի մուտքը Հայաստան և 1991 թվականից Գերագույն խորհրդում ՀՌԱԿ-ի խմբակցության ստեղծումը՝ Վիզեն Խաչատրյանի գլխավորությամբ, ուղղակիորեն նպաստեցին կուսակցության դիրքերի ամրապնդմանն ու հզորացմանը Սփյուռքում: Եվ հակառակը՝ 1995 թվականին ՀՌԱԿ-ի դուրսմղումը Հայաստանի օրենսդիր մարմնից հանգեցրեց այդ կուսակցության պառակտմանը և թուլացմանը նաև Սփյուռքում: Այսինքն՝ Հայաստանի խորհրդարանում մանդատներ ունենալը դարձել է այն չափանիշը, որը նպաստում է կուսակցության դիրքերի ամրապնդմանը նաև Սփյուռքում: 1994 թվականին սկիզբ առած և 1995 թվականին խորացած ներկուսակցական խմորումները և պառակտումները ՀՌԱԿ-ի ներսում ազդեցին նաև Սփյուռքում ՌԱԿ-ի գործունեության և միասնության վրա: Կիպրոսի համագումարը, որը տեղի ունեցավ Նիկոսիայում 1995 թվականի սեպտեմբերին<sup>3</sup>, պառակտման սկիզբ դրեց նաև ՌԱԿ-ի շարքերում: Մեկ տարի անց Բոստոնում (ԱՄՆ) գումարվեց ՌԱԿ-ի համագումարը, որին մասնակցեցին կիպրոսյան համագումարի արդյունքներից դժգոհ կուսակցականները: Այս երկու հակընդդեմ համագումարների արդյունքներով Ռ-ամկավար ազատական կուսակցությունը իր պատմության մեջ առաջին անգամ ունեցավ միանգամից երկու կենտրոնական վարչություններ՝ Հակոբ Գասարճ-

<sup>1</sup> Տես Յ. Էօրպեղիան, Համառոտ պատմություն ՀՌԱԿ-ի: Ե., 1996, էջ 16:

<sup>2</sup> Տես նույն տեղում, էջ 18:

<sup>3</sup> Տես նույն տեղում, էջ 66:

յանի (Լիբանան) և Հայկաշեն ՌԻգունյանի (Ֆրանսիա) գլխավորությամբ: Սկիզբ դրվեց կուսակցության քայքայման մի գործընթացի, որը հնարավոր չէր դառնա հաղթահարել մինչ օրս:

Կարող ենք փաստել, որ Սփյուռքում տեղի ունեցող գործընթացները հայելային արտացոլանքն էին Հայաստանում կուսակցության ներսում տեղի ունեցող զարգացումների: Դիշտ է, կուսակցության պառակտման գործընթացից անմասն չէր մասն Հայաստանի Հանրապետությունում իշխող քաղաքական հիմնական ուժի՝ ՀՀԸ-ի ղեկավարությունը<sup>4</sup>, որը փորձում էր ակտիվ դեր խաղալ ավանդական բոլոր կուսակցությունների ներսում տեղի ունեցող գործընթացներում: Սակայն ՌԱԿ-ի ղեկավարության հնչեցրած հիմնական մեղադրանքը Հայաստանի օրենսդիր մարմնում տեղ չունենալու փաստն էր: ՌԱԿ-ի Կենտրոնական վարչության կարծիքով՝ դա ՀՌԱԿ-ի ղեկավարության անհեռատես և գործող իշխանության հանդեպ ընդդիմադիր կեցվածքի հետևանք էր<sup>5</sup>:

Այսինքն՝ ստեղծվել է մի իրավիճակ, երբ հայ ավանդական կուսակցությունների քաղաքական գործունեության համար այժմ կա հարմար դաշտ, և կուսակցությունների հետագա գոյությունը կախված է այն հարցի պատասխանից, թե որքանով են դրանք ներկայացված տվյալ դաշտում և իրական ինչ ազդեցություն ունեն: Իսկ այդ հարցերի պատասխաններն ուղղակիորեն առնչվում են Հայաստանի օրենսդիր մարմնում՝ խորհրդարանում, ինել կամ չլինելու փաստի հետ:

Ինչպես ցույց է տալիս Ռամկավար ազատական կուսակցության փորձը, Սփյուռքի կուսակցությունները կարող են համախմբվել Հայաստանի խորհրդարանական ընտրություններից առաջ: Այսպես. 1999 և 2003 թվականների ընտրությունների ժամանակ ՀՌԱԿ-ը կարողացավ իր շուրջը համախմբել ՌԱԿ-ի բոլոր թևերը (2007 թվականին ՀՌԱԿ-ը չմասնակցեց խորհրդարանական ընտրություններին)՝ դրանց համոզելով, որ ստեղծվել է նորից խորհրդարան մուտք գործելու իրական հնարավորություն: Այսինքն՝ Հայաստանի Հանրապետության օրենսդիր մարմնում տեղ ունենալու հանգամանքը լավ խթան է միավորման համար և, միևնույն ժամանակ, ռեսուրսների համախմբման ու օգտագործման հնարավորություն: Սակայն ընտրություններում կուսակցությունների ձախողումը բացասաբար է ազդում դրանց հետագա գործունեության վրա և երկար ժամանակով դուրս է մղում

---

<sup>4</sup> Տես Հ. Ալեկոբջյան, ՀՌԱԿ-ը պառակտվեց իշխանությունների աջակցությամբ և քաջալերանքով: «Լրագիր», 1994 թ. օգոստոսի 12:

<sup>5</sup> Տես Յ. Էօրպեքիան, Նշ. աշխ., էջ 18:



ակտիվ քաղաքականությունից: Դա տեղի ունեցավ նաև ՀՌԱԿ-ի հետ. 2003 թվականին կուսակցությունն ստացավ ձայների 2,9 %-ը: Անհաջողությունը վերջնականապես հանգեցրեց կուսակցության թուլացմանը և պառակտմանը ոչ միայն Հայաստանում, այլև Սփյուռքում:

***ՌԱԿ-ի գործունեությունը և հարաբերությունները ՀԲԸՄ-ի հետ:***

Ճիշտ չէր լինի Ռամկավար ազատական կուսակցության թուլացումը բացատրել միայն Հայաստանի խորհրդարանում տեղ չունենալու փաստով, քանի որ, ինչպես ցանկացած այլ կուսակցության համար, այս դեպքում ևս կարևոր է կուսակցության ղեկավար կազմում հեղինակավոր անձանց և, ամենակարևորը, ֆինանսական միջոցների ներգրավման խնդիրը: Հայաստանի անկախացումից հետո ՀՀ իշխանությունները որդեգրեցին Սփյուռքի այսպես կոչված ապաքաղաքականացման ուղեգիծը, որի գաղափարն այն էր, որ անկախ Հայաստանի գոյության պայմաններում քաղաքական կուսակցությունների գործունեությունն Սփյուռքում ավելորդություն է: Սփյուռքի որոշ շրջաններում շրջանառության մեջ դրվեց այն կարծիքը, թե ավանդական կուսակցությունների դարձն ավարտվել է, և դրանք կան պետք է գործեն Մայր հայրենիքում, կան դադարեցնեն իրենց գործունեությունը: Այս պայմաններում փորձ արվեց թուլացնելու կուսակցությունների դերակատարությունը սփյուռքյան գործընթացներում: Ռամկավար ազատական կուսակցությունն իր գործունեության մեջ ավանդաբար հենվել է երկու հիմնական թևերի՝ Թեքեյան մշակութային միության (ԹՄՄ)՝ որպես կուսակցության գործունեության մշակութային բաղադրիչի և Հայկական բարեգործական ընդհանուր միության (ՀԲԸՄ)՝ որպես կուսակցության ֆինանսական ու բարոյական հենարանի աջակցության վրա: Ալեք Մանուկյանից հետո Բարեգործականի ղեկն ստանձնեց նրա դուստրը՝ Լուիզ-Միմոն Մանուկյանը, որը ՀԲԸՄ-ն տարավ այսպես կոչված ապակուսակցականացման ճանապարհով: Հայաստանի իշխանությունները՝ առաջին նախագահի գլխավորությամբ, պնդում էին, որ ՌԱԿ-ի հետ ավանդական դաշինքից հրաժարվելու դեպքում ՀԲԸՄ-ն էլ ավելի կուժեղանա, և, վեր կանգնելով նեղ կուսակցական խնդիրներից, կդառնա համազգային կառույց: Սակայն տեղի ունեցավ հակառակը: ՀԲԸՄ-ի հեռացումը ՌԱԿ-ից և դրա հետ համագործակցությունից հրաժարումը թուլացրեցին ոչ միայն կուսակցության, այլև ՀԲԸՄ-ի ազդեցությունը Սփյուռքում: ՀԲԸՄ-ՌԱԿ ավանդական համագործակցությունը կարևոր պայման էր կուսակցության ազդեցության պահպանման և հզորացման համար: Բարեգործականի՝ որպես ՌԱԿ-ի մի մասի ընկալումը այն աստիճան էր տարածված կուսակցության շարքերում, որ հարյուրավոր կուսակցականներ և ՌԱԿ-ին համակրողներ իրենց ունեց-

վածքը նվիրաբերում էին ՀԲԸՄ-ին՝ էլ ավելի հարստացնելով և հզորացնելով այդ կառույցը: Սակայն հիմնադրամի հեռացումը և դրա ներսում կուսակցության դիրքերի թուլացումը նվազեցրին նաև ՌԱԿ-ի ֆինանսական «հեղինակությունը» Սփյուռքի գաղթօջախներում, ինչը հանգեցրեց նաև ՌԱԿ–ՀԲԸՄ լարվածությանը: Հետագայում, երբ ՀԲԸՄ-ի ղեկավարությունն ստանձնեց Պերճ Սեդրակյանը, այս լարվածությունն էլ ավելի մեծացավ, հատկապես՝ երբ վերջինս որոշեց վաճառել Կիպրոսում գործող Մելքոնյան վարժարանը: Այս հարցի շուրջ ՌԱԿ-ի և ՀԲԸՄ-ի միջև հակասություններն էլ ավելի խորացրին առկա անջրպետը:

Ինչևէ, ՀԲԸՄ-ի և ՌԱԿ-ի պառակտումը ավելի թուլացրեց կուսակցության դիրքերը Սփյուռքում, խաթարեց վերջինիս ֆինանսական անկախությունը, զգալիորեն թուլացավ նաև ՀԲԸՄ-ի ազդեցությունը: Սակայն դեռ վաղ է ասել, թե ՌԱԿ-ը վերջնականապես կորցրել է իր վերահսկողությունը ՀԲԸՄ-ի նկատմամբ:

**Կուսակցությունների հարաբերությունների հարցը Սփյուռքում:** Ինչպես հայտնի է, ավանդական կուսակցությունները Սփյուռքում երեքն են՝ Հայ հեղափոխական դաշնակցություն (ՀՀԴ), Ռամկավար ազատական կուսակցություն (ՌԱԿ), Սոցիալ-դեմոկրատական հնչակյան կուսակցություն (ՄԴՀԿ): Սակայն գործել են նաև այլ կուսակցություններ, որոնք ժամանակ առ ժամանակ ստեղծվել են, հզորացել և ապա անհետացել քաղաքական քատերաբեմից՝ որոշակի հետք թողնելով Սփյուռքի պատմության մեջ: Դրանցից, մասնավորապես, կարող ենք նշել Համայնավարական կուսակցությունը, կամ ԱՄԱԼԱ-ն, որոնք իրենց գործունեության որոշակի հատվածներում նույնիսկ ավելի ազդեցիկ էին, քան ավանդական կուսակցությունները: Եվ, այդուհանդերձ, հիմնական գործող քաղաքական ուժերը մնացել են երեքը: Սակայն Սփյուռքը ճիշտ պատկերացնելու համար պետք է նշել, որ քաղաքական առումով այնտեղ գործել են երկու բևեռներ՝ ձախ՝ ՀՀԴ-ն, և աջ՝ ՌԱԿ-ը: ՄԴՀԿ-ն, որն իր ազդեցությամբ զգալիորեն զիջում էր նշված կուսակցություններին, կարևոր դերակատարում է ունեցել. այն հանդես է եկել որպես հավասարակշռող ուժ և, ժամանակ առ ժամանակ անցնելով այս կամ այն բևեռի կողմը, թույլ չի տվել, որ կողմերից որևէ մեկը գերակայի մյուսի նկատմամբ: Ինչևէ, Հայաստանի խորհրդարանական ընտրություններում Ռամկավար ազատական կուսակցության կրած մի շարք պարտություններից և անհաջողություններից հետո քաղաքական այս հավասարակշռությունը Սփյուռքում խախտվել է: ՌԱԿ-ը այլևս չի դիտվում որպես ՀՀԴ-ին հակակշռող քաղաքական ուժ, իսկ ՄԴՀԿ-ն չունի այնքան ներուժ, որ համակշռի այդ տարրերությունը: Իրերի նման դրությունը բավա-

կանին ձեռնառու է ՀՀԴ-ին, որն ակտիվացնում է իր քաղաքական ազդեցությունը Սփյուռքում և, բացի այդ, ոչ անմիջականորեն, սակայն զգալի աշխատանք է կատարում՝ թույլ չտալով, որ մյուս կուսակցությունները, մասնավորապես՝ ՌԱԿ-ը, կարողանան միավորվել և ձեռք բերել նախկին ազդեցությունը: Քաղաքական այն միաբեկությունը, որը վերջին 10 տարիների ընթացքում ձևավորվել է Սփյուռքի քաղաքական դաշտում, լիովին բավարարում է ՀՀԴ-ի ղեկավարությանը, որն այդ կերպ հավակնում է հանդես գալու որպես Սփյուռքը ներկայացնող միակ քաղաքական ուժ: Գուցե և այս փաստով, օրինակ, կարելի է բացատրել ԱՄՆ-ի Պետքարտուղարի հետ ամերիկահայ համայնքի ազդեցիկ կառույցների հանդիպումը խոչընդոտելու ՀՀԴ-Հայ Դատի վաշինգտոնյան գրասենյակի քայլերը<sup>6</sup>:

**Ռամկավար ազատական կուսակցության ազդեցությունը Սփյուռքում. ներկա իրավիճակը:** Կուսակցության պառակտումը հաղթահարելու նպատակով 2008 թ. աշնանն սկսվեցին ներկուսակցական բանակցություններ: Այդ գործընթացը տեղի էր ունենում Հայաստանի Հանրապետության Նախագահի անմիջական աջակցությամբ: 2008 թ. աշնանը և մինչև 2009 թ. գարունը մի շարք հանդիպումներ տեղի ունեցան Լոս Անջելեսում, Տորոնտոյում, Բեյրութում, Աթենքում, Կահիրեում և Երևանում, որոնց նպատակն էր կուսակցության տարբեր շրջանների, ՌԱԿ-ի Կենտրոնական վարչության և կուսակցության ազդեցիկ գործիչների միջև գտնել ընդհանուր եզրեր՝ ՌԱԿ-ը վերամիավորելու համար: Այդ հանդիպումների շրջանակներում ՌԱԿ-ի Կենտրոնական վարչության ատենապետ Մայք Խարապյանը 2009 թ. հունվարին եղավ նաև Երևանում, որտեղ նրան ընդունեցին երկրի Նախագահն ու Վարչապետը: Հանդիպումներ կայացան նաև Թեքեյան կենտրոնում և այլուր, որոնց արդյունքներով որոշում ընդունվեց 2009 թ. գարնանը Երևանում կազմակերպել կուսակցության ընդհանուր պատգամավորական ժողով, որի որոշումները ճանաչեն բոլորը, իսկ նորընտիր Կենտրոնական վարչությունը իրականացնի կուսակցության ընդհանուր ղեկավարությունը: Այս մարմնի լիազորությունները պարտավոր էին ճանաչել ՌԱԿ-ի բոլոր շրջանները: Սակայն, չնայած եղած համաձայնություններին, 2009 թ. մայիսի 9-ին ՌԱԿ-ի պատգամավորական ժողովը տեղի ունեցավ ոչ թե Երևանում, այլ Հորդանանի մայրաքաղաք Ամմանում: Կուսակցության շատ շրջանակներ ՌԱԿ-ի Կենտրոնական վարչության այս քայլը գնահատեցին որպես ձեռք բերված համաձայնությունների խախտում, հրաժարվեցին այդ

<sup>6</sup> Տես «Առատ ձյունն էր պատճառը, թե ներհամայնքային վեճերը»: «Ազգ» օրաթերթ, 2010 թ. փետրվարի 11 (<http://www.azg.am/AM/2010021106>):

համագումարի աշխատանքներին մասնակցելուց և նրա կողմից ընտրված նոր Կենտրոնական վարչության լիազորությունները ճանաչելուց: Այդպիսով՝ կուսակցության պառակտվածությունը էլ ավելի խորացավ, իսկ տարածայնությունները դարձան անհաղթահարելի: Ի պատասխան այս քայլի՝ Երևանում ձեռնամուխ եղան նոր՝ Արմենական-Ռամկավար ազատական կուսակցության ստեղծմանը, մի կուսակցություն, որը պետք է համակարգեր ՌԱԿ-ի Կենտրոնական վարչության լիազորությունները չճանաչող կառույցների աշխատանքը և ձեռնամուխ լինել հայաստանակենտրոն ուժերի համախմբմանն ու կուսակցության վերամիավորմանը:

**ՌԱԿ-ի Համաշխարհային խորհրդի սրեղծումը՝ որպես միավորման նոր փորձ:** 2009 թվականի գարնանը պարզ դարձավ, որ միավորման շուրջ բանակցությունները տապալվել են, և Հորդանանում տեղի ունեցած պատգամավորական ժողովի որոշումները չճանաչող ուժերը ձեռնամուխ եղան նոր ներկայացուցչական համաժողովի կազմակերպմանը: Այն նորաստեղծ Արմենական-Ռամկավար ազատական կուսակցության աջակցությամբ տեղի ունեցավ 2009 թվականի հոկտեմբերի 3-ին Երևանում<sup>7</sup>: Այդ համաժողովում, որին մասնակցում էին ՌԱԿ-ի սփյուռքյան կառույցների մոտ 6 տասնյակից ավելի ներկայացուցիչներ, որոշում ընդունվեց ստեղծելու արմատապես նոր կառույց՝ Ռամկավար ազատական կուսակցության Համաշխարհային խորհուրդ, որը կուսակցության բրգածև կառույցը պետք է փոխարինել կառավարման ավելի ժողովրդավարական՝ հորիզոնական, համակարգով և ակտիվացներ կուսակցության գործունեությունը թե՛ Հայաստանում, թե՛ Սփյուռքում: Երևանում տեղի ունեցած եռօրյա համաժողովում ընտրվեց ՌԱԿ-ի Համաշխարհային խորհրդի գործադիր մարմին՝ բաղկացած 11 անդամից, որոնցից 6-ը ներկայացնում են սփյուռքյան կառույցները, իսկ 5-ը՝ Հայաստանը: Գործադիր մարմնի ատենապետ ընտրվեց «Ազգ» օրաթերթի գլխավոր խմբագիր Հակոբ Ավետիսյանը: Նոր կառույցը պետք է ձեռնամուխ լինել Ռամկավար ազատական կուսակցության համախմբմանը ՌԱԿ-ի Համաշխարհային խորհրդի շուրջ: Այս աշխատանքի արդյունքների ամփոփումը պետք է տեղի ունենա 2010 թ. հոկտեմբերին Երևանում՝ կուսակցության հերթական հավաքի ժամանակ:

Կարող ենք փաստել, որ 2008–2009 թթ. կուսակցության հեղինակավոր գործիչների՝ կուսակցության տարանջատված թևերը վերամիավորելու բոլոր

---

<sup>7</sup> Տես Հ. Հարությունյան, ՌԱԿ Համաշխարհային խորհուրդը կնպաստի զաղթօջախների միջև և Հայաստանի հետ հարաբերությունների կայունացմանը: «Ազգ» օրաթերթ, 2009 թ. հոկտեմբերի 6:

փորձերը ավարտվեցին անհաջողությամբ, իսկ ստեղծված կուսակցական նոր կառույցները՝ ՌԱԿ-ի Համաշխարհային խորհուրդը և այլն, «պաշտոնապես» արձանագրեցին կուսակցության պառակտումը: Այս պահի դրությամբ Հայաստանում պաշտոնապես գրանցված են Հայաստանի Ռամկավար ազատական կուսակցությունը (ՀՌԱԿ), որը համագործակցում է ՌԱԿ-ի Կենտրոնական վարչության հետ, և Արմենական-Ռամկավար ազատական կուսակցությունը (Արմենական-ՌԱԿ), որը գործում է ՌԱԿ-ի Համաշխարհային խորհրդի հետ: Փաստորեն կուսակցությունը Սփյուռքում ունի երկու կենտրոն. ՌԱԿ-ի Կենտրոնական վարչությունը՝ Մայք Խարապյանի ղեկավարությամբ, և ՌԱԿ-ի Համաշխարհային խորհուրդը՝ Հակոբ Ավետիքյանի ղեկավարությամբ: Առաջինի օրինականությունը ճանաչում են կուսակցության՝ Եգիպտոսի, Սիրիայի, Իրաքի և Հունաստանի կառույցները, երկրորդ կենտրոնի լիազորությունները ճանաչում են ԱՄՆ-ի Արևելյան մահանգների կառույցները, Կանադան, Մեծ Բրիտանիան: Եվրոպական կառույցները պառակտված են, իսկ Լիբանանի, Լատինաամերիկյան երկրների, ԱՄՆ-ի Արևմտյան կառույցները չեն ճանաչում և ոչ մեկի լիազորությունները: Ավանդաբար կուսակցության մաս համարվող Թեքեյան մշակութային միությունը համագործակցում է ՌԱԿ-ի Համաշխարհային խորհրդի հետ և չի ճանաչում Մայք Խարապյանի Կենտրոնական վարչության լիազորությունները: Ինչպես հայտնի է, Թեքեյան մշակութային միությունը Սփյուռքի ամենամեծ մշակութային կառույցներից է, որն ունի իր թատրոնները, մշակութային օջախները, ֆինանսավորում է 6 հայկական դպրոցներ Հայաստանում և Արցախում (այդ դպրոցները կրում են Վահան Թեքեյանի անունը) և այլն: ՌԱԿ-ի Համաշխարհային խորհրդին են ենթարկվում նաև կուսակցության 8 թերթերից 7-ը, այդ թվում՝ ՌԱԿ-ի կենտրոնական պարբերականը՝ «Չարթոնք» օրաթերթը, ԱՄՆ-ում լույս տեսնող անգլալեզու «Արմենիյան Սիրոր-Սպեկտատոր» («*The Armenian Mirror-Spectator*») շաբաթաթերթը և այլն: Իսկ Լոս Անջելեսում հրատարակվող «Նոր օր» շաբաթաթերթը գտնվում է ՌԱԿ-ի Կենտրոնական վարչության վերահսկողության տակ:

Ի դեպ, ուշագրավ է նաև ՌԱԿ-ի երկու կենտրոնների՝ Կենտրոնական վարչության և Համաշխարհային խորհրդի վերաբերմունքը Հայաստանի Հանրապետության և Թուրքիայի Հանրապետության միջև հարաբերությունների նկատմամբ: Ինչպես ցույց տվեց ՀՀ Նախագահի այցը Սփյուռք, ՌԱԿ-ի Համաշխարհային խորհուրդը և նրան հարող շրջաններն ու կառույցները սատարեցին Սերժ Սարգսյանի այս նախաձեռնությանը, իսկ ՌԱԿ-ի Կենտրոնական վարչությունը միացավ ՀՀԳ-ի «հականախագահական» ելույթներին:

Այսպիսով՝ պետք է նշել, որ կուսակցության պառակտվածությունը ոչ այժմ և ոչ էլ երբևէ չի ունեցել ընդգծված գաղափարական բնույթ, այլ գտնվում է որոշ գործիչների անձնական հավակնությունների և միմյանց նկատմամբ հակակրանքի հարթությունում: Ավելին. 90-ական թվականներին ՀՀ իշխանությունն ակտիվ քաղաքականություն էր վարում այդ տարածայնություններն ավելի խորացնելու և կուսակցությունը վերջնականապես քայքայելու նպատակով: Թեև ներկայումս պառակտումը խորացնելու փորձեր չեն արվում, բայց չի արվում փորձ նաև հակադիր ուժերի միջև երկխոսություն սկսելու, ինչն ավելի է թուլացնում կուսակցության դիրքերը Սփյուռքում, վնասում է հեղինակությանը և խոչընդոտում երիտասարդ ուժերի հոսքին կուսակցության շարքերը: Եթե դա շարունակվի, ապա 5-6 տարի հետո կուսակցության միավորման հնարավորություններն ի չիք կդառնան, և 100-ամյա պատմություն ունեցող այդ ավանդական կուսակցությունը վերջնականապես կդադարի գոյություն ունենալուց:

ՌԱԿ-ի քայքայումը և քաղաքական ու տնտեսական ակտիվության նվազումը բացասաբար են ազդում պատմականորեն ձևավորված ավանդական Սփյուռքի պահպանման գործընթացի վրա: Այս իրավիճակը ազդում է նաև Հայաստան – Սփյուռք կապերի ամրապնդման վրա: Ակնհայտ է, որ Ռամկավար ազատական կուսակցությունը և դրան հարող բոլոր կառույցները Սփյուռքի գոյության ամբողջ ընթացքում եղել են ամենակազմակերպված ու պատմականորեն ձևավորված հայաստանակենտրոն ուժերը:

### **Եզրակացություն**

Այսպիսով՝ նոր քաղաքական իրականության պայմաններում ավանդական կուսակցությունների գոյությունն ու դրանց հետագա գործունեության արդյունավետությունը անմիջականորեն կախված են Հայաստանի Հանրապետության քաղաքական դաշտում դրանց ներկայացվածության աստիճանից: Խոսքը ոչ թե պասիվ ներկայության, այլ ակտիվ քաղաքական գործունեության մասին է, երբ կուսակցությունը տեղ ունի օրենսդիր մարմնում, կուսիցիոն կառավարության մաս է կազմում կամ գտնվում է ընդդիմության շարքերում: Սփյուռքի մի շարք շրջաններում շարունակում է տիրապետող լինել այն կարծիքը, թե ավանդական կուսակցությունների դարձ ավարտվել է, և դրանք կա՛մ պետք է գործեն Մայր հայրենիքում, կա՛մ հեռանան քաղաքական ասպարեզից: Այնուամենայնիվ, կարծում ենք, որ դեռ երկար ժամանակ ավանդական կուսակցությունները գործունեության դաշտ կունենան Սփյուռքում, սակայն դրանց զարգացումը ուղղակիորեն կախված կլինի Մայր հայրենիքում ունեցած հաջողությունից:

Ռամկավար ազատական կուսակցության պառակտվածությունը և միավորման հարցի շուրջ երկխոսություն չլինելը, ինչպես նշեցինք, հետզհետե ավելի է խորացնում հակասությունները կուսակցության ներսում, ինչն էլ բացասական ազդեցություն է գործում Սփյուռքում կուսակցության հեղինակության վրա: Այս իրավիճակը վնասում է նաև դրա հետ համագործակցող կառույցների, մասնավորապես՝ ՀԲԸՄ-ի, ԹՄՄ հեղինակությանը, ինչպես նաև ազդում է ԱՄՆ-ի ամենամեծ լոբբինգային կառույցներից մեկի՝ Ամերիկայի հայկական համագումարի (ԱՀՀ) հետ համագործակցության վրա: Ի դեպ, հարկ է նշել, որ Ժամանակին ՌԱԿ–ԱՀՀ կապը այն աստիճանի սերտ է եղել, որ անցյալ դարի 80-ական թվականներին ակտիվ բանակցություններ են ընթացել այդ կառույցների միավորման հարցով: Ավանդաբար Ամերիկայի հայկական համագումարի հոգաբարձուների խորհրդի անդամներ են եղել ազդեցիկ ռամկավարներ Անի Թոթան, Վարդգես Պալյանը և ուրիշներ: Այսինքն՝ ՌԱԿ-ի դիրքերի թուլացումը ուղղակիորեն ազդում է Սփյուռքի աջ քաղաքական բևեռի դիրքերի վրա, քանի որ Ռամկավար ազատական կուսակցությունն է վերը թվարկված կառույցները միմյանց հետ կապող և ուղղորդող քաղաքական ուժը: Իսկ Սփյուռքի ավանդաբար աջ քաղաքական բևեռը Հայաստանի Հանրապետության նկատմամբ բարեհաճ, հայաստանակենտրոն և նրան առավել աջակցող թևն է, որի շնորհիվ Հայաստանը հսկայական ֆինանսական օգնություն և աջակցություն է ստանում ոչ միայն Սփյուռքից, այլև տարբեր երկրներից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԵՎ ԱՄԵՐԻԿԱԿԱԶՅ ԼՈՔԲԻՆԳԱՅԻՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ  
ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ  
ԳՆԱՀԱՏՈՒՄՆԵՐ

Ա. Գ. ԵԳԱՆՅԱՆ, ՀՀ ԱԳՆ Ամերիկայի վարչության պետ



Հայաստանի անկախացմամբ կտրուկ փոխվեց Հայաստան–Մփյուռք հարաբերությունների ձևաչափը, ինչը ազդեց նաև ԱՄՆ-ում հայկական լոբբիի հետ հարաբերությունների վրա: Հայկական լոբբիի երկու հիմնասյուների՝ Ամերիկայի հայկական համագումարի (ԱՀՀ) և Ամերիկայի հայկական ազգային հանձնախմբի (Հայ Դատ) հետ պաշտոնական Երևանի հարաբերությունների դինամիկան վերջին քսանամյակում միանշանակ չի եղել<sup>1</sup>:

1991 թվականից արտերկրում գործում են Հայաստանի դիվանագիտական ներկայացուցչություններ, բազմաթիվ դիվանագետներ ունեն ավյուռքահայերի հետ հարաբերվելու հարուստ փորձ: ԱՄՆ-ում գործող ՀՀ դեսպանությունը և Լոս Անջելեսում գլխավոր հյուպատոսությունը ամերիկահայ տարբեր կառույցների հետ համատեղ կազմակերպել են մեծ թվով միջոցառումներ, համագործակցել են՝ Կոնգրեսում հայանպաստ գործունեություն ծավալելու նպատակով և հաճախ միասնականորեն աշխատել են՝ Հայաստանը ԱՄՆ-ի իշխանություններին ըստ արժանվույն ներկայացնելու համար<sup>2</sup>: Այսօր ՀՀ և ԱՄՆ-ի հայկական լոբբինգային կազմակերպությունների համատեղ աշխատանքում կարևորագույն նպատակն է հասնել առավելագույն արդյունավետության: Դա միակ ճանապարհն է՝ գնահատելու և լուծելու այն խնդիրները, որոնք առկա են թե՛ հայկական համայնքի ներսում, մասնավորապես՝ խոշորագույն լոբբինգային կառույցների միջև, թե՛ առհասարակ հայկական միասնական լոբբիի և պաշտոնական Երևանի միջև:

**Արտագաղթի նոր ալիք նորանկախ Հայաստանից**

1991 թ. հետո ԱՄՆ արտագաղթած ՀՀ քաղաքացիները կամա թե ակամա պետք է մաս կազմեին ամերիկահայ հանրության, որի ստեղծման

<sup>1</sup> Տես *Միտայր Լիպարիտյան*, Պետականության մարտահրավերը: Ե., 1999, էջ 178–179:

<sup>2</sup> Տես *Vartan Oskanian*. Speaking to be heard. Yerevan, 2008, PP. 141–156:



ակունքները սկիզբ են առնում 17-րդ դարից: Սակայն որպես կազմակերպված և ինքնատիպ համայնք այն ամերիկյան իրականության մեջ իր ուրույն տեղն զբաղեցրեց 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին<sup>3</sup>:

Ամերիկահայության մասին պատկերացում կազմելու համար հարկավոր է տարանջատել հետևյալ մշակութային համայնքները՝ արևմտահայեր և արևելահայեր: Նշված համայնքները այս կամ այն չափով կրում են Ցեղասպանության ծանր բեռը ինչպես ենթագիտակցական, այդպես էլ գիտակցական մակարդակներում: Հայության համար ընդհանրապես, իսկ ամերիկահայության համար մասնավորապես այդ բեռն ունի նաև իր երկրորդ՝ միավորող, համախմբող կողմը: Ելնելով պատմական իրողությունից՝ Հայաստանից ներգաղթածները և պարսկահայերը կրում են այդ ծանր ժառանգությունը ոչ այն չափով, ինչ մնացյալ հայությունը: Սա, ըստ երևույթին, ԱՄՆ-ի հայկական համայնքի ներսում առկա առաջին տարբերությունն է: Բնականաբար, ոչ մի հայ չի հրաժարվում Մեծ Եղեռնի իրողությունից<sup>4</sup>, սակայն կա առաջնայնությունների տարբերություն: Օրինակ՝ հայերի մի սովոր զանգված, կարևորելով Մեծ Եղեռնի միջազգային ճանաչումը, առաջնահերթ է համարում Լեռնային Ղարաբաղի խնդրի հանգուցալուծումը: Մի այլ զանգվածի կարծիքով՝ Հայաստանի Հանրապետության տնտեսական կայուն զարգացումը գերակայում է մնացած բոլոր խնդիրների նկատմամբ և, ունենալով հզոր տնտեսություն, Հայաստանը ավելի հեշտ կլուծի մյուս հարցերը: Հաջորդ խնդիրը վերաբերում է Հայաստանից ժամանածների ապաքաղաքականացվածության խնդրին: Հայաստանի անկախացման առաջին տարիների դժվարությունները, այն է՝ սոցիալ-տնտեսական իրավիճակի փոփոխությունները, արտագաղթի նոր ալիքի պատճառ դարձան: Մարդկային այս հոսքի ճնշող մասը հիմնականում առնչվում էր նոր կյանք սկսելու հիմնախնդիրների հետ և բացարձակապես ցանկություն չունեի զբաղվելու քաղաքական, լոբբինգային և իրենց անձնական կյանքի հետ անմիջական առնչություններ չունեցող այլ հարցերով: Սա, կարելի է ասել, երկրորդ տարբերությունն էր, քանի որ հին համայնքը արդեն լուծել էր կենսական նշանակություն ունեցող հարցերի մեծ մասը (լեզվի իմացություն, աշխատանք, ուսում, շրջապատ, կապեր և այլն) և արդեն ձեռնամուխ էր եղել ազգային հարցերի բարձրացմանը:

Հայաստանից մեկնածների խմբից շատ կարևոր է զատել այն մարդ-

<sup>3</sup> *Stu Anny Bakalian. Armenian-Americans. New Brunswick, London, 1992, PP. 9–10:*

<sup>4</sup> Տես «ՀՀ ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանի հարցազրույցը «Ազատություն» ռադիոկայանին», 17.01.2010 (<http://www.azatutyun.am/content/article/1932536.html>):

կանց, որոնք Հայաստանի Հանրապետության իշխանությունների հանդեպ ունեին բավականին ագրեսիվ-բացասական կեցվածք: 1990-ական թվականների սկզբին տեղի ունեցած իշխանական համակարգի վերաբաշխումը գործազուրկ կամ իշխանազուրկ թողեց հայկական ազդեցիկ շրջանների մի ստվար հատվածի, որը աշխատանքային միգրանտների հետ ուղևորվեց ավելի բարեկեցիկ երկրներ: Այս մարդկանց մի մասը ձևավորեց հակահայաստանյան ագրեսիվ ու աղմկոտ խումբ, որն իր գործունեությամբ եթե նույնիսկ վտանգ չէր ներկայացնում համահայկական շահերին և նոր ստեղծված պետականությանը, այդուհանդերձ խանգարող գործոն էր հայաստանցի միգրանտների հնարավոր ինտեգրմանը ԱՄՆ-ի հայկական համայնքին և նրա լոբբինգային կառույցներին: Այս ագրեսիվ փոքրամասնությունը ժամանակ առ ժամանակ իր բողոքի ձայնն է բարձրացնում Հայաստանում ընթացող ընտրությունների ժամանակ կամ այլ առիթներով և այդպիսով հարված հասցնում Հայաստանի հեղինակությանը:

Առկա են մի շարք երկրորդական խանգարող հանգամանքներ ևս, որոնք հայաստանցիներին հեռու են պահում լոբբինգային գործունեությունից: ‘Գրանցից են լեզվական’ արևելահայերենի ու արևմտահայերենի, կրթական, մշակութային տարբերությունները, որոնք, սակայն, կարելի է համեմատաբար հեշտ հաղթահարել խորքային տարբերությունների վերացման պարագայում:

Որպես այդ ամենի հետևանք՝ 1991 թ. հետո ԱՄՆ ներգաղթած ՀՀ քաղաքացիները չափազանց դանդաղ են ինտեգրվում հայկական լոբբիի օրակարգային հարցերի լուծման գործընթացին: Նրանք ընդգրկված չեն հիմնական հայկական լոբբինգային կազմակերպությունների ղեկավար կազմում, ակտիվորեն չեն մասնակցում բողոքի տարբեր տեսակի ձեռնարկումների և առհասարակ իրենց հեռու են պահում թե՛ ԱՄՆ-ի ներքին քաղաքական կյանքին վերաբերող խնդիրներից, թե՛ համահայկական հարցերից: Ի տարբերություն նոր Սփյուռքից՝ հին Սփյուռքը ավելի համախմբված է, ավանդական ջերմ վերաբերմունք է տածում Հայաստանի նկատմամբ և, լինելով Արևմուտքի ամենազարգացած ժողովրդավարություններից մեկի անբաժան մասնիկ, արևմտյան լավագույն ժողովրդավարական ավանդույթների առուժով քաղաքականապես ավելի պատրաստված ու դաստիարակված է:

### **Լոբբիի գործիքաբանը**

Ինչպե՞ս աշխատել ԱՄՆ-ի Կոնգրեսի հետ, ինչպե՞ս ազդել նրա որոշումների վրա և առաջ մղել հայկական համայնքի ու ՀՀ շահերն ԱՄՆ-ում: Այդ նպատակների իրականացման համար հայկական և ոչ միայն հայկա-

կան լոբբինգային կառույցները մշակել են որոշակի գործիքարան: Դրանց առատությունը և, վերջապես, որակը փոփոխվել են տարիների ընթացքում, սակայն իմաստը մնացել է նույնը: Ընտրվող պաշտոնյայի վրա ԱՄՆ-ում կարելի է ազդել ընտրողի, այսինքն՝ քաղաքացու միջոցով: Այստեղ այնքան կարևոր չէ համայնքի անդամների քանակը, որքան այդ համայնքի հետ աշխատելու, հնարավորինս բոլորին հասնելու և որքան հնարավոր է շատ քաղաքացիների ձայնը լսելի դարձնելու հնարավորությունը:

Ժամանակակից զանգվածային տեղեկատվական միջոցների առկայության և Ամերիկայի նման առաջադիմական երկրի պարագայում համացանցի կիրառումը դառնում է շատ հարմար և դյուրին: Էլեկտրոնային համակարգերի՝ համացանցի, կայքերի, էլեկտրոնային փոստի միջոցով հնարավոր է արագ արձագանքման կամ հակազդման քայլեր կազմակերպել սակավ ուժերով և համեմատաբար համեստ ֆինանսական ներդրումներով: Դրա վառ օրինակն է ԱՄՆ-ի Հայ Դատի գրասենյակի գործունեությունը: Եթե դեռ 15 տարի առաջ կիրառվում էր իրազեկման ավանդական մեթոդը՝ ելեկտցում կազմակերպվող միջոցառումների, տուն առ տուն նամակների առաքման, հեռախոսային զանգերի միջոցով, ապա այժմ այդ ամենը կազմակերպվում է մեծ արագությամբ՝ բազմահազարանոց էլեկտրոնային հասցեների օգտագործմամբ: Եթե 2000 թ. Հայ Դատի գրասենյակը պարբերաբար կապի մեջ է եղել մոտ 20.000 հայ ընտանիքների հետ, ապա 2010 թ. այդ թիվը տասնապատկվել է<sup>5</sup>: Սա նաև համայնքի յուրաքանչյուր անդամի հետ ուղղակի կապի (*grassroots*) լավագույն դրսևորումն է: Բացի իրազեկման գործառույթից, տվյալ համակարգերի միջոցով վերջին տարիներին իրականացվում է մեկ այլ կարևոր գործառույթ ևս՝ դրամահավաք: «Կենդանի» դրամահավաքների հետ մեկտեղ հնարավորություն է ընձեռվել բավական բարձր մակարդակի ապահովությամբ իրականացնելու առգիծ (*online*) դրամահավաքներ<sup>6</sup>, ինչը հարմարավետ է, քանի որ, ի տարբերություն միանվագ դրամահավաքներից, առգիծ դրամահավաքները գործում են մշտապես կամ երկարաժամկետ: Նկարագրված գործընթացը, անշուշտ, կարևոր դեր է կատարում համայնքային ներուժը մոբիլիզացնելու գործում: Այստեղ չափազանց կարևոր է երիտասարդ կադրերի հավաքագրումը, ինչը կրկին կազմակերպված եղանակով տեղի է ունենում հին համայնքի միջավայրում և շատ ավելի հազվադեպ՝ նոր համայնքի (հայաստանցիների)

<sup>5</sup> Տես «ARMENIAN NATIONAL COMMITTEE OF AMERICA» կայքը (<http://www.anca.org>):

<sup>6</sup> Տես նույն տեղում, *նաև* «ARMENIAN ASSEMBLY OF AMERICA» կայքը (<http://www.aaainc.org>):

շարքերում: Հատկանշական է, որ հին համայնքի միջավայրում պատվաբեր (*bon ton*) է համարվում ի նպաստ լոբբինգային խմբերի կատարվող կամավոր աշխատանքը: Հավաքագրման այս սանդղակում հաջորդը կազմակերպություններում որպես «փորձնակ» աշխատելն է, ինչը կրկին չվճարվող աշխատանք է, սակայն միանվագ բնույթ չի կրում և տևում է մեկից մինչև երեք ամիս: Հաճախ այդ փորձնակները վերադառնում են կազմակերպություն՝ արդեն վարձատրման հիմունքներով: Այսպես՝ շատ պարզ եղանակով, կատարվում են կադրերի հավաքագրումն ու փոխարինումը:

Թե՛ Հայ Դատի գրասենյակը, թե՛ Ամերիկայի հայկական համագումարը մի շարք տարաբնույթ և երիտասարդների համար հրապուրիչ ծրագրերի միջոցով ապահովում են անհրաժեշտ սերնդափոխությունը:

### **Կոնգրես**

Ամերիկահայ հավաքական լոբբին հաջողության հասավ 1995 թվականին, երբ ԱՄՆ-ի Կոնգրեսում ստեղծվեց Հայկական շահերը պաշտպանող օրենսդիրների մի ոչ պաշտոնական երկկուսակցական խումբ, որը 2010 թ. դրությամբ ընդգրկում է 150 կոնգրեսականի: Սա Կոնգրեսի ամենամեծ լոբբինգային խմբերից է, որը Հայաստանի Հանրապետության և Սփյուռքի իրական դաշնակիցն է: Օրինակ՝ Կոնգրեսի Սևամորթների շահերը պաշտպանող (*Black Caucus*) լոբբինգային խմբում կա ընդամենը 41, իսկ Թուրքիայի շահերը պաշտպանող խմբում՝ 106 հոգի: Հայկական խումբը ավանդաբար համանախագահում են դեմոկրատական և հանրապետական կուսակցությունների մեկական ներկայացուցիչ: Այժմ դրանք են դեմոկրատ Ֆրենկ Փայլունը և հանրապետական Մարկ Քիրկը<sup>7</sup>: Թվարկենք այս խմբի հայանպաստ աշխատանքի մի քանի կարևոր ուղղություններ.

- Հայոց Ցեղասպանության ճանաչում,
  - անմիջական օգնություն Հայաստանի Հանրապետությանը (այսօր այն կազմել է մոտ 1,8 միլիարդ ԱՄՆ-ի դոլար)<sup>8</sup>,
  - աջակցություն Լեռնային Ղարաբաղի Հանրապետությանը<sup>\*</sup>,
  - Ձեքսոն Վենիկի ուղղման վերացում և Հայաստանի հետ կանոնավոր առևտրական հարաբերությունների հաստատում:
- Հարկ է նշել, որ այս աշխատանքները մշտապես կատարվում են Հա-

<sup>7</sup> Տես «United States. House of Representatives» կայքը (<http://www.house.gov>):

<sup>8</sup> Տես «U.S. DEPARTMENT OF STATE» կայքը (<http://www.state.gov>):

<sup>\*</sup> ԱՄՆ-ը միակ երկիրն է, որը ֆինանսական աջակցություն է ցուցաբերում Լեռնային Ղարաբաղին:

յաստանի Հանրապետության դեսպանության հետ, որի դերը նույնքան մեծ է, որքան միասնական լոբբիի դերը: Խոսելով «միասնական լոբբիի մասին»՝ նկատի չունենք, որ նշված երկու հայկական լոբբինգային կազմակերպությունները աշխատում են միասին: Դա շատ հազվադեպ է լինում. սովորաբար երկու կազմակերպությունները աշխատում են առանձին, նրանք նույնիսկ ունեն «իրենց» կոնգրեսականները: Միասնականությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ հետապնդվող նպատակները ունեն ընդհանուր հայանպաստ բնույթ:

Քանի որ ԱՄՆ-ի և ՀՀ-ի միջև երկկողմ հարաբերությունները իրականացվում են դեսպանություն – պետքարտուղարություն ձևաչափով, դեսպանություն – Կոնգրես հարաբերությունները նպատակահարմար է կառուցել նրբանկատորեն: Այս պարագայում հայկական լոբբինգային կազմակերպությունների առկայությունը հարմար է, քանի որ դրանք կոչված են ամնիջականորեն հարաբերվելու ժողովրդի ընտրյալների հետ: Սակայն պետք է նշել մի խրթին հարց, որը փաստորեն պառակտում է մտցնում երկու հայկական լոբբինգային կառույցների կողմից Կոնգրեսում իրականացվող աշխատանքում և թյուր տպավորություն գործում ամերիկյան կողմի վրա: Հայ Դատի գրասենյակի գերնպատակն է Ամերիկայի հայ համայնքի միացյալ ուժերով հասնել ԱՄՆ-ում Հայոց Ցեղասպանության ճանաչմանը տեղական, նահանգային և դաշնային մակարդակներով: Մինչդեռ Ամերիկայի հայկական համագումարը, որը ևս մեծ ուշադրություն է դարձնում այդ խնդրին, դրա հետ մեկտեղ կարևորում է նաև Հայաստանի Հանրապետության կայուն զարգացումն ու ժողովրդավարացումը, Լեռնային Ղարաբաղի հիմնահարցի լուծումը, տնտեսական բարեփոխումները և այլն: Այստեղ կա լուրջ խնդիր, քանի որ ամերիկյան կողմը շատ լավ հասկանում է հայկական երկու լոբբինգային խմբերի առաջնայնությունների տարբերությունը և թերահավատությամբ է վերաբերվում այն պնդմանը, թե Հայոց Ցեղասպանության ճանաչման հարցը իրոք ամենակարևորն է ամբողջ հայության համար: Ամերիկյան կողմը քաջ գիտակցում է, որ այդ հիմնահարցի հետ մեկտեղ կան Լեռնային Ղարաբաղի հիմնահարցի հանգուցալուծման, Հայաստանի տնտեսական զարգացման, ժողովրդավարացման և այլ հույժ կարևոր խնդիրներ: Տեսնելով հայկական ճակատում այդ ճեղքվածքը՝ կոնգրեսականների մեծ մասն սկսում է ավելի զգուշորեն իրականացնել իր հայանպաստ գործունեությունը: Այստեղ կարևոր դեր ունեն այն ազդակները, որոնք գալիս են Հայաստանից, և եթե դրանք միանշանակ են, ապա օգնում են կոնգրեսականներին արագ կողմնորոշվելու և հայ համայնքի հետ խնդիրներում մատնացույց անելու պաշտոնական Երևանը:

## **Հայաստանի դերը և լոբբինգային կառույցների կառավարումը**

Շատ կարևոր է Հայաստանի տեղն ու դերը լոբբինգային գործունեության մեջ: Փաստ է, որ 1991 թվականից հետո Հայաստան–Սփյուռքի լոբբինգ հարաբերությունների հարացույցը փոխվել է: Հայկական լոբբին չէր կարող չարձագանքել Հայաստանին ուղղված մարտահրավերներին, իսկ Հայաստանը իր հերթին պետք է ռացիոնալ օգտագործեր այն ներուժը, որն ուներ Սփյուռքն իր լոբբինգային կազմակերպություններով հանդերձ: Անկախության առաջին տարիներին Հայաստանում հիմնադրվեցին ԱՀՀ-ի և Հայ Դատի գրասենյակներ, իսկ ՀՀ-ն բացեց իր դիվանագիտական ներկայացուցչությունները ԱՄՆ-ում՝ դեսպանություն Վաշինգտոնում և գլխավոր հյուպատոսություն Լոս Անջելեսում: Այս հաստատությունները հետագա տարիներին դարձան պետություն–Սփյուռք շփման հիմնական կապուղիները: Հարաբերություններում եղել են անհարթություններ, դրանց թերևս ամենածանր հարվածը հասցվեց առաջին Նախագահի օրոք՝ Հայաստանում ՀՀԴ գործունեությունը արգելելուց հետո: Փաստորեն կաթվածահար արվեցին հարաբերությունները Սփյուռքի մի սովոր գանգվածի հետ, ինչը լիովին արգելակեց աշխատանքը Սփյուռքի դաշնակցական թևի հետ<sup>9</sup>: Երկրորդ Նախագահի օրոք այդ խնդիրը լուծվեց, Սփյուռքի, մասնավորապես, նրա դաշնակցական թևի հետ հարաբերությունները սկսեցին հետզհետե կարգավորվել: Դիվանագիտական հաստատություններին համձնարարվել էր բարելավել հարաբերությունները ՀՀԴ-ի և Անթիլիասի թեմի հետ: Այժմ պաշտոնական Երևանը պետք է իր ճիշտ տեղը գտներ Սփյուռքի և նրա քաղաքական բուրգերի հետ հարաբերություններում: Հարկ է նշել, որ ԱՄՆ-ում գործում են մոտ մեկ տասնյակ հայկական լոբբինգային կազմակերպություններ, սակայն «ծանրակշիռներ» մնում են երկուսը՝ Հայ Դատի գրասենյակը և Ամերիկայի հայկական համագումարը: 1990-ական թվականների վերջին հնարավորություն ընձեռվեց խելամիտ հարաբերություններ հաստատելու այդ երկու ազդեցիկ կազմակերպությունների հետ: Նշենք, որ այդ երկու կառույցները զուտ ամերիկյան կազմակերպություններ են, գործում են ԱՄՆ-ի օրենսդրական դաշտում, և դրանց աշխատողները ԱՄՆ-ի քաղաքացիներ են: Այդ իսկ պատճառով շատ կարևոր է, թե ինչպես պետք է կառուցվեն հարաբերությունները հայկական լոբբինգային կազմակերպությունների հետ: Այն փաստը, որ նշված երկու կազմակերպությունների շահերը հիմնականում համընկնում են, լիովին հասկանալի է և գաղտնիք չէ: Ինչ-

<sup>9</sup> Տես *Ժիրայր Լիպարիդյան*, Նշ. աշխ., էջ 181–182:

պես արդեն նշել ենք, տարբերությունը կարող է լինել խնդիրների առաջնայնության մեջ և, որ ամենակարևորն է, թե ինչպես պաշտոնական Երևանը կփորձի ուղղորդել այդ լոբբինգային կառույցների գործունեությունը: Խնդիրը հստակ պատկերացնելու համար հարկավոր է նաև հասկանալ, թե ինչպես են կառավարվում նշված կազմակերպությունները, ինչպես են տեղի ունենում որոշում ընդունելու գործընթացները, ովքեր են կանգնած այդ կազմակերպությունների գործադիր մարմինների հետևում:

**Ամերիկայի հայկական համագումարի** կառավարման ձևը ազատական է: Համագումարը, ներկայացնելով ԱՄՆ-ի հայ համայնքի աջ թևը, ըստ իր բնույթի պետք է լինի ժողովրդավարական և թափանցիկ: Կազմակերպությունը բաղկացած է գործադիր մարմնից, որը իրականացնում է ամենօրյա գործառնությունները, և հոգաբարձուների խորհրդից, որը մշակում է կազմակերպության ռազմավարությունը<sup>10</sup>: Սակայն կազմակերպության հիմնական ֆինանսական բազան «սնուցվում» է մի քանի մեծահարուստ անհատների կողմից, որոնք որոշումների ընդունման ժամանակ ունեն ծանրակշիռ ձայն: Առաջին հերթին պետք է հիշել Հրայր Հովհանյանին, որը Համագումարի հիմնադրամ է: Անհրաժեշտ է նշել նաև Ժիրայր Հարաթունյանին, Քերտլայն Մուգարին, Անի Թոթային և մի շարք այլ ազգասեր հայերի, որոնք սատարում են կազմակերպությանը: ԱՀՀ խորհրդի այս անդամները ինքնուրույն, կայացած, ինքնաբավ և դժվար կառավարելի անհատներ են:

**Հայ Դատի** գրասենյակի գործունեությունը իրականացվում է այլ սկզբունքով և կառուցված է այլ հիմքի վրա: Սա, ըստ էության, կուսակցական կազմակերպություն է՝ ՀՀԴ-ին հատուկ խիստ կարգապահությամբ և ենթակարգության հստակ շղթայով: Գրասենյակը Համագումարի մման ունի գործադիր մարմին և հոգաբարձուների խորհուրդ, որոնք իրականում ունեն զուտ ներկայացուցչական դերակատարում և քողարկում են հետևաբեմում գործող իրական ուժը՝ ՀՀԴ Բյուրոն: Այդ մարմինն է նշանակում պատասխանատուի, որն իրականացնում է Հայ Դատի գրասենյակի նկատմամբ ուղղորդող և վերստուգիչ գործառնություններ: Երկար տարիներ այդ պատասխանատուն Գարո Արմենյանն էր (Բյուրոյի անդամ), այժմ այդ դերը վերապահված է Քեն Խաչիկյանին (Բյուրոյի անդամ չէ): Նշված կառույցի հետ աշխատելիս հարկ է հիշել, որ այստեղ հնարավոր չէ ազդել մեկ կամ երկու անդամի վրա, այլ հարկավոր է համոզել մի ամբողջ մարմնի, որն իր ռազմավարությունը մշակել է դեռ այն ժամանակ, երբ Հայաստանը անկախ չէր: Ի տարբերություն ԱՀՀ-ից, այստեղ որոշումները ընդունվում են ավելի

<sup>10</sup> Տես «ARMENIAN ASSEMBLY OF AMERICA» կայքը (<http://www.aaainc.org>):

լայն ընդգրկմամբ՝ կողեկտիվ եղանակով: Մինևույն ժամանակ, հայտնի է, որ ԱՄՆ-ի դաշնակցականները և Ամերիկայում գործող Հայ Առաքելական եկեղեցու Անթիլիասի թեմը գրեթե նույն միավորն են, և համայնքի այս մասի քաղաքական ղեկավարությունը պատասխանատու է բավական լայն գանգվածների առջև<sup>11</sup>: Հաջորդ հանգամանքը, որով Հայ Դատի գրասենյակը տարբերվում է Համագումարից, ֆինանսավորումն է: Եթե Համագումարը դրամահավաքն իրականացնում է հիմնականում ԱՄՆ-ի հայ մեծահարուստների մի սահմանափակ ընտրախավային ակումբի շրջանակներում, ապա Հայ Դատի գրասենյակը դա անում է Անթիլիասի թեմին պատկանող գրեթե բոլոր ծխականների մասնակցությամբ:

### **Ամերիկահայ լոբբիի իրավիճակային գնահատում**

ՀՀ–Սփյուռք հարաբերություններն ավելի կանոնավորելու նպատակով 1990-ական թթ. վերջին գործարկվեց Հայաստան–Սփյուռք խորհրդաժողովների ձևաչափը: Իսկ 2008 թ. ՀՀ Սփյուռքի նախարարության ստեղծման նպատակը եղավ Հայաստանի և Հայկական Սփյուռքի միջև կապերի ամրապնդումը, դրանց գործակցության զարգացումը, հայապահպանությունը, ներգաղթի կազմակերպումը: Սակայն այդ ամենը իրագործելու համար պետք է նպատակաուղղված կերպով աշխատել տարաբնույթ խնդիրների լուծման ուղղությամբ: Խնդիրներ առկա են հետևյալ հարթություններում.

- ամերիկահայության ներհամայնքային խնդիրներ,
- համահայկական խնդիրներ, որոնք բնորոշ են մաս ամերիկահայությունը,
- խնդիրներ Հայաստանի Հանրապետություն-ամերիկահայ լոբբի հարաբերություններում:

Ինչ վերաբերում է ներհամայնքային լարվածությանը, որն, ի դեպ, հատուկ է Սփյուռքի այ թևին պատկանող անհատներին, դրա վառ օրինակն է Ամերիկայի Հայոց Ցեղասպանության թանգարանի, կամ, ավելի ստույգ՝ այդ նպատակով տարիներ առաջ գնված անշարժ գույքի շուրջ ծագած դատավարությունը: Թանգարանը գտնվում է Վաշինգտոնի կենտրոնում՝ Սպիտակ տնից ոչ հեռու, բացումը նախատեսվում է 2011 թվականին: Հիմնադիրներն են Անուշ Մաթևոսյանը, Հրայր Հովհաննիսյանը, Ամերիկայի հայկական համագումարը և «Գ-աֆեսճյան ընտանիք» հիմնադրամը: Այս ի սկզբանե խոստումնալից ծրագիրը, որը հնարավորություն կընձեռեր Ողջակիզման թանգարանին շատ մոտ՝ նույն փողոցում, գտնվող հաստատութ-

<sup>11</sup> Տես *Ժիրայր Լիպարիպյան*, Նշ. աշխ., էջ 167:



յանը՝ լայն զանգվածներին ծանոթացնելու Մեծ Եղեռնի իրողության հետ, իրականացնելու կրթական և մշակութային տարբեր ծրագրեր, այսօր դարձել է կռվախնձոր Ջերարդ Գաֆեսճյանի և մյուս հիմնադիրների միջև<sup>12</sup>։ Մի քանի տարի տևած դատական վեճը, որն սկսվեց «ո՞վ է այստեղ գլխավորը» հարցից, կարծես թե ավարտվեց Համագումարի և Հ. Հովնանյանի հաղթանակով։ Սակայն Ջ. Գաֆեսճյանը չի հանձնվում և այժմ հետ է պահանջում իր ներդրած գումարները։ Ցավոք, սա անխուսափելի երևույթ է, երբ համայնքի մի մասը ղեկավարվում է ոչ թե կոլեկտիվ մարմնի, այլ մի քանի մեծահարուստ, ազդեցիկ անհատների կողմից։ Այստեղ շատ հաճախ առաջին պլան է մղվում «ետը»։ Նման բան դժվար է պատկերացնել համայնքի ձախ՝ դաշնակցական թևում, որը ղեկավարվում է բավական խստորեն, սակայն շատ ավելի լայն կոլեկտիվի և նույնիսկ՝ զանգվածների կողմից։ Նմանատիպ օրինակները կարելի է շարունակել, և դա ավելի բնորոշ է համայնքի աջակողմյան թևին, քանի որ այն ավելի շատ հենվում է անհատների վրա, ինչը դուրս է համակարգային մոտեցումից և պարունակում է լուրջ վտանգներ։ Օրինակ՝ առայժմ դժվար է գնահատել Ջերարդ Գաֆեսճյանի կողմից ստեղծված և երրորդ լոբբինգային կազմակերպության տեղին հավակնող Ամերիկա-հայկական հասարակական հարաբերությունների հանձնաժողովի (ԱՀՀՀՀ՝ USAPAC) ասպարեզ գալը։ Հետաքրքրականն այն է, որ այս նորաստեղծ հաստատության ղեկավար հրավիրվեց Ռոս Վարթյանը, որը երկար տարիներ առաջնորդում էր Ամերիկայի հայկական համագումարը, սակայն ազատվել էր աշխատանքից Հրայր Հովնանյանի հետ տարածայնություններ ունենալու պատճառով։ Այս օրինակափոխությունը շարունակվելու պարագայում Ամերիկայի հայկական համագումարի և համայնքի աջ թևին պատկանող մնացած բոլոր, ավելի փոքր լոբբինգային կազմակերպությունների առջև կարող են ծառանալ գոյատևման լուրջ խնդիրներ՝ ընդհուպ մինչև քայքայումը։ Հայ Դատի գրասենյակը իր բոլոր քույր կազմակերպություններով հանդերձ շատ ավելի կենսունակ է՝ շնորհիվ մեկ ընդհանուր գաղափարական հենքի, լայն զանգվածների աջակցման և որոշումների ընդունման կոլեկտիվ սկզբունքի։

Համահայկական հարթակում գոյություն ունեցող խնդիրներից կարելի է առանձնացնել մասն Հայ Առաքելական եկեղեցու երկու կաթողիկոսական աթոռների միավորման հարցը, ուղղագրության խնդիրը և այլն։ Սակայն այս համահայկական նշանակություն ունեցող խնդիրները առանձին ուսում-

---

<sup>12</sup> Տես *Hakob Tsulikian*. Genocide Museum. «Azg», 06.11.04 (<http://www.armenian diaspora.com/showthread.php?12478-Genocide-Museum>):

նասիրության կարիք ունեն և հատկանշական չեն միմիայն ամերիկահայ լոբբիի համար: Այդ իսկ պատճառով մենք կփորձենք ամփոփել միջհամայնքային և Հայաստանի Հանրապետություն–ամերիկահայ լոբբի հարթություններում առկա խնդիրները:

Չնայած հայկական դպրոցների, կրթամշակութային տարբեր կառույցների, հայերեն լեզվով ՉԼՄ-ների առկայությանը՝ ուժացումը ամերիկահայերի համար լուրջ խնդիր է: Այն նկատելի է նաև նախկին հայաստանաբնակների շրջանում\*:

### **Եզրահանգումներ**

*Ցեղասպանության ճանաչում:* Հայոց Ցեղասպանության միջազգային ճանաչումն ու դատապարտումն առանցքային տեղ ունեն ԱՄՆ-ի հայ համայնքի գործունեության նպատակների մեջ: Ամերիկահայությունը շեշտը դրել է գլխավորապես լոբբինգային գործունեության վրա և հասել որոշակի արդյունքների: Մինևույն ժամանակ, հարկ է նշել, որ համայնքում կան շրջաններ, որոնց կարծիքով կարիք չկա այդչափ կենտրոնանալու ԱՄՆ-ի կողմից Ցեղասպանության ճանաչման հարցի վրա, այլ անհրաժեշտ է համայնքի ռեսուրսներն օգտագործել նաև այլ ուղղություններով՝ հայապահպանություն, պետական կառավարման համակարգում ամերիկահայերի ընդգրկում, հայրենադարձություն, ՀՀ-ի հետ կապերի սերտացում և այլն:

*Նախկին «հայասրանաբնակներ»:* Վերջին երկու տասնամյակում ՀԽՍՀ/ՀՀ-ից ԱՄՆ ներգաղթած հայերը ընդհանուր առմամբ չեն ինտեգրվել համայնքային կառույցներին և չեն կարողացել ձևավորվել որպես համայնքային միավոր:

*Ամերիկահայերն ԱՄՆ-ի պերսոնական կառավարման համակարգում:* Հակառակ համայնքի կազմակերպվածությանը՝ հայազգիների մասնակցությունն ԱՄՆ-ի պետական կառավարման համակարգի գործունեությանը (տեղական, մահանգային ու դաշնային մակարդակներով) համեմատաբար քույլ է: Դա ունի իր օբյեկտիվ ու սուբյեկտիվ պատճառները. հայերը հիմնականում ձգտում են դեպի մասնավոր հատված, նրանց զգալի մասը ներգաղթել է ԱՄՆ վերջին մի քանի տասնամյակում և գտնվել կամ գտնվում է ինտեգրման գործընթացում (լեզվի, բարբերի, օրենքների իմացություն և այլն): Վերջին տարիներին ամերիկահայերի շրջանում որոշակի աճ է նկատվում

---

\* Ամերիկահայ աշակերտների ճնշող մեծամասնությունը հաճախում է հանրային ու մասնավոր ոչ հայկական դպրոցներ:

պետական-հասարակական աշխատանքի անցնելու առումով, ինչը, սակայն, հեռու է բավարար լինելուց:

*ԱՄՆ-ի հայաշատ վայրերում ՀՀ ներկայացուցչությունների հարցը:* Ռուսաստանի Դաշնությունից հետո ԱՄՆ-ը ամենամեծ հայ համայնքն ունեցող երկիրն է, սակայն Հայաստանի Հանրապետությունը մինչ օրս այդ երկրում ունի միայն երկու դիվանագիտական ներկայացուցչություն:

Ամփոփելով, կարելի է ասել, որ գոյություն ունի ամերիկահայ համայնքի և, մասնավորապես, նրա լոբբինգային կառույցների հետ կապերի հետագա խորացման զգալի ներուժ: ԱՄՆ-ի հայ համայնքի լոբբինգային կազմակերպությունների բարդ կառուցվածքի, կշռի, առկա խնդիրների ծավալի ու ՀՀ-ԱՄՆ հարաբերությունների զարգացման գործում համայնքի կարևոր դերի հաշվառմամբ ակնհայտ է, որ անհրաժեշտություն կա այս ուղղությամբ մշակելու ՀՀ-ի կողմից համակարգված մոտեցում ու երկարաժամկետ հեռանկարով քայլեր: ԱՄՆ-ի հայ համայնքի հետ կապերի սերտացումն ու դրանց արդյունավետ օգտագործումը բխում են ՀՀ շահերից: ՌԻստի ամերիկահայ համայնքի հետ հարաբերությունների խթանումը պետք է լինի Սփյուռքի հետ կապերի ՀՀ ընդհանուր ռազմավարության առաջնային նպատակներից մեկը:

ԱՄՆ-ի երկու լոբբինգային կազմակերպությունների օրինակով մենք տեսնում ենք, որ դրանց ռազմավարության վրա ազդելու լծակները բավական սահմանափակ են, ուստի դրանց հարկավոր է ընդունել որպես գործընկերների: ՀՀ իշխանություն – ԱՄՆ-ի հայկական լոբբի հարացույցում դրանք չեն կարող չներազդել միմյանց վրա: Սակայն հայկական լոբբին պետք է դիտել որպես ինքնուրույն և անկախ գործընկերոջ, և հետագա հարաբերությունները կառուցել ըստ այդ հրամայականի: Այդ դեպքում կխթանվեն ներհամայնքային միասնականությունն ու համերաշխությունը, կապահովվի ՀՀ-ի հետ հարաբերություններում, համայնքի լայն զանգվածների ավելի մեծ ներգրավվածությունը համահայկական հարցերում և կմեծանա ՀՀ հեղինակությունը, հետևաբար կհզորանա նաև հայկական լոբբին:

ԱՄՆ-Ի ՀՐԵԱԿԱՆ ԼՈՒՔԻ ԳՈՐԾԻՔԱՐԱՆԸ  
ԻՍՐԱՅԵԼԻ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳԱՅԻՆ ՇԱՀԵՐԻ  
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ

Բ. Պ. ՊՈՂՈՍՅԱՆ, ՀՀ ՊՆ ԱՌՀԻ-ի գիտնական-վերլուծաբան,  
պարունական գիտությունների քեկնածու



ԱՄՆ-ի հայկական լոբբինգային կազմակերպությունների գործունեության արդյունավետության մակարդակի բարձրացման ուղեւիշները մշակելիս կարևոր են ԱՄՆ-ի այլ էթնիկական լոբբինգային կազմակերպությունների գործիքարանի ուսումնասիրությունը և հայկական կազմակերպությունների կողմից այդ մեթոդների օգտագործման հնարավորության հարցի պարզաբանումը: Այս առումով հետաքրքրություն է ներկայացնում ԱՄՆ-ի հրեական լոբբինգի՝ որպես այս ոլորտում ավելի հաջողված գործունեության օրինակի ուսումնասիրությունը:

**Հրեական լոբբինգի սահմանումը:** Անհրաժեշտ ենք համարում ներկայացնել ԱՄՆ-ի հրեական լոբբինգի սահմանումը. ովքե՞ր կարող են համարվել հրեական լոբբիի բաղկացուցիչ մաս: Այստեղ արդեն առկա է որոշակի տարբերություն հրեական և ԱՄՆ-ի այլ էթնիկական լոբբինգային կազմակերպությունների միջև: Եթե հայկական, հունական, իռլանդական լոբբինգային կազմակերպությունների անդամները գրեթե բացառապես պատկանում են համապատասխան էթնիկական խմբին, ապա հրեական լոբբիի պարագայում իրավիճակը փոքր-ինչ այլ է: Կան բազմաթիվ ոչ հրեական կազմակերպություններ, որոնք ակտիվորեն մասնակցում են իսրայելամետ գործունեությանը: Դրանք ներառում են ԱՄՆ-ի ավետարանական քրիստոնյաների մի հատվածին, հայտնի են «քրիստոնյա սինոնիստներ» անվանմամբ և իսրայելամետ գործունեություն են իրականացնում՝ կրոնական համոզմունքներից ելնելով: Դրանց անդամները հայտարարում են, որ Իսրայելի ստեղծումը և նրա տարածքների հետագա ընդլայնումը աստվածային կամքի իրականացումն է, և Իսրայելի կողմից ցանկացած տարածքային զիջում հակաստվածային քայլ է<sup>1</sup>: Հիշատակության է արժանի

<sup>1</sup> Այդ մասին ավելի հանգամանորեն տես՝ Zev Chafets. A Match Made in Heaven:

«Հանուն Իսրայելի միավորված քրիստոնյաներ» կազմակերպությունը (*Christians United For Israel*): Շուրջ 50 000 անդամ միավորող այս կազմակերպությունը ոչ միայն զգալի ֆինանսական միջոցներ է տրամադրում Իսրայելին, այլև ակտիվորեն ներգրավված է ԱՄՆ-ի իշխանական շրջաններում իսրայելամետ լոբբինգում<sup>2</sup>:

Հրեական լոբբիի այս յուրօրինակությունն անհրաժեշտ է դարձնում այդ հասկացության հստակ սահմանումը: Առավել ընդգրկուն սահմանում ներկայացրել են ամերիկացի գիտնականներ Ջոն Մերշայմերը և Ստեֆան Վոլտը: Նրանց սահմանման համաձայն՝ հրեական լոբբի են կոչվում այն բոլոր կազմակերպությունները, կառույցները կամ անհատները, որոնք ակտիվորեն աշխատում են ԱՄՆ-ի արտաքին քաղաքականությունը իսրայելամետ դարձնելու ուղղությամբ և դրան են նվիրում իրենց միջոցների ու ժամանակի կարևոր հատվածը<sup>3</sup>:

**Հրեական լոբբիի կազմակերպական կառուցվածքը:** Հրեական լոբբինգային կազմակերպությունները չունեն ուղղաձիգ կառուցվածք, չեն դեկավարվում մեկ կենտրոնից և բոլոր հարցերում չէ, որ ունեն միասնական դիրքորոշում:

Տեսակետների բազմազանություն է առկա անգամ այնպիսի հիմնախնդրում, ինչպիսին է արաբա-իսրայելական հակամարտության կարգավորումը: Որոշ հրեական կազմակերպություններ, չժխտելով Իսրայելի գոյության իրավունքը, ներկայիս Իսրայելը համարում են ռասիստական, ապարտեիդի հիմունքների վրա գործող պետություն, և ԱՄՆ-ի Կառավարությանը կոչ են անում Իսրայելի դեմ ձեռնարկելու կտրուկ միջոցներ ու դադարեցնելու նրան տրամադրվող ռազմական օգնությունը<sup>4</sup>: Լոբբինգային կառույցների մեկ այլ մաս այս հարցում որդեգրել է ծայրահեղ կոշտ դիրքորոշում: Դրանք դեմ են արտահայտվում Իսրայելի կողմից բռնազավթված որևէ տարածքի վերադարձի գաղափարին՝ դա հիմնավորելով ինչպես կրոնական, այնպես էլ Իսրայելի անվտանգության ապահովման խնդրով:

---

American Jews, Christian Zionists, and One Man's Exploration of the Wired and Wonderful Judeo-Evangelical Alliance. New York, 2007:

<sup>2</sup> Տես *Nathan Guttman*. Pro-Israel Christians Mobilize in D.C. «Forward», July 20, 2007 (<http://www.forward.com/articles/11191/>):

<sup>3</sup> Տես *John J. Mearsheimer and Stephen M. Walt*. The Israel Lobby and US Foreign Policy. New York, 2007, P. 114:

<sup>4</sup> Դրանցից կարելի է հիշատակել «Հրեաներն ընդդեմ օկուպացիայի» և «Հրեական ձայները համուն խաղաղության» կազմակերպությունները:

Լոբբինգային կազմակերպությունների հիմնական մասը հանդես է գալիս հօգուտ ավելի չափավոր մոտեցման՝ պաշտպանելով երկու անկախ պետությունների՝ Պաղեստինի և Իսրայելի ստեղծման տեսակետը<sup>4</sup>:

ԱՄՆ-ի հրեական լոբբինգային կազմակերպություններից ամենաազդեցիկն է «Ամերիկա-իսրայելյան հանրային հարաբերությունների կոմիտեն» (ԱԻՀՀԿ՝ *American Israel Public Affairs Committee*): Դրա արմատները հասնում են «Ամերիկյան սիոնիստների արտակարգ խորհուրդ» կազմակերպությանը, որն ԱՄՆ-ում ստեղծվել էր երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին՝ հրեական պետության ստեղծմանն աջակցելու նպատակով: 1954 թ. խորհրդի ակտիվ անդամներից մեկը՝ Իսայա Բենենը, հիմնադրեց «Հանրային հարաբերությունների ամերիկա-սիոնիստական կոմիտե» կազմակերպությունը, որի հիմնական նպատակը ԱՄՆ-ի Կոնգրեսում Իսրայելի շահերը պաշտպանելն էր: Չգտելով կազմակերպության աշխատանքներում ներգրավել նաև ոչ սիոնիստ հրեաներին՝ Բենենը 1959 թ. այն վերանվանեց «Ամերիկա-իսրայելյան հանրային հարաբերությունների կոմիտե», որի հիմնական խնդիրը իսրայելամետ լոբբինգն է ԱՄՆ-ի Կոնգրեսում<sup>5</sup>:

Չնայած բազմաթիվ կազմակերպությունների առկայությանը՝ հրեական լոբբիի առավել ազդեցիկ կազմակերպությունները կարևոր հարցերում հանդես են գալիս միասնական դիրքորոշմամբ: Հրեական լոբբիի ներսում միասնականության ապահովմանն է ուղղված «Ամերիկյան գլխավոր հրեական կազմակերպությունների նախագահների ժողով» (*Conference of Presidents of Major Jewish American Organizations*) կազմակերպության գործունեությունը (այսուհետև՝ Ժողով): 1950-ական թվականների կեսերին որպես «Նախագահների ակումբ» հիմնադրված այս կազմակերպությունը 1959 թվականից հանդես է գալիս ներկա անվանմամբ: Ժողովը միավորում է հրեական առավել ազդեցիկ հիսուներկու լոբբինգային կազմակերպու-

---

<sup>4</sup> Հրեական լոբբինգային կազմակերպությունների և արաբա-իսրայելական հակամարտության խնդրում դրանց դիրքորոշումների մանրամասն վերլուծությունը տես *Dan Flashler. Transforming America's Israel Lobby: the Limits of Its Power and the Potential for Change. Washington, 2009, PP. 62 – 75*: ԱՄՆ-ի հրեական համայնքի մասին մանրամասն տեղեկություններ կան «Ամերիկայի հրեական կոմիտեի» կողմից յուրաքանչյուր տարի հրատարակվող «Ամերիկայի հրեաների տարեգիրք» ժողովածուում: 1899–2007 թթ. հրատարակված հատորները թվայնացված են (<http://www.ajcarchives.org/main.php?GroupingId=40>):

<sup>5</sup> Այդ մասին ավելի հանգամանորեն տես *Isaiah L. Kenen. Israel's Defense Line: Her Friends and Foes in Washington. New York, 1981*: Կոմիտեի գործունեության մասին ավելի հանգամանորեն տես դրա պաշտոնական կայքէջը (<http://www.aipac.org>):

յուններ: Բոլոր որոշումներն ընդունվում են համաձայնության սկզբունքով, ընդ որում, Ժողովին անդամակցող բոլոր կազմակերպությունները, անկախ իրենց մարդկային կամ ֆինանսական ռեսուրսների չափից, ունեն հավասար ձայնի իրավունք<sup>6</sup>:

Հրեական լոբբինգային կազմակերպություններն իրականացնում են համայնքի և Իսրայելի Պետության առջև ծառայած հիմնախնդիրների տարբերակման քաղաքականություն՝ հենվելով առկա առաջնահերթությունների վրա: Լոբբիի ներսում ձևավորելով մրցակցային միջավայր և տարբեր տեսակետների ազատ քննարկում՝ «Նախագահների ժողովի» ուշադրությանն են ներկայացվում առավել կարևոր հիմնախնդիրները, որոնց լուծմանն է ուղղվում հրեական լոբբիի ամբողջ ներուժը:

Նշենք, որ եթե ԱԻՀՀԿ հիմնական առաքելությունը ԱՄՆ-ի Կոնգրեսում լոբբինգն է, ապա Ժողովի նպատակը հրեական շահերը ներկայացնելն է ԱՄՆ-ի գործադիր իշխանության մարմիններում՝ Սպիտակ տանը, Պետքարտուղարությունում և այլ հաստատություններում:

### **Հրեական լոբբիի հիմնական գործիքարանը**

**Հանրային քննարկումների վերահսկում:** Հրեական լոբբիի գործունեության կարևոր ուղղություններից մեկը ԱՄՆ-ում արաբա-իսրայելական հակամարտության և ընդհանրապես Իսրայելին առնչվող հանրային քննարկումների և պատկերացումների ձևավորման գործընթացի նկատմամբ վերահսկողություն իրականացնելն է: Այդ խնդրի լուծման նպատակով լոբբին օգտագործում է մի շարք գործիքներ:

ա) *ՁԼՄ-ներ:* Ամերիկյան ՁԼՄ-ներով իսրայելամետ տեղեկատվությունը տոկոսային առումով բացարձակ կերպով գերակշռում է չեզոք կամ Իսրայելի հասցեին քննադատություն պարունակող տեղեկատվությանը: Այստեղ, իհարկե, դեր է խաղում այն հանգամանքը, որ մի շարք խոշոր ՁԼՄ-ների սեփականատերերը հրեաներ են և ուղղակիորեն ներգրավված են լոբբինգային գործունեության մեջ (կարելի է հիշատակել Մորտիմեր Յուկերմանին՝ «ԱՄՆ-ի նորություններ և միջազգային զեկույց» (*US News and World Report*) պարբերականի սեփականատիրոջը, Մարտին Պերեցին՝ 1975–2007 թթ. «Նոր հանրապետությունը» (*The New Republic*) պարբերականի սեփականատիրոջը և ուրիշների):

---

<sup>6</sup> Կազմակերպության մասին ավելի հանգամանորեն տես դրա պաշտոնական կայքէջը (<http://www.conferenceofpresidents.org/>):

Սակայն սխալ կլիներ ստեղծված իրավիճակը բացատրել միայն այդ հանգամանքով: Իսրայելական լոբբին ստեղծել է ՉԼՄ-ների գործունեությանը հետևող մի շարք կազմակերպություններ, որոնք ամերիկյան հիմնական ՉԼՄ-ներով Իսրայելի հասցեին ուղղված յուրաքանչյուր քննադատության պատասխանում են բողոքի ակտիվ գործողություններով: Այդ կազմակերպություններից անհրաժեշտ է հիշատակել «Ամերիկայում Մերձավոր Արևելքի վերաբերյալ ճշգրիտ տեղեկատվության կոմիտեն» (*Committee for Accuracy in Middle East Reporting in America*), հայտնի է նաև «Ընդդեմ զրպարտության լիգան» (*Anti-defamation league*):

Ամերիկյան ՉԼՄ-ներում իսրայելամետ քարոզչության խնդրում զգալի դեր ունեն նաև Իսրայելի պետական կառույցները, որոնք գործում են լոբբիի հետ սերտ համագործակցությամբ: Դեռ 1983 թ. Իսրայելում գործարկվեց «Հաշբարա» (եբրայերեն՝ «բացատրություն») ծրագիրը՝ օտարերկրյա ՉԼՄ-ներում իսրայելամետ քարոզչություն իրականացնելու նպատակով: Ծրագրի շրջանակներում Իսրայելի դեսպանությունների և հյուպատոսությունների՝ հանրության հետ կապերի գծով պատասխանատուները ամենօրյա աշխատանք են տանում տարբեր երկրների առավել ազդեցիկ ՉԼՄ-ների և անհատ լրագրողների հետ<sup>7</sup>:

Հրեական լոբբին ակտիվորեն օգտագործում է նաև ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների հնարավորությունները: Մեծ թվով հրեա բլոգերներ ապահովում են համացանցում իսրայելամետ դիրքորոշումների գերակայությունը: Լոբբինգային կազմակերպություններն ակտիվորեն օգտագործում են նաև սոցիալական ամենատարբեր ցանցերի (*Facebook, Myspace, Twitter*) հնարավորությունները՝ համացանցի միջոցով տեղեկույթ տարածելու, ինչպես նաև ցանցերի՝ ծագումով ոչ հրեա անդամներին ուղղված քիրախային քարոզչություն իրականացնելու նպատակով: Կարևոր նշանակություն ունի նաև լոբբինգային կազմակերպությունների անդամներին ընդգրկող ներքին ցանցերի ստեղծումը: Դրանցով իրականացվում է լոբբինգային տարբեր գործընթացների արդյունավետ կառավարում:

թ) «Մտքի կենտրոններ»: Ամերիկյան հանրային քննարկումների նկատմամբ վերահսկողություն հաստատելու նպատակով հրեական լոբբիի գործունեության հաջորդ ուղղությունը «մտքի կենտրոնների» նկատմամբ մշակված հատուկ մոտեցումն է: Պետական քաղաքականության և

---

<sup>7</sup> Տես «Media Education Foundation, Peace, Propaganda, and the Promised Land: US Media and the Israeli-Palestinian Conflict», 2003 (<http://www.mediaed.org/cgi-bin/commerce.cgi?preadd=action&key=117>):



հանրային, առաջին հերթին՝ փորձագիտական, քննարկումների վրա ոչ պետական «մտքի կենտրոնների» ազդեցության տեսակետից ԱՄՆ-ը տարբերվում է այլ պետություններից: Այստեղ «մտքի կենտրոններն» զգալի դեր են խաղում, և հրեական լոբբին հմտորեն օգտագործում է այդ հանգամանքը: Ընդ որում, այս գործունեությունն իրականացվում է երկու ուղղություններով: Առաջինը հրեական շրջանների կողմից Մերձավոր Արևելքի հիմնախնդիրներով զբաղվող «մտքի կենտրոնների» ստեղծումն է: Դրանցից կարելի է հիշատակել «Ազգային անվտանգության խնդիրների հրեական ինստիտուտը» (*JINSA*), «Մերձավորարևելյան համաժողովը» (*MEF*) և «Մերձավորարևելյան քաղաքականության վաշինգտոնյան ինստիտուտը» (*WINEP*): Վերջինս 1985 թ. հիմնադրել են ԱԻՀՀԿ նախկին նախագահ Լարի ՈՒԵյնբերգը և ԱԻՀՀԿ հետազոտությունների գծով փոխսնտրոն Մարտին Ինդիկը<sup>8</sup>:

Միևնույն ժամանակ, հրեական լոբբին չի բավարարվում նոր «մտքի կենտրոնների» ստեղծմամբ: Արդեն գործող ազդեցիկ «մտքի կենտրոններում» ֆինանսական նվիրատվությունների միջոցով ստեղծվում են Մերձավոր Արևելքի հիմնախնդիրներով զբաղվող կենտրոններ, որոնց վերլուծությունները հիմնականում աչքի են ընկնում բացահայտ իսրայելամետությամբ: Նման գործունեության վառ օրինակ է Բրուկլինգս հաստատությունում (*Brookings Institution*) 2002 թ. «Մերձավոր Արևելքի քաղաքականության Սաբան կենտրոնի» հիմնումը 13 միլիոն դոլար դրամաշնորհի միջոցով, որի հիմնական մասը տրամադրել է հրեա գործարար Հայիմ Սաբանը<sup>9</sup>:

զ) *Ակադեմիական շրջաններ*: Իսրայելի վերաբերյալ հանրային քննարկումների նկատմամբ վերահսկողության հաստատման գործում հրեական լոբբին զգալի ուշադրություն է հատկացնում ակադեմիական շրջաններին, ընդ որում՝ թե՛ դասախոսական, թե՛ ուսանողական հատվածներին: Ամերիկյան համալսարաններում սովորող ամենատարբեր ազգերի ուսանողներին արաբա-իսրայելական հակամարտության վերաբերյալ Իսրայելի դիրքորոշումը ներկայացնելու նպատակով ազդեցիկ լոբբինգային կառույցները կազմակերպում են առավել ակտիվ ուսանողների համար նախատեսված հասուկ դասընթացներ: Լոբբինգային կազմակերպությունների կողմից լրիվ ֆինանսավորվող դասընթացի մասնակիցներին ներկայացվում

<sup>8</sup> Stu Mark H. Milstein. Washington Institute for Near East Policy: an AIPAC «Image Problem». «Washington Report on Middle East Affairs», July, 1991 (<http://www.wrmea.com/component/content/article/132-1991-july/1738-washington-institute-for-near-east-policy-an-aipac-qimage-problemq.html>):

<sup>9</sup> Stu Andrew Ross Sorkin. Schleppling to Moguldom. «New York Times», September 5, 2004 ([http://www.nytimes.com/2004/09/05/business/yourmoney/05sab.html?\\_r=1](http://www.nytimes.com/2004/09/05/business/yourmoney/05sab.html?_r=1)):

է արաբա-իսրայելական հակամարտության պատմությունը, ուսանողական հանրակացարաններում բաժանելու և ուսանողության շրջանում իսրայելամետ դիրքորոշում ձևավորելու նպատակով տրվում են համապատասխան ուղղվածությամբ զանազան քարոզչական նյութեր: Այդ գործունեության համակարգման համար ստեղծվել են առանձին կառույցներ, այդ թվում՝ «Իսրայելը համալսարանական դաշինքում» (*Israel on Campus Coalition*) և «Քարավան հանուն ժողովրդավարության» (*Caravan for Democracy*) կազմակերպությունները:

ԱՄՆ-ի հրեական լոբբին զգալի ուշադրություն է դարձնում նաև ԱՄՆ-ի համալսարաններում դասավանդող և/կամ հրավիրվող դասախոսների դիրքորոշմանը Իսրայելի նկատմամբ՝ տարբեր միջոցներով փորձելով հնարավորին եզրահանել (մարզինալացնել) քննադատաբար տրամադրված դասախոսներին: Նրանց վերաբերյալ տեղեկություններ ստանալու նպատակով 2002 թ. հիմնադրվել է «Համալսարանական դիտարկում» (*Campus Watch*) կազմակերպությունը: Դրա ինտերնետային կայքը բոլոր ուսանողներին կոչ է անում տեղեկություններ տրամադրելու Իսրայելի հանդեպ բացասաբար տրամադրված դասախոսների վերաբերյալ<sup>10</sup>: Լոբբիում եղած գործարարների դրամաշնորհների միջոցով ամերիկյան մի շարք համալսարաններում (Նյու Յորքի, Բերկլիի և այլ համալսարաններ) վերջին տարիներին բացվել են «իսրայելական հետազոտությունների կենտրոններ», որոնց նպատակն է ակադեմիական շրջաններում իսրայելամետ դիրքորոշման տարածումը:

Հրեական լոբբին խոչընդոտում է նաև Իսրայելի նկատմամբ քննադատաբար տրամադրված դասախոսներին աշխատանքի ընդունելուն<sup>11</sup>:

դ) *Կարգախոս-կարծրատիպերի ձևավորում*: Հանրային քննարկման վերահսկման նպատակով օգտագործվող մեթոդներից է նաև ՉԼՄ-ների միջոցով ԱՄՆ-ի իսրայելամետ դիրքորոշման և Իսրայելի կողմից իրականացվող ցանկացած գործողության արդարացմանն ուղղված կարգախոս-կարծրատիպերի ձևավորումն ու ամերիկյան հանրային գիտակցության մեջ դրանց արմատավորումը: Այդ կարծրատիպերից կարելի է հիշատակել «Իսրայելը ԱՄՆ-ի հավատարիմ դաշնակիցն է ահաբեկչության դեմ պայքարում», «Իսրայելը Մերձավոր Արևելքի միակ իրապես ժողովրդավարական պետությունն է», «Իսրայելին ցուցաբերվող աջակցությունը նախկի-

<sup>10</sup> Կազմակերպության մասին ավելի հանգամանորեն տես դրա պաշտոնական կայքէջը (<http://www.campus-watch.org>):

<sup>11</sup> Կոնկրետ օրինակներից մեկը տես *Philip Weiss*. Burning Cole. «The Nation», June 16, 2006 (<http://www.thenation.com/doc/20060703/weiss>):

նում հրեաների դեմ իրականացված ոճիրների փոխհատուցում է» և այլ կարգախոսները: Դրանց միջոցով լոբբին կարողանում է արդյունավետ կերպով կառավարել ամերիկյան հանրային գիտակցությունը:

*ե) Վերահսկվող քննադատություն:* Հանրային քննարկման վերահսկմանն ուղղված գործիքարանում կարևոր դեր է վերապահված նաև լոբբինգային կազմակերպությունների կողմից ուղղորդվող հակախորայելական, հակասեմական քարոզչությանը: Նման հրապարակումների միջոցով հրեական համայնքի ներսում անընդհատ պահպանվում է վտանգի զգացումը, ինչը նպաստում է համայնքային մակարդակում համախմբվածությանը և լոբբինգային կազմակերպությունների համար թե՛ մարդկային, թե՛ նյութական նոր ռեսուրսների ձեռքբերմանը: Ռիդդորդվող քննադատության միջոցով ապահովելով հրեական համայնքի հետաքրքրությունների շրջանակում գտնվող հարցերի վերաբերյալ կարծիքների բազմազանության պատրանքը՝ լոբբինգային կազմակերպությունները ակտիվ պայքար են մղում հրեության հանդեպ քննադատաբար տրամադրված և իրենց վերահսկողությունից դուրս գտնվող շրջանների դեմ: Հաճախ այս գործընթացում հրեական լոբբին օգտագործում է «հակասեմականության» գործունը՝ Իսրայելի դեմ ուղղված ցանկացած քննադատություն ներկայացնելով որպես հակասեմականության նորոշյա դրսևորում, մի մեղադրանք, որը լուրջ գործիք է հրեական լոբբիի ձեռքում՝ Իսրայելի դեմ ուղղված ցանկացած քննադատություն լռեցնելու համար:

*զ) Չանգվածային մշակույթի օգտագործում:* Արդյունավետ մեխանիզմներից է նաև հրեամետ քարոզչության նպատակով զանգվածային մշակույթի, առաջին հերթին՝ կինոարտադրության օգտագործումը: Հոլիվուդյան խոշոր կինոընկերությունների բացարձակ մեծամասնության դեկավարները ծագումով հրեաներ են (2008 թ. դեկտեմբերի դրությամբ՝ Ֆոքս Նյուզ ընկերության նախագահ Փիտեր Չեռնինը, Փարամաունտ փիլիչերսի նախագահ Բրեդ Գրեյը, ՌԻՈՅ Դինսեյի գլխավոր գործադիր տնօրեն Ռոբերտ Իգորը, Մոնի փիլիչերսի նախագահ Մայքլ Լինթոնը, ՌԻՌՈՆԵր Բրազերսի նախագահ Բերի Մեյերը, ՍիԲիԷս-ի գլխավոր գործադիր տնօրեն Լեսլի Մունվետը, ԷմՋիԷմ-ի նախագահ Հերրի Սլոանը, ԷնԲիՍի/Յունիվերսալ ընկերության գլխավոր գործադիր տնօրեն Ջեֆ Ցուկերը և ուրիշներ): Ծագումով հրեաներ են նաև մեծ թվով նշանավոր դերասաններ ու ռեժիսորներ<sup>12</sup>: Ամերիկյան արտադրության ֆիլմերում քարոզվում է արաբ ահաբեկիչների կերպարը, իսկ հրեա հերոսները բացա-

<sup>12</sup> Stu Texe Marrs. Do the Jews own Hollywood and the media (<http://www.rense.com/general85/ownh.htm>):

ռապես դրական կերպարներ են, որոնք ահաբեկչության կամ համատարած հակասեմականության զոհեր են: Ամերիկյան կինոարտադրությունն զգալի ուշադրություն է դարձնում նաև Ռոջակիզման թեմային՝ նկարահանելով ինչպես խաղարկային, այնպես էլ վավերագրական ֆիլմեր:

**Հրեական լոբբինգի համակարգում կրթության գործոնը:** Կրթությունը հույժ կարևոր դեր ունի ԱՄՆ-ի հրեական համայնքի ազգային ինքնության պահպանման, ինչպես նաև լոբբիի կայուն վերարտադրման տեսանկյունից: Հրեական լոբբին հավասարաչափ ուշադրություն է դարձնում թե՛ միջնակարգ, թե՛ բարձրագույն կրթությանը:

ԱՄՆ-ում գործում է ամենօրյա հրեական դպրոցների մի սովոր ցանց, որն ապահովում է երբայերենին ազատ տիրապետող, ազգայնական դաստիարակություն ստացած հրեաների նոր սերնդի ձևավորումը: Դպրոցական կրթությանը հատկացվող ուշադրության վկայություն է նաև դպրոցների և դրանցում ընդգրկված աշակերտների քանակական աճը: Եթե 1999 թ. ԱՄՆ-ի հրեական ամենօրյա դպրոցներում աշակերտների թիվը 185.000 էր, ապա 2004 թ. այն կազմում էր 205.000, նույն ժամանակահատվածում դպրոցների թիվը 679-ից հասել է 759-ի<sup>13</sup>:

ԱՄՆ-ում գործող հրեական դպրոցներն զգալի ֆինանսական օժանդակություն են ստանում հրեական կազմակերպություններից: 2006 թ. փետրվարին Ման Ֆրանցիսկոյում գործող «Ջիմ Ջոզեֆ» հիմնադրամը պաշտոնապես հայտարարեց հրեական դպրոցներին տարեկան 25 միլիոն դոլար տրամադրելու որոշման մասին: Նույն թվականի մարտին «Ավի Չայ» հիմնադրամը հայտարարեց 159 հրեական ամենօրյա դպրոցներին 26 միլիոն դոլար տրամադրելու որոշման մասին<sup>14</sup>:

Հրեական լոբբին զգալի ուշադրություն է դարձնում նաև բարձրագույն կրթության համակարգին: Անընդհատ հետևելով ինչպես ԱՄՆ-ի, այնպես էլ Իսրայելի և վերջինիս դաշնակից ու թշնամի պետությունների հասարակական զարգացման դինամիկային՝ լոբբինգային կազմակերպությունները հաշվարկում են թե՛ ԱՄՆ-ի հրեական համայնքի, թե՛ Իսրայելի Պետության համար միջնաժամկետ և երկարաժամկետ կտրվածքով տարբեր մասնագիտությունների գծով մասնագետների անհրաժեշտ թվաքանակը և կրթաթոշակների ընդգրկում ցանցի միջոցով ապահովում են անհրաժեշտ թվով հրեա ուսանողների ընդունելությունը առավել հեղինակավոր համալսարաններ:

<sup>13</sup> Stu *Marvin Schick*. A Census of Jewish Day Schools in the United States. 2003 – 2004, January, 2005, P. 1:

<sup>14</sup> Stu «American Jewish Yearbook», 2007, PP. 120 – 121 ([http://www.ajcarchives.org/AJC\\_DATA/Files/AJYB707.CV.pdf](http://www.ajcarchives.org/AJC_DATA/Files/AJYB707.CV.pdf)):

Կրթության ոլորտում հրեական լոբբինգային կազմակերպությունների գործունեությունը բավականաչափ արդյունավետ է, ինչի վկայությունն են ստորև բերվող տվյալները:

Ուսման տարիների միջին քանակով հրեաները գերազանցում են ԱՄՆ-ի այլ էթնիկական խմբերին (աղ. 1):

Աղյուսակ 1<sup>15</sup>

Տարիներ	Էթնիկական խումբ
15.7	հրեաներ
14.9	ասիացիներ
13.9	բրիտանացիներ
13.8	սկանդինավներ
13.7	լեհեր
13.5	արևելաեվրոպացիներ
13.5	խաղաղացիներ
13.5	խաղաղացիներ
13.3	գերմանացիներ
13.1	ֆրանսիացիներ
12.9	այլ սպիտակամորթներ
12.4	սևամորթներ
12.4	խաղաղամտներ
12.2	բնիկ ամերիկացիներ (կարծրամորթներ)

Նույն պատկերն է նաև բնակչության ընդհանուր թվից բարձրագույն կրթություն ստացածների տոկոսային հարաբերակցության համար (աղ. 2).

Աղյուսակ 2<sup>16</sup>

Տոկոս	Էթնիկական խումբ
61.2	հրեաներ
49.8	ասիացիներ
32.1	բրիտանացիներ
28.4	սկանդինավներ
27.4	լեհեր
26.2	խաղաղացիներ
25.8	գերմանացիներ
25.1	խաղաղացիներ
20.5	ֆրանսիացիներ
20.3	այլ սպիտակամորթներ
14.0	խաղաղամտներ
11.5	սևամորթներ
8.3	բնիկ ամերիկացիներ
23.1	միջին

<sup>15</sup> Stu Tom W. Smith. Jewish Distinctiveness in America. «A statistical portrait», 2005, P. 66 ([http://www.jewishdatabank.org/Reports/AJC\\_JewishDistinctivenessAmerica\\_TS\\_April2005.pdf](http://www.jewishdatabank.org/Reports/AJC_JewishDistinctivenessAmerica_TS_April2005.pdf)):

ԱՄՆ-ում հրեական կրթության մասին տես նաև Jack Wertheimer. Linking the Silos: How to Accelerate the Momentum in Jewish Education Today. December, 2005 ([http://www.avi-chai.org/Static/Binaries/Publications/Linking%20The%20Silos\\_0.pdf](http://www.avi-chai.org/Static/Binaries/Publications/Linking%20The%20Silos_0.pdf)):

<sup>16</sup> Տես Թոմ Ու. Սմիթ, Նշ. աշխ.:

**Հրեական լոբբինգի համակարգում կրոնի գործոնը:** Կրոնը էական դեր է կատարում ԱՄՆ-ի հրեության ազգային ինքնության պահպանման, ինչպես նաև կարևորագույն հարցերով հրեության համախմբման համար: 2001 թ. «Միացյալ հրեական համայնքներ» կազմակերպության կողմից ԱՄՆ-ում անցկացված հրեաների մարդահամարում անձին հրեա համարելու առաջնահերթ բաղկացուցիչ է նշվում կրոնական պատկանելությունը<sup>17</sup>: Վերջին տարիներին ԱՄՆ-ի հրեաների շրջանում նկատվում է կրոնի դերի աճման միտում: Եթե նշված մարդահամարի համաձայն՝ ԱՄՆ-ի հրեաների միայն 40 %-ն էր այցելում սինագոգներ (3 %-ը վերակառուցողական, 21 %-ը ուղղափառ, 33 %-ը պահպանողական, 39 %-ը բարեփոխական և 4 %-ը՝ այլ), ապա 2008 թ. «Փյու» հետազոտական կենտրոնի կողմից ԱՄՆ-ում անցկացված հետազոտության համաձայն՝ սինագոգ է հաճախում ԱՄՆ-ի հրեաների 55 %-ը<sup>18</sup>: Կրոնական գործոնը էական դեր է խաղում ԱՄՆ-ի հրեա համայնքի ներուժը հրեության համար կենսական նշանակություն ունեցող հարցերի լուծմանն ուղղելու տեսանկյունից: Այս հանգամանքը հաշվի առնելով՝ լոբբինգային կազմակերպություններն ակտիվ գործունեություն են վարում առաջին հերթին հրեա երեխաներին և դեռահասներին կրոնական դաստիարակություն տալու ուղղությամբ:

**Լոբբինգն ԱՄՆ-ի Կոնգրեսում:** ԱՄՆ-ի հրեական լոբբինգի արդյունավետության հիմնասյունը Կոնգրեսում ունեցած նրա ազդեցությունն է: Դրա նախադրյալները կարելի է բաժանել մի քանի խմբի. 1. ազգությամբ հրեա սենատորների և կոնգրեսականների մեծ թիվը, 2. հրեական լոբբիի ֆինանսական հնարավորությունները, 3. այլ էթնիկական խմբերի համեմատությամբ հրեաների բարձր մակարդակի քաղաքական ակտիվությունը, 4. հրեական լոբբիի կողմից գործադրվող յուրահատուկ մեթոդները:

Կոնգրեսում հրեական լոբբիի ազդեցության կարևոր հիմքերից մեկը ազգությամբ հրեա սենատորների ու կոնգրեսականների առկայությունն է: 2006 թ. Կոնգրեսի ընտրություններից հետո ԱՄՆ-ի 100 սենատորներից 13-ը և Ներկայացուցիչների պալատի 435 անդամներից 30-ը հրեաներ էին, ինչը

---

<sup>17</sup> Stu «National Jewish Population Survey 2000 – 2001», A United Jewish Communities, PowerPoint Presentations of Findings, 2001 (<http://www.jewishfederations.org/page.aspx?id=33650>):

<sup>18</sup> Stu Steven M. Cohen and Lauren Blitzer. *Belonging Without Believing, Jews and their Distinctive Patterns of Religiosity and Secularity*, 2008, P. 3 ([http://www.jewishdatabank.org/Archive/N-Pew-2007-Report\\_Belonging\\_Without\\_Believing\\_Cohen\\_2008.pdf](http://www.jewishdatabank.org/Archive/N-Pew-2007-Report_Belonging_Without_Believing_Cohen_2008.pdf)):

բավականաչափ մեծ թիվ է, եթե հաշվի առնենք, որ հրեաները կազմում են ԱՄՆ-ի ընդհանուր բնակչության ընդամենը 2 %-ը<sup>19</sup>:

Ինչպես ցանկացած լոբբինգային գործունեության, այնպես էլ Կոնգրեսում հրեական լոբբիի հաջողության կարևոր նախապայմաններից մեկը այդ կազմակերպությունների տնօրինած ֆինանսական միջոցներն են:

Հրեական լոբբինգային կազմակերպությունները տիրապետում են զգալի ֆինանսական միջոցների, որոնք ակտիվորեն օգտագործվում են իսրայելամետ դիրքորոշում ունեցող սենատորների և կոնգրեսականների ընտրարշավներին աջակցելու նպատակով<sup>20</sup>:

Ֆինանսական միջոցների ճիշտ բաշխում կատարելու մեխանիզմների մասին հստակ պատկերացում է տալիս ԱԻՀՀԿ աջակիցներին դրա նախագահ Հովարդ Ֆրիդմանի 2006 թ. հուլիսի 30-ին ուղղված նամակը: Ֆրիդմանը նշում է, որ Կոնգրեսի յուրաքանչյուր ընտրարշավի ընթացքում ԱԻՀՀԿ-ն հանդիպումներ է կազմակերպում բոլոր թեկնածուների հետ: Վերջիններիս առաջարկվում է լրացնել Իսրայելին առնչվող խնդիրների վերաբերյալ հարցաթերթիկ, որտեղ բերված պատասխանները հստակ պատկերացում են տալիս թեկնածուների դիրքորոշումների մասին<sup>21</sup>:

ԱՄՆ-ի Կոնգրեսում ազդեցիկ լոբբինգային գործունեության համար հրեական լոբբին և, մասնավորապես, ԱԻՀՀԿ-ն հաջողությամբ օգտագործում են «թույլ օղակին պատժելու» քաղաքականությունը: Հրեական լոբբիի

---

<sup>19</sup> Տես *Amiram Barkat*. Number of Jewish parliamentarians worldwide reaches high. «Haaretz», November 9, 2006 (<http://www.haaretz.com/hasen/spages/785629.html>):

<sup>20</sup> Հրեական լոբբիի ֆինանսական ներդրումների վերաբերյալ առավել մանրամասն տեղեկություններ է տալիս «Պատասխանատու քաղաքականության կենտրոն» կազմակերպության ինտերնետային կայքը (<http://www.opensecrets.org>), որտեղ «Ընտրական դաշնային հանձնաժողովի» տվյալների հիման վրա մանրամասն տեղեկություններ են հրապարակվում յուրաքանչյուր սենատորի և կոնգրեսականի նախընտրական հիմնադրամներին կատարված վճարումների մասին: Կենտրոնի տեղեկությունների համաձայն՝ հրեական լոբբին 2004 թ. Կոնգրեսի ընտրությունների ժամանակ ավելի շատ գումարներ տրամադրած հիսուն լոբբինգային կառույցների ցանկում զբաղեցրել է 40-րդ հորիզոնականը (տես «Top Industries Giving to Members of Congress, 2004 Cycle» (<http://www.opensecrets.org/industries/mems.php?party=A&cycle=2004>)), 2006 թ. ընտրությունների ժամանակ՝ 26-րդ հորիզոնականը (տես «Top Industries Giving to Members of Congress, 2006 Cycle» (<http://www.opensecrets.org/industries/mems.php?party=A&cycle=2006>)), իսկ 2008 թ.՝ 33-րդ հորիզոնականը (տես «Top Industries Giving to Members of Congress, 2008 Cycle» (<http://www.opensecrets.org/industries/mems.php?party=A&cycle=2008>)):

<sup>21</sup> Տես *John Walsh*. AIPAC Congratulates Itself on the Slaughter in Lebanon (<http://www.counterpunch.org/walsh08162006.html>):

ներկայացրած առաջարկություններին դեմ հանդես եկած կոնգրեսականների թվից ընտրվում են այն կոնգրեսականները, որոնք, անկախ Իսրայելի նկատմամբ իրենց վերաբերմունքից, վերընտրման հետ կապված լուրջ խնդիրներ ունեն: Այնուհետև այդ կոնգրեսականների վերընտրման դեմ պայքարը դառնում է լոբբիի գլխավոր խնդիրը: Օգտագործելով իր ազդեցության տակ գտնվող ՋԼՄ-ները՝ լոբբին ձեռնարկում է իսկական քարոզարշավ, որի հիմնական նպատակն է համոզել ամերիկյան հանրությանը, որ նշված կոնգրեսականները հրեական լոբբիի կողմից պատժվում են իրենց դիրքորոշումների համար, և որ նույն ճակատագիրն է սպասում ցանկացած այլ օրենսդրի, որը կհամարձակվի դեմ լինել հրեական լոբբիի աջակցությունը վայելող առաջարկություններին:

ԱՄՆ-ի Կոնգրեսում հրեական լոբբիի ազդեցության աճմանը նպաստող գործոնների թվում է նաև ԱՄՆ-ի՝ ծագումով հրեա քաղաքացիների շրջանում շատ ավելի բարձր քաղաքական ակտիվությունը էթնիկական այլ խմբերի համեմատությամբ: ԱՄՆ-ի շուրջ վեց ու կես միլիոն հրեաները<sup>22</sup> հիմնականում կենտրոնացած են տասներկու մահանգներում և, քաղաքական բարձր ակտիվության պայմաններում այս մահանգներում, նրանք զգալի ազդեցություն են ունենում ընտրությունների արդյունքների վրա:

Կոնգրեսում հրեական լոբբիի ազդեցության աճմանը նպաստում է նաև կոնգրեսականների համար Իսրայել անվճար ուղևորությունների կազմակերպումը «Ամերիկա-իսրայելական կրթական հիմնադրամի» կողմից (*American Israel Education Foundation*): ԱՄՆ-ի սենատորների և Ներկայացուցիչների պալատի անդամների արտերկիր կատարվող բոլոր ուղևորությունների մոտ 10 %-ը բաժին է ընկնում Իսրայելին, ինչը շատ բարձր ցուցանիշ է<sup>23</sup>:

**Լոբբինգը գործադիր իշխանության մարմիններում:** Հրեական լոբբին իր ուշադրության կենտրոնում է պահում նաև գործադիր իշխանության մարմիններին: ԱՄՆ-ի նախագահները պակաս զգայուն են հրեական լոբբիի ճնշումների նկատմամբ, սակայն այդ ազդեցությունը նկատելի է: Ինչպես և Կոնգրեսի պարագայում, այստեղ ևս լոբբիի ազդեցության գործիքների թվում կարևոր տեղ են զբաղեցնում թեկնածուների նախընտրական հիմնադրամներին կատարվող հանգանակությունները: Ընդ որում, լոբբին ակտիվորեն ֆինանսավորում է թե՛ դեմոկրատական, թե՛ հանրա-

---

<sup>22</sup> Ըստ «Ամերիկայի հրեաների տարեգիրք-2008» ժողովածուի՝ ԱՄՆ-ում հրեաների ճշգրիտ թիվը 2008 թ. վերջին կազմել է 6.489.110 (տես «American Jewish Yearbook», 2008, P. 156 (<http://www.jewishdatabank.org/AJYB/AJY-2008.pdf>)):

<sup>23</sup> Տես *Ջոն Զ. Մերշայմեր, Սյոնիան Մ. Վոլք*, Նշ. աշխ., էջ 161:



պետական կուսակցությունների թեկնածուներին: Նախագահ Քարտերի խորհրդական Համիլտոն Ջորդանի՝ Քարտերին ուղղված գաղտնի մամուլում նշվում է, որ 1968 թ. նախագահական ընտրություններում դեմոկրատական կուսակցության թեկնածու Համֆրիին տրամադրված գումարների ավելի քան 75 %-ի «աղբյուրը» հրեաներն էին, 1972 թ. նախագահական ընտրարշավի ժամանակ հանրապետական Նիքսոնին տրամադրված գումարների ավելի քան 60 %-ի «աղբյուրը» նույնպես հրեաներն էին<sup>24</sup>: Արդեն 2000-ական թվականներին, տարբեր գնահատումների համաձայն, հրեական ծագմամբ դոնորների տրամադրած գումարները կազմում էին դեմոկրատական կուսակցության ստացած միջոցների առնվազն կեսը<sup>25</sup>:

Նախագահական ընտրություններում հրեական լոբբիի ազդեցության մյուս կարևոր գործիքը հրեական համեմատաբար մեծաքիվ ընտրողների առկայությունն է ընտրություններում վճռորոշ դեր ունեցող մահանգներում՝ Կալիֆոռնիայում, Նյու Յորքում, Նյու Ջերսիում, Փենսիլվանիայում: Նրանք ի գործու են զգալի ազդեցություն գործելու այդ մահանգներում ընտրությունների արդյունքների վրա ինչպես ընտրությունների մախնական (*primaries*) փուլում, այնպես էլ բուն ընտրությունների ժամանակ:

Հրեական լոբբին ակտիվորեն աշխատում է նաև գործող նախագահների հետ: Այս փուլում լոբբիի առավել ազդեցիկ գործիքներից մեկը լոբբիի համակրանքը վայելող թեկնածուների նշանակումն է նախագահի աշխատակազմի կարևոր պաշտոններում: Նման պաշտոնյաներ կային և՛ Բիլ Զլինտոնի, և՛ Ջորջ Բուշի, և՛ այժմ՝ Բարակ Օբամայի վարչակազմերում: Արդեն հիշատակված Մարտին Ինդիկը Զլինտոնի օրոք նախ ընդգրկվել էր Ազգային անվտանգության խորհրդի աշխատակազմում, ապա կարևոր պաշտոն էր զբաղեցնում պետքարտուղարությունում 1997–2000 թթ.<sup>26</sup>: Հրեական լոբբիի ակտիվ ներկայացուցիչ Դենիս Ռոսն զբաղեցնում էր Մերձավոր Արևելքում Զլինտոնի հատուկ բանագնացի պաշտոնը:

Հրեական լոբբին զգալի ներկայացվածություն ուներ նաև կրտսեր Ջորջ Բուշի վարչակազմում՝ հանձինս նեոպահպանողական ուղղության մի շարք ազդեցիկ ներկայացուցիչների՝ Ջոն Բոլտոնի (2001–2005 թթ. փոխպետքարտուղար, 2005–2006 թթ. ԱՄՆ-ի ներկայացուցիչ ՄԱԿ-ում), Փոլ Բ.

<sup>24</sup> Տես նույն տեղում, էջ 407:

<sup>25</sup> Տես *E. J. Kessler*. Ancient Woes Resurfacing As Dean Eyes Top Dem Post. «Forward», January 28, 2005 (<http://www.forward.com/articles/4203/>):

<sup>26</sup> Տես «Martin Indyk». «JEWISH VIRTUAL LIBRARY» (<http://www.jewishvirtuallibrary.org/jsource/biography/Indyk.html>):

Վոլֆովիցի (2001–2005 թթ. ԱՄՆ-ի պաշտպանության փոխնախարար, 2005–2007 թթ. Համաշխարհային բանկի նախագահ) և ուրիշների:

Հրեական լոբբիի ներկայացուցիչներ կան նաև Բարակ Օբամայի վարչակազմում: Նրա աշխատակազմի ղեկավարը՝ հրեական ծագում ունեցող Ռահմ Էմանուելը, Պարսից ծոցի առաջին պատերազմի ժամանակ կամավոր ծառայել է իսրայելական բանակում<sup>27</sup>: Դենիս Ռոսը Իրանի նկատմամբ Օբամայի վարչակազմի նոր քաղաքականության հիմնադրույթների մշակման խմբի ղեկավարն էր<sup>28</sup>:

Հրեական լոբբին ակտիվորեն խոչընդոտում է նաև նախագահական աշխատակազմում ենթադրաբար ոչ իսրայելամետ դիրքորոշում ունեցող պաշտոնյաների նշանակմանը: Այսպես. Հարվարդի համալսարանի դասախոս Ռիչարդ Մարիուսը 1995 թ. նշանակվեց փոխնախագահ Ալբերտ Գորի գլխավոր ռեֆերենտ, սակայն շատ չանցած հրեական լոբբիի ակտիվ ջանքերով ազատվեց աշխատանքից՝ հակասեմականության մեջ մեղադրանքով<sup>29</sup>:

**Իսրայելը և ԱՄՆ-ի հրեական լոբբին:** ԱՄՆ-ի հրեական լոբբինգի կարևորագույն խնդիրը Իսրայելի ռազմավարական անվտանգային շահերի առաջնորդումն է ԱՄՆ-ում: Այդ նպատակով օգտագործվում է մեթոդների մի ամբողջ համախումբ: Այս գործընթացում լոբբին սերտ հարաբերությունների մեջ է Իսրայելի Պետության հետ: Իսրայելի Պետության ստեղծումը համաշխարհային հրեության գործունեության արդյունք է: Հրեական սփյուռքը անմիջական մասնակցություն է ունեցել Իսրայելի Պետության ստեղծման, իսկ 1948 թ. հետո՝ հզորացման և անվտանգության ապահովման գործում: Այս հանգամանքն ազդեցություն է գործում Իսրայելի Պետության և Հրեական սփյուռքի, այդ թվում՝ ԱՄՆ-ի հրեական համայնքի միջև հարաբերությունների վրա:

Այդ հարաբերություններում կարելի է առանձնացնել երկու փուլ. 1948–1967 թթ. ԱՄՆ-ի հրեական համայնքի մեծամասնության համար Իսրայելը

---

<sup>27</sup> Stu Massimo Calabresi. Bibi and Barack: Can They Bridge the Gap. May 27, 2010 (<http://www.time.com/time/printout/0,8816,1992200,00.html>):

<sup>28</sup> Stu Massimo Calabresi. The Final Countdown. «Time Europe», Vol. 173, № 24, June 15, 2009, PP. 20–23:

<sup>29</sup> Stu Lloyd Grove. The Outspoken Speechwriter: Gore Reverses Hiring Decision After Review Critical of Israel. «Washington Post», July 19, 1995 (<http://pqasb.pqarchiver.com/washingtonpost/access/18606526.html?FMT=ABS&FMFS=AB:FT&date=Jul+19%2C+1995&author=Lloyd+Grove&desc=The+Outspoken+Speechwriter%3B+Gore+Reverses+Hiring+Decision+After+Review+Critical+of+Israel>):

կատարում էր հրեաների ապաստանի դեր, որն ի վիճակի էր ապահովելու նրանց ֆիզիկական գոյությունը ևս մեկ Հիտլերի երևան գալու պարագայում: ԱՄՆ-ի հրեության շրջանում Իսրայելի ընկալումը կտրուկ փոխվեց 1967 թ. պատերազմից հետո: Իսրայելը ոչնչացման վտանգի առջև կանգնած հրեաների ապաստանից վերածվեց հպարտության և հրեական ինքնության պահպանման կարևոր գործոնի: Իսրայելի հաջողություններն զգալի դեր խաղացին ԱՄՆ-ի հրեական համայնքի համախմբման գործում, ինչն իր հերթին նպաստեց հրեական լոբբիի աստիճանական հզորացմանը:

Մինևույն ժամանակ, ԱՄՆ-ում հրեության ազդեցության աճումը որոշակի հարված էր հասցնում «Բոլոր հրեաները պետք է բնակվեն Իսրայելում» գաղափարախոսությանը: Վերջինիս համաձայն՝ հրեաներին վտանգ էր սպառնում աշխարհի ցանկացած պետությունում, և միայն Իսրայելն էր ապահովում նրանց անվտանգությունը: Սակայն ԱՄՆ-ի հրեական համայնքի հաջողությունները հերքում էին այդ կարծիքը: Պատահական չէ, որ 1948–1988 թթ. շուրջ 400.000 հրեաներ Իսրայելից արտագաղթեցին ԱՄՆ՝ մշտական կամ ժամանակավոր բնակության, մինչդեռ նույն ժամանակահատվածում ԱՄՆ-ից Իսրայել մշտական բնակության մեկնած հրեաների թիվը ընդամենը 50.000 էր<sup>30</sup>:

ԱՄՆ-ի հրեական լոբբին և Իսրայելն զգում են միմյանց կարիքը: ԱՄՆ-ում ազդեցիկ լոբբիի առկայությունը ԱՄՆ-ի արտաքին քաղաքական օրակարգում Իսրայելի ռազմավարական անվտանգային շահերի առաջնորդման կարևոր գործիք է: Իր հերթին Իսրայելի Պետության գոյությունը էական դերակատարում ունի հրեական համայնքի ազգային ինքնագիտակցության պահպանման և լոբբիի վերարտադրության հաջող կազմակերպման համար: Շահերի այս համընկնումն զգալիորեն նպաստում է Իսրայելի Պետության ու հրեական լոբբիի միջև երկխոսության և ամուր փոխգործության հաստատմանը: Իսրայելի Պետության ղեկավարները մշտապես մասնակցում են ազդեցիկ լոբբինգային կազմակերպությունների տարեկան համաժողովներին՝ ներկայացնելով Իսրայելի տեսակետը հրեության առջև ծառայած մարտահրավերները հաղթահարելու վերաբերյալ: Կարևոր հարցերում ԱՄՆ-ի հրեական լոբբին և Իսրայելի Պետությունը գրեթե միշտ հանդես են գալիս միասնական դիրքորոշմամբ:

*Լոբբիի առջև ծառայած խնդիրները:* ԱՄՆ-ի հրեական լոբբին կանգնած է մի շարք լուրջ մարտահրավերների առջև: Դրանցից ամենակարևորը ԱՄՆ-ի հրեա բնակչության մի հատվածի շրջանում Իսրայելի և հրեության

<sup>30</sup> Stu Thomas L. Friedman. From Beirut to Jerusalem. New York, 1998, PP. 451–466:

հետ հոգևոր կապի աստիճանական նվազումն է: ԱՄՆ-ի լոբբինգային կազմակերպությունները հսկայական միջոցներ են տրամադրում հրեաների ազգային ինքնության պահպանման համար: Սակայն ԱՄՆ-ի հրեական համայնքը ևս գերծ չէ աստիճանական ձուլման վտանգից: Այսպես. եթե 2002 թ. անցկացված հարցումների համաձայն ԱՄՆ-ի հրեաների 31 %-ն էր նշել Իսրայելի հետ հոգևոր սերտ կապի առկայությունը, ապա 2005 թ. անցկացված հարցումների համաձայն՝ նույն հարցին դրական պատասխան էր տվել հարցվածների միայն 26 %-ը<sup>31</sup>: 2007 թ. նոյեմբերին «Ամերիկյան հրեական կոմիտեի» անցկացրած հարցումների համաձայն՝ ԱՄՆ-ի հրեաների համար 2008 թ. նախագահական ընտրություններում առավել կարևոր խնդիրների թվում էին տնտեսության վիճակը (23 %), առողջապահական համակարգը (19 %), Իրաքի պատերազմը (16 %), ահաբեկչությանն ու անվտանգությանն առնչվող հարցերը (14 %): Հարցվածների միայն 6 %-ն էր որպես նախագահական ընտրությունների առավել կարևոր հիմնախնդիր նշել Իսրայելի անվտանգությունը<sup>32</sup>:

ԱՄՆ-ի հրեական համայնքում նկատվող ձուլման գործընթացի կասեցումը լոբբինգային կազմակերպությունների հույժ կարևոր մարտահրավերների թվում է: Բացի կրթության, կրոնի, հակասեմականության գործոնի օգտագործումից, կարևոր նշանակություն է տրվում ԱՄՆ-ի հրեական համայնքի կենսագործունեության բոլոր ոլորտներն ընդգրկող տեղեկագրերի կազմմանը: Այդ ուսումնասիրությունների շնորհիվ հրեական համայնքի վերնախավը տիրապետում է համայնքի կյանքի տարբեր ոլորտներում արձանագրվող դինամիկային՝ ամուսնություններ, խառնամուսնություններ, հրեական դպրոցների, սինագոգների հաճախում, գործազրկություն և այլն<sup>33</sup>:

---

<sup>31</sup> Stu Steven M. Cohen. Poll: Attachment of U.S. Jews to Israel Falls in Past 2 Years Loving the Homeland. «Forward», March 4, 2005 (<http://www.forward.com/articles/3018/>):

<sup>32</sup> Stu Jennifer Siegel. Clinton, Giuliani Top Survey of Jewish Voters. «Forward», December 12, 2007 (<http://www.forward.com/articles/12257/>):

<sup>33</sup> Նմանատիպ ամբողջական տեղեկատվություն է առկա «Ամերիկայի հրեական կոմիտեի» կողմից հրապարակվող «Ամերիկայի հրեաների տարեգիրք» ամենամյա ժողովածուում: ԱՄՆ-ի հրեական համայնքի կենսագործունեության տարբեր ոլորտներ ընդգրկող ուսումնասիրություններ է իրականացնում նաև Քոնեքթիքուսի համալսարանի «Հրեականության և ժամանակակից հրեական կյանքի ուսումնասիրությունների կենտրոնի» կազմում գործող «Մամուլի Բերմանի ինստիտուտը» (<http://www.jewishdatabank.org>):

## **Եզրահանգումներ**

ԱՄՆ-ի հրեական լոբբին բազմաշերտ, տարբեր խնդիրներ ու նպատակներ ունեցող հարյուրավոր կազմակերպությունների համախումբ է: Այն չունի միակուռ կառուցվածք և չի ղեկավարվում մեկ կենտրոնի կողմից: Մինևոյն ժամանակ, լոբբին, օգտագործելով «Կազմակերպությունների կազմակերպության»՝ Նախագահների ժողովի ձևաչափը, կարողանում է առավել կարևոր հարցերի շուրջ մշակել և ԱՄՆ-ի ղեկավար շրջաններին ներկայանալ միասնական դիրքորոշմամբ: Կիրառելով բազմաբնույթ գործիքաբան՝ լոբբին հիմնականում կարողանում է լուծել Իսրայելի ռազմավարական անվտանգային շահերի առաջնդման խնդիրը՝ զգալի ազդեցություն ունենալով ԱՄՆ-ի Մերձավորարևելյան քաղաքականության մշակման և իրականացման վրա: Հարկ է շեշտել, որ հրեական լոբբին գործում է ԱՄՆ-ի օրենսդրության շրջանակներում՝ հմտորեն օգտագործելով բոլոր հնարավորությունները:

Ակնհայտ է, որ ԱՄՆ-ի հայկական լոբբին միանշանակորեն զիջում է հրեականին ֆինանսական ու մարդկային ռեսուրսների և կազմակերպական առումներով: Սակայն նույնիսկ սահմանափակ ռեսուրսների առկայության պայմաններում հայկական լոբբին կարող է հաջողությամբ կիրառել հրեական փորձի որոշակի տարրեր՝ նպաստելով իր գործունեության արդյունավետության մակարդակի բարձրացմանը:

ՀՐԵԱԿԱՆ ԼՈՐԲԻՆԳԻ ԵՎ «ՄՏՔԻ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻ»  
ՆԵՐՈՒԺԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՓՈՐՁԻ ԻՄԱՍՏԱՎՈՐՈՒՄԸ  
ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՀԱՅՈՒԹՅԱՆ ՇԱՀԵՐԻ  
ՏԵՄԱՆԿՅՈՒՆՆԻՑ

(ԹՈՒՐԹ-ՀՐԵԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿՈՎ)

Ա. Գ. ԱՎԱԳՅԱՆ, ՀՀ ՊՆ ԱՌՀԻ-ի գիտնական-վերլուծաբան,  
պատմական գիտությունների դոկտոր



**Ներածություն**

Թուրքիա – Իսրայել հարաբերություններում հրեական լոբբինգի զբաղեցրած տեղի և դերի ճիշտ գնահատման համար անհրաժեշտ է հաշվի առնել երկու հանգամանք, որոնք իրենց ազդեցությունն են ունեցել թուրք-իսրայելական անվտանգային համագործակցության ձևավորման և բնույթի վրա: *Առաջին*. Թուրքիան, հատկապես՝ երիտթուրքերի կառավարման օրոք (1908–1918 թթ.), իր քաղաքականությամբ բարենպաստ պայմաններ է ստեղծել տարածաշրջանում Իսրայելի Պետության կազմավորման համար: *Երկրորդ*. արաբական աշխարհի հետ Իսրայելի հարաբերությունների և Մերձավոր Արևելքում ստեղծված ուժերի հարաբերակցության հաշվառմամբ՝ Իսրայելի անվտանգային համակարգի ձևավորման տեսակետից Թուրքիայի հետ համագործակցությունն ունի կարևոր նշանակություն: Իր հերթին Թուրքիան ազգային անվտանգության և արտաքին քաղաքականության մի շարք կարևոր ուղղությունների իրականացման համար հրեական լոբբինգային կազմակերպությունների աջակցության կարիքն ունի: Թեև երկու կողմերի շահերը համընկնում են, սակայն վերջին տարիներին, հատկապես՝ Թուրքիայում իսլամամետ ուժերի իշխանության գալուց հետո, հաճախացել են պնդումները, թե իրականում Իսրայելը ավելի մեծ կարիք ունի Թուրքիայի աջակցության, և Իսրայելի հետ հարաբերությունները ոչ միայն վնասում են Թուրքիայի շահերին մահմեդական աշխարհում, այլև՝ ընդհանրապես «Թուրքիայի ամբողջ մերձավորարևելյան քաղաքականությունը ԱՄՆ-ի և Իսրայելի գրավի տակ է»<sup>1</sup>: Մյուս կողմից՝ Իսրայելի հիմնադրման

<sup>1</sup> Halil Şimşek. Türkiye'nin Ulusal Güvenlik Stratejisi. İstanbul, 2002, S. 242.

օրվանից այդ երկրի տարածաշրջանային քաղաքականության հիմնական սյուներից մեկը եղել է Մերձավոր Արևելքում ոչ արաբական երկրների հետ համագործակցությունը, ինչն իր արտացոլումն է ստացել այսպես կոչված «Բեն-Գուրիոնի դոկտրինում»: Մինչև 1979 թ. այն իրականացվում էր Իրանի և Թուրքիայի հետ, իսկ 1979 թ. Իրանում տեղի ունեցած իսլամական հեղափոխությունից հետո՝ թուրք-խորայելական ռազմավարական համագործակցության միջոցով:

Չուտ տարածաշրջանային համագործակցության տեսակետից Իսրայելի և Թուրքիայի միջև համագործակցությունն ավելի շատ բխում է Իսրայելի շահերից, քան հակառակը: Սակայն համաշխարհային համատեքստում դիտարկելու դեպքում պատկերը փոխվում է, և դրանում զգալի դեր ունեն հրեական լոբբինգային կազմակերպությունները՝ հանդես գալով որպես մի յուրահատուկ զսպիչ գործոն, որն ապահովում է թուրք-խորայելական ռազմավարական համագործակցությունում հավասարակշռությունը չխախտվի հոգուտ Թուրքիայի: Ստեղծվել է մի իրավիճակ, երբ Մերձավոր Արևելքում Իսրայելի համար Թուրքիայի ռազմավարական կարևորությունը համակշռվում է աշխարհում և հատկապես ԱՄՆ-ում հրեական լոբբիի դիրքերով և Թուրքիայի ազգային շահերի իրականացման գործում հրեական լոբբինգային կազմակերպությունների վերապահված դերակատարությամբ:

ՈՒշագրավ է, որ Թուրքիայի իշխանությունները հրեական լոբբինգային կազմակերպությունների հետ կապը հիմնականում պահպանում են Ստամբուլի հրեական համայնքի առաջնորդների կամ ազդեցիկ դեմքերի միջոցով, թեև եղել են առանձին դեպքեր, երբ այն իրականացվել է կրոնափոխ հրեաների՝ դյոնմենների միջոցով: Հրեական համայնքի միջոցով հրեական լոբբինգային կազմակերպությունների հետ կապի պահպանումը կարելի է դիտել որպես ապացույց, որ այս հարցում ևս թելադրող կողմ են հրեական կազմակերպությունները, որոնք գերադասում են միջնորդի դերում տեսնել ազգակիցներին:

**Թուրք-խորայելական համագործակցության պայմանական հիմքերը:** Թուրքիան քարոզչական նպատակով միշտ օգտագործում է Օսմանյան կայսրության հանդուրժողականության վերաբերյալ պնդումները՝ որպես ապացույց առաջին հերթին նշելով, որ Իսպանիայից 1492 թ. հրեաների արտաքսումից հետո միայն Օսմանյան կայսրությունն էր, որ նրանց ապաստան տվեց: Բացի այդ, տարբեր տարիների Օսմանյան կայսրությունը ապաստան է տվել Եվրոպայից ու Ռուսաստանից արտաքսված հրեաներին: Դրա հետ մեկտեղ, մինչև 1908 թ. երիտթուրքական հեղաշրջումը թուրքական իշխանությունները հրաժարվում էին արտոնել հրեաների զանգվա-

ծային գաղթը Երուսաղեմ և Պաղեստին, որի մասին երագում էին սիոնիստները\* : Սուլթան Աբդուլ Համիդ 2-րդի կողմից Թեոդոր Հերցլի առաջարկությունների մերժումից հետո սիոնիստական կազմակերպությունը Պաղեստին հրեաների գաղթը ապահովելու, այնտեղ հողեր գնելու ու բնակավայրեր հիմնելու և այդ ճանապարհով հրեական պետություն ստեղծելու նպատակով սկսեց համագործակցել երիտթուրքերի հետ և սատարել երիտթուրքական շարժմանը, հատկապես, որ մի շարք ազդեցիկ երիտթուրքեր հրեական ծագում ունեին (ինչպես, օրինակ, Էմանուել Քարասոն\*\*, Մեհմեդ Ջավիդը\*\*\*, Նեսիմի Ռուսոն\*\*\*\*), կամ էլ կրոնափոխ հրեաներ էին (դոկտոր Նազիմը\*\*\*\*\*, Նեսիմ Մազլիյահը և ուրիշներ)։ Ինչպես նշում է թուրք-հրեական հարաբերությունների և Պաղեստինի խնդրի թուրք մասնագետ Միմ Քեմալ Օքեն, «Սիոնիստների ամենամեծ ձեռքբերումը Էմանուել Քարասոն էր... Որպեսզի կարողանան Պաղեստինում ինքնավար հրեական հայրենիք ստեղծել, անհրաժեշտ էր նախևառաջ ազդել «Միություն և առաջադիմություն» կուսակցության վրա, իսկ այնուհետև՝ նրա միջոցով կառավարության վրա։ Այդ

---

\* Օսմանյան կայսրության 1867 թ. «Հողային օրենքի» (*Arazi Kanunnamesi*) համաձայն՝ օտարահպատակներին տրվում էին կայսրության տարածքում հողային սեփականություն ունենալու այն նույն իրավունքները, որոնք ունեին կայսրության հպատակները։ Սակայն սիոնիստական շարժման ի հայտ գալուց հետո 1883 թ. մարտի 5-ին հրապարակվեց նոր օրենք, որի համաձայն Պաղեստինում հող կարող էին գնել միայն օսմանահպատակ հրեաները։ Դա սիոնիստների համար լուրջ արգելք չդարձավ, քանի որ նրանք, համաձայնության գալով օսմանահպատակ հրեաների հետ, նրանց անվան տակ հողեր էին գնում Պաղեստինում։ Գնահատելով իրադրությունը՝ թուրքական կառավարությունը 1892 թ. օրենքով արգելեց բոլոր հրեաներին հողային սեփականություն ձեռք բերել Երուսաղեմում և Պաղեստինում։ Սակայն նույնիսկ այս պայմաններում սիոնիստական կազմակերպությունները կարողացան ապահովել հրեաների գաղթն ու բնակեցումը Պաղեստինում։ Օրինակ՝ Աբդուլ Համիդ 2-րդի կառավարման օրոք (1876–1909 թթ.) Պաղեստին էր տեղափոխվել 80.000 հրեա, սիոնիստները գնել էին 40.000 դյունում հող և հիմնել 33 բնակավայր (տես *Mim Kemal Öke. Sıyonizm'den Uygurliklar Çatışmasına Filistin Sorunu. İstanbul, 2002, SS. 79–81*):

\*\* «Միություն և առաջադիմություն» կուսակցության ազդեցիկ անդամ, 1908–1918 թթ. Օսմանյան խորհրդարանի պատգամավոր, Մալմեիկում գործող «Մակեդոնիա Ռիզորտա» մատական օբյակի մեծ վարպետ։

\*\*\* Երիտթուրքական կառավարության ֆինանսների նախարար։

\*\*\*\* «Միություն և առաջադիմություն» կուսակցության անդամ։

\*\*\*\*\* «Միություն և առաջադիմություն» կուսակցության հիմնադիրներից, ԿԿ անդամ, կուսակցության ամենաազդեցիկ ղեկավարներից, 1915 թ. Հայոց Ցեղասպանության ծրագրի ճարտարապետներից մեկը (դոկտոր Բեհաեդդին Շաքիրի հետ)։



նպատակով Ռուսոն և Մազլիյահը բանակցեցին Ահմեդ Ռիզայի\*, Էնվերի, Թալեաթի և Նազիմի հետ: «Միություն և առաջադիմություն» կուսակցության ծանր հրետանին համարվող տվյալ անձինք այն կարծիքի էին, որ երկրի համար հրեաների ներգաղթը դրական ազդեցություն կունենա»<sup>2</sup>:

Երիտթուրքական կառավարության բարեհաճ վերաբերմունքը և ընդունված օրենքները հնարավորություն տվեցին ապահովելու հրեաների զանգվածային գաղթը Պաղեստին: «Միություն և առաջադիմություն» կուսակցության ղեկավարներից մեկը՝ Օսմանյան խորհրդարանի խոսնակ Ահմեդ Ռիզան, հրեաներին հռչակեց որպես «պետության բարեկամներ» (*devletin dostu*)<sup>3</sup>: Երուսաղեմի և Պաղեստինի տեղական իշխանությունները, երիտթուրքական կառավարության կարգադրությամբ, արաբների հավանական հարձակումները կանխելու նպատակով հրեա գաղթականներին տվեցին զենք կրելու իրավունք<sup>4</sup>: Միոնիստներին երիտթուրքական կառավարության աջակցությունը այնպիսի չափերի էր հասել, որ ընդդիմությունը հանդես էր գալիս «կորչեն իթթիհատական-հրեաները» կոչերով, իսկ եվրոպական մամուլը գրում էր իթթիհատա-հրեա-մաստնական դաշնակցության մասին\*\*։ «Միություն և առաջադիմություն» կուսակցության կառավարման տարիներին սիոնիստական կազմակերպությունները իրականացրեցին իրենց նպատակները՝ ապահովելով պետության կողմից աջակցված և պաշտպանված ներգաղթ, հողային սեփականության ձեռքբերում և հրեական բնակավայրերի հիմնում:

---

\* «Միություն և առաջադիմություն» կուսակցության հիմնադիրներից, Օսմանյան խորհրդարանի նախագահ:

<sup>2</sup> Միմ Քանալ Օփ, Նշ. աշխ., էջ 107–108:

<sup>3</sup> Տես *Gülnehal Bozkurt*. Alman-İngiliz Belgelerinin ve Siyasi Gelişmelerin İşığı Altında Gayrimüslim Osmanlı Vatandaşlarının Hukukî Durumu (1839 – 1914). Ankara, 1989, S. 202:

<sup>4</sup> Տես նույն տեղում:

\*\* Նույն մեղադրանքներն ու պնդումներն են նաև Օսմանյան կայսրությունում պաշտոնավարած եվրոպացի դիվանագետների զեկույցներում: Այսպես. Ստամբուլում Ռուսաստանի ռազմական կցորդը 1909 թ. հոկտեմբերի 16-ի իր զեկույցագրում նշում էր. «Անցյալ տարի տեղի ունեցած հեղափոխությունից անմիջապես հետո գրված իմ զեկույցում ես նշել եմ ամբողջ հեղափոխական շարժման և նրա գլխավոր գործիչ Կոմիտեի ֆրանկմասոնա-հրեական ծագման մասին: Հուսեյն Ջավիդը հրեա է, ֆինանսների նախարար Ջավիդը նույնպես, Սարոնիկի մահմեդական-հրեաները՝ «ոյոնմեները», առաջատար դեր են խաղում երկրի քաղաքական կյանքում և երկրի գաղտնի կառավարիչներն են: Դրանում դժվար է սխալվել» (տես Российский Государственный Военно-исторический архив, ф. 2000, ГУГШ, оп. 1, д. 1020, с. 45):

Երիտթուրքերը նաև առաջինն էին, որ քաջ գիտակցում էին հրեական համայնքների և միասնականության հնարավորությունները: Միրիայի փոխարքա, Օսմանյան կայսրության ռազմածովային նախարար Ջենալ փաշայի քարտուղար Ֆալիհ Ռիֆքը Աթայը իր հուշերում պատմում է, որ առաջին համաշխարհային պատերազմի տարիներին սովը կանխելու նպատակով կարիք է եղել Յաֆայում բնակվող հրեաներին ժամանակավորապես տեղափոխելու Համայի և Հումուսի շրջաններ: «Ջենալ փաշան իր մոտ է հրավիրել սիոնիստական կազմակերպությունների ղեկավարներին և ասել. «Երկուսից մեկը: Կամ ձեզ հայերի պես կտեղահանեն: Տները, այգիներն ու պարտեզները թողնելով՝ ոտքով կզնաք հացահատիկով լի շրջան: Կամ էլ ձեր կողմից ընտրված պահակներին կկանգնեցնեն հսկելու ձեր տները, այգիներն ու պարտեզները, ժանդարմներին ու զինվորներին էլ հրաման կտամ: Մեկ նարինջ պոկողին մահապատժի կենթարկեն: Ձեզ էլ գնացքով կտեղափոխեն: Սակայն այս երկրորդ տարբերակի համար վաղն առավոտյան Վիեննայի և Բեռլինի բոլոր թերթերը պետք է ձայները կարեն»:

Հրեաները գնացին հրամանատարության փոստատուն: Երկու տողով երկու մեծ քաղաքը, ինչպես նաև Լոնդոնն ու Փարիզը լռեցրեցին»<sup>5</sup>:

Իսրայելի Պետության ստեղծումից հետո Թուրքիայի հետ հարաբերություններն ստացան ռազմավարական բնույթ:

Այսպիսով՝ կարելի է եզրակացնել, որ թուրք-իսրայելական ռազմավարական համագործակցությունն ունի ամուր արմատներ և, հիմնված լինելով փոխադարձ շահերի վրա, դրսևորում է զարգացման ու խորացման միտումներ, թեև վերջին շրջանում նրանց հարաբերություններում արտաքուստ նկատվում է որոշակի լարվածություն:

Թուրքիայում գերակշռում է այն տեսակետը, որ թուրք-իսրայելական համագործակցությունը հիմնականում հետևանք է աշխարհում և հատկապես ԱՄՆ-ում հրեական լոբբինգային կազմակերպությունների օժանդակության: Այսպես, գեներալ, քաղաքագիտության դոկտոր Հալիլ Շիմշեքը իր «Թուրքիայի ազգային անվտանգության ռազմավարությունը» աշխատության մեջ հետևյալ կերպ է ներկայացնում իսրայելա-թուրքական հարաբերությունները և Թուրքիայի համար հրեական լոբբիի կարևորությունը. «Թուրքիայի մերձեցումը Իսրայելի հետ հավասարակշռություն ապահովեց ԱՄՆ-ում հայկական և հունական ազդեցիկ լոբբիների դեմ. վերջիններիս գործունեության շնորհիվ արգելք դրվեց Թուրքիային ռազմական տեխնո-

---

<sup>5</sup> Falih Rifki Atay. Zeytindağı. İstanbul, 1981, S. 62.

լոգիաներ վաճառելու վրա: Հրեական լոբբին Թուրքիային ապահովեց այդ տեխնոլոգիաները Իսրայելից գնելու հնարավորությունը: Մերձավոր Արևելքում միայնակ Իսրայելը իրեն օժանդակող ուժ գտավ: Թուրքիան ԵՄ-ից օտարման դիմաց իր համար կարևոր դաշնակից ձեռք բերեց»<sup>6</sup>:

Վերլուծությունը ցույց է տալիս, թե հատկապես ո՞ր բնագավառներում Թուրքիան ունի մասնավորապես ԱՄՆ-ում գործող հրեական լոբբինգային կազմակերպությունների աջակցության կարիքը.

1. Կոնգրեսում և Մենատում Հայոց Ցեղասպանության ճանաչման կանխում,

2. 1974 թ. Կիպրոսյան դեպքերից հետո մի շարք ռազմական տեխնոլոգիաներ Թուրքիային վաճառելու արգելքի շրջանցում,

3. աջակցություն Թուրքիայի տնտեսական նախագծերի իրականացմանը:

Որպես հրեական լոբբինգային կազմակերպությունների աջակցության երաշխիք դիտվում են Թուրքիայի կարևորությունը Իսրայելի համար և նրանց շահերի համընկնումը: Եթե տարածաշրջանային առումով Թուրքիան ավելի մեծ նշանակություն ունի Իսրայելի համար, քան վերջինս Թուրքիայի, ապա միջազգային, գլոբալ առումով դերերը փոխվում են, և ազգային անվտանգության և արտաքին քաղաքականության մի շարք հիմնահարցերի լուծման համար Թուրքիան հրեական լոբբինգային կազմակերպությունների աջակցության կարիքն ունի: Հրեական լոբբինգային կազմակերպությունների գործունեության շնորհիվ համաշխարհային մասշտաբով, հատկապես՝ գիտական մտքի և համաշխարհային հասարակական կարծիքում Թուրքիայի կերպարի ձևավորման հարցում, թուրք-իսրայելական համագործակցության հավասարակշռությունը խախտված է հօգուտ Իսրայելի:

Թուրքիայի նկատմամբ վարած քաղաքականության բնագավառում հրեական լոբբինգային կազմակերպությունների հիմնական գործիքարանը և այդ գործիքարանի օգտագործման արդյունավետությունը կարելի է ներկայացնել հետևյալ կերպ:

***Մրավոր ներուժն անկուսակցային ռեսուրսի վերածելու հրեական լոբբինգային կազմակերպությունների ռազմավարությունը:*** Հայոց Ցեղասպանության միջազգային ճանաչումը Հայաստանի ազգային անվտանգության և արտաքին քաղաքականության առանցքային խնդիրներից է: Այս հարցում հրեական լոբբինգային կազմակերպությունների և Թուրքիայի

<sup>6</sup> Հալիլ Շիմշեք, Նշ. աշխ., էջ 243:

շահերը համընկնում են, և հրեական կազմակերպությունների աջակցությամբ Թուրքիային հաջողվում է կանխել Հայոց Տեղասպանության ճանաչման բանաձևերի ընդունումը ԱՄՆ-ի Ներկայացուցիչների պալատում և Սենատում: Հրեական լոբբինգային կազմակերպությունների համար այս խնդիրը Թուրքիայի վրա ճնշում գործադրելու հիմնական և ամենաարդյունավետ գործիքներից մեկն է\*: Գիտակցելով այս հարցում հրեական լոբբինգային կազմակերպությունների դերի կարևորությունը՝ ԱՄՆ այցելող թուրք բարձրաստիճան քաղաքական գործիչները իրենց ծրագրերում մշտապես ներառում են հանդիպում Նյու Յորքի կամ Վաշինգտոնի ազդեցիկ հրեական կառույցների հետ: Այսպես, 2009 թ. Դավոսի տնտեսական գագաթնաժողովից հետո, երբ թուրք-խորալեական հարաբերություններում նկատվեց որոշակի լարվածություն, 2009 թ. սեպտեմբերին ԹՀ վարչապետ Ռ. Թայիի Էրդողանն այցելել էր նաև Նյու Յորքում գտնվող հրեական ազդեցիկ կազմակերպություններից մեկը և այնտեղ ելույթ ունեցել:

Միևնույն ժամանակ, վերլուծելով Հայաստանի համար կենսական նշանակություն ունեցող այս խնդրի նկատմամբ երկու կողմերի մոտեցումները, կարելի է նշել թուրքական և հրեական դիրքորոշումներում առկա տարբերությունը: Թուրքական կողմի մոտեցումն ավելի պրակտիկ է. օգտագործելով հրեական լոբբինգային կազմակերպությունների հնարավորությունները՝ կանխել հայանպաստ և հակաթուրքական որոշումների ընդունումը ԱՄՆ-ի օրենսդիր և գործադիր իշխանությունների օղակներում: Հրեական կազմակերպությունների մոտեցումն ավելի արմատական և հեռանկարային է. երկարատև դիմակայման համար անհրաժեշտ է տիրապետել նաև խնդրի էությանը և ներկայացման մեխանիզմին, այն է՝ տիրանալ գիտական մտքին և այդ ուղղությամբ հետազոտություններ կատարող հիմնական հեղինակավոր գիտական հաստատություններին: Տարիների ընթացքում հրեական լոբբինգային կազմակերպությունները վերահսկման մեխանիզմներ ստեղծեցին ԱՄՆ-ի՝ Օսմանյան կայսրության և Թուրքիայի ուսումնասիրությամբ զբաղվող առաջատար գիտական կենտրոնների նկատմամբ, ավելին՝ հրեա գիտնականները՝ Ստանֆորդ Շոուն, Բեռնարդ Լյուիսը, Հիթ

---

\* Գազալի հատվածում Իսրայելի կողմից ուժ կիրառելու ժամանակ Թուրքիան մեղադրեց Իսրայելին արաբների կոտորածներ կազմակերպելու մեջ: Ի պատասխան այդ մեղադրանքի՝ Իսրայելի և ԱՄՆ-ի առաջատար թերթերում լույս տեսան հոդվածներ, որոնցում նշվում էր, որ ցեղասպանություն և կոտորածներ իրականացրած պետությունը նման մեղադրանքներ ներկայացնելու որևէ բարոյական իրավունք չունի (տես «Türkiye ve İsrail arasında gerginlik» (<http://www.turksam.org/tr/basinda.htm>)):

Լոուրին, Գրեհեմ Ֆուլերը և ուրիշներ, Թուրքիայի պատմության, քաղաքականության, սոցիալ-տնտեսական հարաբերությունների հարցում դարձան առաջատար և համաշխարհային ճանաչում ունեցող հեղինակություններ: Ստանֆորդ Շոուն, Բեռնարդ Լյուիսը, Հիթ Լոուրին մեծ դեր խաղացին 70-80-ական թվականներին Հայոց Յեղասպանության թեզը «գիտականորեն հերքելու» գործում:

Վերջին տարիներին նկատվում է միջազգային զարգացումներով պայմանավորված նաև հակառակ միտումը՝ Հայոց Յեղասպանության ճանաչման գործում հրեա գիտնականներ Իսրայել Չառնի, Վիլյամ Շաբասի և Մայքլ Ստոունի ներդրման կարևորությունը: Այսինքն՝ գիտական ներուժին տիրապետելը և երկարատև ռազմավարություն մշակելը հնարավորություն են տալիս խուսափելու միակողմանի անարդյունավետ քաղաքականության մեջ ներքաշվելուց, վերահսկելու և ուղղորդելու նաև հակառակ զարգացումները: Ողջակիզումը աշխարհում միակ ցեղասպանությունը համարելու թեզի թուլացմամբ ստեղծվեց մի իրադրություն, երբ հրեական գիտական մտքի համար ավելի նախընտրելի է որպես ցեղասպանություն ընդունել Ողջակիզումից առաջ տեղի ունեցած ոճրագործությունը, քան հաջորդածը, ինչպիսիք են Կամբոջայի, Ռուանդայի կամ Դարֆուրի դեպքերը: Այդ իսկ պատճառով հրեա գիտնականների կողմից ավելի ակտիվ կերպով գիտական շրջանառության մեջ դրվեցին գերմանացիների կողմից աֆրիկյան գերերոցների, իսկ թուրքերի կողմից՝ հայերի և ասորիների նկատմամբ իրականացված ցեղասպանության փաստերը:

Գիտական մտքին տիրապետումը ոչ միայն ստեղծում է վերահսկման և ուղղորդման հնարավորություն, այլև հեռանկարային է: Առկա իրավիճակի հետևանք է նաև այն, որ հումանիտար բնագավառում թուրք գիտնականների մեծ մասը կրթություն է ստանում և մասնագիտանում առաջատար հրեա մասնագետների ղեկավարությամբ կամ գիտական հաստատություններում, որտեղ հրեական կազմակերպությունները մեծ կշիռ ունեն:

Այս համատեքստում հարկ է հիշատակել, որ Թուրքիայի Հանրապետության պաշտոնական գաղափարախոսության՝ քեմալականության, մշակման հարցում զգալի ներդրում ունեն հրեա գիտնականները՝ օրինակ՝ Թեքին Ալիբ (Մոիզ Քոհեն)<sup>7</sup>:

Այս համատեքստում համեմատելով սփյուռքում հայ գիտական կառույցների գործունեությունը՝ ակնհայտ է դառնում, որ այն հիմնականում միակողմանի է՝ ուղղված Հայոց Յեղասպանության գիտական ուսումնա-

---

<sup>7</sup> *Stu Tekinalp. Kemalizm. İstanbul, 1936:*

սիրության ու ճանաչման փաստի ընդունման կարևորությանը և սահմանափակվում է տարբեր համալսարաններում հայագիտական ամբիոններ բացելով: Ի տարբերություն հրեական գիտական կառույցներից, որոնք իրենց ուսումնասիրության ոլորտ ընտրում են ոչ թե Իսրայելը, այլ նվազագույնը Մերձավոր Արևելքը, հայ գիտական կառույցների գործունեությունն ավելի սահմանափակ, հիմնականում պրակտիկ բնույթ է կրում: Այս տեսակետից նրանց ավելի մոտ են վերջին տարիներին թուրք-ադրբեջանական կառույցների կողմից ստեղծվող «հայերի անհիմն պնդումների դեմ պայքարող» կազմակերպությունները: Մինչդեռ երկարատև արդյունավետ պայքարի տեսակետից կարևոր է բազմակողմանիորեն ուսումնասիրել և կրկնօրինակել մտավոր ներուժն անվտանգալին ռեսուրսի վերածելու հրեական լոբբինգալին կազմակերպությունների փորձը: Հատկապես, որ երկարատև ռազմավարության տեսակետից այդ ռեսուրսն ունի վերարտադրվելու ներուժ:

**Թուրքական աշխարհիկ, չափավոր իսլամական մոդելի քարոզչությունն ու Ֆեթուլահ Գյուլենի շարժումը:** ԽՍՀՄ փլուզումից հետո, երբ Միջին Ասիայում առաջացավ քաղաքական վակուում, վտանգ կար, որ այն կարող է լցվել Իրանի կողմից, որն այդ ժամանակ ակտիվորեն գործում էր իսլամական հեղափոխության արտահանման ուղղությամբ: Տվյալ պայմաններում Արևմուտքը որպես հակակշիռ դրան առաջ քաշեց և օժանդակեց Թուրքիային իր որդեգրած աշխարհիկ, չափավոր իսլամի մոդելի տարբերակի քարոզմանը: Հետագա տարիներին այդ մոդելը չկորցրեց իր գրավչությունը, սակայն ակնհայտ դարձավ, որ այն նույնպես ենթակա է որոշ փոփոխությունների, նույնիսկ՝ ավելի արմատականացման: Նման փորձ արեց Թուրքիայի իսլամամետ «Բարօրություն» կուսակցությունը: Աշխարհիկ իսլամի ավելի նորացված, «արևմտյան կրթություն – ժամանակակից իսլամական բարքեր» տարբերակը մշակվեց ԱՄՆ-ում, և դրանում զգալի տեղ են զբաղեցնում հրեական գիտական կառույցների ուսումնասիրություններն ու մշակումները:

Իշխանության հասնելու համար կրթական համակարգի կարևորությունը գիտակցում են նաև Թուրքիայում: Իսլամական գաղափարների և արևմտյան կրթական համակարգի համադրման յուրահատուկ և հաջող փորձ է ձեռնարկել նոր նուրսիների շարժման առաջնորդ Ֆեթուլահ Գյուլենը: 20-րդ դարի սկզբին Թուրքիայում քաղաքական խնդիրների լուծման տեսակետից կրթական համակարգի նշանակությունը կարևորող Սաիդ Նուրսի\* գաղափարների և հրեական կազմակերպությունների համատեղ

---

\* «Նուրսի», կամ «նուրջի», իսլամական ադանդավորական շարժման հիմնադիր:

գիտակրթական գործունեության հետևանք է Թուրքիայում լայն տարածում ստացած «նոր նուրջիականության», կամ առաջնորդի՝ Ֆեթուլահ Գյուլենի անունով կոչվող «ֆեթուլահիզմների» շարժումը<sup>8</sup>: Սաիդ Նուրսիի ներկայումս կենդանի վեց աշակերտներից մեկը՝ Մեհմեթ Ֆերիմջին, թուրքական «Չաման» օրաթերթին\*\* տված հարցազրույցում նշում է, որ դեռ հարյուր տարի առաջ Սաիդ Նուրսին քրդական հարցի լուծումը տեսնում էր Հարավարևելյան Անատոլիայի դպրոցներում արաբերեն, թուրքերեն ու քրդերեն դասավանդելու և Վանում, Բիթլիսում ու Դիարբեքիրում համալսարաններ բացելու ձևով<sup>9</sup>: Ֆեթուլահ Գյուլենին հաջողվեց ստեղծել մի շարժում, որի գաղափարախոսությունը կարելի է մեկնաբանել այսպես. «կրթության միջոցով ազդեցություն տարածել և իշխանություն ձեռք բերել»: Իսլամական շարժումների և համայնքների պատմության մասնագետ, դոկտոր Յուքսել Թաշքինի բնութագրմամբ՝ «Ակնհայտ է, որ Սաիդի և նրա հետևորդ «նոր նուրջիականության» Գյուլեն շարժման ամենամեծ կազմակերպական հաջողությունը հանրապետության հաստատություններում կրթություն ստացող նոր սերունդի վրա ազդել է»<sup>10</sup>: Ներկայումս աշխարհի տարբեր երկրներում գործում են Գյուլենի «կրթական կայսրության» մեջ մտնող հազարից ավելի դպրոցներ: «ԱՄՆ-ն այսօր» (*USA Today*) թերթի տվյալներով՝ ԱՄՆ-ի ամենալայն դպրոցական ցանցը նույնպես Գյուլենի դպրոցներն են. քսանհինգ մահանգներում՝ առնվազն մեկական դպրոց, որտեղ կրթություն է ստանում ընդհանուր առմամբ մոտ 35000 աշակերտ, և նրանց թիվը հետզհետե աճում է: Այդ դպրոցներում կրթություն ստանալու են մեկնում հազարավոր երիտասարդներ Թուրքիայից<sup>11</sup>: Գյուլենի շարժմանն է պատկանում Թուրքիայում կառավարող «Արդարություն և զարգացում» կուսակցության դեկավար կազմի մեծ մասը, այդ թվում՝ Նախագահ Արդուլահ Գյուլը: Գյուլենի հետ հարցազրույց անցկացրած ամերիկացի լրագրող Գրեգ Թոպոյի կարծիքով՝ «Թուրքիայում բանակից և ԱԶԿ կառավարությունից հետո Գյուլենի շարժումը երրորդ ուժն է»<sup>12</sup>: Մեծ արձագանք ունեցավ Էսկիշեհիր

<sup>8</sup> «Ֆեթուլահիզմների» շարժման մասին ավելի հանգամանորեն տես Վ. Տիր-Մաքխուսան, Իսլամը Թուրքիայի հասարակական-քաղաքական կյանքում: Ե., 2008, էջ 110 – 114:

\*\* «Չաման» օրաթերթը նույնպես ֆեթուլահականներինն է:

<sup>9</sup> Տես «Üstad: «Ekmeksiz kalırım ama hürriyetsiz asla» demişti». «Zaman», 02.08.2010:

<sup>10</sup> *Yüksel Taşkın*. Said-i Kürdi'den Said Nursi'ye. «Radikal Kitap», 20.08.2010.

<sup>11</sup> Տես «ABD'deki en büyük okul zinciri Gülen'e ait». «Milliyet», 18.08.2010:

<sup>12</sup> Նույն տեղում:

քաղաքի անվտանգության պետ Հանեֆի Ալզիհի՝ գյուլենական շարժմանը նվիրված «Ոսկե Եղջյուրում բնակվող Սիմոնները, Երեկ պետություն, այսօր՝ կրոնական համայնք» աշխատությունը, որը վերջերս լույս է տեսել Թուրքիայում: Հեղինակը բազմաթիվ փաստերի հիման վրա ապացուցում է, որ Գյուլենն իր ստեղծած կրթական համակարգի շրջանավարտների շնորհիվ տեղյակ է Թուրքիայի տարբեր կառույցներում, այդ թվում՝ անվտանգությունում, բանակում և արդարադատության համակարգում, տեղի ունեցող բոլոր զարգացումներին և դրանցում մեծ հեղինակություն է վայելում<sup>13</sup>: Թուրքական մամուլի գնահատմամբ՝ երկրում տիրող հիմնական «վախը» կարելի է բնութագրել «Ֆեթուլահականներն իրենց ձեռքն են վերցնում պետությունը» ձևակերպմամբ<sup>14</sup>: Ներկայումս Թուրքիայում քննարկվող համար մեկ թեման՝ գյուլենական շարժումը, համաշխարհային բնույթ ունի, և Գյուլենի կրթական հաստատություններում ձևավորվող «կրթված, արևմտյան գիտելիքներ և չափավոր, ոչ արմատական իսլամական հայացքներ ունեցող հաջողակ երիտասարդների սերունդը» նոր երևույթ է, որը, անշուշտ, կարևոր հակակշիռ է արմատական, արևմտյան արժեքները ժխտող իսլամականներին: Իսլամական շարժման մասնագետ դոկտոր Փոլ ՌԻԼ՝ յամսը Գյուլենին նույնիսկ անվանում է «աշխարհի ամենավտանգավոր իսլամականը»<sup>15</sup>:

Ֆեթուլահ Գյուլենի շարժման ձևավորման և գաղափարական հիմքերն արևմտյան չափանիշներին համապատասխանեցնելու գործում զգալի ներդրում ունեն հրեական կազմակերպությունները, որոնք էլ հիմնականում ֆինանսավորում են Գյուլենի «Կոսմոս» հիմնադրամը: Բավական է նշել, որ 2009 թ. Գյուլենի հիմնադրամը որպես նվիրատվություն ստացել է 41 570 721 ԱՄՆ-ի դոլար<sup>16</sup>: 2007 թ. միայն Բիլ Գեյտսը «Կոսմոս» հիմնադրամին փոխանցել է 10 550 000 ԱՄՆ-ի դոլար\*:

**Տարածաշրջանային զարգացումներ և քրդական հարց:** ԱՄՆ-ի և Իսրայելի շահերից է բխում տարածաշրջանում Իրանի դերի թուլացումը և իսլամի թուրքական մոդելի հակադրումը արմատական իրանական մոդելին:

<sup>13</sup> Տես «Avcı: Gülen, Emniyet ve askerdeki Örgütlenmeden haberdar». «Radikal», 26.08.2010:

<sup>14</sup> Տես *Oral Çalışlar*. «Fethullahçılık tehlikesi» ve hukuk... «Radikal», 29.08.2010:

<sup>15</sup> *Paul Williams*. Bill Gates Funds Gulen Islamist Movement (<http://www.turkishforum.com.tr/tr/content/2010/06/07/fetullah-gulen-new-ottoman-empire-a-servant-of-cia/>).

<sup>16</sup> Տես նույն տեղում:

\* Լուրեր են շրջանառում, թե Գյուլենի հիմնադրամի ֆինանսավորողների ու հովանավորների շարքում առաջին տեղերում գտնվում է ԱՀԳ-ն (տես նույն տեղում):



Պաղեստինի խնդրի վերաբերյալ Թուրքիայի կողմից Իսրայելի դեմ հնչեցված խիստ մեղադրանքներն ու հայտարարությունները, ինչպես նաև հարաբերությունների արտաքուստ վատթարացումը, ընդհանուր առմամբ, համընկնում են Իսրայելի և հրեական լոբբիի շահերի հետ: Թուրքիայի խիստ կեցվածքը հանգեցրել է այդ երկրի հեղինակության աճմանը Մերձավոր Արևելքի արաբական երկրներում, հատկապես՝ Լիբանանում և Սիրիայում:

Թուրք-իսրայելական հարաբերությունների համար մյուս կարևոր խնդիրը Հյուսիսային Իրաքում քրդական պետության ստեղծման հնարավորությունն է, ինչը Թուրքիայի ազգային անվտանգության համար առաջնահերթ սպառնալիքներից մեկն է: Տվյալ զարգացումները ավելի են ուժեղացնում թուրք քաղաքական շրջանների անհանգստությունը: Նրանք կասկածում են, որ ԱՄՆ-ն ու Իսրայելը դրականորեն են վերաբերվում տարածաշրջանում քրդական պետության ստեղծմանը, և հրեական լոբբինգային կազմակերպությունները կարող են որոշակի գործունեություն ծավալել՝ տարբեր երկրներում համապատասխան հասարակական կարծիք ձևավորելու նպատակով: ԱՄՆ-ի մի շարք գիտական հաստատություններում քրդական հարցին նվիրված գիտաժողովներն ու քննարկումները ավելի են խորացնում այդ կասկածները: ԱՄՆ-ի և Իսրայելի կողմից Իրաքի քրդերին զենք մատակարարելը, մի շարք եվրոպական երկրներում, որտեղ հրեական կազմակերպություններն ազդեցություն ունեն, ՔԲԿ-ն ահաբեկչական կազմակերպությունների ցանկում չընդգրկելը և դրա զինյալներին ապաստան տրամադրելը մի շարք թուրք իսլամամետ ու ազգայնական ուղղվածությամբ գործիչներին առիթ են տալիս պնդելու, որ ԱՄՆ-ն ու Իսրայելը երկակի խաղ են խաղում, և ԱՄՆ-ի հրեական լոբբինգային կազմակերպություններն սկսել են ակտիվ կերպով շահարկել քրդական խաղաքարտը՝ ի վնաս Թուրքիայի<sup>17</sup>:

Քրդական հարցն առնչվում է նաև Հայաստանի ազգային անվտանգությանը: Թուրքիայում կա կարծիք, որ Հայաստանի շահերից է բխում օգտագործել քրդական քարտը, և այդ համատեքստում ժամանակ առ ժամանակ հնչում են անհիմն մեղադրանքներ, թե Լեռնային Ղարաբաղում իբր գոյություն ունեն ՔԲԿ ճամբարներ, կամ թե ՔԲԿ զինյալների մի զգալի մասը թլպատված չէ, այսինքն՝ ծայայալ հայեր են<sup>18</sup>:

---

<sup>17</sup> Stü «İsrail'in Irak Kartı» (<http://www.harunyahya.net/V2/Lang/ru/Pg/WorkDetail/Number/7979>):

<sup>18</sup> Stü «Cemil Çiçek: PKK'da 'sünnetsiz terörist' var» (<http://www.haber7.com/haber/2010/0821/Cemil-Cicek-PKKda-sunnetsiz-terorist-var.php>):

**Ժողովրդավարություն, մարդու և ազգային փոքրամասնությունների իրավունքներ:** Տվյալ հարցերը քննարկելիս հրեական լոբբինգային կազմակերպություններն ունեն տարաշարժի մեծ դաշտ, եթե նկատի ունենանք Թուրքիայում ժողովրդավարության, զինվորականության և քաղաքացիական իշխանությունների միջև առկա լարվածությունը, ազգային փոքրամասնությունների իրավունքների ոտնահարման հանգամանքը: Դա նույնպես հրեական լոբբինգային կազմակերպությունների ամենաարդյունավետ գործիքներից մեկն է, քանի որ հնարավորություն է տալիս նման կարգի խնդիրները բարձրացնելու անտղակի կերպով՝ ԱՄՆ-ում գործող այլ հեղինակավոր կազմակերպությունների անունից: Թուրքիայի հակահարվածը կամ պաշտպանությունը արդյունավետ չէ այն պատճառով, որ ամեն անգամ հարձակման թիրախ են դառնում տարբեր ոլորտներ, իսկ հակափաստարկները, որպես կանոն, թույլ են:

Եթե հաշվի առնենք Թուրքիային ռազմատեխնիկական և տեխնիկական օգնություն տրամադրելու հարցում դրական վարկանիշների կարևորությունը, ապա ակնհայտ է դառնում, թե հրեական լոբբինգային կազմակերպությունները ճնշման ինչ միջոցի են տիրապետում:

**Թուրք-ադրբեջանական լոբբինգային կազմակերպությունների արեղծման քաղաքականությունը:** Հրեական լոբբինգային կազմակերպություններից թուրքերի աճող կախվածությունը, հրեական լոբբինգային կազմակերպությունների օժանդակության աստիճանի պայմանավորվածությունը Իսրայելի հետ հարաբերություններով, ավելի անկախ նախաձեռնողական քաղաքականություն վարելու, հայկական և հունական լոբբինգային կազմակերպություններին իր ուժերով ու հնարավորություններով դիմակայելու ցանկությունը ակտիվացրին Թուրքիայի ջանքերը՝ ուղղված ԱՄՆ-ում թուրքական լոբբինգային կազմակերպությունների ստեղծմանը և այդ հարցում Ադրբեջանի ու ադրբեջանական համայնքի հետ համագործակցության զարգացմանը: Թուրք-ադրբեջանական լոբբինգային կազմակերպությունների նպատակներից է հրեական նմանատիպ կազմակերպությունների հետ համագործակցության ապահովումը և համատեղ ծրագրերի իրականացումը: Մյուս կողմից՝ հրեական լոբբինգային կազմակերպությունները կարևոր դեր ունեն թուրք-ադրբեջանական նորաստեղծ լոբբինգային կառույցների ուղղորդման և դրանց օրինակ ծառայելու գործում:

## **Եզրակացություններ**

1. Թուրք-խորհրդային համագործակցությունը ունի խոր պատմական և անվտանգային հիմքեր, նրանց շահերն ընդհանուր առմամբ համընկնում են: Հրեական լոբբինգային կազմակերպությունները նշանակալի դեր ունեն այդ համագործակցության ապահովման հարցում:

2. Հրեական լոբբինգային կազմակերպությունների գործիքարանը և դրա արդյունավետ օգտագործումը հնարավորություն են տալիս մի շարք առանցքային բնագավառներում վերահսկողություն սահմանելու և թուրք-խորհրդային համագործակցության հավասարակշռությունը թեքելու հօգուտ Իսրայելի:

3. Թուրքիայի նկատմամբ հրեական լոբբինգային կազմակերպությունների կիրառած ռազմավարության հաջողության հիմնական պատճառներից մեկն այն է, որ դրանք կարողացել են գիտական ներուժը վերածել երկարատև անվտանգային ռեսուրսի և իրենց վերահսկողության տակ կենտրոնացնել թուրքագիտական հետազոտություններով զբաղվող հեղինակավոր «մտքի կենտրոնները»:

4. ԱՄՆ-ի հրեա գիտնականների շրջանում և հրեական լոբբիի ազդեցության տակ գտնվող գիտական կենտրոններում Թուրքիայով զբաղվող գիտական ուժի կենտրոնացումը հեռանկարային տեսակետից ամենաազդեցիկ մեխանիզմն է, որը հնարավորություն է տալիս ճնշում գործադրելու Թուրքիայի արտաքին քաղաքականության մի շարք կարևոր ուղղությունների վրա:

5. Թուրքիան, հրեական լոբբինգային կազմակերպություններից իր կախվածության նվազեցման նպատակով, վերջին տարիներին նախաձեռնել է ԱՄՆ-ում թուրք-ադրբեջանական լոբբինգային կազմակերպությունների ստեղծումը, սակայն, գիտակցելով հրեական լոբբինգային կազմակերպությունների հնարավորությունները, ձգտում է համատեղ ծրագրեր մշակելու և հնարավորության դեպքում հայկական և հունական լոբբինգային կազմակերպություններին հակազդելու միացյալ ուժերով:

# ՈՐՈՇ ՏԵՍԼԱԿԱՆՆԵՐ ՍՓՅՈՒՌՔԻՑ

Հեղինակների կարծիքը միշտ չէ, որ համընկնում է  
հեղինակային կոլեկտիվի մյուս անդամների կարծիքի հետ

ԱՄԵՐԻԿԱՀԱՅԿԱԿԱՆ ԼՈՐԲԻՆ.  
ԿԱՌՈՒՅՎԱԾՔԸ, ՄԵԹՈԴՆԵՐԸ ԵՎ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Ժ. ՋԱՐԻՖՅԱՆ, «Փարիզ-8» համալսարանի  
Ֆրանսիայի աշխարհաքաղաքականության իսնտիտուտի ասպիրանտ



Հրեական/իսրայելամետ, կուրայական կամ իռլանդական լոբբիների համեմատությամբ՝ ամերիկահայերի լոբբինգային գործունեությունը նվազ ուշադրության է արժանացել գիտական հանրության կողմից: Թեև այս թեմայի վերաբերյալ<sup>1</sup> մի քանի աշխատություն է հրատարակվել, այդուհանդերձ հարկ է նշել, որ ամբողջությամբ դրան նվիրված որևէ գիրք կամ գիտաժողով չի եղել\*: Ավելին, այն մի քանի աշխատությունները, որ գրվել են հայկական լոբբիի մասին, հաճախ համառոտ են (հողվածներ, ակնարկներ, գրքի զուլաներ, աշխատանքային տետրեր և այլն), փոքրածավալ, ինչ-որ տեղ՝ հնացած (հիմնականում՝ 2000-ական թվականների սկզբին գրված) և թարմացման ու վերանայման կարիք ունեն:

Այս իրադրությունը կարող է զարմանալի թվալ, քանի որ ամերիկահայերի լոբբինգային գործունեությունը մեծ հետաքրքրություն է ներկայացնում թե՛ Հայաստանի կամ Հարավային Կովկասի, թե՛ ամերիկյան քաղաքականության փորձագետների համար: Առաջին խմբի համար այն Հայաս-

---

<sup>1</sup> ԱՄՆ-ի հայկական լոբբիի գործունեությանը նվիրված եզակի ուսումնասիրություններից կարելի է նշել՝ *Thomas Ambrosio*. Congressional Perceptions of Ethnic Cleansing: Reactions to the Nagorno-Karabagh War and the Influence of Ethnic Interest Groups. “Review of International Affairs”, 2002, Vol. 2, № 1, PP. 24–45; *Rachel Anderson Paul*. Grassroots Mobilization and Diaspora Politics: Armenian Interest Groups and the Role of Collective Memory. “Nationalism and Ethnic Politics”, 2000, Vol. 6, № 1, PP. 24–47; *Heather S. Gregg*. Divided They Conquer: The Success of Armenian Ethnic Lobbies in the United States. “Rosemary Rogers Working Paper Series”, August 2002, № 13; *Thomas Grjebine*. L’influence des groupes d’intérêts ethniques et la politique étrangère américaine. “Raisons politiques”, 2008, Vol. 29, № 1, PP. 39–57; *David C. King and Miles Pomper*. Congress and the Contingent Influence of Diaspora Lobbies: U.S. Foreign Policy toward Armenia. “Journal of Armenian Studies”, December 2004, Vol. 8, № 1:

\* Այդ առումով սույն նախաձեռնության նշանակությունը դառնում է առանձնահատուկ և կարևոր:

տանի նկատմամբ ԱՄՆ-ի վարած քաղաքականության վճռորոշ գործոն է և Հայաստանի ու Հայկական Սփյուռքի միջև հնարավոր գործակցության հետաքրքիր դեպք: Երկրորդ խմբի համար այս լոբբիի գործունեության պատմությունը և որոշ առանձնահատկությունները մասնավոր դեպքի ուսումնասիրության հզոր տարբերակ են ԱՄՆ-ում էթնիկական խմբերի լոբբինգային գործունեության բազմաբարդ դաշտին մոտենալու համար:

Առավել կարևոր է նշել այն փաստը, որ գիտական հանրության կողմից թերի ուսումնասիրված հայկական լոբբին մի շարք պրոբլեմներ է առաջացրել՝ կապված իր համընդհանուր ընկալման հետ, հատկապես՝ իր բնույթի և ԱՄՆ-ի արտաքին քաղաքականության վրա իր գործունեության ազդեցության առումով: Իսկապես, բավականին հետաքրքրական է, որ վերջինիս մասին հրատարակված այդ սակավաթիվ և հակիրճ ուսումնասիրությունների մեծ մասը միտված է հանգեցնելու մի եզրակացության, որում հայկական լոբբիի հաջողությունները շատ տպավորիչ են և ինչ-որ տեղ՝ չափազանցված: ՉԼՄ-ներում<sup>2</sup> լայնորեն հիմնավորվող այս եզրակացությունը նպաստել է ամերիկահայ «փոքր» լոբբիի վերաբերյալ այն ընդհանրացված կարծիքի ձևավորմանը, ըստ որի՝ այն ունակ է զգալիորեն ազդելու ամերիկյան գերտերության արտաքին քաղաքականության վրա:

Տվյալ աշխատության հիմնական նպատակն է հարցականի տակ դնել ամերիկահայերի լոբբինգային գործունեության վերաբերյալ համընդհանուր ընդունելության արժանացած դատողությունները, որպեսզի առավել ճշգրիտ և արդիական գնահատականներ մշակվեն դրանց գործունեության ու կազմակերպվածության վերաբերյալ: Այստեղ հատկապես կշեշտադրվեն լոբբիի կառուցվածքը, մեթոդները և Հայաստանի ու նրա հարևան պետությունների նկատմամբ ԱՄՆ-ի վարած արտաքին քաղաքականության վրա լոբբիի ազդեցությունը: Պատասխանելու համար այն հարցերին, թե փոքր է արդյոք հայկական լոբբին, և թե որքանով է այն ընդունակ ազդելու Ամերիկայի արտաքին քաղաքականության վրա, աշխատանքը բաժանենք հինգ մասի: Նախ հանգամանորեն բացատրենք, թե ինչ է նշանակում լոբբինգային գործունեությունը Միացյալ Նահանգներում, ապա համառոտ կերպով ներկայացնենք Ամերիկայի հայկական համայնքը: Երրորդ մասում դիտարկենք ԱՄՆ-ում հայկական լոբբիի հիմնական պատմական, քաղաքական և

---

<sup>2</sup> Օրինակ՝ կարող ենք նշել “Armenia Lobby”. “The Washington Post” (Editorial), August 1, 1996; *Marc Lacey*. Oil, Politics and a Blacklist. “The New York Times”, March 2, 2000; *Constance Bensussan and Thomas Grjebine*. La victoire d’un petit lobby. “Libération”, November 5, 2007:

կազմակերպական առանձնահատկությունները: Չորրորդ մասում մանրամասնենք հայկական երկու խոշոր լոբբինգային խմբերի՝ Ամերիկայի հայ ազգային կոմիտեի (ԱՀԱԿ) և Ամերիկայի հայկական համագումարի (ԱՀՀ) վարած լոբբինգային գործունեության նպատակներն ու միջոցները: Եվ, վերջապես, վերջին մասում քննարկենք հետասառըպատերազմյան այն հիմնական խնդիրները, որոնցով զբաղվել է հայկական լոբբին, և փորձենք գնահատել նրա հաջողություններն ու ձախողումները:

## 1. ԼՈՐԲԻՆԳԸ ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒՄ

Լոբբինգը Ամերիկայի քաղաքական կյանքի պատմական քաղաքականացման է: Դրա աղբյուր է այն գաղափարը, որ անհատները կամ խմբերը պետք է կարողանան անմիջական մասնակցություն ունենալ երկրի քաղաքական կյանքում, ինչը պաշտպանվում է ԱՄՆ-ի Սահմանադրության առաջին լրամշակմամբ սահմանված Միջնորդության իրավունքով: Լոբբինգը ընդհանուր նպատակը պաշտոնավարող քաղաքական առաջնորդների վրա ազդելն է, որպեսզի նրանց խրախուսի և մղի իր համար շահեկան որոշումների կայացմանը: Նրա գործողությունները կարող են նպատակաուղղված լինել Ամերիկայի քաղաքական դաշտի ցանկացած ոլորտին և ցանկացած մակարդակին՝ թե՛ տեղական, մասնագային ու դաշնային, թե՛ գործադիր ու օրենսդիր ճյուղերին, և սովորաբար այն իր հիմնական ուժն ստանում է իր համախոհների ընտրական ազդեցությունից\*։ «Լոբբինգ» այս սահմանումը թվում է ակնհայտ և լայնորեն ընդունված: Սակայն հարկ է նշել, որ, ինչպես ընդգծել են շատ քիչ գիտնականներ ու փորձագետներ, «լոբբինգ» տերմինն ունի երկու տարբեր իմաստներ: Առաջին. «լոբբինգ» մի խումբ է՝ բաղկացած միլիանգ հետ համակարգային կապեր չունեցող կազմակերպություններից, անհատներից, ընկերություններից, հնարավոր է՝ նաև օտար պետություններից և այլն, որը որոշակի շահեր է հետապնդում: «Լոբբինգ» բառը նշանակում է նաև այն իրավական կազմակերպությունը, որն առաջ է քաշում և պաշտպանում է հիշյալ շահերը<sup>3</sup>: Թեև պետք չէ անտեսել անհատական լոբբինգով զբաղվող անձանց\*\* , ինչպես նաև օտար պետությունների լոբբին

\* Ինչպես հետագայում կներկայացնենք այս աշխատության մեջ, օգտակար կարող են լինել նաև ընտրյալ քաղաքական որոշում կայացնողների ընտրարշավների ֆինանսավորման, հասարակական կարծիքի վրա ազդելու, այլ խմբերի կամ քաղաքական գործիչների հետ դաշինքներ կնքելու և մի շարք այլ հնարավորություններ:

<sup>3</sup> Stu Charles-Philippe David, Louis Balthazar, Justin Vaïsse. La politique étrangère des États-Unis, Fondements, acteurs, formulation. Paris, 2003, P. 335:

\*\* Հայերի դեպքում, օրինակ, կարող ենք նշել, որ սենատոր Բոր Դոլի՝ 1996 թ. նախագա-

ազդեցությունը, այս աշխատության մեջ հիմնական ուշադրությունը կենտրոնացնենք հայկական լոբբիի ամենաակնառու և կազմակերպված և, իհարկե, ամենաազդեցիկ դրսևորմանը, այն է՝ խմբերի լոբբիին, որոնց նպատակը ԱՄՆ-ի քաղաքականությանը պաշտոնապես միջամտելն է:

Թեև էթնիկական, այդ թվում նաև հայկական խմբերի շահապաշտպան գործունեությունը կարող է ակտիվ լինել և՛ տեղական, և՛ նահանգային մակարդակներում, սակայն նրանց գործողությունների հիմնական թիրախն այն դաշնային կառույցներն են, որոնք մեծ մասամբ առնչվում են արտաքին քաղաքականության հետ: Ուստի կազմակերպությունների մեծ մասը գտնվում է մայրաքաղաք Վաշինգտոնում, որտեղ գտնվում են դաշնային կառույցները և որոշում կայացնողները: Լավագույն արդյունքների նրանք սովորաբար հասնում են կոնգրեսականների հետ, որոնք անմիջականորեն ընտրվում են ամերիկացիների կողմից, և որոնք պետք է վերընտրվեն երկու տարին մեկ: Եվ ընդհակառակը՝ էթնիկական լոբբիների պահանջների բավարարման հարցում գործադիր ճյուղը պակաս պատրաստակամ է համարվում (բացառությամբ՝ որոշ հիշարժան դեպքերի): Իսկապես, Նախագահը, որն ընտրվում է չորս տարին մեկ, և որի ընտրությունը նվազ չափով է ուղղակիորեն կախված էթնիկական փոքր խմբերի ձայներից և հնարավոր հանրային ու ֆինանսական աջակցությունից, հակված է պաշտպանելու «պետության ազգային շահերը», և նրա վրա առանձին շահերը չեն ազդում:

Դեվիդ Մ. Փոլը և Ռեյչլ Անդերսոն Փոլը տարբերակել են գործունեության չորս հիմնական մեթոդ, որոնք կիրառվում են շահապաշտպան խմբերի կողմից որոշում կայացնողների, մասնավորապես՝ կոնգրեսականների հետ կապ հաստատելու և պահպանելու, ինչպես նաև հետագայում նրանց վրա ազդեցություն գործելու համար: Դրանք են ուղիղ լոբբինգը (ուղղակի շփումները լոբբիստների և որոշում կայացնողների միջև), ժողովրդական լոբբինգը (լոբբիի աջակիցների ցույցերը, միջնորդագրերը, նստացույցերը և այլն), դաշինքի ստեղծումը (հատկապես՝ այլ լոբբիների հետ դաշինքները) և քաղաքականության մշակման գործընթացի մոնիտորինգը<sup>4</sup>:

---

հսկան ընտրություններին հանրապետական թեկնածուի, անխափան աջակցությունը հայկական լոբբիին, արմատներով ձգվում է մինչև Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ մի հայ բժիշկի հետ ընկերությունը, որը կարողացել է ապաքինել նրան ծանր վերքերից: Նույն կերպ է շաղկապված նաև ներկայիս փոխնախագահ Ջո Բայդենի ավանդական աջակցությունը հայերին. նա հայկական ծագում ունեցող ընկերոջ հետ սենատոր եղած ժամանակ պարբերաբար գնացքով ճամփորդել է Դելավերից – Վաշինգտոն:

<sup>4</sup> Տես Դեվիդ Մ. Փոլ և Ռեյչլ Անդերսոն Փոլ, Նշ. աշխ., էջ 59:



Բախումներից խուսափելու համար, որոնցից մի քանիսը զգալիորեն հարվածել են նրա հեղինակությանը, լոբբինգը աստիճանաբար ավելի շատ է ենթարկվում համալիր դատաիրավական վերահսկողությանը: Ինչպես արդեն նշել ենք, առաջին սահմանափակումը վերաբերում է լոբբինգ իրականացնող կազմակերպությունների իրավական կարգավիճակին: Կազմակերպությունը պետք է տեսականորեն գրանցվի որևէ հատուկ իրավական կարգավիճակով, որպեսզի օրենքով լիազորված լոբբինգ իրականացնի: Այդ իրավական կարգավիճակը դասակարգվում է 501(c)(4) համարի տակ և լիազորում է կազմակերպությանը՝ լոբբինգը դարձնելու իր հիմնական գործունեությունը: 501(c)(4) կարգավիճակով կազմակերպությունները սովորաբար ազատված են հարկերից, սակայն դա սովորաբար չի վերաբերում նրանց արված նվիրատվություններին: Մինչույն ժամանակ, լոբբինգային գործունեություն իրականացնող շատ կազմակերպություններ գործում են 501(c)(3) կարգավիճակով, որը տեսականորեն պատկանում է բարեգործական կազմակերպություններին: Դա նրանց հնարավորություն է տալիս զբաղվելու լոբբինգով, սակայն արգելում է այն դարձնել իրենց հիմնական գործունեությունը<sup>5</sup>: Ինչևէ, լոբբինգով զբաղվող կազմակերպությունները հատկապես նախընտրում և կիրառում են այս կարգավիճակը, քանի որ այն հնարավորություն է տալիս նրանց հարկումից ազատված նվիրատվություններ ստանալու: Օրենքով պարտադրվող երկրորդ մեծ սահմանափակումը Ներկայացուցիչների պալատի, ինչպես նաև Սենատի քարտուղարություններում գրանցվելն է: Իհարկե, լոբբիստները պետք է գրանցվեն Կոնգրեսի պալատներից մեկում կամ երկուսում՝ կախված այն հանգամանքից, թե որ կառույցի գործունեության վրա են ցանկանում ազդեցություն ունենալ: Եթե ցանկանում են իրենց գործունեությունն իրականացնել գործադիր մարմնի պաշտոնյաների շրջանակներում, պետք է գրանցվեն նաև Կոնգրեսում<sup>6</sup>:

Անխուսափելիորեն դրամական միջոցները լոբբինգի կարևոր բաղադրիչն են: Կազմակերպություններին դրամական միջոցներ են հարկավոր

---

<sup>5</sup> Գործնականում, սակայն, այս կարգավիճակը հնարավորություն է տալիս 501(c)(3) կարգավիճակն ունեցող կազմակերպությանը բավականին շատ զբաղվելու լոբբինգային գործունեությամբ, հատկապես երբ կազմակերպությունը գումար չի ծախսում օրենսդրության վրա ազդելու նպատակով (տես, օրինակ, *Jeffrey S. Tenenbaum, Esq. and Brian T. Pallasch. Top Ten Myths about 501(c)(3) Lobbying and Political Activity.* “ASAE & The Center for Association Leadership” (<http://www.asaecenter.org/PublicationsResources/whitepaperdetail.cfm?ItemNumber=12202>):

<sup>6</sup> Տես *Jacob R. Straus. Lobbying the Executive Branch: Current Practices and Options for Change.* “CRS Report for Congress”, December 1, 2009, P. 1:

գոյատևելու և իրենց գործունեությունը կազմակերպելու համար: Թեև երբեմն նրանք կարող են օգտվել պետական ֆինանսավորումից, լոբբինգային կազմակերպությունների եկամտոտի կարևոր աղբյուրը նրանց աջակիցների նվիրատվություններն են: Լոբբինգ իրականացնող կազմակերպության համար էական նշանակություն ունեն իր ներկայացրած համայնքի եկամտոտի մակարդակը և, ինչը հավանաբար առավել կարևոր է, իր աջակիցներից նվիրատվություն ստանալու կարողությունը: Հավաքված հասույթը կարող է օգտագործվել աշխատողներ վարձելու և ուղղակի կամ միջնորդավորված լոբբինգի կազմակերպման ու տարատեսակ գործունեություն ծավալելու համար: Օրինակ՝ թեև հիմա նվերներ տալը և ճաշերի համար վճարելն օրենքով արգելված են, սակայն շահապաշտպան խմբերը դեռևս իրավունք ունեն վճարելու կոնգրեսականների ճանապարհածախսերը, երբ դա հաստատվում է Պաշտոնական վարվելակարգի չափանիշների հանձնաժողովի կողմից\*։ Դրամական միջոցները կարևոր են նաև այն առումով, որ հնարավորություն են տալիս լոբբինգային կազմակերպություններին՝ մասնակցելու քաղաքական գործիչների ընտրարշավների ֆինանսավորմանը: Քաղաքական գործիչների համար չափազանց կարևոր է ընտրական քարտզարշավների ֆինանսավորումը, հատկապես՝ կոնգրեսականների համար, քանի որ նրանք որևէ պետական ֆինանսական օժանդակություն չեն ստանում, իսկ նրանց ընտրական և վերընտրական քարտզարշավները տեղի են ունենում երկու տարին մեկ: 501(c)(3) և 501(c)(4) կարգավիճակ ունեցող կազմակերպությունները, ինչպես նաև մնացած բոլոր կազմակերպությունները, ընկերությունները, միավորումները և այլն, իրավունք չունեն ֆինանսական օժանդակություն տրամադրելու դաշնային ընտրական քարտզարշավներին: Ուստի նրանք հաճախ ստեղծում են Քաղաքական գործողությունների կոմիտեներ (ԲԳԿ): Դրանք այն միակ կառույցներն են (բացի անհատներից), որոնք իրավունք ունեն ֆինանսավորելու դաշնային ընտրական քարտզարշավները: Թեև էթնիկական Քաղաքական գործողությունների կոմիտեների դերը հաճախ չափազանց կարևոր է Ամերիկայի քաղաքական դաշտում, սակայն հարկ է նշել, որ դաշնային ընտրական քարտզարշավներին նրանց ընդհանուր ֆինանսական օժանդակությունը համեմատաբար համեստ է, հատկապես՝ եթե հաշվի չառնենք 43 իսրայելամետ և հրեական Քաղաքական գործողությունների կոմիտեների օժանդակությունը<sup>7</sup>:

---

\* Համաձայն 2006 թ. «Սենատի Օրենսդրական քափանցիկության և հաշվետվության մասին որոշման» (S.RES.525) և 2006 թ. «527 Բարեփոխումների ակտի» (H.R.4975):

<sup>7</sup> Տես *Դեվիդ Մ. Փոլ և Ռեյչլ Անդերսոն Փոլ*, Նշ. աշխ., էջ 74:

## **2. ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԸ. ՀԱՅԿԱԿԱՆ ԼՈՐՔԻՆԳԻ ՀԻՄՔԵՐԸ**

Հայկական լոբբինգային կազմակերպություններն ստեղծվել են ամերիկյան համայնքի կողմից: Թեև դրանք պաշտոնապես կամ իրավական տեսանկյունից չեն ներկայացնում (ըստ ժողովրդավարական սկզբունքի՝ ընտրությունների միջոցով) ԱՄՆ-ի ամբողջ հայ համայնքը, սակայն այս կազմակերպությունները սերտ հարաբերություններ են պահպանում հայ համայնքի հետ: Ամերիկահայերը ֆինանսավորում են այս լոբբինգային կազմակերպությունները, աշխատում նրանց համար (որպես վարձու աշխատողներ կամ շատ հաճախ՝ որպես կամավորներ), և երբ կազմակերպությունները դիմում են աշխատանքի խնդրանքով, սովորաբար արձագանքում են մեծ թվով մարդիկ, ինչն այժմ հեշտ ու արագ իրականացվում է էլ-փոստի և համացանցի միջոցով:

Թեև Ամերիկայի հայկական համայնքը բավականին փոքր է\*, սակայն նրա այլ առանձնահատկություններից մի քանիսը հարաբերական կարևորություն են հաղորդում նրան ամերիկյան քաղաքական շախմատի խաղատախտակի վրա:

Ինչ վերաբերում է լոբբինգին, «փոքր» և անգամ՝ «բազմակարծիք», համայնքն այնքան էլ բացասական չէ, ինչպես կարող է թվալ առաջին հայացքից: Ընդհակառակը, մեծաքանակ չլինելը կարող է օգտակար լինել, երբ գործը հասնում է ռեսուրսներ հավաքելուն կամ մոբիլիզացնելուն ու խումբ կազմելուն: Ավելին՝ փոքր խմբերը հակված են կենտրոնանալու ավելի սահմանափակ և կողմնորոշված շրջանակով հարցերի շուրջ, ինչը կանխում է էներգիայի և ռեսուրսների վատնումը: Համայնքի բազմազանությունը կարող էր բարդություն առաջացնել, եթե չլիներ համապատասխանեցման և մոբիլիզացման ակնհայտ հարցը: Հայոց Ցեղասպանության համընդհանուր ճանաչումը և աջակցությունը Հայաստանին սովորաբար խորհրդանշական համախմբող գաղափարներ են, որ հաստատվում են բոլոր հայերի կողմից:

Երբ հերթը հասնում է լոբբինգին, հայկական համայնքն «այնքան էլ փոքր» չի երևում՝ շնորհիվ մի առանձնահատկության, որն է՝ իր յուրօրինակ տարածքային բաշխվածությունը: Հայերը միևնույն ժամանակ մեծ թվով և խիտ բնակեցված են մի քանի տարածքներում, ինչպես, օրինակ, Կալիֆոռ-

---

\* Ըստ ԱՄՆ-ի մարդահամարի գրասենյակի 2008 թ. հաշվարկների՝ 464,264 ամերիկահայերը, 1 մլն՝ ըստ շատ դիտորդների և մինչև 2 մլն՝ ըստ այլ աղբյուրների (դա մեծ մասամբ կախված է այն բանից, թե հաշվարկներ անելիս ում են «հայ» համարում):

նիայում (մասնավորապես, Լոս Անջելեսում և Ֆրեզնոյում) կամ Բոստոնի շրջանում: Ինչպես նաև փոքր խմբերով ապրում են ԱՄՆ-ում ամենուրեք. զգալի թվով բնակչությամբ՝ Նյու Յորքում, Միչիգանում, Ֆլորիդայում, Տեխասում և այլուր: Տասնամյակներ շարունակ և անգամ ավելի՝ նրանք ապրել են այս տարածքներում և հաճախ լավ ինտեգրված ու տեղաբաշխված են տեղի տնտեսական, սոցիալական, քաղաքական և մշակութային ցանցերում: Հետևաբար, անհնար է անտեսել նրանց, հատկապես՝ այն վայրերում, որտեղ նրանց քանակային հարաբերակցությունն ամենաբարձրն է, և քաղաքական գործիչները ընտրվելու համար նրանց կարիքն ունեն: Որոշ ընտրատարածքներում հայերը կազմում են հավանական ընտրողների մոտ 10 %-ը, գուցե՝ ավելին: Նրանք ունեն նաև տեղական հեռուստաալիքներ, ռադիոկայաններ և լրագրեր, որոնք կարող են օգտագործվել ընտրողներին համախմբելու համար: Այս ընտրական ներուժը մեծ կարևորություն ունի ոչ միայն կոնգրեսականների, այլ երբեմն նաև նախագահական ընտրությունների համար: Եվ իսկապես, այն մի քանի նահանգները (Կալիֆոռնիա, Նյու Ջերսի, Նյու Յորք, Մասաչուսեթս, Իլինոյս և Միչիգան), որտեղ հայերը առավել մեծաթիվ են, ներկայացնում են ԱՄՆ-ի նախագահի ընտրության համար անհրաժեշտ ձայների կեսից ավելին: Հետևաբար, երբ երկու թեկնածուների միջև թեժ պայքար է մղվում, կարևորվում է ընտրողների յուրաքանչյուր խումբ, անգամ՝ փոքրերը: Օրինակ՝ ասում են, որ 2000 թ. Ֆլորիդայի 18000 հայերը վճռական դեր են խաղացել Ջորջ Բուշի ընտրության հարցում: Եվ իսկապես, հանրապետական թեկնածուն հաղթեց այս նահանգում՝ հավաքելով մի քանի հարյուր ձայն ավելի, քան նրա դեմոկրատ մրցակից Ալ Գորը: Այս նահանգում ամերիկահայերի 80 %-ը իր ձայնը տվել է Ջ. Բուշին ակնհայտորեն այն պատճառով, որ նա ավելի հստակ դիրքորոշում ուներ Հայոց Ցեղասպանության ճանաչման հարցում<sup>8</sup>:

**3. ՀԱՅԿԱԿԱՆ ԼՈՔՔԻՆԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.  
ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՌԱՆՉՆԱՀԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Ամերիկահայերը, ինչպես ամբողջ աշխարհի բոլոր հայերը, ավանդաբար միավորված են եկեղեցու\* և մշակութային ու քաղաքական կազմակեր-

<sup>8</sup> Տես *Peter Micek*. Armenian Americans Battle Bush Over Genocide Recognition. “Pacific News Service”, May 19, 2004:

\* Քրիստոնյա հայերի մեծամասնությունը պատկանում է Հայ Առաքելական եկեղեցուն, որի կենտրոնը Էջմիածինն է, Երևանի մոտ: Որոշ հայեր (մոտ 8 %-ը) պատկանում են Հայ Կաթոլիկ եկեղեցուն, իսկ մյուսները (նույնպես մոտ 5 %-ը) բողոքական են: Հարկ է նշել, որ

պությունների շուրջ: Հայոց Սփյուռքն ընդհանրապես և ամերիկահայ Սփյուռքը մասնավորապես անցել են բարդ հակասությունների միջով, որոնք էլ ձևավորել են այսօրվա ամերիկահայ քաղաքական և լոբբինգային դաշտը: Հիմնական քաղաքական պառակտումը տեղի ունեցավ 1920 թ. Հայաստանի Հանրապետության խորհրդայնացմամբ: Հայ հեղափոխական դաշնակցությունը (ՀՀԳ), որը 1920 թ. իշխանության գլուխ էր կանգնած Հայաստանում, հրաժարվեց խորհրդայնացումից և ստիպված եղավ հեռանալ երկրից: Այնուհետև դաշնակներն ամբողջ աշխարհում և, մասնավորապես, ԱՄՆ-ում խիստ հակախորհրդային դիրքորոշում ընդունեցին և հրաժարվեցին Խորհրդային Հայաստանի հետ ցանկացած կապից: Մյուս կողմից՝ ոչ դաշնակցական ամերիկահայերը հակված էին աջակցելու Հայաստանի խորհրդայնացմանը, կամ առնվազն նախընտրում էին նորմալ հարաբերություններ պահպանել Խորհրդային Հայաստանի հետ: Ամբողջ 20-րդ դարի ընթացքում այս խոշոր պառակտումը խորացավ Սառը պատերազմի համատեքստում և ակնհայտորեն դրսևորվեց Հայ Եկեղեցու երկատմամբ: Որոշ ամերիկահայ ծխական եկեղեցիներ դադարեցին ճանաչելուց Խորհրդային Հայաստանում գտնվող Էջմիածնի հեղինակությունը՝ մեղադրելով նրան խորհրդայնամետ լինելու մեջ: 1957 թ. այս անջատողական եկեղեցիներն անցան Լիբանանում տեղակայված Կիլիկիայի կաթողիկոսության վերահսկողության տակ, որը ավանդաբար գործում էր Էջմիածնի կաթողիկոսությունից անկախ և ղեկավարվում էր դաշնակների կողմից: Թեև պակաս ընդգծված, սակայն այս երկատումն առկա է մինչ օրս:

Այս խոշոր պառակտումը, որը կարելի է անվանել դաշնակների և ոչ դաշնակների ընդդիմություն, անմիջական ազդեցություն է թողել ամերիկահայերի լոբբինգի վրա: Հայկական երկու խոշոր լոբբինգային կազմակերպություններից մեկը դաշնակցական է՝ ի դեմս Ամերիկայի հայ ազգային կոմիտեի, իսկ մյուսը՝ ոչ դաշնակցական՝ ի դեմս Ամերիկայի հայկական համագումարի\*:

---

ԱՄՆ-ում բողոքական հայերի թիվը կարող է ավելի մեծ լինել, և նաև հնարավոր է, որ հայկական արմատներ ունեցող որոշ ամերիկացիներ աթեիստ են և ոչ մի եկեղեցու չեն պատկանում:

\* Հարկ է նշել, որ հայկական մի քանի այլ կազմակերպություններ նույնպես զբաղվում են լոբբինգով, սակայն դրանց կարևորությունը, ռեսուրսները և ազդեցությունը դարձնում են նրանց շատ ավելի պակաս նշանակալից, քան ԱՀԱԿ-ը և ԱՀՀ-ն են: Այդ կազմակերպություններից կարող ենք հիշատակել ԱՄՆ – Հայաստան հասարակական հարցերով հանձնաժողովը, որը հաճախ անվանում են Ջերարդ Գաֆեսճյանի «անձնական» լոբբինգ: Ջ. Գաֆեսճյանը ամերիկահայ հայտնի գործարար և բարերար է, և ԱՄՆ – Հայաստան հասարակական հարցերով հանձնաժողովն ստեղծվել է 2007 թ. Գաֆեսճյան ընտանեկան հիմնադրամի կողմից:

սկզբի ՀՀԳ-ի Հայաստանի անկախության Ամերիկայի կոմիտեից: ԱՀՀ-ը հիմնադրվել է 1972 թ. հայ համայնքի անվանի ոչ դաշնակ անդամների կողմից: Այս նախաձեռնության նպատակն էր ստեղծել նոր հայկական կազմակերպություն, որտեղ տարբեր խմբերի առաջնորդներ (այսինքն՝ ոչ միայն դաշնակներ) կմասնակցեին հայկական շահերի առաջնորդան գործին<sup>9</sup>: Քաղաքական տերմիններով ասած՝ հիմնական տարբերությունը ԱՀԱԿ-ի և ԱՀՀ-ի միջև նրանց այն ժամանակի վերաբերմունքն էր Խորհրդային Հայաստանի նկատմամբ: Մինչ ԱՀԱԿ-ը թշնամաբար էր տրամադրված Խորհրդային Հայաստանի իշխանությունների հանդեպ, ԱՀՀ-ն գտնում էր, որ կարևոր է կապեր պահպանել Հայաստանի հետ: Սառը պատերազմի տարիներին Խորհրդային Հայաստանի հանդեպ իր կոշտ դիրքորոշումը ստիպում է ԱՀԱԿ-ին սերտացնել հարաբերությունները ամերիկյան իշխանությունների հետ, և նրանք սկսում են միմյանց դիտարկել որպես դաշնակիցների: Սառը պատերազմի ավարտից և Հայաստանի անկախացումից հետո երկու կազմակերպություններն էլ կապեր հաստատեցին Երևանի հետ\*: Որպես կանոն, ԱՀԱԿ-ի և ԱՀՀ-ի ղեկավարները հանդիպում են ԱՄՆ-ում Հայաստանի դեսպանատան պաշտոնյաների հետ շաբաթը մեկ անգամ՝ քննարկելու ընթացիկ հարցերը և համապատասխան օրակարգերը<sup>10</sup>:

ԱՀԱԿ-ը և ԱՀՀ-ը շատ տարբեր են նաև ըստ իրենց պաշտոնական կարգավիճակի: ԱՀԱԿ-ը գործում է 501(c)(4) կարգավիճակի ներքո<sup>11</sup>, մինչդեռ ԱՀՀ-ը որպես 501(c)(3) կարգավիճակ ունեցող կազմակերպություն տեսականորեն իրավունք չունի լոբբինգն իր հիմնական գործունեությունը դարձնելու: Ահա թե ինչու այն պաշտոնապես չկարողացավ սատարել որևէ թեկնածուի 2008 թ. նախագահական ընտրությունների ժամանակ, մինչդեռ Գեմոկրատական կուսակցության նախնական ընտրությունների ժամանակ ԱՀԱԿ-ը հաստատուն կերպով պաշտպանեց Բարակ Օբամայի թեկնա-

<sup>9</sup> Stu Varoujan Karentz. Mitchnapert The Citadel: A History of Armenians in Rhode Island. NE, 2004, P. 163:

\* Պետք է նշել, որ, այնուամենայնիվ, ԱՀԱԿ-ի և Հայաստանի միջև հարաբերությունները ընդհատվել են 1994–1998 թթ.՝ Հայաստանի առաջին նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանի կողմից Հայաստանում ՀՀԳ գործունեության արգելման պատճառով՝ պայմանավորված ՀՀԳ-ի և վարչակարգի միջև լարված հարաբերություններով:

<sup>10</sup> Տես «Հեղինակի հարցազրույցը Հայաստանի արտաքին գործերի նախարարի տեղակալ, ԱՄՆ-ում Հայաստանի նախկին արտակարգ և լիազոր դեսպան Ա. Ջ. Կիրակոսյանի հետ»: Ե., 2008 թ., հունիսի 6:

<sup>11</sup> Տես «Հեղինակի հարցազրույցը ԱՀԱԿ-ի գործադիր տնօրեն Արամ Համփարյանի հետ» (Էլեկտրոնային փոստով), 2008 թ., նոյեմբեր:

ծությունը: Սակայն ԱՀԱԿ-ը միակ հայկական կազմակերպությունը չէր, որ 2008 թ. նախագահական ընտրությունների ժամանակ որոշակի դիրքորոշում ստանձնեց: Այդ կերպ վարվեց նաև ԱՐՄԵՆՓԱԿ-ը: Նա նույնպես սատարեց Բարակ Օբամային, սակայն Դեմոկրատական կուսակցության նախնական ընտրություններին նախապատվությունը տվեց Հիլարի Կլինթոնին: ԱՐՄԵՆՓԱԿ-ը պաշտոնապես անկախ քաղաքական գործողությունների կոմիտե է: Այնուամենայնիվ, այնպես է ստացվել, որ նրա հիմնադիրներից մեկը՝ Ժիրայր Հովնանյանը, եղել է նաև ԱՀՀ-ի հիմնադիրներից մեկը և նաև նրա Հոգաբարձուների խորհրդի երկարաժամկետ նախագահը: ԱՐՄԵՆՓԱԿ-ի համանախագահներ Անի Թոթան և Էդգար Հակոբյանը նույնպես սերտորեն կապված են ԱՀՀ-ի հետ: Թեև Համագումարը պաշտոնապես իրավունք չունի ստեղծելու Քաղաքական գործողությունների որևէ կոմիտե, կամ կապված լինել դրա հետ, քանի որ 501(c)(3) կարգավիճակով կազմակերպություն է<sup>12</sup>, այն, անկասկած, փաստացի կապ ունի ԱՐՄԵՆՓԱԿ-ի հետ: Հետևաբար, այս ԲԳԿ-ն բավականին կարևոր նշանակություն ունի Համագումարի համար, քանի որ հնարավորություն է ընձեռում, թեև ոչ պաշտոնապես կամ անմիջականորեն, օժանդակելու ընտրարշավի ֆինանսավորմանը և դիրքորոշում ունենալու դաշնային ընտրությունների ժամանակ, ինչը լոբբինգի կարևոր գործիք է, իսկ հակառակ դեպքում ԱՀՀ-ն այն չէր կարող օգտագործել: Իր հերթին ԱՀԱԿ-ն ունի պաշտոնապես կից ԲԳԿ՝ ՀԱԿ-ԲԳԿ, որը հնարավորություն է տալիս նրան ֆինանսավորելու թեկնածուներին:

#### **4. ՀԱՅԿԱԿԱՆ ԽՄԲԵՐԻ ԼՈՐԲԻՆԳԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ՄԵԹՈԳՆԵՐԸ**

Երկու կազմակերպությունների նպատակները, թեև առաջին հայացքից նույնական են թվում, սակայն իրականում միանգամայն տարբեր են: ԱՀՀ-ի համացանցային կայքի «Առաքելություն» բաժնում պարզ երևում է, որ այն հիմնականում կենտրոնանում է հայ համայնքում իր դերի և ամերիկահայերին ԱՄՆ-ի ժողովրդավարական գործընթացում ներառելու ջանքերի վրա: Ավելի կոնկրետ՝ քաղաքական լոբբինգը հայտնվում է ԱՀՀ-ի առաքելության առաջնահերթությունների միայն 4-րդ և 5-րդ կետերում, որոնք են՝ «Ընդլայ-

---

<sup>12</sup> Stu “Comparison of 501(c)(3)s, 501(c)(4)s, and Political Organizations”. “Alliance for Justice”, July 2007 (<http://www.afj.org/assets/resources/resource1/Comparison-of-501C3S-501C4S.pdf>):

նել կազմակերպության առաջատար գիտակրթական և քարոզչական արշավները Հայոց Ցեղասպանության համընդհանուր ճանաչման համար և ապահովել ամբողջ Միությունի համաձայնությունը, որպեսզի ՀՀ Կառավարությունը հաղթահարի մարդկության հանդեպ իրականացված այս ոճրագործության հետևանքները: Ինչպես նաև «աջակցել ԱՄՆ–Հայաստան և ԱՄՆ–Ղարաբաղ հարաբերությունների խորացմանը՝ հիմնված ժողովրդավարության, օրենքի գերակայության, ազատական շուկաների, տարածաշրջանային անվտանգության և ազատ առևտրի ընդհանուր տեսլականի վրա»<sup>13</sup>: Մինչդեռ ԱՀԱԿ-ի հիմնական նպատակները հետևյալն են՝ «նպատակ հանրային իրազեկվածության մակարդակի բարձրացմանը՝ հօգուտ ազատ, միավորված և անկախ Հայաստանի, ազդել ԱՄՆ-ի քաղաքականության վրա և կողմնորոշել այն հօգուտ Ամերիկայի հայ համայնքի շահերի, ներկայացնել ամերիկահայերի հավաքական հայացքները պետական քաղաքականության հարցերի շուրջ՝ ծառայելով որպես միջանկյալ օղակ համայնքի և նրանց կողմից ընտրված պաշտոնյաների միջև»<sup>14</sup>:

Այստեղ ի հայտ են գալիս երկու հիմնական տարբերություններ. *առաջին*՝ ԱՀՀ-ն հստակորեն շեշտում է ԱՄՆ-ի շահերը, մինչդեռ ԱՀԱԿ-ը կենտրոնանում է միայն Հայաստանի և հայերի վրա, և *երկրորդ*՝ ԱՀԱԿ-ի նպատակներն ավելի քաղաքական են և արտացոլում են ավելի կոշտ դիրքորոշումներ: Իսկապես, մինչ ԱՀՀ-ն շեշտը դնում է երկխոսության, տեղեկատվության, համաձայնության, ժողովրդավարության և այլնի վրա, ԱՀԱԿ-ը պահանջում է «ազատ, միավորված և անկախ Հայաստան»: Այս երեք որոշիչները՝ «ազատ, միավորված և անկախ» հիշեցնում են ՀՀԳ-ի (նաև՝ հայկական այլ քաղաքական կուսակցությունների) գլխավոր քաղաքական նպատակը. այն է՝ միավորել հայկական պատմական տարածքները, որոնք այսօր բնակեցված չեն հայերով 1915 թ. Ցեղասպանության պատճառով, կամ բնակեցված են հայերով, սակայն կառավարվում են այլ երկրների կողմից (Ջավախքը՝ Վրաստանում): Այն, ինչը ԱՄՆ-ի խոշոր դաշնակիցներին՝ Թուրքիային և Վրաստանին, «անդամահատելու» պահանջ է, չի կարող դուր գալ Վաշինգտոնին: Սա է, իհարկե, այն պատճառներից մեկը, որ ԱՀԱԿ-ին չի հաջողվում մուտք գործել գործադիր ճյուղ (թեև նրա ազդեցությունը Կոնգրեսի վրա զգալի է): Եվ ընդհակառակը՝ ԱՀՀ-ն ավելի

<sup>13</sup> “Vision and Mission”. “Armenian Assembly of America” (<http://www.aaainc.org/index.php?id=86>).

<sup>14</sup> “About the ANCA”. “Armenian National Committee of America” (<http://www.anca.org/ancaprofile.php>).



«հարգված» է Վաշինգտոնի կողմից՝ շնորհիվ իր ավելի մեղմ և համաձայնողական դիրքորոշման:

Այս իրադրությունը բավականին դրական է հայկական համաշխարհային լոբբինգի համար, հատկապես, երբ երկու կազմակերպությունները պայքարում են միևնույն նպատակի համար (օրինակ՝ Հայոց Ցեղասպանության ճանաչումը): Այն Վաշինգտոնի իշխանությունների համար ստեղծում է մի տեսակ «մտրակի և քաղցրաբլիթի» իրավիճակ, ինչն ստիպում է նրանց բավարարել պահանջը:

Նույն կերպ այս երկու կազմակերպությունները, թեև իրենց կամքից անկախ, միանգամայն փոխլրացնող են լոբբինգային գործունեության իրենց մեթոդների և եղանակների առումով: Առաջին հայացքից միանգամայն մույնական են թվում հետևյալ ոլորտներում. երկուսն էլ աշխատակիցների քանակի առումով (10-20 հոգի) հարաբերականորեն փոքր կառույցներ են, սակայն երկուսն էլ կարող են հիմնվել համակիրների և հնարավոր կամավորականների հսկայական ցանցի վրա: Երկուսն էլ ղեկավարվում են գործադիր տնօրենի կողմից (ԱՀԱԿ-ի գործադիր տնօրենն է Արամ Համփարյանը, իսկ ԱՀՀ-ի գործադիր տնօրենը՝ Բրայեն Արտունին), և թեև ԱՀԱԿ-ի պարագայում տեղեկույթ հայթայթելը դժվար է, նրանք երկուսն էլ ունեն Գործադիր կոմիտե և (կամ) Հոգաբարձուների խորհուրդ: Նրանց կենտրոնական գրասենյակը մայրաքաղաք Վաշինգտոնում է, և երկուսն էլ ունեն համացանցային գործուն կայքեր, տեսահոլովակներ *YouTube*-ում և հրատարակչական ներուժ:

ԱՀԱԿ-ի և ԱՀՀ-ի միջև իրական տարբերությունները երևան են գալիս, երբ գործը հասնում է նրանց լոբբինգային գործունեության եղանակներին: ԱՀԱԿ-ը հույսը դնում է առաջին հերթին իր հիմքի, մեծաքանակ կողմնակիցների և համակիրների վրա, մինչդեռ ԱՀՀ-ը իր լոբբինգային գործունեությունն իրականացնելիս ավանդաբար հիմնվում է փոքրաքանակ, բարձր որակավորում ունեցող ու ազդեցիկ մարդկանց վրա: Թեև ԱՀՀ-ը իր գործունեության մեջ ավելի շատ շեշտը դնում է լայն հասարակության վրա, սակայն նրա լոբբինգային գործունեության ավանդական մոտեցումը միշտ եղել է «վերևից ներքև», մինչդեռ ԱՀԱԿ-ի մոտեցումը ավելի շատ «ներքևից վերև» է<sup>15</sup>: ԱՀԱԿ-ը ունի 45 գրասենյակ ԱՄՆ-ի 25 նահանգներում և մի կարևոր մասնաճյուղ Արևմտյան ասիին: Բացի այդ, ԱՀԱԿ-ը գրասենյակ է հիմնել մայրաքաղաք Վաշինգտոնում դեռ 1983 թ.: ԱՀՀ-ը իր հերթին ունի

<sup>15</sup> Տես *Դևիլիդ Ս. Քինգ և Մայլզ Փոնպեր.*, Նշ. աշխ., էջ 14:

միայն մեկ գրասենյակ Կալիֆոռնիայում և մեկ ավելի փոքր գրասենյակ՝ Նյու Յորքում՝ ՄԱԿ-ի հետ կապված հարցերով զբաղվելու համար: Բացի այդ, ԱՀՀ-ն ունի մեկ գրասենյակ Երևանում և մեկը՝ Լեռնային Ղարաբաղում, ի տարբերություն ԱՀԱԿ-ից, որը պետք է իր գործունեությունը ծավալի հիմնականում ամերիկահայերի շրջանում: Այս երկու տարբեր գործելակերպեր ունեցող լոբբիները, թեև պատահականորեն, բայց փոխլրացնող են, և փաստերի այս շարքը հայկական լոբբիին հետաքրքիր առավելություն է տալիս: Ինչ խոսք, հայկական լոբբին միևնույն ժամանակ կարող է էլեկտրոնային նամակներով կամ միջնորդագրերով հսկայածավալ քարոզարշավներ իրականացնել, հատկապես՝ ԱՀԱԿ-ի միջոցով, և անհատական հանդիպումներ կազմակերպել ու գործնական կապեր ստեղծել երկու կազմակերպությունների միջոցով:

Թեև ԱՀԱԿ-ը և ԱՀՀ-ն ունեն տարբեր պատմություններ ու մեթոդներ և պատմականորեն մրցակից կազմակերպություններ են, սակայն փորձում են հրապարակայնորեն լարված հարաբերություններ չցուցաբերել: Նրանք հազվադեպ են բացահայտ տարաձայնություններ ունենում: Վերջին օրինակն առնչվում է հայ-թուրքական հարաբերությունների կարգավորմանը և ԱՄՆ-ի հավանությանն արժանացած 2009 թ. արձանագրություններին: Մի քանի խմբեր՝ այդ թվում ԱՀՀ-ը, հավանություն տվեցին այդ արձանագրություններին, մինչդեռ մյուսները, ներառյալ՝ ԱՀԱԿ-ը, դեմ արտահայտվեցին դրանց: Այս հանգամանքը լարվածություն ստեղծեց համայնքի շրջանում, որն իր գազաթնակետին հասավ ԱՄՆ-ի պետքարտուղար Հիլարի Կլինթոնի և ամերիկահայերի 2010 թ. սկզբին կայանալիք հանդիպման հետաձգմամբ: Պետոդեպարտամենտը նախապես հրավիրել էր միայն մի քանի հայկական կազմակերպությունների, որոնք հավանություն էին տվել արձանագրություններին, կամ գոնե մեղմ<sup>16</sup> մոտեցում ունեին այս հարցի (ԱՀՀ, Հայկական բարեգործական ընդհանուր միություն, Վարդանանց ասպետներ, Հայ Առաքելական եկեղեցու Ամերիկայի Արևմտյան թեմ), և ԱՀԱԿ-ի վերաբերյալ: ԱՀԱԿ-ը, մեկուսացած այս խմբերից, և անարդար համարելով, որ Հայ Առաքելական եկեղեցու առաջնորդները, Հայ Կաթոլիկ և Բողոքական եկեղեցիները, Հայ օգնության միությունը և այլ կազմակերպություններ ներկայացված չեն, իր մտահոգությունն արտահայտեց ԱՄՆ-ի Պետոդեպարտամենտին<sup>17</sup>: Վերջինս էլ որոշեց հետաձգել հանդիպումը, պաշտոնապես՝

<sup>16</sup> Տես “Confronting the Politics of Exclusion”. “The Armenian Weekly”, February 4, 2010:

<sup>17</sup> Տես “ANCA Statement on the Proposed Meeting With Secretary of State Hillary Clinton”. “ANCA Press Release”, February 12, 2010:

ձմաբքի պատճառով, որը փետրվարի սկզբին դժվարացրել էր աշխատանքն ու հաղորդակցությունը մայրաքաղաք Վաշինգտոնում: Եվ, որքան մեզ հայտնի է, նոր հանդիպում այդպես էլ չնշանակվեց:

Այնուամենայնիվ, վերջին տարիներին նման բարդ շրջան չի եղել հայկական լոբբիի աշխատանքում: ԱՀԱԿ-ը և ԱՀՀ-ն հաճախ լոբբինգային գործունեություն են իրականացնում նույն հարցերի շուրջ: Ըստ որոշ աղբյուրների՝ նրանք անգամ երբեմն համակարգում են իրենց աշխատանքները, հատկապես՝ շնորհիվ իրենց առաջնորդների միջև առկա աշխատանքային ջերմ հարաբերությունների<sup>18</sup>: Երկու կազմակերպություններն էլ լիովին ընդունում են իրենց տարածայնություններն ու մրցակցությունը, սակայն նրանք հիմնականում արտաքննապես միասնություն են ցուցաբերում, ինչը ստեղծում է հայկական լոբբիի ուժեղ և միասնական կերպար:

Միակ հարցը, որի համար ԱՀԱԿ-ը և ԱՀՀ-ն զուգորդել են իրենց ջանքերը, Կոնգրեսի հայկական հարցերով հանձնախմբի ստեղծումն է: Կոնգրեսի հանձնախումբը կոնգրեսականների խումբ է, որը հետապնդում է միասնական օրենսդրական նպատակներ: ԱՀԱԿ-ը տալիս է Հայկական հանձնախմբի հետևյալ սահմանումը. «Կոնգրեսի հայկական հարցերով հանձնախումբը երկկուսակցական համաժողով է, որտեղ քննարկվում են քաղաքականությունները՝ ուղղված ԱՄՆ-ի և Հայաստանի կառավարությունների միջև զարգացող համագործակցության ընդլայնմանը և ամերիկացի ու հայ ժողովուրդների միջև կայուն հարաբերությունների ամրապնդմանը»<sup>19</sup>: Այն նաև հստակ կերպով օգտագործվում է օրենսդրության մեջ հայ համայնքի դիրքորոշումները զարգացնելու և պաշտպանելու և կոնգրեսականներին իրազեկելու ու նրանց վրա հնարավորինս ազդելու նպատակով: Հանձնախմբերը սովորաբար կապված են Ներկայացուցիչների պալատի հետ, թեև սենատորները նույնպես կարող են ոչ պաշտոնական անդամներ լինել: Կոնգրեսի հայկական հարցերով հանձնախումբը հիմնադրվել է 1995 թ. և այժմ ամենամեծ հանձնախմբերից մեկն է: 2010 թ. մարտի 30-ի տվյալներով՝ այն ունի 150 անդամ: Նրա համանախագահներն են Նյու Ջերսիի ներկայացուցիչ դեմոկրատ Ֆրենկ Փալոունը և հանրապետական Մարկ Քիրկը՝ Իլինոյսից: Նրա անդամներից շատերը Ներկայացուցիչների պալա-

---

<sup>18</sup> Stu Thomas Grjebine. L'influence des groupes d'intérêt ethniques sur la politique étrangère américaine. Succès et limites du Lobby Arménien aux États-Unis depuis la fin de la Guerre froide. Master's Degree Thesis, Science Po Paris, September 2007, P. 36 :

<sup>19</sup> "Position Papers". *Area Armenian*. "National Committee (ANC-SF)", P. 4 ([http://www.ancsf.org/files/ANC\\_Position\\_Papers.pdf](http://www.ancsf.org/files/ANC_Position_Papers.pdf)).

տից են, նրանք կարևոր հայ համայնք ունեն իրենց տարածքում, հաճախ հատուկ վերաբերմունք ունեն հայերի նկատմամբ և վերընտրման համար հույսեր են կապում նրանց հետ: Հետևաբար, նրանք պաշտպանում են համայնքի շահերը Կոնգրեսում, և հայկական լոբբիի պահանջները Կոնգրեսում արժանահավատություն, օրինականություն և ուժ են ձեռք բերում՝ շնորհիվ այս հանձնախմբի: Հանձնախմբի ներկայացուցիչներից ոմանք նաև այլ հանձնախմբերի անդամներ են, որոնք հաճախ մտերիմ են հայկականի հետ, ինչպես, օրինակ, հունականն է: Այնուամենայնիվ, պետք է նշել, որ որոշ անդամներ նաև թուրքական հանձնախմբի անդամներ են, և որ Հայկական հանձնախմբի այս 150 անդամներից շատերն իսկապես ակտիվ գործունեություն են ծավալում հայկական հարցերի պաշտպանության գործում: Այս հանձնախմբի կազմում կան շատ ազդեցիկ և կամ հայտնի մարդիկ, ինչպիսիք են Ներկայացուցիչների պալատի խոսնակ Նենսի Փելդսին, Ներկայացուցիչների պալատի ավագ անդամ Ջոն Դինջելլ<sup>\*</sup>, Էներգետիկայի և առևտրի հանձնաժողովի նախագահ Հենրի Ռոքսմենը կամ Ջեսի Ջեքսոն կրտսերը՝ աֆրոամերիկացի հայտնի ակտիվիստ Ջեսի Ջեքսոնի որդին և այլոք: Պետք է նաև նշել, որ Կալիֆոռնիայի ներկայացուցիչ Աննա Իշուն հայտարարել է իր հայկական արմատների մասին և Հայկական հանձնախմբի անդամ է:

## 5. ՀԱՅԿԱԿԱՆ ԼՈԲԲԻՆԳԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ

If we refer to the respective agendas of the ANCA and the AAA, they do not officially have any priority between these two main objectives. They have, historically, spent much energy and time on the Armenian Genocide recognition, which, to this date, they have not been able to obtain. In the meantime, it is clear that, since the independence of Armenia in 1991, much of attention and efforts has been dedicated to the support of Armenia and Karabakh, issues more diverse and on which the lobby has certainly obtained significant successes, although the global results remain mitigated.

Although the Armenian lobby has succeeded in making more than forty US States recognize the Armenian Genocide, it has not succeeded yet at the federal level. The US Congress has been in situation of recognizing the Genocide several times since the early 1990s, but it has never done it fully though, mostly because of the Executive Branch's concerns to turn Turkey against the US. An important step traditionally sought by the Armenian lobbyists and their supporters in Congress is the adoption of a resolution recognizing the Genocide by Congressional Committees, and especially by the House Committee on Foreign Affairs. The influence of this Committee is significant and it is traditionally hoped by the Armenians that Congressmen will follow the decision of their colleagues in the Committee. To this date, this has not worked though. Indeed, Committees have adopted non-binding resolutions recognizing the Armenian Genocide several times, including recently in March 2010, but the full recognition by the Congress has always then been blocked, mostly due to Executive pressures. Even President Obama, who recognized formally the Genocide when he was a Senator, refused to use the "G word" in his 2009 and 2010 April 24 statements. Although he explained in these statements that "[he] ha[s] consistently stated [his] own view of what occurred in 1915, and [his] view of that history has not changed [...]"<sup>22</sup>, he used the term "Medz Yeghern", meaning "great crime" in Armenian, and sometimes used by Armenians to refer to the

---

<sup>22</sup> "Statement of President Barack Obama on Armenian Remembrance Day", The White House, Office of the Press Secretary, April 24, 2009 and April 24, 2010.

Genocide of 1915. In the meantime, Secretary of State Clinton explained that the Obama administration firmly opposed the March 2010 House of Representatives Committee resolution and said “[...] we’ll work very hard to make sure it does not go to the House floor”<sup>23</sup>.

Regarding the US relations with Armenia and Karabakh, the Armenian lobby has been active on a large number of issues. The two most famous and emblematic ones are the passage of 1992 Freedom Support Act Section 907, which has prevented Azerbaijan to receive US foreign aid, except humanitarian one, for about ten years, and the annual financial assistance granted by the US to the Republic of Armenia. We will not insist much on these two issues, as they have already been the object of much attention from the media and, to a lesser extent, from the researchers. What is important to note is that the support of the lobby and of its friends in the Congress has made Armenia one of the most important recipient countries of US foreign direct financial aid *per capita*, and has prevented Azerbaijan from getting financial assistance, while Armenia, Georgia, and former Soviet Republics in general were receiving considerable aid. In the 1990s context, at a time when the US was doing much to geopolitically penetrated post-Soviet areas, with American companies hyper-active in getting the biggest piece of the Caspian oil pie possible, the Section 907 has been widely considered as a great achievement of the Armenian lobby. It is still mentioned as an emblematic case of ethnic lobbying success. Regarding the financial assistance to Armenia, it is also important to note that the Armenian lobby has managed to get an annual aid to Karabakh too. The Self-Proclaimed Republic of Nagorno-Karabakh, not recognized internationally, has received a sizeable financial assistance (usually between five and ten millions dollars per year) every year since the 1990s, while it is theoretically not allowed for a country to financially help a non-recognized other one.

In the meantime, the Armenian lobby has managed to get interesting results on other issues, less known but quite significant too. From 2006 to 2008, the ANCA has blocked the nomination of an American ambassador to Armenia, Richard Hoagland. Indeed, in 2006, the State Department decided

---

<sup>23</sup> “Official: Armenian Genocide resolution unlikely to get full House vote”. March 6, 2010. ([http://articles.cnn.com/2010-03-06/politics/us.turkey.genocide.debate\\_1\\_armenian-genocide-resolution-us-turkish-relations-turkish-foreign-ministry-spokesman?\\_s=PM:POLITICS](http://articles.cnn.com/2010-03-06/politics/us.turkey.genocide.debate_1_armenian-genocide-resolution-us-turkish-relations-turkish-foreign-ministry-spokesman?_s=PM:POLITICS)).

to recall John Evans from his position of US Ambassador to Armenia because he publicly referred to the Armenian Genocide. The “firing” of this Ambassador strongly displeased American Armenians, and the Armenian lobby managed to prevent the nomination of Richard Hoagland who, not only did not use the word “genocide” to qualify 1915 events, but also gave the impression to be dismissal regarding them<sup>24</sup>. This blocking has been widely viewed as a proof of the Armenian lobby’s strength. However, it is to note that this remained mostly symbolic since the attempt to impose John Evans’ recognition of the Genocide as a precedent to the State Department has not worked.

Another reaction of the Armenian lobby that tends to show its reactivity and efficiency was in 2002 Armenia’s fast removal from a US list of countries considered potential sources of terrorism. As Aram Hamparian explains, adding Armenia on this list would have meant “[...] citizens from Armenia would need to register and be photographed and fingerprinted and all the rest. And we were successful in just the course of a couple of days in getting Armenia taken off that list”<sup>25</sup>. This also was the occasion of cooperation between the Armenian Embassy in Washington and the Armenian lobby, since the Embassy appeared to be really active on this issue too, issue which concerned Armenian citizens<sup>26</sup>.

Although these achievements show the skills and efficiency of the Armenian lobby, they must not occult that it has not been able to impose its views on some issues. Leaving aside the Genocide recognition question, it appears that the Armenian groups have not been capable to push the US to integrate Armenia to some major regional economic projects. Because of Azerbaijan’s firm refusal, Armenia has, for example, been bypassed the US-backed BTC and BTE pipelines. In the same vein, the US has not managed to force Turkey to open its border with Armenia, despite regular efforts from the lobby and its supporters in the Congress. On the Karabakh issue, the Armenian lobby has obtained that Karabakh gets an annual financial

---

<sup>24</sup> See *Maura Reynolds*. Armenian Genocide Question Hits Home. “Los Angeles Times”, January 7, 2007.

<sup>25</sup> *Julie A. Corwin*. US: Confirmation Row Shows Power of Diaspora Lobbies. August 2, 2006 (<http://www.rferl.org/content/article/1070276.html>).

<sup>26</sup> See *John M. Broder*. U.S. Drops Armenian Men from List of Visitors Who Must Register. “The New York Times”, December 19, 2002.

assistance from the US. They also certainly managed to increase political leaders', especially Congressmen's, awareness of Karabakh's and Karabakhtsis' history and fate. However, it has not succeeded in making the State Department, whose diplomats are in charge of the peace negotiations in the Minsk Group framework, favourable to this position. Finally, it is also important to mention the Section 907 withdrawal. Since its adoption by the Congress in 1992, the Clinton administration had several times tried to withdraw it. However, it did not want to take risk on this issue and preferred not to insist too much. Therefore, it is only President Bush who, after September 11, pointed up the Azerbaijani support to the Global War on Terror to withdraw this section, and could do it without any decisive opposition from the Congress.

It appears in fact that when the American national interest, or issues perceived as of major importance in Washington, are at stake, it is tougher for the Armenian lobby to impose its views or even, in this case of the Section 907 withdrawal, to maintain a status quo situation.

\* \* \*

The generalized perception of a “small Armenian lobby capable to considerably influence the foreign policy of the United States” does not stand the test of a detailed examination. This does not mean that the Armenian lobby, on the contrary, is particularly “large” and full of resources, and that it has not succeeded in anything. It just means that size, resources, and successes/failures are complex notions in geopolitics and political science, and particularly when it comes to lobbying.

The Armenian community is relatively “small” at the national level, but cannot be ignored in some cities and areas of the US. In the American political and electoral system, this very fact makes the Armenian lobby potentially important in Washington. As the Jewish case shows\*, in the American context, it is very possible to be a relatively “small community” and a “big lobby”.

---

\* The Jewish/Pro-Israeli lobby is commonly considered the most influential ethnic lobby in Washington, whereas the American population of Jewish background is of about six million people.

The question of the evaluation of the Armenian lobby's efficiency and of its impact on the American foreign policy is particularly complex.

When one looks at the activities of the Armenian lobby, the major temptation is to overvalue its achievements and to overestimate its capabilities and its impact on the US foreign policy. It has succeeded in getting results it wanted to on some issues. However, it has not obtained the results it wanted to on some others and it has obtained "mixed" results on others (i.e. it has not obtained the exact or "full" result it expected –which is normal: lobbying is a matter of constant compromise).

In any case, the Armenian lobby does not call the shots in Washington. It has acquired expertise and skills on some political and technical issues and it has established strong relations with some Congressmen and some other lobbies. However, it still has great difficulties to reach the Executive Branch<sup>27</sup>, and it is not systematically successful when its requests regard questions considered of strategic importance by the Executive. Its efficiency also depends much on the US political and on the international geopolitical context.

Having said this, the consecutive temptation would be to underestimate the achievements and potential of the Armenian lobby. This would be a mistake too. Lobbying in Washington is an extremely difficult task. For an ethnic lobby that solely relies on the skills and motivation of its leaders, on the energy of its voluntary workers, and on the financial support of its supporters, the very fact of being capable to exist and to be considered as influential by most observers is a performance *per se*. Today, some of its achievements, the (involuntary) complementarity of its two major groups, and the remarkable experience in lobbying it has acquired make the Armenian lobby cannot be ignored in Washington.

This very fact is certainly more important than the exact results it has obtained. From the perspective of the Republic of Armenia, the importance of the US-Armenian lobby does not lay so much in the precise evaluation of its everyday work and results, but rather on its potential of intervention, especially its potential of intervention in case of major threat on Armenia. For example, as we have mentioned before, we cannot say that the Armenian

---

<sup>27</sup> See "Author's interview with Aram Hamparian, ANCA Executive Director". Washington, June 12, 2007.

lobby has succeeded in imposing Armenian positions regarding the Karabakh issue, and it is likely not to do so in a foreseeable future. However, we can be certain that the Armenian lobby will be ready to fight hard to prevent any unfavorable American (and potentially other countries') decision with regard to this issue.

Finally, the Armenian lobby has allowed Armenia to be well known by American political leaders and has made Armenia difficult to occult in Washington. Thanks to the Armenian lobby, Armenia is always handled with care in Washington. Both Congressmen and administrations know that they have to be very careful in their decisions related to Armenia; otherwise the Armenian groups could start actions that could have negative political impact on them. The Armenian lobby has contributed to make Armenia a special country from a Washingtonian viewpoint. From a minor geopolitical importance country, Armenia has become a country of relative importance to the US.

ՀԱՅԿԱԿԱՆ ԼՈՒՔԻՆԳԱՅԻՆ ԽՄԲԵՐԻ  
ԾԱԳՈՒՄՆ ՈՒ ՋԱՐԳԱՑՈՒՄԸ  
ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒՄ.  
ՔՆՆԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

*Ա. ԶՈՉԻԿՅԱՆ, փիլիսոփայության դոկտոր,  
Բենյուիի համալսարանի Գլոբալ ուսումնասիրությունների  
ֆակուլտետի դասախոս*



Վերջին երկու տասնամյակների ընթացքում Ամերիկայի Միացյալ Նահանգներում գործող հայկական լոբբինգային խմբերը կարողացան բավականաչափ ճնշում գործադրել Կոնգրեսի վրա՝ Հայաստանին և Լեռնային Ղարաբաղին տրվող ֆինանսական օգնությունն ավելացնելու և այն պահպանելու համար, ինչպես նաև ավելի մեծ ճնշում գործադրել Կոնգրեսի վրա, որպեսզի վերջինս ընդունի որոշում, ըստ որի՝ ԱՄՆ-ի պետպաշտոնյաները պարտավորվեն ճանաչել 1915 թ. հայերի կոտորածները որպես Ցեղասպանություն, և ոչ թե ողբերգություն կամ աղետ:

Ամերիկայի հայկական համայնքը ցրված է երկրով մեկ և գործում է քաղաքական և հոգևոր կառույցների շուրջ համախմբված: Այդ խմբերի մեջ են Հայ Առաքելական եկեղեցին (բաժանված է Հայաստանի թեմի և Սփյուռքի թեմի հետևորդների միջև), Հայ հեղափոխական դաշնակցությունը (ՀՀԳ-Դաշնակցական կուսակցությունը) և Հայկական բարեգործական ընդհանուր միությունը (ՀԲԸՄ): Թեև այս խմբերը երբեմն համագործակցում են միմյանց հետ, սակայն ունեն գաղափարախոսական և կազմակերպական շատ տարբերություններ:

ԱՄՆ-ում հայկական լոբբինգային գործունեության արմատները սկիզբ են առնում 1918 թվականից, երբ ՀՀԳ-ի կողմից հիմնադրվեց Հայաստանի անկախության ամերիկյան կոմիտեն (ՀԱԱԿ), որի նպատակն էր անկախ Հայաստանի ստեղծումը Նախագահ Վուդրո Վիլսոնի կողմից որոշված սահմաններում: ՀԱԱԿ-ը ներկայիս Ամերիկայի հայ ազգային կոմիտեի (ԱՀԱԿ) նախորդն էր. վերջինս Ամերիկայի հայկական համագումարի (ԱՀՀ) հետ միասին ԱՄՆ-ում գործող երկու խոշոր հայկական լոբբինգային խմբերից մեկն է:

## **ՀԱՅԿԱԿԱՆ ԼՈՐԲԵՆԳԱՅԻՆ ԽՄԲԵՐԻ ԾԱԳՈՒՄՆ ՈՒ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆԸ**

Ինչպես արդեն նշվել է, ԱՀԱԿ-ը իրեն համարում է ՀԱԱԿ-ի իրավահաջորդը և ակտիվորեն գործում է ամերիկյան լոբբինգային ոլորտում վերջին իննսուն տարիների ընթացքում: Իսկ ԱՀՀ-ը հիմնադրվել է 1972թ. և այդ ժամանակից ի վեր նպատակ է դրել միավորելու հայկական բոլոր լոբբինգերը (ներառյալ՝ ԱՀԱԿ-ը) և դարձնելու մի ընդհանուր մեկտեղված լոբբինգային խումբ: ԱՀՀ հիմնադրումից շատ չանցած՝ քաղաքական մրցակցության պատճառով երկու լոբբինգային խմբերի՝ ԱՀԱԿ և ԱՀՀ-ի միջև պառակտում առաջացավ, և մինչ առաջինը շարունակում էր իր գործունեությունը, ԱՀՀ-ը շատ արագ վերածվեց ոչ դաշնակցական խմբերի համար ԱՀՀ շուրջ միավորվելու և զուգահեռաբար իրենց լոբբինգային գործունեությունն իրականացնելու մի մեխանիզմի:

Մրցակցությունն այս երկու խմբերի միջև որքան գաղափարախոսական, այնքան էլ պատմական բնույթ է կրում: Երկու խմբերի առաքելությունների սահմանումը կարող է որոշ պատկերացում տալ երկու լոբբինգային խմբերի միջև առկա տարբերությունների մասին: Օրինակ՝ ԱՀԱԿ-ի նպատակները, ինչպես շարադրված է նրանց համացանցային կայքում, հետևյալն են.

- բարձրացնել հասարակության իրազեկվածության մակարդակը հոգուտ ազատ, միավորված և անկախ Հայաստանի,

- ազդել ԱՄՆ-ի քաղաքականության վրա և ուղղորդել այն հոգուտ ամերիկահայ համայնքի շահերի,

- ներկայացնել ամերիկահայերի հավաքական կարծիքը պետական քաղաքականության հարցերի վերաբերյալ՝ կապող օղակ դառնալով համայնքի և նրա կողմից ընտրված իշխանությունների միջև<sup>1</sup>:

Վերոնշյալ կետերը ՀՀԳ գաղափարական և քաղաքական աղբյուրների դրսևորումն են, ինչն ընդգծում է ԱՀԱԿ-ի նույնականացումը ՀՀԳ-ի հետ և դեկավարումը նրա կողմից:

ԱՀՀ նպատակները թեև մնան են ԱՀԱԿ-ի նպատակներին, սակայն կան դիտարկման արժանի մի քանի հետաքրքրական նրբություններ: Ըստ ԱՀՀ համացանցային կայքի՝ այդ կազմակերպության առաքելությունն է.

- պահպանել և ամրապնդել կազմակերպությունը՝ որպես հայ համայնքի առաջատար անկուսակցական պաշտպան, որը ներկայացնում է ամերի-

---

<sup>1</sup> Տես «About the ANCA». «ARMENIAN NATIONAL COMMITTEE OF AMERICA» (<http://www.anca.org/ancaprofile.php>):



կահայերի շահերը ԱՄՆ-ի պետական և քաղաքականաստեղծ հանրությանը,

– ապահովել ընդլայնվող հնարավորություններ՝ ամերիկյան ժողովրդավարական գործընթացին դաշնային, նահանգային և տեղական մակարդակներում բոլոր ամերիկահայերի ակտիվ մասնակցության համար,

– հաշվի առնել ամերիկահայ համայնքի պլյուրալիստական բնույթը, նրա հաստատությունների և կազմակերպությունների արժեքը, Ամերիկայի Միացյալ Նահանգների և նրա ժողովրդավարական կառույցների հանդեպ ամերիկահայ համայնքի պարտավորությունները,

– ընդլայնել կազմակերպությունների նորարարական, հետազոտական, կրթական և քարոզչական արշավները Հայոց Ցեղասպանության համընդհանուր ճանաչման համար և ապահովել Սփյուռքի համընդհանուր համաձայնությունը Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից մարդկության հանդեպ գործած այդ մեծ ոճրագործության հետևանքների հաղթահարման հարցում,

– նպաստել ԱՄՆ–Հայաստան և ԱՄՆ–Ղարաբաղ հարաբերություններին՝ հիմնված ժողովրդավարության, օրենքի գերակայության, ազատ շուկաների տարածաշրջանային անվտանգության ու ազատ առևտրի ընդհանուր տեսլականի վրա, և խորացնել այդ հարաբերությունները,

– խթանել պետական և մասնավոր քաղաքացիական հասարակության նախաձեռնությունները Հայաստանում և Ղարաբաղում՝ միաժամանակ պահպանելով կազմակերպության՝ այդ հասարակությունների ներքին գործերին չմիջամտելու քաղաքականությունը,

– խրախուսել ազատ շուկայական ուղղվածությամբ, կայուն և հուսալի զարգացումը Հայաստանում և Ղարաբաղում,

– ապահովել առավել արդյունավետ համագործակցություն հայ-ամերիկյան կազմակերպությունների միջև և հաստատել վերջնական արդյունքներին ուղղված աշխատանքային հարաբերություններ անկուսակցական լոբբինգային կառույցների և համապատասխան անհատների հետ ամբողջ աշխարհում,

– պահպանել և զարգացնել կազմակերպության մարդկային ռեսուրսների զարգացման մոդելը, ինչի շնորհիվ կգրանցվի էլ ավելի արդյունավետ գործող կամավորների և Համագումարի առաքելությանն ու տեսլականին համակիր աշխատակազմի շարունակական աճ<sup>2</sup>:

---

<sup>2</sup> Տես «Vision and Mission». «ARMENIAN ASSEMBLY OF AMERICA» (<http://www.aaainc.org/index.php?id=86>):

Վերոնշյալն ապացույցն է այն բանի, որ խումբն աշխատում է հանդես գալ ավելի շատ որպես Հայաստանին օգնող ԱՄՆ-ի քաղաքացիներ, քան որպես էթնիկ հայեր, որոնք այժմ ԱՄՆ-ի քաղաքացիներ են: Այս տեսանկյունից, միգրացիոն, կարող է լինել երկու խմբերն իրարից գատուղ մեկ այլ դասակարգում, այն, որ ԱՀԱԿ-ը ավելի շատ «հայկական» լոբբի է, իսկ ԱՀՀ-ը՝ «Հայաստանի»<sup>3</sup>:

### **ՀԱՄԵՄՏԱՌԹՅՈՒՆ ԻՍՐԱՅԵԼԱԿԱՆ ԼՈԲԲԻՆԳԻ ՀԵՏ**

Թեև ԱՄՆ-ում իրականացվող հրեական և հայկական լոբբինգային գործունեությունների համեմատությունը, մեղմ ասած, խնդրահարույց է՝ կապված երկու համայնքների միջև կառուցվածքային և պատմական տարբերությունների հետ, սակայն կան որոշ ընդհանուր տարրեր, որոնք արժեքավորում են համեմատություն կատարելու ջանքերը: Դրանք են, մասնավորապես, լոբբինգային գործունեությունների գործելաոճը և սկզբնաղբյուրները:

Հրեական համայնքի դեպքում 2007 թ. Ջոն Մերշայմերի և Ստեֆան Ռոյթի կողմից կատարված «Իսրայելական լոբբինգը և ԱՄՆ-ի արտաքին քաղաքականությունը» վերնագրով համընդգրկուն աշխատությունը արժեքավոր մեթոդներ է տրամադրում ԱՄՆ-ում ամերիկահրեական գործունեության դերի և ազդեցության վերլուծության համար<sup>4</sup>: Մերշայմերը և Ռոյթը շեշտում են այն հանգամանքը, որ չկա հրեական լոբբինգ Միացյալ Նահանգներում, և որ այս հարցին առնչվելիս պետք է խոսել «իսրայելական լոբբինգի» մասին:

Իսրայելական լոբբինգի ծագումը սերտորեն կապված է քրիստոնեական Միոնիզմի ծագման հետ (որը նախորդեց 19-րդ դարի վերջի Միոնիստական շարժմանը), որը քարոզում էր Իսրայելի հողում հրեաների համար պետության ստեղծման գաղափարը: Այնուամենայնիվ, իսրայելական լոբ-

---

<sup>3</sup> Այս բնութագրումը հիմնված է Ջոն Մերշայմերի և Սթիվեն Ռոյթի հեղինակած «Իսրայելական լոբբինգ և ԱՄՆ-ի արտաքին քաղաքականությունը» գրքում բերված փաստարկների հիման վրա, որտեղ նրանք հստակ ասեմանագատում են իսրայելական լոբբինգ և հրեական լոբբինգ: Առաջինը լոբբինգային խումբ է, որն ուշադրությունը դարձնում է Իսրայել պետության հետ իր գործունեությունը համաձայնեցնելուն, իսկ երկրորդը ավելի շատ ազգային փոքրամասնական լոբբինգային խումբ է, որի գործունեությունը վերաբերում է ԱՄՆ-ի տարածքում ծավալվելուն և ԱՄՆ-ի քաղաքացիների կողմից հրեական հարցերին օժանդակելուն (տես *John Mearsheimer and Stephen Walt. The Israel Lobby and U.S. Foreign Policy. New York, 2007*):

<sup>4</sup> Տես նույն տեղում:

բինգի ներկայիս արմատները սկիզբ են առնում 20-րդ դարի սկզբին ամերիկյան սիոնիստական շարժումների ձևավորումից և զուգընթաց էին Եվրոպայում նման շարժումների զարգացմանը: Դրանք լրբբինգային գործունեություն էին ծավալում այնպիսի գերտերություններում, ինչպիսիք են Մեծ Բրիտանիան և ԱՄՆ-ը, Պաղեստինում հրեաների համար պետություն ստեղծելու նպատակով<sup>5</sup>: Հաջորդ երեք տասնամյակների ընթացքում ամերիկյան սիոնիստական շարժումը փորձեց ֆինանսապես, ֆիզիկապես և բարոյապես օժանդակել Համաշխարհային սիոնիստական շարժման գործունեությանը<sup>6</sup>:

1948 թ. Իսրայելի Պետության հիմնումը Ողջակիզումից հետո համեմատության հետաքրքիր եզրեր ունի հայկական տարբերակի հետ, քանի որ հայերի դեպքում Ցեղասպանության հետ մեկտեղ նրանք կորցրեցին իրենց հայրենիքը, մինչ հրեաների դեպքում Ողջակիզումը կատալիզատոր դարձավ Իսրայելում հրեաների հայրենիքի ստեղծման համար: Գրեթե այդ ժամանակահատվածում էր, որ ստեղծվեց Հանրային հարաբերությունների ամերիկա-սիոնիստական կոմիտեն (հետագայում՝ Ամերիկա-իսրայելական հանրային հարաբերությունների կոմիտե)՝ ԱՄՆ-ի քաղաքական գործիչների վրա ճնշում գործադրելու համար, որպեսզի վերջիններս աջակցեն նորաստեղծ Իսրայելին: Իր ստեղծման օրից ԱԻՀՀԿ-ը մնում է որպես ԱՄՆ-ում Իսրայելի կառավարության լրբբինգային գլխավոր հաղթանակը և, աջակցություն ստանալով Իսրայելի կառավարությունից, ամուր հիմքեր է գցել որպես ոչ թե հրեական, այլ իսրայելական լրբբինգ<sup>7</sup>:

Այսօր ԱԻՀՀԿ-ի գործունեության հիմնական նպատակն է՝ ճնշում գործադրել ԱՄՆ-ի Կոնգրեսի վրա, որպեսզի այն Իսրայելի համար նպաստավոր օրենքներ ընդունի, նաև՝ ԱՄՆ-ի քոլեջների ուսանողներին առավել ուժեղ իսրայելամետ կրթությամբ ապահովել և համոզվել, որ ԱՄՆ-ի հաջորդ վարչակազմները կշարունակեն զբաղվել Իսրայելի անվտանգային մտահոգություններով<sup>8</sup>:

---

<sup>5</sup> Տես *Michael Oren*. Power, Faith, and Fantasy: America in the Middle East: 1776 to the Present. New York, 2007:

<sup>6</sup> Տես *Cheryl Rubenberg*. Israel and the American National Interest: A Critical Examination. Chicago, 1986:

<sup>7</sup> Տես "The Senate Foreign Relations Committee Investigates the Israel Lobby". "The Israel lobby archives. The Institute for Research: Middle Eastern Policy" (<http://irmep.org/ila/Senate/default.asp>):

<sup>8</sup> Տես *Glenn Frankel*. A Beautiful Friendship? In Search of the Truth about the Israel Lobby's Influence on Washington. "The Washington Post", July 16, 2006:

ԱԻՀՀԿ-ը իսրայելական գլխավոր լոբբինգային խումբն է, կան նաև մի շարք այլ խմբեր, որոնք իրենց լոբբինգային գործունեության մեջ համակարծիք են ԱԻՀՀԿ-ի հետ: Այս խմբերը, քաղաքական սպեկտրում ձախից (օրինակ՝ «Ջեյ փողոց») աջ (ԱԻՀՀԿ և Ամերիկայում գլխավոր հրեական կազմակերպությունների նախագահների համաժողով) տատանվելով և ունենալով տարբեր տեսակետներ խաղաղության գործընթացի կամ Իսրայելի արտաքին քաղաքականության վերաբերյալ, միակարծիք են Իսրայելի անվտանգության և բարեկեցության հարցի շուրջ: Հետաքրքրական է, որ կան նաև ոչ հրեական խմբեր (ինչպես, օրինակ, Իսրայելի համար միավորված քրիստոնյաները), որոնք դեր ունեն լոբբինգային այս գործունեության մեջ<sup>9</sup>:

### **ՀԱՅԿԱԿԱՆ ԼՈԲԲԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ**

Կառուցվածքային առումով հատկանշական է, որ և՛ ԱՀԱԿ, և՛ ԱՀՀ կենտրոնական գրասենյակները գտնվում են մայրաքաղաք Վաշինգտոնում, երկրորդական գրասենյակները սփռված են Միացյալ Նահանգներով մեկ, դուստր գրասենյակներ կան երկրագնդի տարբեր վայրերում, այդ թվում նաև Երևանում: Այնուամենայնիվ, նրանց միջև ավելի շատ տարբերություններ կան, քան նմանություններ: ԱՀԱԿ-ը գործում է բավական ապակենտրոնացված ձևով, ավելի շատ իր ստեղծող կուսակցության՝ ՀՀԳ-ի միջոցով: Այն ունի երկու տարածաշրջանային գրասենյակ՝ Արևելյան և Արևմտյան (շատ նման ՀՀԳ- կուսակցության բաժանումներին), որոնք գտնվում են համապատասխանաբար Ռոքթերթաունում (Մասսաչուսետս), և Գլենդելում (Կալիֆոռնիա): ԱՀԱԿ-ի՝ թվով մոտ 80 տեղական գրասենյակ կա, որոնք սփռված են Միացյալ Նահանգներով մեկ (թեև միջազգային գրասենյակները չեն ենթարկվում ԱՀԱԿ-ին և ունեն իրենց սեփական առանձին խորհուրդները, աշխատակազմը և ռազմավարությունները):

Թվում է, թե ԱՀՀ-ը գործում է ավելի շատ կենտրոնացված ձևով, և մայրաքաղաք Վաշինգտոնում տեղակայված կենտրոնական գրասենյակից բացի մի գրասենյակ ունի Հարավային Կալիֆոռնիայում և մեկն էլ՝ Նյու Յորք Միթիում: Այս գրասենյակների միջոցով են պլանավորվում և իրականացվում նրա քաղաքականությունը և բոլոր հասարակական կապերը: Գործունեության եղանակների առումով ԱՀԱԿ-ը կիրառում է շարքային

---

<sup>9</sup> Այս մասին ավելի հանգամանորեն տես *Alan Dershowitz. The Case for Peace: How The Arab – Israeli Conflict Can Be Resolved.* Hoboken, 2005:

անդամների ներգրավման մեթոդը. մոբիլիզացնում է տեղական գրասենյակները, անդամներին և համակիրներին՝ տարատեսակ գործունեությունների իրականացման համար: Այս մեթոդն ընդգծվում է ԱՀԱԿ-ի կողմից՝ որպես իր իշխանության հիմնական աղբյուր, ինչպես նաև հավակնություն առ այն, որ նա ամենամեծ և ամենաազդեցիկ ամերիկահայ հասարակական-քաղաքական կազմակերպությունն է: ԱՄՆ-ով մեկ սփռված գրասենյակների ու տեղական ներկայացուցչությունների ցանցի և համակիրների, ինչպես նաև աշխարհով մեկ տեղակայված դուստր կազմակերպությունների հետ համագործակցված աշխատելով՝ ԱՀԱԿ-ը ակտիվ կերպով լուծում է ամերիկահայ համայնքի տարատեսակ խնդիրները<sup>10</sup>:

ԱՀՀ մոտեցումը տարբեր է այն առումով, որ նա դիմում է աջակցություն ձեռք բերելու ավելի զուլված և ընտրողական տարբերակի՝ կազմակերպության համար աջակցություն ստանալու համար հույսը դնելով մեծահարուստ և հայտնի հայերի ու մասնագետների օգնության վրա: Այնուամենայնիվ, յուրաքանչյուր խմբի համար էլ համակիրների թիվը հեռու է հստակ լինելուց, երկու կազմակերպություններն էլ հավակնում են մոտավորապես 8000-10000 համակիրներ ունենալու, մի հավակնություն, որ չի կարող հիմնավորված լինել: ԱՀԱԿ գործադիր տնօրեն Արամ Համփարյանի Ֆեյսբուքում երկու գրաֆիկ կա, որոնցով համեմատություններ են տարվում ինչպես ԱՀԱԿ և ԱՀՀ համացանցային էջերի շարժի, այնպես էլ ԱՀԱԿ համացանցային էջի և Ամերիկա-իսրայելական հանրային հարաբերությունների կոմիտեի էջի շարժի հետ: ԱՀԱԿ և ԱՀՀ էջերի այցելությունների գրաֆիկների համեմատությունը ցույց է տալիս, որ ԱՀԱԿ-ի այցելությունների թիվը հաստատուն կերպով ավելի մեծ է (ԱՀԱԿ-ի 10000 այցելու՝ ԱՀՀ 5000-ի համեմատությամբ), իսկ ապրիլին այդ թիվը հասել էր 20000-ի: Թեև այս թվերը հեռու են յուրաքանչյուր խմբի անդամների թվի հաստատուն ցուցանիշ լինելուց, այնուամենայնիվ, արտահայտում են ԱՀԱԿ-ի ավելի գործնականորեն տրամադրված բնույթը:

Անկախ իրենց կառուցվածքային տարբերություններից՝ երկու խմբերն էլ ունեն սոցիալական աջակցության իրենց ծրագրերը, ինչպես նաև լոբբինգային գործունեության մեջ երիտասարդ ամերիկահայերին ներգրավելու պրակտիկ ծրագրեր, և, իհարկե, տարատեսակ նպատակների հետամուտ հովանավորչական ծրագրեր\*:

---

<sup>10</sup> Տես «About the ANCA». «ARMENIAN NATIONAL COMMITTEE OF AMERICA» (<http://www.anca.org/ancaprofile.php>):

\* Երկու լոբբիների համացանցային էջերում էլ կան պրակտիկաների և այլ հնարավորությունների մանրամասն բացատրությունները: Դրանց մեջ է նաև ԱՀԱԿ-ի Քեֆիթը Գեյթուեյ

## ԽՆԳԻՐՆԵՐ ԵՎ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐ

Ե՛վ ԱՀԱԿ-ը, և՛ ԱՀՀ-ը գործում են լոբբինգային խմբերի ձևաչափում՝ դաշինքներ կազմելով այլ լոբբինգային խմբերի հետ (ինչպես ԱՀԱԿ-ի դեպքում), կամ օգտագործելով մասնագիտական և ֆինանսական կապերը (ԱՀՀ դեպքում): Սակայն այդ երկու խմբերի գործունեության մեջ կողմեր կան, որ շեշտը դնում են համագործակցության վրա, հատկապես, երբ խոսքը վերաբերում է Հայկական հարցերով Կոնգրեսի խմբին կամ ԱՄՆ-ի Կոնգրեսի կողմից Հայոց Ցեղասպանության ճանաչման հարցում լոբբինգին<sup>11</sup>:

Հայկական հարցերով Կոնգրեսի հանձնախմբի հետ համագործակցելուց բացի երկու հայկական լոբբիներն ունեն իրենց առաջնահերթ լոբբինգային հարցերը, որոնք թեմատիկ առումով համընկնում են, սակայն ռազմավարական առումով՝ երբեք: Լոբբինգային հիմնական ջանքերը կարելի է բաժանել երկու մեծ ոլորտների. Հայոց Ցեղասպանության պաշտոնական ճանաչումը ԱՄՆ-ի կողմից և ԱՄՆ-ի կողմից Հայաստանին ու չճանաչված Լեռնային Ղարաբաղի Հանրապետությանն օգնությունը:

### *Հայոց Ցեղասպանության ճանաչումը*

Հայոց Ցեղասպանության ճանաչումը ԱՄՆ-ի կողմից և ապրիլի 24-ը ԱՄՆ-ում անմեղ զոհերի հիշատակի օր ճանաչելը համարվում է առաջինը ԱՀԱԿ և ԱՀՀ գերակայությունների մեջ: Երկու լոբբինգային խմբերն էլ փորձում են ազդել Կոնգրեսի անդամների վրա՝ Կոնգրեսում Ցեղասպանության ճանաչումն անցկացնելու համար, ինչպես նաև լոբբինգ են անում նախագահական ընտրությունների ժամանակ՝ հարկադրելու նախագահական թեկնածուներին խոստանալ, որ կօգտագործեն «Ցեղասպանություն» բառը ապրիլի 24-ին՝ բնութագրելով հայերի զանգվածային կոտորածները<sup>\*\*</sup>: Ավելին, ԱՀԱԿ-ը մասնավորապես նպատակադրված է, որ օրենսդիր կարգով տեղական, մասնագային և քաղաքային մակարդակներում ճանաչվի Հայոց Ցեղասպանությունը: Այս հարցի շուրջ ԱՀԱԿ-ի լոբբինգը սերտորեն կապված է մյուս միջազգային ԱՀԱԿ գրասենյակների վարած քաղաքա-

---

ծրագիրը, որի մեջ տարատեսակ պրակտիկայի ծրագրեր են ընդգրկված: Ինչ վերաբերում է ԱՀՀ-ին, ապա այն ևս ունի պրակտիկայի մի շարք զանազան ծրագրեր, որոնցից մեկն էլ մայրաքաղաք Վաշինգտոնում՝ Թերջենյան-Թոմասի ծրագիրը:

<sup>11</sup> Տես «Congressional Caucus on Armenian Issues» (<http://www.aaainc.org/index.php?id=39>):

<sup>\*\*</sup> Միայն Նախագահ Ռոնալդ Ռեյգանն է 1981 թ. ապրիլի 22-ին օգտագործել Ցեղասպանություն բառը հայերի կոտորածների վերաբերյալ:

կանության հետ՝ իրենց համապատասխան երկրներում նույն ձևով ճանաչման հասնելու համար: Օրինակ՝ Ռուսաստանում, Եվրոպայում (հատկապես՝ Ֆրանսիայում), Մերձավոր Արևելքում և Կանադայում ԱՀԱԿ գրասենյակները փորձում են ստիպել իրենց կառավարություններին ճանաչել Հայոց Ցեղասպանությունը և պատասխանատվության ենթարկել դրա համար Թուրքիային: ԱՀԱԿ գրասենյակների կողմից այս համաշխարհային արշավը օգտագործվում է ԱՀԱԿ-ի կողմից որպես ԱՄՆ-ի կառավարության վրա ազդեցություն գործելու մեխանիզմ՝ դրդելով վերջինիս նույնպես կանգնելու ցեղասպանության ճանաչման ճանապարհին:

Նման ձևով ԱՀՀ օգտագործում է նույն մեթոդները, ինչ ԱՀԱԿ-ը, այն տարբերությամբ, որ 1996 թ. այն ստեղծեց Հայ ազգային ինստիտուտը (ՀԱԻ), որի նպատակն էր հավաքել Ցեղասպանությունը վկայող փաստաթղթեր, հրատարակել հետազոտական նյութեր, պատրաստել կրթական համակարգում կիրառվելիք ուսուցողական նյութեր, խթանել կրթաթոշակների հատկացումը, հասարակական աջակցություն դրսևորել համայնքին, համագործակցել մամուլի հետ և ուսումնասիրել իրավական հնարավոր տարբերակները Հայոց Ցեղասպանության ժառանգությունն ապահովելու համար<sup>12</sup>:

2003 թ. նոյեմբերին ՀԱԻ-ը միավորվեց (Վաշինգտոնի, – ծ.թ.) Հայոց Ցեղասպանության քանգարանի և հուշահամալիրի հետ:

Ցեղասպանության ճանաչման հարցում լոբբինգային ջանքերից զատ ԱՀԱԿ-ը լոբբինգ է արել նաև Թուրքիային ԱՄՆ-ի կողմից վաճառվող զենք-զինամթերքի հարցում, ինչպես նաև պայքարել է որոշ չափով նաև Հայաստանին Կասպյան նավթամուղի նախագծերից դուրս թողնելու դեմ: Թուրքիային ուղարկվող ռազմական օգնությունը կրճատելու համար ԱՀԱԿ-ը սերտորեն համագործակցել է ուրիշ ազգային փոքրամասնությունների լոբբիների, հատկապես՝ հունականի հետ, քանի դեռ Թուրքիան չի լուծել մարդու իրավունքների պահպանմանն առնչվող իր խնդիրները: ԱՀԱԿ-ը պնդում է, որ գերզինված և հայերի ցեղասպանության համար չզղջացող Թուրքիայի կառավարությունն իրենից ներկայացնում է Հայաստանի Հանրապետության անվտանգության դեմ ուղղված ակնհայտ և առկա սպառնալիք: Այսօր Թուրքիային տրվող ԱՄՆ-ի ռազմական դրամաշնորհները և վարկերը 1991 թ. տարեկան 600 մլն դոլարից հավասարեցվել են զրոյի, ինչի պատճառը Կոնգրեսի մտահոգությունն էր Թուրքիայի կողմից իր

---

<sup>12</sup> Տես "Frequently Asked Questions about ANI". "ANI" (<http://www.armenian-genocide.org/anifaq.html>):

երկրում մարդու իրավունքների ոտնահարման և արտասահմանում ագրեսիայի հարցում: ԱՄՆ-ի կողմից Թուրքիային տրվող ռազմական օգնությունը կասեցնելու՝ Կոնգրեսի հիմնավորումներից մեկն էլ այն էր, որ Թուրքիան հրաժարվեց

1. դադարեցնել Հայոց Յեղասպանությունը հերքելու իր ամոթալի քարոզարշավը,
2. հանել ԱՄՆ-ի կողմից Հայաստանին տրվող օգնության շրջափակումը,
3. բարելավել մարդու իրավունքներն իր երկրում,
4. դուրս բերել զորքերը Կիպրոսից,
5. ճանաչել քրդերի իրավունքները,
6. վերացնել քրիստոնյա համայնքների վրա դրված անարդար սահմանափակումները<sup>13</sup>:

Այս առումով լոբբինգային մեծ աշխատանք է կատարել ԱՀԱԿ-ը՝ կասեցնելով ԱՄՆ-ի օգնությունը Թուրքիայով Կասպից ծովից Միջերկրական ծով նավթամուղ անցկացնելու նախագծին: Այս նախագծի դեմ հիմնական առարկությունը, որ բերում է ԱՀԱԿ-ը, այն է, որ նավթամուղը շրջանցում է Հայաստանը և մեկուսացնում Երևանը՝ հակամարտություններ սադրելով տարածաշրջանում:

### *Հայաստան և Լեռնային Ղարաբաղ*

1988 թ. դեկտեմբերի աղետաբեր երկրաշարժից հետո, որ ցնցեց Հայաստանը, հայ համայնքը երկու լոբբինգային խմբերի հետ միասին հաստատուն օժանդակություն է ցուցաբերել երկրաշարժից տուժածներին սկզբում դրամահավաքներով և նվիրատվություններով, իսկ շուտով նաև լոբբինգով ԱՄՆ-ի Կոնգրեսում՝ Հայաստանին և Լեռնային Ղարաբաղին օգնություն հատկացնելու համար\*:

Այս համատեքստում Հայաստանին և Լեռնային Ղարաբաղին տրվող օգնությունը պայմանավորված է եղել նաև ԱՄՆ-ի կողմից Թուրքիային և Ադրբեջանին տրվող օգնության սահմանափակմամբ: Օգտվելով 1992 թ. Ազատության աջակցության ակտի 907 կետից, որով կասեցվում է ԱՄՆ-ի

---

<sup>13</sup> Տես “U.S. Arms Sales/Transfers to Turkey” ([http://www.anca.org/hill\\_staff/position\\_papers.php?ppid=11](http://www.anca.org/hill_staff/position_papers.php?ppid=11)):

\* Նախապես սահմանված լինելով տարեկան 90 միլիոն դոլար՝ ԱՄՆ-ի օգնությունը Հայաստանին վերջին մի քանի տարիների ընթացքում կրճատվել է, սակայն կանոնավոր կերպով ամեն տարի հատկացվում է:



ռազմական օգնությունը Ադրբեջանին, քանի դեռ վերջինս շրջափակման մեջ է պահում Հայաստանը, հայկական լոբբին փորձել է հնարավորինս մեծ ճնշում գործադրել Ադրբեջանի վրա, որպեսզի հավասար հնարավորություններ ընձեռվեն Հայաստանին և Լեռնային Ղարաբաղին: 2001 թվականից Սենատի կողմից մի մերժում է հաստատվել, որը հնարավորություն է տալիս ԱՄՆ-ի Նախագահին ամեն տարի, ելնելով իր ազատ ընտրության հնարավորությունից, մերժելու այդ կետը, այն, ինչ այդ ժամանակից ի վեր արել են ԱՄՆ-ի բոլոր նախագահները<sup>14</sup>:

Ինչ վերաբերում է Լեռնային Ղարաբաղի ապագային, ապա երկու հայկական լոբբիներն էլ ակտիվ կերպով հետամուտ են ԱՄՆ-ի կողմից Լեռնային Ղարաբաղի անկախության ճանաչմանը՝ ելնելով վերջինիս ինքնորոշման և Ադրբեջանի կազմում մշակութային ու ֆիզիկական ոչնչացումից պաշտպանվելու նախապայմանից:

### **ՈՒՐ են այժմ նրանք հասել**

Մինչև հիմա ԱՄՆ-ում հայկական լոբբինգային խմբերը համեմատաբար մեծ հաջողությունների են հասել իրենց նպատակների իրականացման մեջ: Դիշտ է, ժամանակ առ ժամանակ եղել են նաև թերացումներ ու ձախողումներ, սակայն հայկական լոբբիի ընդհանուր ձեռքբերումները դրական են եղել: Այդ ամենով հանդերձ, այդ լոբբիի առջև դեռ կան մեծ մարտահրավերներ Հայաստանի կառավարության պահանջներն ու ընկալումները համակարգելու համար: Այս առումով ԱՀՀ-ը կարծես ավելի պետականամետ է և Հայաստանի կառավարությունների ցանկությունների, ռազմավարությունների և գործողությունների հարցում գործում է ավելի ներդաշնակ: Սա չի նշանակում, թե ԱՀԱԿ-ը հետամուտ է հայկական պետության հակասող քաղաքականություն վարելուն: Սակայն փաստը, որ ԱՀԱԿ-ը գաղափարական առումով ավելի տոգորված է, քան ԱՀՀ-ը, ինչպես նաև ելնելով Հայաստանում գործող ՀՀԳ կուսակցության դիրքորոշումից, որը երբեմն չի համընկնում իշխող կառավարության կողմից վարվող քաղաքականության հետ, արտասովոր երևույթ է, երբ ԱՀԱԿ-ը ինչ-որ հայտարարություններ անելիս կամ ինչ-որ հարցերի լոբբինգով զբաղվելիս, պարտադիր չէ, որ արտահայտի Հայաստանի ցանկությունները կամ ռազմավարությունները:

---

<sup>14</sup> Տես "FOREIGN OPERATIONS, EXPORT FINANCING AND RELATED PROGRAMS APPROPRIATIONS ACT, 2002" ([http://frwebgate.access.gpo.gov/cgi-bin/getdoc.cgi?dbname=107\\_cong\\_public\\_laws&docid=f:publ115.107](http://frwebgate.access.gpo.gov/cgi-bin/getdoc.cgi?dbname=107_cong_public_laws&docid=f:publ115.107)):

Թերևս, այս երկատման լավագույն դրսևորումն այն խառնաշփոթն է, որն առաջացավ Մփյուռքում այն բանից հետո, երբ 2009 թ. հոկտեմբերի 10-ին ստորագրվեցին Հայաստան – Թուրքիա արձանագրությունները: Արձանագրությունների ստորագրումից հետո շաբաթներով և ամիսներով ձգվեց պայքարը, հատկապես՝ ԱՄՆ-ում հայկական համայնքի երկու տարբեր ճյուղերի միջև: Մի կողմից, մի շարք խմբեր աջակցում էին Հայաստանի կառավարությանն իր ջանքերի մեջ՝ անկախ նրա քաղաքականության բնույթից, իսկ մյուս կողմից՝ կային Երևանին քննադատողներ, որ մեղադրում էին նրան պարտվողականության, ճակատագրապաշտության և ազգի շահերը դավաճանելու մեջ: Առաջին խմբին էր պատկանում ԱՀՀ-ը, որը պաշտպանեց և աջակցեց Նախագահ Մերժ Սարգսյանին, երբ նա սկսեց իր մեծ շրջագայությունը արձանագրությունների ստորագրումից հետո՝ այցելելով տարբեր հայկական համայնքներ և բացատրելով նրանց իր ռազմավարությունը: Իսկ ԱՀԱԿ-ը մնաց Նախագահի քաղաքականության ամենաբարձրագույն քննադատը՝ կազմակերպելով բողոքի ակցիաներ այն քաղաքներում, ուր այցելում էր Նախագահ Սարգսյանը: ԱՀՀ և ԱՀԱԿ դիրքորոշումների այս երկատումը կարող էր հեշտությամբ օգնել փոխելու նրանց «պիտակները», որոնց մասին այս աշխատության մեջ արդեն խոսել էինք, այն է, որ ԱՀՀ-ը կարող է համարվել «Հայաստանի լոբբի», իսկ ԱՀԱԿ-ը՝ ավելի շատ «հայկական լոբբի»:

### **Հայացք ապագային**

Հայկական լոբբինգային խմբերի մասին այս սեղմ ակնարկը և համեմատաբար կարճատև վերլուծությունը մենք կատարեցինք՝ նպատակ ունենալով վերջնականապես պատասխանելու այն հարցին, թե որքանով է հնարավոր (եթե առհասարակ հնարավոր է) համաձայնեցնել այս երկու խմբերի գործունեությունը Հայաստանի ընդհանուր արտաքին քաղաքականության ռազմավարության հետ: Այստեղից կարելի է մի հետևություն անել, որ չնայած իրենց չափերին և ֆինանսական ռեսուրսներին՝ հայկական լոբբիները բավական հաջողակ են<sup>15</sup>: Ամենամեծ մարտահրավերն այն է,

---

<sup>15</sup> Թեև չկան վստահելի տվյալներ ո՛չ ԱՀՀ, ո՛չ ԱՀԱԿ կողմից իրենց լոբբինգային գործունեության վրա ծախսվող գումարի չափի մասին, սակայն որոշ տվյալներով՝ ԱՀԱԿ-ի լոբբինգային ծախսերը հաշվվում են 50.000 դոլարի չափով 2009 թ. համար, իսկ ԱՀՀ ծախսերը նույն տարվա համար կազմում են 332.000 դոլար: Սա նշանակում է, որ հայկական լոբբիները ծախսում են տարեկան 400.000 դոլարից պակաս իրենց լոբբինգային գործունեության համար (<http://www.opensecrets.org>):

սակայն, որ հարկավոր է ճիշտ գնահատել այս լոբբինգների և Հայաստանի կառավարության միջև համաձայնեցվածությունը:

Ինչպես արդեն նշվել է, թվում է, թե ԱՀՀ լոբբինգային ջանքերը հազվադեպ են հակասում Երևանին, ու ԱՀՀ և պաշտոնական Երևանի միջև համաձայնեցման մակարդակը բավական բարձր է: Մյուս կողմից՝ Երևանի հետ ԱՀԱԿ համագործակցությունը հազվադեպ է «երերացել»: Այդ առիթներն էլ կարելի է վերագրել տարբեր խնդիրների, դրանք են՝

1. Հայաստանում ՀՀԴ քաղաքական դիրքորոշումը. հանդիսանում է արդյոք ՀՀԴ-ն իշխող կուսիցիայի անդամ կամ ընդդիմության մեջ է, զգալի ազդեցություն ունի ԱՀԱԿ-ի և Երևանի վարած քաղաքականության հարցում,

2. այն հարցերը, որոնք տվյալ պահին լոբբինգի առարկա են. ԱՀԱԿ-ը ոչ մի փոխզիջման չի գնում Հայոց Ցեղասպանության հարցն օգտագործելով Թուրքիայի վրա ազդեցություն գործելու համար հնարավոր առիթի դեպքում: Այս առումով հայկական տարբեր վարչակարգեր երբեմն առանձնացրել են Ցեղասպանության ճանաչման խնդիրը Թուրքիայի հետ հարաբերությունների կարգավորման խնդրից:

3. Հայաստանում և Սփյուռքում (մասնավորապես՝ ԱՄՆ-ում) ԱՀԱԿ-ի գործունեության տարբեր դրսևորումները. 1991 թ. Հայաստանի անկախացումից հետո ՀՀԴ-ն դարձավ ոչ միայն Սփյուռքում, այլ նաև Հայաստանում գործող կազմակերպություն: Վերջին տարիներին Հայաստանում ՀՀԴ-ն իրեն դրսևորել է որպես մի քաղաքական կուսակցություն, որը մասնակցում է նախընտրական դաշինքներին, գործում է որպես մի քաղաքական կուսակցություն, որի նպատակն է իշխանության հասնել, ինչպես նաև փորձում է ինքնահաստատվել հայաստանյան քաղաքական դաշտում որպես հուսալի այլընտրանք: Այս փորձերը շատ մտահոգությունների տեղիք են տվել կուսակցության անդամների շարքերում Սփյուռքում, որտեղ շատերն այդ դաշինքները դիտարկում են որպես քաղաքական իշխանության հասնելու համար կուսակցության գաղափարախոսությունը գոհաբերելու փոխզիջումային քայլեր: Ուհատի, թեև կուսակցության ղեկավարությունը մեծապես գտնվում է Հայաստանում գործող իր քաղաքական աջակցությունից կախման մեջ, շատ հավանական է, որ ԱՀԱԿ-ը չիտևևի նրա հանձնարարականներին:

Վերոնշյալ կետերը, որոնց շարքը կարելի էր և շարունակել, պարզապես հայկական լոբբինգային խմբերի և պաշտոնական Երևանի գործունեությունը համաձայնեցնելու դժվարին խնդրի մի քանի օրինակ են: Սակայն առաջ նայելու և համակարգելու հնարավորությունը բավական իրա-

տեսական է մի քանի տարբերակով: Այդ հավանականություններից մեկն այն է, որ ընդլայնվի փոխգործությունը մի կողմից լոբբիների և մյուս կողմից՝ Հայաստանի կառավարության միջև:

Մեկ այլ հնարավորություն է ԱՄՆ-ում հայ մասնագետների տվյալների համընդգրկուն բազայի ստեղծումը և մասնագիտական գիտաժողովների կազմակերպումը, որոնց շրջանակներում կստեղծվեն պաշտոնական զեկույցներ տարբեր թեմաներով, օրինակ, մասնավորապես՝ ինչ խնդրել ԱՄՆ-ից տնտեսական, սոցիալական կամ ռազմական օժանդակության առումով, որոնք են այն հնարավոր քաղաքական ուղղությունները, որ ԱՄՆ-ը կընտրի ցանկացած վարչակազմի ներքո, ինչ տարբերակներ ունի Հայաստանի արտաքին քաղաքականությունը, որ ԱՄՆ-ին ինչ-որ բան տա՝ առանց վտանգելու պաշտոնական Երևանի արտաքին քաղաքականության առաջնահերթությունները, և այլն:

Այդուհանդերձ, վերջնական տարբերակ պետք է լինի Հայաստանի լոբբինգային գործունեության ընդլայնումը՝ ներգրավելով ամերիկացիների, որոնք անտարբեր չեն Հայաստանի բարեկեցության նկատմամբ (Իսրայելի համար միավորված քրիստոնյաների մման), մի գաղափարով, որը կարող է շատ ամերիկացիների վերաբերել: «Ամերիկացիներ հանուն Հայաստանի» անվանմամբ մի բաց խումբ կարող է ամրապնդել Երևանի ճնշում գործադրելու մեխանիզմին աջակցելու հիմքը Վաշինգտոնում՝ կոչ անելով ամերիկացիների ավելի լայն լսարանին և ոչ թե պարզապես հիմնվելով մոտ մեկ միլիոն ամերիկահայերի ձայների վրա: Այդ խումբը ենթադրաբար կարող է իր ձայնն ուղղել ամերիկյան հասարակության տարբեր հատվածներին, ինչպես, օրինակ, շեշտել Հայաստանի մասին Աստվածաշնչի հիշատակումները և «մուսուլմանության ծովում քրիստոնեական կղզու» մասին մանտրան ավելի հավատացյալ զանգվածների մոտ, ընդգծել Ադրբեջանի և Թուրքիայի մտերմությունը Իրանի հետ ամերիկյան ավելի անգիջող լսարանի մոտ՝ հիշելով, որ թեև այս ռազմավարությունը կարող է ծայրահեղ օտարատյաց և ռասիստական թվալ, սակայն Երևանի համար հնարավորինս շատ աջակցություն ստանալը կարող է արդարացնել միջոցները: Այս տարբերակին հետևելով՝ միանգամայն հնարավոր կլինի ստեղծել լոբբինգային տարբեր խմբերի ցանց, որոնցից յուրաքանչյուրը Հայաստանին աջակցելու իր պատճառները կունենա:

Վերոհիշյալ որոշ գաղափարներ ավելի հեշտ է իրականացնել, քան մյուսները, սակայն հայկական լոբբինգային գործողություններում պետության ներկայությունը կարևոր է: Հայաստանը չի կարող իրեն թույլ տալ

չօգտվել Սփյուռքի անհատական և ինտուիտիվ հսկայաձավալ ռեսուրսներից: Հայաստանի լոբբինգը զարգացնելու պահանջը չափազանց կարևոր է՝ չմոռանալով նաև, որ անհրաժեշտ է հայկական լոբբինգ: Այս գործընթացում մարտահրավերը հաշտեցման միջոցներ գտնելն է այն դեպքերում, երբ պետության (Հայաստանի լոբբի) կարիքները և ազգի (հայկական լոբբի) կարիքները չեն համընկնում:

# (DE)EVOLUTION OF ARMENIA(N) LOBBY GROUPS IN THE US: A CRITICAL SNAPSHOT

*A. KOTCHIKIAN, PhD, Lecturer,  
Global Studies Department, Bentley University*

During the past two decades, Armenian lobby groups in the United States managed to exercise enough pressure on the Congress to increase and maintain financial aid to Armenia and Nagorno-Karabakh as well as increased pressure to pass a congressional resolution obligating US officials to recognize the Armenian massacres of 1915 as Genocide rather than tragedies or calamity.

The Armenian community in the US is dispersed throughout the country and operates by congregating around political and religious establishments. Some of these groups include the Armenian Apostolic Church (divided between followers of Armenia based Diocese and Diaspora based prelacy), the Armenian Revolutionary Federation (ARF-Dashnaktsutyun) and Armenian General Benevolent Union (AGBU). While these groups do cooperate with each other occasionally, they do have a lot of differences ideologically as well as organizationally.

The origins of Armenian lobbying activism in the US go as far back as 1918 when the American Committee for the Independence of Armenia (ACIA) was founded by the ARF with the goal of the establishment of an independent Armenia within the borders arbitrated by President Woodrow Wilson. The ACIA is the predecessor of modern-day Armenian National Committee of America (ANCA) which along with the Armenian Assembly of America (AAA-Assembly) remain the two major Armenian lobby groups in the US.

## **THE ORIGINS AND IDEOLOGIES OF ARMENIAN LOBBY GROUPS**

As mentioned earlier, the ANCA considers itself the successor of ACIA and has been active in the US lobbying field throughout most of the past 90 years. On the other hand the AAA was founded in 1972 and at that point it aimed at uniting all the existing Armenian lobby groups (including the ANCA) as a unified and singular lobby group. Soon after its founding,

political rivalries led to a schism between the two lobby groups, ANCA and AAA and while the former continued its already existing activities, the AAA quickly became a mechanism for non-ARF groups to congregate around the AAA for their parallel lobbying activities.

The rivalry between the two groups is as much as ideological as it is historical. The mission statement of the two groups could provide some insight as to the differences between the two lobby groups. For instance the ANCA's goals, as articulated by their website, state the following:

- to foster public awareness in support of a free, united and independent Armenia;

- to influence and guide U.S. policy on matters of interest to the Armenian American community;

- to represent the collective Armenian-American viewpoint on matters of public policy, while serving as liaison between the community and their elected officials<sup>1</sup>.

The above points are a manifestation of and are derived from ARF ideological and political sources highlighting the extent to which ANCA is identified with and is directed by the ARF.

The AAA's goals while similar to those of ANCA do have some interesting nuances that are worth examining. According to the AAA website the mission statement of the organization is:

- to sustain and strengthen the organization as the community's pre-eminent non-partisan advocate representing Armenian-American interests to the U.S. public and the policy-making community;

- to provide ever expanding opportunities for the active participation of all Armenian-Americans in the American democratic process at the federal, state and local levels;

- to be ever mindful of the pluralistic character of the Armenian-American community, the worth of its institutions and organizations, and the obligations of the Armenian-American community to the United States of America and its democratic institutions;

- to expand the organizations pioneering research, education, and advocacy campaigns for universal affirmation of the Armenian Genocide

---

<sup>1</sup> See «About the ANCA». «ARMENIAN NATIONAL COMMITTEE OF AMERICA» (<http://www.anca.org/ancaprofile.php>).

and to secure Diaspora-wide consensus for the Government of the Republic of Armenia to deal with the consequences of this crime against humanity;

– to support and deepen the U.S.–Armenia and U.S.–Karabakh relationships based upon a common vision of democracy, the rule of law, open markets, regional security and unfettered commerce;

– to promote public and private civil society initiatives within Armenia and Karabakh, simultaneously maintaining the organization’s policy of non-interference in those societies’ internal affairs;

– to encourage free-market oriented, sustainable and responsible development within Armenia and Karabakh;

– to lead in securing increasingly more effective collaboration among Armenian-American organizations and to establish results-oriented working relationships with non-partisan advocacy entities and relevant individuals world-wide;

– to maintain and enhance the organization’s human development model, resulting in the continuous growth of ever more effective volunteers and staff committed to the Assembly’s mission and vision<sup>2</sup> (emphasis added).

The highlighted sections above might be indicative as to the emphasis the group is making to come across more like US citizens helping Armenia than ethnic Armenians who happen to be US citizens. From this perspective perhaps one categorization that could distinguish the two groups is that while the ANCA is more of an Armenian lobby, the AAA remains more of an Armenia lobby<sup>3</sup>.

### ***Comparison with the Israel Lobby.***

Comparing the Jewish and Armenian lobby activities in the United States is problematic (to say the least) because of the structural and

---

<sup>2</sup> See “Vision and Mission”. “ARMENIAN ASSEMBLY OF AMERICA” (<http://www.aaainc.org/index.php?id=86>).

<sup>3</sup> This characterization is based on the arguments made by John Mearsheimer and Stephen Walt in their book titled “The Israel Lobby and U.S. Foreign Policy”, where they make a clear distinction between “Israel lobby” and “Jewish lobby”. While the former is a lobby group focusing on synching their activities with the State of Israel, the latter would be more of an ethnic lobby group focusing on operating within the parameters of the US and as US citizens helping Jewish causes (see *John Mearsheimer and Stephen Walt. The Israel Lobby and U.S. Foreign Policy. New York, 2007*).



historical differences between the two communities. Meanwhile there are some common elements which could make such an endeavor worthwhile, specifically the *modus operandi* and origins of lobbying activities.

In the case of the Jewish community, the comprehensive study conducted by John Mearsheimer and Stephen Walt in 2007 and titled “The Israel Lobby and U.S. Foreign Policy” provides valuable tools to analyze the role and impact of Jewish-American activities in the US<sup>4</sup>. The emphasis that Mearsheimer and Walt make is that there is no Jewish lobby in the United States and that when dealing with this issue one needs to talk about the “Israel lobby”.

The origins of Israel lobby are closely related to the rise of Christian Zionism (which predated the Zionist movement of the late 19<sup>th</sup> century) and which advocated for the establishment of a state for the Jews in the Land of Israel. However the modern roots of the Israel lobby go back to the early 20<sup>th</sup> century with the development of American Zionism movements and were parallel to the development of similar movements in Europe lobbying great powers such as Britain and the US to help establish a state for the Jews in Palestine<sup>5</sup>. Over the next three decades, American Zionism movement tried to support the activities of World Zionist movement financially, physically and morally<sup>6</sup>.

The 1948 establishment of the State of Israel, which came at the footsteps of the Holocaust is an interesting juxtaposition with the Armenian case since in the case of Armenians, they lost a homeland with the Genocide, while in the Jewish case the Holocaust became a catalyst for the establishment of a Jewish homeland in Israel. It was around that time that the American Zionist Public Affairs Committee (later American Israel Public Affairs Committee) was formed to pressure US policy-makers to support the newly created Israel. Since its inception, AIPAC remains the key lobbying win of the Israeli Government in the United States to the

---

<sup>4</sup> See *John Mearsheimer and Stephen Walt*. The Israel Lobby and U.S. Foreign Policy. New York, 2007.

<sup>5</sup> See *Michael Oren*. Power, Faith, and Fantasy: America in the Middle East: 1776 to the Present. New York, 2007.

<sup>6</sup> See *Cheryl Rubenberg*. Israel and the American National Interest: A Critical Examination. Chicago, 1986.

extent that AIPAC received aid from the Israeli Government, thus firmly entrenching it as an Israel lobby rather than Jewish lobby<sup>7</sup>.

The main activities of AIPAC today are to pressure US Congress to pass legislations favorable to Israel, provide training to undergraduate students in US colleges to have a stronger pro-Israel movement and make sure that successive US administrations would continue to address Israel's security concerns<sup>8</sup>.

While AIPAC remains the principal Israel lobby group, there are numerous other groups which converge in their lobby activities with AIPAC. These groups, while ranging from left (for instance "J Street") to right (AIPAC, and the Conference of Presidents of Major American Jewish Organizations) of the political spectrum and having different opinions about the peace process or on Israel's foreign policy, they remain united on the issue of Israel's security and well-being. The interesting phenomenon is that there are also non-Jewish groups (such as Christians United for Israel) which play a role in these lobbying activities<sup>9</sup>.

## **STRUCTURES OF THE ARMENIAN LOBBIES**

Structurally, both the ANCA and the AAA have headquarters in Washington DC with secondary offices throughout the US and affiliated offices around the world including Yerevan. However there are more differences than similarities between the two Armenian lobby groups. The ANCA operates in quite decentralized manner – much like its parent organization the ARF. Thus there are two regional offices, Eastern and Western US (much akin to the ARF organizational divisions) based in Watertown, Massachusetts and Glendale, California respectively. There are ANC local offices in approximately 80 locations dispersed throughout the United States as well as many offices internationally (although the international

---

<sup>7</sup> See "The Senate Foreign Relations Committee Investigates the Israel Lobby". "The Israel lobby archives. The Institute for Research: Middle Eastern Policy" (<http://irmep.org/ila/Senate/default.asp>).

<sup>8</sup> See *Glenn Frankel*. A Beautiful Friendship? In Search of the Truth about the Israel Lobby's Influence on Washington. "The Washington Post", July 16, 2006.

<sup>9</sup> For more details see *Alan Dershowitz*. The Case for Peace: How The Arab-Israeli Conflict Can Be Resolved. Hoboken, 2005.

offices are not affiliated with the ANCA and have their own separate boards, staff and strategies).

On the other hand, the AAA seems to operate more along centralized lines and other than its national headquarters in Washington DC, it has an office in Southern California and an office in New York City. It is through these offices that policy is planned, implemented and all public relations actions are taken.

In terms of *modus operandi* the ANCA utilizes a grassroots model where through local chapters, members and supporters (known as *hamakirs*) are mobilized for various actions. This model is highlighted by the ANCA as its main source of power as well as claims by the ANCA that it is the largest and most influential Armenian American grassroots political organization. Working in coordination with a network of offices, chapters and supporters throughout the United States and affiliated organizations around the world, the ANCA actively advances the concerns of the Armenian American community on a broad range of issues<sup>10</sup>.

The AAA's approach is different in the sense that they follow the more filtered and selective version of gaining support by trying to appeal finically prominent Armenians and professionals to rally support for the organization. That being said, the number of supporters for each group is far from being clear and both organizations claim to have something in the vicinity of 8000-10.000 supporters, claims that could not be substantiated. In a Facebook posting by the ANCA executive director Aram Hamparian, two charts comparing website traffic of ANCA with AAA as well as ANCA's web traffic with American Israel Public Affairs Committee (AIPAC)<sup>11</sup>. The chart comparing traffic between AAA and ANCA shows ANCA having consistently higher visitors (10.000 visits to ANCA website compared to roughly 5,000) with spiking visitors in April (over 20.000 hits at the ANCA website). However these numbers are far from being solid indicators about the membership of each group yet they do reveal the more action oriented nature of the ANCA.

---

<sup>10</sup> See "About the ANCA". "ARMENIAN NATIONAL COMMITTEE OF AMERICA" (<http://www.anca.org/ancaprofile.php>).

<sup>11</sup> See *Richard Ohanian*. A Tale of Two Charts. "Armenian Weekly", January 22, 2010 (<http://www.armenianweekly.com/2010/01/22/ohanian-a-tale-of-two-charts/>).

Regardless of their structural differences, both lobby groups have their outreach programs as well as internships for young Armenian-American to get involved with the lobbying activities of either group as well as various sponsored projects serving different goals\*. Finally, it should be noted that both the ANCA and AAA are far from being democratic institutions in the sense that the leadership is not elected by its grassroots thus creating an issue of accountability and representation.

## ISSUES AND APPROACHES

Both the ANCA and AAA operate within the parameters of lobby groups by building alliances with other lobby groups (in the case of ANCA) or by utilizing a network of professional and financial contacts (in the case of the AAA). However, there are aspects in the operations of both groups that highlight cooperation especially when it comes to the issue of Congressional Caucus on Armenian Issues or the issue of lobbying for the recognition of the Armenian Genocide by the US Congress.

The Congressional Caucus on Armenian Issues was founded in 1995, as an informal congregation of bipartisan legislators in the US Congress, dedicated to maintaining and strengthening the Armenia–US relations. As of March 30, 2010, 150 Members of the House of Representatives serve on the Congressional Caucus on Armenian Issues<sup>12</sup>.

Other than cooperation on the Congressional Armenian Caucus, the two lobby groups have their own set of lobbying priorities which overlap in terms of themes but not always in terms of strategy. The main lobbying efforts could be divided into two major fields: US official recognition of the Armenian Genocide and guaranteeing the flow of US aid to Armenia and to the unrecognized state of Nagorno-Karabakh.

### *Genocide Recognition*

US recognition of the Armenian Genocide and making April 24 the Day of Remembrance in the US tops the ANCA and AAA priorities. Both lobby

---

\* The websites of both groups have very detailed explanations of internships and other opportunities. Some of these include the ANCA's Capital Gateway Program which in itself includes various internships. As for the AAA, it has a major internship in DC known as Terjenian-Thomas Assembly Internship Program as well as various internships in Armenia.

<sup>12</sup> See "Congressional Caucus on Armenian Issues" (<http://www.aaainc.org/index.php?id=39>).

groups try to influence congressional members to pass legislation in the Congress to that effect as well as lobby during presidential elections to have presidential candidates promise to use the word “genocide” on April 24<sup>th</sup> to describe the Armenian massacres\*. Moreover the ANCA is particularly adamant to pass Armenian Genocide legislation at local, state and city levels in the US. The ANCA’s lobbying on this issue is closely related to other international ANCA offices lobbying towards the same goal in their respective countries. For instance ANCA offices in Russia, Europe (specifically France), Middle East and Canada try to have their respective governments recognize the Armenian Genocide as such and to hold Turkey responsible for it. This global campaign by the ANCA is used by the ANCA as a mechanism to exercise more pressure on the US Government to follow suit.

Similarly the AAA utilizes the same technique as the ANCA with one difference that in 1996 it created the Armenian National Institute (ANI) with the goal of collection of documentation attesting to the Genocide, producing research publications, preparing instructional materials for educators and students, promoting scholarship, building community support, working closely with the media, and studying legal options to secure the legacy of the Armenian Genocide<sup>13</sup>.

In November 2003, ANI merged with the Armenian Genocide Museum and Memorial.

In addition to the lobbying effort to get the Genocide recognized, the ANCA has also lobbied for blocking US arms sales with Turkey as well as at some point it lobbied against the exclusion of Armenia from the various Caspian oil pipeline projects. In the case of cutting US military aid to Turkey, the ANCA has worked closely with other ethnic lobby groups especially Greek, until Turkey improves its human rights records. The ANCA claims that the government of Turkey, an over-armed and unrepentant perpetrator of genocide against the Armenian people, represents a clear and present security threat to the Republic of Armenia.

---

\* Only President Ronald Reagan has used the word “genocide” in April 22, 1981 to describe the Armenian massacres. No sitting president since has done so.

<sup>13</sup> See “Frequently Asked Questions about ANI”. “ANI” (<http://www.armenian-genocide.org/anifaq.html>).

Today, U.S. military grants and loans to Turkey have been reduced to zero, from 1991 high of over \$600,000,000 a year, due to Congressional concern over Turkey's abuse of human rights at home and aggression abroad. Among the factors cited by the Congress as reasons for the elimination of appropriated U.S. military aid were Turkey's refusal to:

- 1) abandon its shameful campaign to deny the Armenian Genocide;
- 2) lift its blockade of U.S. aid to Armenia;
- 3) improve its human rights record;
- 4) remove its troops from Cyprus;
- 5) recognize the rights of the Kurds; and,
- 6) lift unfair restrictions on Christian communities<sup>14</sup>.

Also in this regard, the ANCA has done significant amount of lobbying to block US aid in the building of an oil pipeline to transfer oil from the Caspian to the Mediterranean via Turkey. The main objection that ANCA has against this project is that it bypasses Armenia and isolates Yerevan thus making the region more prone to conflict.

#### *Armenia and Nagorno-Karabakh*

Starting with the devastating earthquake that hit Armenia in December 1988, the Armenian community, along with the two lobby groups, has been adamant in providing assistance to the victims of the earthquake, first by fundraisings and donations and soon after by lobbying the US Congress to allocate aid to Armenia and Nagorno-Karabakh\*.

In this context aid to Armenia and Nagorno-Karabakh has also been conditioned with limiting US aid to Turkey and Azerbaijan. Utilizing Section 907 of Freedom Support Act of 1992 which bans US military aid to Azerbaijan as long as the latter kept a blockade on Armenia, the Armenian lobby groups have tried to exercise as much pressure as possible on Azerbaijan to even the playing field for Nagorno-Karabakh and Armenia. Since 2001 a waiver has been approved by the Senate which allows the

---

<sup>14</sup> See "U.S. Arms Sales/Transfers to Turkey" ([http://www.anca.org/hill\\_staff/position\\_papers.php?ppid=11](http://www.anca.org/hill_staff/position_papers.php?ppid=11)).

\* Initially marked at \$90 million annually, US aid to Armenia has dwindled in the past several years, but it is still allocated annually.

President of the US to annually waive this section according to his discretion, something that all US presidents have done since then<sup>15</sup>.

Regarding the future of Nagorno-Karabakh, both Armenian lobby groups actively seek US recognition of the independence of Nagorno-Karabakh on the premise of the right of the latter for self-determination and their protection from cultural and physical annihilation in the hands of Azerbaijan.

### *Where do they Stand Now?*

As for now, Armenian lobby groups in the US have had a relatively successful track record in achieving their goals. Granted, there have been some shortfalls and setbacks, the overall achievements of the Armenian lobby groups have been positive. That being said there are still major challenges in coordinating the work that these lobby groups conduct with the demands and perceptions of the government of Armenia. In this respect the AAA seems to be more state-centric and in tune with the wishes, strategies and activities of the Armenian governments. This does not mean that ANCA pursues policies contradictory to the Armenian state but the fact that ANCA is more ideologically indoctrinated than the AAA and also because of the ARF's position as a political party in Armenia – sometimes at odd with the policies of the ruling government – it is not uncommon to see ANCA making statements or lobbying for issues which do not necessarily reflect the wishes or strategies of Armenia.

Perhaps the best manifestation for this dichotomy is the turmoil that was created in the Diasporas after the signing of Armenia–Turkey protocols on October 10, 2009. Thus the weeks and months after the signing of the protocols led to intense rivalry – especially in the US – between the various factions of the Armenian communities. On the one hand there were groups supporting the Armenian Government in its endeavors regardless of what policy it was while on the other hand there were those who criticized Yerevan for being defeatist, fatalist and betraying the interest of the nation. The AAA belonged to the former group and was one of the main advocates

---

<sup>15</sup> See “FOREIGN OPERATIONS, EXPORT FINANCING AND RELATED PROGRAMS APPROPRIATIONS ACT, 2002” ([http://frwebgate.access.gpo.gov/cgi-bin/getdoc.cgi?dbname=107\\_cong\\_public\\_laws&docid=f:publ115.107](http://frwebgate.access.gpo.gov/cgi-bin/getdoc.cgi?dbname=107_cong_public_laws&docid=f:publ115.107)).

and supporters of President Serge Sargsyan when he embarked on his multi-city tour after the signing of the protocols to meet with Armenian communities and explain to them his strategy. The ANCA on the other hand remained the most vocal critic of the president's policy and organized protests in cities where President Sargsyan was scheduled to visit. This dichotomy between AAA's and ANCA's positions could easily help change their labels—as ascribed to them earlier in this research—where AAA could be considered an “Armenia lobby” while the ANCA is more “Armenia(n) lobby”.

### ***Future Outlook***

This brief synopsis and relatively short analysis of the Armenian lobby groups was conducted with the ultimate question as to how—if at all—it is possible to synergize the activities of these lobby groups with the strategies and overall plans of Armenia's foreign policies. One of the conclusions that can be pointed out is that, relative to their size and financial resources, Armenian lobby groups are quite successful<sup>16</sup>. The major challenge however is to evaluate the degree of synchronization—or lack of—that exists between these lobby groups and the Government of Armenia.

As mentioned earlier, it seems that AAA lobbying efforts rarely contradict that of Yerevan's and as such the level of synergy between AAA and Armenia is quite high. On the other hand, the record of ANCA's cooperation with Yerevan fluctuates quite randomly. This fluctuation can be ascribed to several issues including but not limited to:

1. the ARF's political position in Armenia: whether or not the ARF is part of the ruling coalition or if it is in opposition has a tremendous impact in bringing the ANCA in line with Yerevan's policies;
2. the issues being lobbied on: the ANCA is uncompromising on the issue of utilizing the issue of the Armenian Genocide to exercise pressure on Turkey whenever possible. In this respect, various Armenian administrations have sometimes detached the issue of Genocide recognition from the issue of normalizing relations with Turkey;

---

<sup>16</sup> While there are no reliable numbers on the amount of money spent by AAA and ANCA for their lobbying efforts, the website [www.opensecrets.org](http://www.opensecrets.org) puts ANCA's lobbying expenses in 2009 at \$ 50,000 and AAA's for the same year at \$ 332,000. This means that Armenian lobby groups spend less than \$ 400,000/year for their lobbying activities.



3. the level of divide existing between the ARF's activities in Armenia and in the Diaspora (especially in the US): since Armenia's independence in 1991 the ARF has become an organization working not only in the Diaspora but also in Armenia. In recent years the ARF in Armenia has shown signs of operating as a political party by making electoral alliances, operating as a political party with a goal of achieving power as well as trying to establish itself as a reliable alternative in Armenia's political scene. These attempts have raised many concerns in the party's membership in the Diaspora where some members have viewed these alliances as compromising the party's ideology for the sake of achieving political power. Hence even though the party's leadership which is heavily influenced by its powerbase in Armenia – might issue directives for ANCA to cooperate with the Armenian Government, it is quite probable that the ANCA might not follow those instructions.

The above points are just a few examples of the difficult task of coordinating Armenian lobby groups' work with that of Yerevan's. However, the possibility of looking ahead and coordinating is quite possible in various forms. One such possibility is the increase of the interaction between the lobby groups on the one hand and the Armenian Government on the other.

Another possibility is the creation of a comprehensive database of Armenian professionals in the United States and occasionally the holding of professional symposia producing "white papers" on various topics such as: what specific to ask for in terms of economic, social or military assistance from the US; what are the feasible policy directions that the US will pursue during any given administration's tenure; what are the options for Armenia's foreign policy to give something to the US without compromising Yerevan's foreign policy priorities; etc.

Yet a final option would be to increase the lobbying activities of Armenia to include Americans sympathetic to the well-being of Armenia (akin to the Christians United for Israel) with a message that many Americans can relate to. A loose group named "Americans for Armenia" could increase the support base of Yerevan's pressure mechanism in DC by appealing to a wider American audience and not just relying on the million or so Armenian-American votes. Hypothetically, such a group could appeal various sections of the American public such as emphasizing biblical

mentions of Armenia and the whole “Christian island in a sea of Muslim” mantra to the more religious masses; highlighting Azerbaijan’s and Turkey’s closeness to Iran to a more hard-line American audience, keeping in mind that while this strategy could be borderline xenophobic and racist, the goal of rallying as much support as possible for Yerevan could justify the means. By pursuing this option it would be quite possible to have a network of various lobby groups, each supporting Armenia for their own reasons.

While some of the ideas above are easier to implement than the others, the necessity to have a strong state presence in Armenian lobbying activities is important. Armenia cannot afford not to utilize the vast individual and intuitional resources in the Diaspora. The need to develop an Armenia lobby is paramount without also forgetting that an Armenian lobby is needed. The challenge is to find means of reconciliation whenever the needs of the state (Armenia lobby) and the needs of the nation (Armenian lobby) do not overlap.

ՄՓՅՈՒՌՔԻ ՀԱՅ ՔԱՂԱՔԱԿԱՆ  
ԿՈՒՍԱԿՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ  
ՀԱՄԱԿԱՐԳԵԼՈՒ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ

*Ս. ԱՍՏՈՒՐՅԱՆ, փիլիսոփայության դոկտոր, Կալիֆոռնիայի  
համալսարան (Բերկլի), Սլավոնական, արևելասլավոնական  
և եվրասիական հեղափոխությունների ինստիտուտ,  
Հայկական ուսումնասիրությունների ծրագրի գործադիր տնօրեն*



Սփյուռքի համայնքներում գործող քաղաքական կուսակցությունները Սփյուռքի համակարգի մի մասն են, դրանք կատարում են հանրային ու հասարակական մակարդակներում սահմանված դերակատարում: Թե՛ Հայաստանում, թե՛ Սփյուռքում ժամանակ առ ժամանակ հնչեղություն է ստանում Սփյուռքում գործող քաղաքական կառույցների գործունեության՝ ՀՀ-ի հետ համադրման հարցը: Արդյոք հավանական է, որ Հայաստանի Հանրապետությունը համադասի կամ համակարգի իր գործունեությունը Սփյուռքի հայ

քաղաքական կուսակցությունների հետ: Այս հարցի պատասխանը բացասական է, առնվազն՝ կարճաժամկետ և միջմաժամկետ հեռանկարում (2–5 տարի): Համակարգման ցանկացած առիթ հանգում է նեղ հարցերի, ինչպիսիք են, օրինակ, Հայոց Յեղասպանության ճանաչումը կամ ֆինանսական կամ այլ աջակցությունը Հայաստանին:

Ինչ վերաբերում է ԱՄՆ-ի հայկական լոբբիի «հզորության» մասին պատկերացումներին, ապա դրանք զգալիորեն չափազանցված են. այլազգիների կողմից՝ միտումնավոր, հայկական կազմակերպությունների կողմից՝ միամիտ կամ «հայրենասեր» տեսակետի հետևանքով<sup>1</sup>:

Օգտագործված եզրաբառերի որոշ պարզաբանումներ կօգնեն հստակեցնել հոդվածում դրանց կիրառման տրամաշափը: Սփյուռքի քաղաքական կուսակցություններ ասելով՝ նկատի ունենք Հայ հեղափոխական դաշնակցությունը կամ Դաշնակցական կուսակցությունը, Սոցիալ-դեմոկրա-

<sup>1</sup> Նմանատիպ կարծիք տես նաև “US Armenian Lobby’s Clout an Exaggeration”. “Keghart.com” ([http://www.keghart.com/Editorial\\_Lobby](http://www.keghart.com/Editorial_Lobby)):

տական հնչակյան կուսակցությունը և Հայ ժողովրդավարական ազատական կուսակցությունը կամ Ռ-ամկավար ազատական կուսակցությունը: Սփյուռք ասելով՝ տվյալ հոդվածի շրջանակներում նկատի ունենք Արևմտյան Սփյուռքը, այսինքն՝ բոլոր այն հայկական համայնքները, որոնք գտնվում են Հայաստանից, նախկին Խորհրդային Միությունից և Թուրքիայից դուրս:

Համակարգում կամ համադասում ասելով՝ նկատի ունենք այս կուսակցությունների և Հայաստանի կառավարության միջև մշտական, կառուցվածքային և հաստատութենական այնպիսի հարաբերությունների հաստատումը, որոնք Հայաստանից դուրս Հայաստանի կառավարության քաղաքական ուղեգծի առաջնդման նպատակ են հետապնդում:

### **Խնդրի չափումները**

Արևմտյան Սփյուռքը, ինչպես ասվեց վերևում, բաղկացած է չափազանց խայտաբղետ հայկական համայնքներից: Ըստ ներկա ամենահավանական հաշվումների՝ հայ բնակչության թիվը հասնում է 2,2-2,5 միլիոնի<sup>2</sup>: Մոտավոր հաշվումների համաձայն՝ Արևմտյան Սփյուռքում վերոհիշյալ կուսակցությունների անդամների թիվը մոտավորապես 12000-13000 է: Կախված այդ ընդհանուր թվից դրանց 66-80 %-ը դաշնակցականներ են: Այսպիսով՝ հայ քաղաքական կուսակցությունների անդամների թիվը կազմում է Սփյուռքի բնակչության 0,5-0,7 %-ը:

Ըստ մոտավոր հաշվարկների՝ այս կուսակցությունների անդամների գրեթե կեսից ավելին բնակվում է երեք մեծ մերձավորարևելյան համայնքներում (Լիբանան, Սիրիա և Իրան), այն դեպքում, երբ այս երեք համայնքների ներկայիս հայ բնակչության թիվը միասին չի հասնում 400 000-ի: Կարճ ասած՝ քաղաքական անդամակցության «խտությունը» (օրինակ, հազար հայի համար) անհամեմատ մեծ է մերձավորարևելյան նվազող համայնքներում, ի տարբերություն Եվրոպայից, Հարավային Ամերիկայից, Հյուսիսային Ամերիկայից կամ Ավստրալիայից:

Այս իրավիճակը և այն հանգամանքը, որ հայկական համայնքները ավելի լավ էին կազմակերպված Մերձավոր Արևելքում, հանգեցրեց այն

---

<sup>2</sup> Տես *Stephan H. Astourian*. Armenian Demography, the Homeland, and the Diaspora: Trends and Consequences. “Arméniens et Grecs en diaspora: approches comparatives”, ed. by Michel Bruneau, Ioannis Hassiotis, Martine Hovanessian, Claire Mouradian. Athens, 2007, PP. 191 – 210:

իրավիճակին, որ այս կուսակցությունները քիչ թե շատ ազդեցիկ են Մերձավոր Արևելքի երկրներում: Եվրոպան, ներառյալ նաև այնտեղի ամենամեծ (400,000-500,000) ֆրանսահայ համայնքը, Մերձավոր Արևելքի համայնքի բևեռային հակապատկերն է:

Եթե վերցնենք Արևմտյան համայնքն ամբողջությամբ, նշված երեք կուսակցությունները միասին ազդեցիկ են միայն սփյուռքահայերի մի մասի, իսկ ավելի կոնկրետ՝ մի փոքր մասի համար: Որոշ համայնքներում, օրինակ՝ Լիբանանի, Հալեպի, Նոր Ջուղայի և այլն, տեղի հայերի գերակշռող մասի համար մեծ է նրանց հեղինակությունն ու ազդեցությունը: Խնդիրն այն է, որ Մերձավոր Արևելքի երկրներն այլևս Արևմտյան Սփյուռքի կենտրոն չեն, ինչպես եղել է երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներից մինչև 1980-ական թվականները:

Արևմտյան Սփյուռքի երեք վերոնշյալ մերձավորարևելյան երկրները չհաշված հայ բնակչության մեծ մասն ապրում է Ամերիկայի Միացյալ Նահանգներում՝ շուրջ 700 000-800 000, իսկ Ֆրանսիայում՝ 400 000-500 000 հայ: Նախկինում հայկական կուսակցությունները, հատկապես՝ Դաշնակցությունը, ազդեցություն ունեին Հարավային Կալիֆոռնիայի բնակչության ավելի քան 20 %-ի վրա, սակայն վերջին շրջանում ոչ մի կուսակցություն չի կարող վստահաբար խոսել իր ազդեցության մասին:

Արևմուտքի հայկական համայնքների բնակչության մեծ մասի վրա ազդեցություն չունենալու պայմաններում այս կուսակցությունները վերահսկում են այդ համայնքներում առկա դպրոցները, թերթերը, սպորտային միությունները, կանանց բարեգործական միությունները, մշակութային միությունները, երիտասարդական կազմակերպությունները և այլն: Սփյուռքի ոչ մի համայնք այսօր գոյություն չէր ունենա, եթե այս կուսակցությունները հիմնադրած չլինեին այդ հաստատություններն ու կազմակերպությունները, քանի որ դրանք են համայնքի «ողնաշարը»: Առանց այդ հաստատությունների ու կազմակերպությունների Արևմուտքի հայ համայնքները իրական ու գործող Սփյուռք չէին կազմի, այլ կլինեին ընդամենը մի շարք չկայացած միություններ:

### **Կուսակցությունների առանձնահատկությունները**

Կուսակցությունների գործունեության բնորոշ առանձնահատկությունները ընդգծելու համար տեղին է նշել, որ այս երեք կուսակցություններն էլ հիմնվում են իրենց անցյալի վրա՝ արդարացնելու համար նրանց գոյակերպը: Հետևորդների աչքում նրանց օրինականությունը հենվում է 1880-ական

թվականներից մինչև վաղ 1920-ական թվականները այդ կուսակցությունների գործունեության ու ունեցած ձեռքբերումների վրա: Հնչակյանների և ռամկավարների մոտ նաև մի որոշակի հպարտություն կա Սառը պատերազմի տարիներին Խորհրդային Հայաստանին ցուցաբերած օժանդակության համար:

Այս երեք կուսակցությունները, նրանց ղեկավարները և անդամներից շատերն իրենց համարում են Հայ Դատի լավագույն պաշտպաններ և «հայեցիականության» կրողներ: Դաշնակցության անդամներն օժտված են կիսամենաշնորհական այն զգացումով, որ իրենք արտահայտում են հայ ժողովրդի կամքն ու շահերը (օրինակ, Հայաստանի անկախացման շրջանում արված նրանց հայտարարությունները): 1991 թվականից ի վեր նրանց հայտարարություններն արձանագրված են, որոնցից հատկապես ուշագրավ են նորանկախ Հայաստանի ղեկավարների հասցեին նրանց կողմից հնչած գնահատականները, որոնց էությունն այն էր, որ ղեկավարները նորեկներ են, չեն հասկանում միջազգային քաղաքականությունից և չունեն փորձ:

Մեծ հակասություններ կան նաև այս երեք կուսակցությունների գաղափարախոսությունների և պրակտիկ գործունեության միջև: Օրինակ, ինչպե՞ս կարող էր լիբերալ Ռամկավար ազատական կուսակցությունը օժանդակել Խորհրդային Հայաստանին: Ինչպե՞ս կարող էր մարքսիստական կուսակցությունը, ինչպիսին հնչակյանն է, աջակցել մախագահ Լևոն Տեր-Պետրոսյանին 1996 թվականին, երբ վերջինս մախատեսում էր ձևավորել Աջ բլոկ՝ Ամերիկյան հանրապետական կուսակցության նման մի կուսակցություն: Ինչպե՞ս կարող էր սոցիալիստական ՀՀԴ-ն Սառը պատերազմի տարիներին անցնել ԱՄՆ-ի կողմը և իր հակաթուրքական դիրքորոշումը 1920 թվականից մինչև 1970-ական թվականների սկիզբը գրեթե ամբողջովին փոխարինել հակախորհրդային դիրքորոշմամբ: Ինչպե՞ս կարող էր ՀՀԴ-ն հակադրվել այն սահմանադրական գործընթացին, որը տանում էր դեպի Հայաստանի անկախացում, երբ հարյուր հազարավոր հայեր դուրս էին եկել Երևանի փողոցներ, չնայած այն բանին, որ վերջին տասնամյակների ընթացքում ՀՀԴ-ն անկախություն էր տենչում «Ազատ, անկախ և միացյալ Հայաստան» կարգախոսով: Այս կուսակցությունների մասին մեծ թվով այլ օրինակներ կարելի է բերել, ընդ որում, անկախացման գործընթացի վերաբերյալ նրանց դիրքորոշումը հստակ չէր, իսկ որոշ դեպքերում պարզապես բացասական էր:

Ռամկավար և հնչակյան կուսակցությունների գործունեության հիմնական շարժիչ ուժը նրանց խորը հակակրանքն է գերիշխող դիրք զբաղեցնող ՀՀԴ-ի հանդեպ:

Այնքան էլ պարզ չէ, թե Սառը պատերազմի տարիներից սկսած մինչ օրս արտաքին ներգործությունները կուսակցությունների ղեկավարության վրա ինչ ազդեցություն են ունեցել կուսակցությունների վարած քաղաքականության վրա: Միաժամանակ նշենք, որ նման երևույթներ առկա են նաև արևմտյան պետություններում գործող շատ ավելի մեծ կուսակցություններում:

Այս կուսակցություններից ոչ մեկն էլ իրական ժողովրդավարական գործունեությամբ չի զբաղվել, դրանք չունեն պետական գործունեության փորձ: Նրանց հիմնական նպատակը իրենց գոյության և հետևորդների պահպանումն է:

Բացառությամբ մի երկու առիթների (Հայաստանի անկախացման դեմ նրանց ընդհանուր հռչակագիրը կամ 1975 թվականին սկսված Լիբանանի քաղաքացիական պատերազմի ժամանակ տեղի հայկական համայնքի «դրական չեզոքության» դիրքի շուրջ իրենց համաձայնությունը), այս կուսակցությունները հրաժարվել են որևէ համընդգրկուն ու ներկայացուցչական սփյուռքահայ կառույցի ձևավորումից, որը կկազմակերպեին Աչևուտքի հայկական համայնքները: Նրանք նաև հրաժարվել են ցանկացած կառուցվածքային համագործակցությունից միմյանց հետ:

Երեք կուսակցություններն էլ նպատակահարմար են համարել ստեղծել իրենց սեփական կառույցները նորանկախ Հայաստանում, թեև երեքն էլ սակավ էին տեղեկացված ու խորհրդային և վաղ հետխորհրդային Հայաստանի իրականությունից: Հայաստանում նրանց անդամությունը չունի այն «ավանդական» արմատները, որ առկա էին Արևմտյան Սփյուռքում, միայն ՀՀԴ-ն կարողացավ իշխանություն հաստատել կուսակցության հայաստանյան ամբողջ կառույցի վրա:

### **Հետևանքները**

Նշված հայ քաղաքական կուսակցությունները, իհարկե, տարբեր տրամաչափերով Հայաստանի քաղաքական գործընթացների մասնակիցներ են: Կառավարությանն ընդդիմադիր կուսակցությունները Սփյուռքում, տիրապետելով որոշակի ռեսուրսների, հակված չեն կառավարության հետ համագործակցելու և Սփյուռքին վերաբերող հարցերում կազմակերպական նախաձեռնություններով հանդես գալու: Ավելի երկդիմի դերակատարները, ինչպես ներկայումս Դաշնակցությունն է, լավագույնս օգտագործում են սահմանափակ համակարգողի իրենց կողմից ձևավորված հնարավորությունը՝ որպես Հայաստանում իրենց դիրքի ամրապնդման կռիվ:

Վերջին տասնամյակում Ռամկավար և Հնչակյան կուսակցությունները բաժանված են եղել երկու-երեք թևերի: Եթե անգամ այդ թևերից մեկը հակված լիներ համակարգելու իր գործողությունները ՀՀ Կառավարության հետ, ապա մյուսները կհրաժարվեին:

Երեք կուսակցություններն էլ մեծ կասկածանքով են վերաբերվում Հայաստանի Կառավարության կողմից Սփյուռքի կազմակերպման հարցերին միջամտելու ցանկացած փորձի: Կուսակցությունների կողմից այդ փորձը դիտվում է որպես Սփյուռքի տարբեր համայնքներում կուսակցությունների հարաբերական իշխանության դեմ ուղղված սպառնալիք և Հայաստանի Կառավարության կողմից այդ իշխանության նվաճման փորձ:

Ավելի ընդհանրական առումով, Հայաստանի ներկայիս կառավարության վարած քաղաքականության հիմնական ուղղությունները (հայ-թուրքական հարաբերությունների բարելավումը, ներկայիս սահմանների ճանաչումը և այլն) չեն կարող ընդունելի լինել ավանդական կուսակցությունների կողմից, քանի որ դրանք խարխլում են նրանց հավատը Սևրի պայմանագրի և Հայ Դատի հանդեպ: Նշանակություն չունի, որ նրանց դիրքորոշումները կարող են դիտարկվել որպես ոչ իրատեսական, քանի որ, ինչպես նշվեց, մի շարք դեպքերում՝ սփյուռքահայ կուսակցությունների վերամբարձ դիրքն է, որ օժտում է նրանց օրինականությամբ:

Կա մի փաստ ևս, Սփյուռքի հետ առնչություն չունենալն ավելի է բարդացնում իրավիճակը: Բանն այն է, որ 1995 թվականից ի վեր Հայաստանի տարբեր կառավարություններ չեն ունեցել այն ժողովրդավարական հեղինակությունն ու օրինականությունը, որոնք կօգնեին նրանց ապաօրինականացնել Սփյուռքի ավանդական կուսակցությունների դիրքերն ու կասկածները:

### Ամփոփում

Քիչ հավանական է, որ Հայաստանի Կառավարությունը կարճաժամկետ կամ միջնաժամկետ ժամանակաշին չափումներով կարողանա համակարգել իր գործողությունները երեք ավանդական հայկական կուսակցությունների հետ: Ոչ կուսակցական կազմակերպությունների (Հայկական բարեգործական ընկերության, Էջմիածնի Եկեղեցու Արևելյան Թեմ, «Վարդանանց ասպետներ», Ամերիկայի հայկական համագումար և այլն) հետ հայթորքական արձանագրությունների հարցում համագործակցելու հայկական կառավարության հաջող փորձերը քիչ առնչություն ունեն Սփյուռքը կազմակերպելու գործընթացի հետ: Ավելին, ապագայում այդ ուղղությամբ



ցանկացած քայլ կարող է ավելի դժվար լինել, քանի որ Սփյուռքի կառույցների մեծ մասը վերահսկող կուսակցությունների շրջանում կարող է ստեղծվել այն տպավորությունը, թե մի քանի անվանի մարդկանց օգտագործելու միջոցով Հայաստանի Կառավարությունը փորձում է շրջանցել իրենց:

Հայ իրականության մեջ հեղինակավոր ներկայացուցչության և ժողովրդավարական ավանդույթների պակասը բարդացնում է պետության շուրջ հայության կազմակերպական համախմբման ընթացքը: Վերջին տարիներին նկատելի է, որ Սփյուռքը շահագրգիռ մտքերի և շարժումների ծնունդ է տալիս<sup>3</sup>, որոնցից ոչ մեկը չի բխում կուսակցություններից: Մոտ ապագայում պարզ կլինի, թե արդյոք կիրականանան այդ մտքերը և շարժումները:

---

<sup>3</sup> Նման խնդիրներ քննարկվում են Ֆրանսիայում, Կանադայում և Միացյալ Նահանգներում: Ֆրանսիայում ֆրանսահայ կազմակերպությունների մեծ մասի համադասումը հանգեցրեց «Ֆրանսիայի հայկական կազմակերպությունների համակարգող խորհրդի» (CCAF) ստեղծմանը (<http://www.ccaf.info/index.php?r=0>):

Կանադայում «Keghart.com» ինտերնետային կայքում ակտիվորեն քննարկվում է ներկա իրավիճակը, տես, օրինակ “United We Stand...”. “Keghart.com” ([http://www.keghart.com/Editorial\\_UnitedWeStand](http://www.keghart.com/Editorial_UnitedWeStand)),

Պարույր Աղպաշեան, Մենք ենք՝ մեր ցուերը: «ՌԱԿ Մամուլ», 2010 թ., ապրիլի 20 ([http://www.keghart.com/Aghbashian\\_DiasporaMin](http://www.keghart.com/Aghbashian_DiasporaMin)),

“Let’s Not Foltter as of Day One”. “Keghart.com” ([http://www.keghart.com/Editorial\\_DayOne](http://www.keghart.com/Editorial_DayOne)),

“Trust Deficit in Traditional Political Organizations”. “Keghart.com” ([http://www.keghart.com/Editorial\\_Trust](http://www.keghart.com/Editorial_Trust)):

ԱՄՆ-ում «Հայաստանի քաղաքականության համաժողովը» տվել է հայկական պետականության և Հայ Սփյուռքի միջև առկա հարաբերությունների տխուր իրավիճակի մինչ օրս մշակված լավագույն ախտորոշումը ([http://www.pf-armenia.org/fileadmin/pfa\\_uploads/Diaspora\\_Forum/PFA\\_Diaspora\\_Report.pdf](http://www.pf-armenia.org/fileadmin/pfa_uploads/Diaspora_Forum/PFA_Diaspora_Report.pdf)):

Այլ առաջարկների մասին ավելի համաձայնորեն տես *Harut Sassounian*. Sassounian: Proposal to Create a Framework that Unites Diaspora Armenians. “The Armenian Weekly” (<http://www.armenianweekly.com/2010/02/23/proposal-to-create-a-framework-that-unites-diaspora-armenians/>):

Մեկ այլ հետաքրքիր զարգացում է Արևմտահայերի ազգային կոնգրեսը, որն ստեղծվել է Ռուսաստանի հայկական համայնքում և կապեր ունի Ռուսաստանում և Հայաստանում (տես “International Organizing Committee for the Preparation of the Western Armenian National Congress” (<http://wancongress.org/en/index.php>)):

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հայաստան – Մփյուռք երկխոսության ու համագործակցության զարգացման ռազմավարության մշակումը հայ ժողովրդի միավորման տեսակետից ունի համակարգաստեղծ նշանակություն և հույժ կարևորություն: Մույն պրակում զետեղված մշակումները կարող են ծառայել որպես ուղենիշ այդ ռազմավարության համար:

## ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

### ՀՀ Նախագահի աշխատակազմին՝

- Մփյուռքի կազմակերպությունների հետ քննարկել երկրների և տարածաշրջանների մակարդակներով միավորող կազմակերպությունների՝ հանձինս գլխավոր կազմակերպությունների նախագահների Կոնգրեսների ստեղծման խնդիրը: Դրանց հիման վրա ՀՀ Նախագահի նախագահությամբ ստեղծել Համաշխարհային հայության գլխավոր կազմակերպությունների նախագահների համաշխարհային կոնգրես,
- ՀՀ Նախագահի աշխատակազմին կից ստեղծել տվյալ պրակում առաջարկվող ռազմավարական ուղենիշների հիման վրա ՀՀ – Մփյուռք համագործակցության զարգացման ռազմավարությունը մշակող աշխատանքային խումբ,
- ստեղծել աշխատանքային խումբ՝ Տարոնականության վերաիմաստավորման հիման վրա համակարգային ազգային գաղափարախոսության մշակման համար,
- ՀՀ Նախագահի նախաձեռնությամբ հրավիրել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի ու Կիլիկիայի Աթոռի բարձրաստիճան հոգևորականների մասնակցությամբ համաժողով՝ Հայ Առաքելական եկեղեցու միավորմանն առնչվող խնդիրները քննարկելու համար,
- ԱՄՆ-ի հայկական լոբբինգային կազմակերպությունների հետ քննարկել Վաշինգտոնում Կովկաս-Կասպյան տարածաշրջանի անվտանգային հիմնախնդիրների հետազոտություններով զբաղվող մտավոր կենտրոնի («Think tank») ստեղծման խնդիրը: Որպես կարճաժամկետ նպատակ նույն ձևաչափով քննարկել ամերիկյան գործող ազդեցիկ

մտավոր կենտրոններից մեկում Ղարաբաղյան հակամարտության կարգավորման հարցերով հետազոտական հաստատության ստեղծման խնդիրը,

- ՀՀ Նախագահի աշխատակազմի Հանրային կապերի և տեղեկատվության կենտրոնին՝ հիմնել ամերիկյան, եվրոպական, միջինարևելյան և ռուսաստանյան հեղինակավոր ՁԼՄ-ների դիտարկման միասնական կենտրոն, որը հետևի և արձագանքի ՀՀ-ին, ԼՂՀ-ին և Մփյուռքին առնչվող հրապարակումներին:

### **ՀՀ կառավարությանը՝**

- հաշվի առնելով Մփյուռքի հետ քաղաքական հարաբերությունների՝ բացառապես ՀՀ Նախագահի աշխատակազմի և ՀՀ ԱԳՆ-ի կողմից համադասման անհրաժեշտությունը՝ քննարկել Արտաքին գործերի նախարարությունում այդ գծով փոխնախարարի հաստիքի ստեղծման նպատակահարմարությունը,
- նկատի ունենալով Ֆ. Գյուլենի կրթական շարժման արդյունավետությունը՝ քննարկել Կիպրոսի Մելքոնյան վարժարանը ժամանակակից արևմտյան չափանիշներին համապատասխանող համալսարանի կերպափոխելու խնդիրը,
- աջակցել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին՝ Հայ Առաքելական եկեղեցու երկու Աթոռների միջև հարաբերությունների կարգավորման նպատակով հոգևորականների միջև շփումների կազմակերպմանը, այդ թվում՝ Դպրեվանքի, Ժառանգավորաց վարժարանի ու Գևորգյան ճեմարանի սաների փոխայցելությունների, քննարկումների, սեմինարների ու խորհրդաժողովների կազմակերպմամբ:

### **ՀՀ Արտաքին գործերի նախարարությանը՝**

- ՀՀ Նախագահի աշխատակազմի հետ համատեղ համակարգել Հայաստան – Մփյուռք հարաբերությունների քաղաքական չափումը,
- կազմակերպել ամերիկյան կոնգրեսականների և սենատորների ամենամյա այցելություններ ՀՀ և ԼՂՀ,
- ՀՀ դեսպանությունների միջոցով ԱՄՆ-ի, Եվրոպայի և Ռուսաստանի համալսարաններում սովորող հայազգի ուսանողների համար կազմա-

կերպել հատուկ դասընթացներ՝ նրանց պատրաստելով համայնքային կազմակերպություններում հայաստանակետորն լոբբինգի և հայանպաստ քարոզչության կազմակերպմանը վերաբերող նոր գիտելիքի ու փորձի ներբերման, ինչպես նաև համալսարանական շրջաններում հայանպաստ քարոզչություն իրականացնելու համար,

- արտասահմանում ՀՀ ներկայացուցչությունների միջոցով աջակցել Հայ Առաքելական եկեղեցու երկու Աթոռների միավորման գործընթացին,
- քննարկել ԱՄՆ-ի հայաշատ նահանգներում ու քաղաքներում ՀՀ ներկայացուցչությունների հիմնման հնարավորությունը:

### **ՀՀ Սփյուռքի նախարարությանը՝**

- համակարգել Հայաստան – Սփյուռք հարաբերությունների սոցիալ-մշակութային չափումը,
- ԱՄՆ-ի հայկական կազմակերպությունների հետ ձեռնարկել համատեղ քայլեր ամերիկահայության մասին ամփոփ տեղեկություններ պարունակող «Ամերիկայի հայերի տարեգիրք» ամենամյա ժողովածուի հրատարակման ուղղությամբ,
- սփյուռքահայ կազմակերպությունների հետ քննարկել Սփյուռքի հայկական դպրոցների ծրագրերում ՀՀ Կրթության և գիտության նախարարության հետ համատեղ արևմտահայերենին զուգահեռաբար՝ արևելահայերենի տարրերի ուսուցման դասընթացի ներառման խնդիրը,
- ՀՀ Կրթության և գիտության նախարարության հետ համատեղ ստեղծել ԱՄՆ-ում բնակվող հայ գիտնականների և համալսարանական կրթությամբ մասնագետների վերաբերյալ տվյալների համընդգրկուն բազա:

### **ՀՀ Կրթության և գիտության նախարարությանը՝**

- ՀՀ ԳԱԱ-ի հետ համատեղ ստեղծել ՀՀ և Սփյուռքի հայագետների ներգրավմամբ աշխատանքային խումբ՝ միասնական մասնագիտական բազմալեզու բառարան-շտեմարանների ստեղծման նպատակով,

- նախարարության կազմում ստեղծել սփյուռքահայ ուսանողության վարչություն՝ նրան հանձնարարելով սփյուռքահայ երիտասարդության համար ըստ մասնագիտությունների առաջնայնության կրթական ուղենիշների մշակման և ընթացիկ ճշգրտման խնդիրը,
- իրականացնել Հայաստանում բարձրագույն կրթական համակարգի կատարելագործում՝ ՀՀ բուհերում սովորող սփյուռքահայ երիտասարդների թվի աճը խրախուսելու նպատակով,
- Կիպրոսի Մելքոնյան վարժարանին ցուցաբերել գիտամեթոդական աջակցություն՝ այն համալսարանի կերպափոխելու ընթացքում,
- ՀՀ դպրոցների ուսումնական ծրագրերում ներառել գրաբարի և արևմտահայերեն գրական լեզվի տարրերի ուսուցումը:

### ԳԻՏԱԵՆՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԽՈՐՀՈՐԴ

- Ռ. Վ. Աղուզումյան, հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ,  
Ն. Հ. Առաքելյան, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,  
Գ. Ե. Բաղդասարյան, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,  
Հ. Ա. Գևորգյան, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,  
Ռ. Գ. Գևորգյան, երկրաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,  
Ա. Հ. Թռչունյան, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ,  
Վ. Մ. Հարությունյան, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,  
Ա. Հ. Մանթաշյան, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,  
Է. Գ. Մինասյան, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,  
Մ. Մ. Միրիջանյան, բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,  
Կ. Ս. Մոսոյան, տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,  
Յու. Ս. Չիլինգարյան, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,  
Վ. Ս. Սարգսյան, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,  
Հ. Ս. Մրիակյան, բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

### НАУЧНО-КОНСУЛЬТАЦИОННЫЙ СОВЕТ:

- Ր. Վ. Агузумян, кандидат психологических наук, доцент;  
Н. У. Аракелян, академик НАН РА;  
В. М. Арутюнян, академик НАН РА;  
Г. Е. Багдасарян, академик НАН РА;  
Г. А. Геворкян, академик НАН РА;  
Ր. Գ. Геворкян, доктор геологических наук, профессор;  
А. А. Манташян, академик НАН РА;  
Э. Г. Минасян, доктор исторических наук, профессор;  
Մ. Մ. Мириджаниян, доктор медицинских наук, профессор;  
К. С. Мосоян, доктор технических наук, профессор;  
В. С. Саркисян, академик НАН РА;  
А. С. Сисакян, доктор медицинских наук, профессор;  
А. А. Трчунян, член-корреспондент НАН РА;  
Ю. С. Чилингарян, академик НАН РА

### SCIENTIFIC-ADVISORY COUNCIL:

- R. V. Aghouzoumstian, Candidate of Psychological Sciences, Docent;  
N. H. Arakelian, Full Member, NAS RA;  
G. Y. Baghdassarian, Full Member, NAS RA;  
Y. S. Chilingarian, Full Member, NAS RA;  
H. A. Gevorkian, Full Member, NAS RA;  
R. G. Gevorkian, Doctor of Geological Sciences, Professor;  
V. M. Haroutyounian, Full Member, NAS RA;  
A. H. Mantashian, Full Member, NAS RA;  
E. G. Minasyan, Doctor of Historical Sciences, Professor;  
M. M. Miridjanian, Doctor of Medical Sciences, Professor;  
K. S. Mossoyan, Doctor of Technical Sciences, Professor;  
V. S. Sargsian, Full Member, NAS RA;  
H. S. Sissakian, Doctor of Medical Sciences, Professor;  
A. H. Trchounian, Fellow Correspondent, NAS RA

## **Ի գիտություն հեղինակների և ընթերցողների**

«Աշխատանքային տետրերը» լույս են ընծայվում որպես ՀՀ ՊՆ ԱՌՀ-ի «Հայկական բանակ» ռազմագիտական հանդեսի հավելված՝ ընդգրկված ԲՈՀ-ի կողմից հաստատված «Գոկտոբրական և բեկնածուական ատենախոսությունների արդյունքների հրապարակման համար ընդունելի անագրերի ցանկում»:

Հեղինակները պետք է վկայակոչեն օգտագործված առավել կարևոր աղբյուրները:

Հեղինակները պատասխանատու են հողվածներում բերվող փաստերի հավաստության և գաղտնիության պահանջների պահպանման համար:

Հեղինակների դիրքորոշումը պարտադիր չէ, որ համընկնի խմբագրության դիրքորոշման հետ:

Գիագրամները, սխեմաները, գծագրերը, նկարները, լուսանկարները պետք է լինեն հստակ, տպագրության համար պիտանի:

Հողվածներում պետք է վերծանված լինեն օգտագործվող հապավումները:

Չեռագրերը հետ չեն վերադարձվում:

Հողվածները հրապարակվում են պարտադիր գիտական փորձաքննություն անցնելուց հետո:

Նյութերի մասամբ կամ ամբողջությամբ արտատպումը թույլատրվում է միայն խմբագրության գրավոր համաձայնությամբ:

## **К сведению авторов и читателей**

«Рабочие тетради» издаются в качестве приложения к военно-научному журналу «Айкакан банак» ИНСИ МО РА, включенному в утвержденный ВАК-ом «Список приемлемых журналов для публикации результатов докторских и кандидатских диссертаций».

Авторы должны давать сноски на использованные наиболее важные источники.

Авторы ответственны за достоверность и несекретность фактов, приводимых в статьях.

Позиции авторов не обязательно совпадают с позицией редакции.

Диаграммы, схемы, чертежи, рисунки, фотоснимки должны быть исполнены в четком изображении, пригодными для печати.

В статьях должны быть раскрыты употребляемые аббревиатуры.

Рукописи не возвращаются.

Статьи публикуются после прохождения обязательной научной экспертизы.

Перепечатка частично или полностью материалов допускается только с письменного разрешения редакции.

## **For the information of the authors and readers**

The «Working notebooks» is published as an appendix to the defense-academic journal «Haikakan banak» of the INSS, MoD, RA which is included into «The list of acceptable magazines for the publication of the results of doctors and candidates' dissertations», affirmed by the Superior Attesting Commission.

Authors should give footnotes for the most important sources used.

Authors are responsible for the accuracy and the non-confidential nature of the facts given in the articles.

Opinions expressed herein are those of the authors and are not necessarily those of the editorial board.

Diagrams, schemes, drawings, pictures and photos should be of a clear print quality.

Please explain used acronyms.

Manuscripts are not returned.

Articles get published after obligatory academic examination.

Partially or fully re-printing of materials is allowed only by written permission of the editorial staff.

ԱՇԽԱՏԱՆՁԱՅԻՆ ՏԵՏՈՇՈՐ

ԱՄՆ-Ի ՀԱՅԿԱԿԱՆ ԼՈՐԲԻՆԳԱՅԻՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ  
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ  
ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՇԱՀԵՐԻ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ

ՀՀ – ՍՓՅՈՒՌ ԵՐԿԽՈՍՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ՈՒՂԵՆԻՇՆԵՐԸ

Նախագծի գիտական ղեկավար՝

ՀՀ ՊՆ ԱՌՀԻ-ի պետ, ՀՀ պաշտպանության նախարարի խորհրդական,  
Ռուսաստանյան ռազմագիտական ակադեմիայի իսկական անդամ,  
հակահարձակության գծով գիտնական-փորձագետ (ԱՄՆ),  
քաղաքական գիտությունների դոկտոր (ՌԴ)  
գեներալ-մայոր Հ. Ս. Քոբանջյան

Պրակի գիտական խմբագիրներ՝

պատմական գիտությունների դոկտոր (ՌԴ) Ա. Գ. Ավագյան,  
պատմական գիտությունների թեկնածու Բ. Պ. Պողոսյան,  
ԱՌՀԻ-ի պետի տեղակալ-վերլուծական կենտրոնի պետ,  
պատմական գիտությունների թեկնածու Վ. Հ. Տեր-Մարտիրոսյան

Տեխնիկական խմբագրումը՝ Ա. Պ. Նազարեթյանի  
Ձևավորող նկարիչ՝ Դ. Ա. Փարվանյան

Տեքստերի թարգմանությունը՝ Ա. Ա. Մարտիրոսյանի, Ա. Հ. Հակոբյանի,  
Դ. Ա. Չիլինգարյանի

Համակարգչային ապահովումը՝ Գ. Ս. Դարսյանի, Վ. Ռ. Խալաֆյանի, Ա. Պ. Նազարեթյանի

Խմբագրության հասցեն՝ Երևան, Կ. Ուլինցու փողոց, 56/6, հեռ. 28-54-25, 28-12-94:  
Էլ. փոստ՝ haykakanbanak@mail.ru

© ՀՀ ՊՆ Դ. Կանայանի անվան ազգային ռազմավարական հետազոտությունների  
ինստիտուտի «Հայկական բանակ» ռազմագիտական հանդեսի հավելված, 2010 թ.

Ստորագրվել է տպագրության 22.09.2010:  
Թողոթը՝ օֆսեթային: Ձևաչափը՝ 60x84 1/16:  
Տեքստը՝ 240 էջ:

Պայմանական տպագրական 15 մամուլ: Տպաքանակը՝ 200:  
Տատախանակը՝ «Թայմ» և «Բալթիկա»: Տպագրությունը՝ օֆսեթ:  
Վկայական՝ 523: Դասիչ՝ 69263: ISSN 1829-0108:

Տպագրվել է «Լիմուշ» տպարանում:





